

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ, ԱԿԱԴԵՄԻԱ  
ՀԱՅՈՅ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ  
ԹԱՆԿԱՐԱՆ - ԻՆՍԻՏՈՒՏ**

**ԳԵՎՈՐԳ ՎԱՐԴԱՊԵՏԻ**

**ՀՈՒՅՆ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆՆ ՕՍՄԱՆՅԱՆ  
ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՎ  
ՓՈՔՐԱՍԻԱԿԱՆ ԱՂԵՏԸ  
(1914-1923 թթ.)**

**REPUBLIC OF ARMENIA  
NATIONAL ACADEMY OF SCIENCES  
ARMENIAN GENOCIDE MUSEUM - INSTITUTE**

**GEVORG VARDANYAN**

**THE GREEK POPULATION IN THE  
OTTOMAN EMPIRE AND THE ASIA  
MINOR DISASTER  
(1914 - 1923)**

**YEREVAN 2012**

Հրադարակվում է ՀՀ Գիրությունների ազգային ակադեմիայի  
հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի գիրական խորհրդի  
որոշմամբ

ՇՏԴ 93/99

ԳՄԴ 63.3

Վ 301

Գրախոսներ՝

պ. գ. դ. Հայկ Ղեմոյան

պ. գ. թ. Սուրեն Մանուկյան

Պատրասխանագործ խմբագիր՝ պ. գ. դ. Արմեն Ավագյան

Վարդանյան Գ.

Վ 301 Հոյն բնակչությունն Օսմանյան կայսրությունում և Փոքրասիա-  
կան աղենքը (1914-1923թթ.) /Գ. Վարդանյան.-Եր.: Հայոց ցեղասպանու-  
թյան թանգարան-ինստիտուտ, 2012.- 196 էջ:

Աշխադրությունը նվիրված է Օսմանյան կայսրությունում հոյն բնակ-  
չության կարգավիճակի և թուրքական իշխանությունների կողմից  
հոյնների զանգվածային տեղահանությունների ու կոփորածների քաղա-  
քականության հելքազուրությանը: Նախագինավում է պատմաբանների,  
ցեղասպանագերների և ընթերցող լայն շրջանների համար:

ՇՏԴ 93/99

ԳՄԴ 63.3

ISBN 978-9939-822-28-0

© Գևորգ Վարդանյան, 2012

## **ԲՈՎԱՌԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

<b>ՄՈՒՏՏՔԻ ԽՈՍՔ</b> .....	<b>7</b>
<b>ԱՌԱՋԱԲԱՆ</b> .....	<b>9</b>
<b>ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ</b> .....	<b>19</b>
ՀՈՒՅԵՐԻ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՎՆԵՐՆ ՈՒ	
ԴՐՈՒՅԹՈՒՆՆ ՕՍՄԱՆՑԱՆ ԿԱՅՍՈՐԻԹՅՈՒՆՈՒՄ XIX	
ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ԵՎ ԽՍ ԴԱՐԻ ՄԿՋԲԻՆ	
1.1. Հույների բնակության շրջաններն Օսմանյան կայսրությունում XIX դարի վերջին և XX դարի սկզբին.....	19
1.2. Հույների ազատագրական շարժումն ու կոփորածները XIX դարի երկրորդ կեսին և XX դարի սկզբին.....	45
1.3. Հույների դրությունը երիտրուքների կառավարման փարիներին.....	68
<b>ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ</b> .....	<b>88</b>
ՕՍՄԱՆՑԱՆ ԿԱՅՍՈՐԻԹՅԱՆ ՀՈՒՅԵՐԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆՆ	
ԱՌԱՋԻՆ ՇԱՄԱՃԽԱՐԴԱՅԻՆ ԵՎ 1919-1922	
ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀՈՒՅԵՐԻ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ	
ՏԱՐԻՆԵՐԻՆ: ՀԱՅ-ՀՈՒՆԱԿԱՆ ՇԱՄԱԳՈՐԾՄԱԿՈՒԹՅԱՆ	
ՓՈՐՉԵՐԸ	
2.1. Հույների գանգվածային գրեղահանություններն ու կոփորածներն Առաջին համաշխարհային պատերազմի փարիներին.....	88
2.2. Հույների գանգվածային գրեղահանություններն ու կոփորածները 1919-1922 թթ. հույն-թուրքական պատերազմի ընթացքում: Զմյուռնիայի աղեկը .....	108
2.3. Հայ-հունական համագործակցության փորձերը (XX դարի առաջին քառորդ).....	134

<b>ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ:</b>	146
ՀՈՒՆԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԼՈԶԱՄԻ ՎԵՐԱԺՈՂՈՎՈՒ:	
ՀԱՅԵՐԻ ԵՎ ՀՈՒՑԵՐԻ ԶԱՆԳՎԱԾԱՑԻՆ	
ՏԵ՛ՂԱՎԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ԿՈՏՈՐՉՈՒՆԵՐԻ	
ԹՈՒՐՔԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ	
ԸՆԴՀԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	
<b>3.1. Լոզանի վեհաժողովում սփորագրված «Թուրքիայի և</b>	
<b>Հունասրանի միջն թեակցության փոխանակման վերաբերյալ»</b>	
պայմանագիրը և դրա հետքանընթերը	146
<b>3.2. Հայերի և հույների զանգվածային փեղահանությունների</b>	
ու կոփորածների թուրքական քաղաքականության	
ընդհանրություններն ու փարբերությունները	157
<b>ՎԵՐՋԱԲԱՆ</b>	174
<b>ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՄԿՁԲՆԱՂՅՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ</b>	
<b>ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ</b>	179
<b>SUMMARY</b>	193

## ՄՈՒՏՔԻ ԽՈՍՔ

1914-1923 թթ. ընթացքում երիտրուրքերը և քնմալականները կազմակերպեցին և իրականացրեցին լայնածավալ եթնիկ գրումների քաղաքականություն, որը դրսնորվեց Օսմանյան կայսրության հայ, հույն և քրիստոնյա մյուս բնակչության զանգվածային գուղահանությունների և կոփորածների գուստով: Քսաններորդ դարասկզբին Առաջին աշխարհամարտի քողի փակ իրականացված այս ցեղասպանությունը միտքած էր նոր թուրքական պետքության սփեղծման՝ «Թուրքիան՝ թուրքերի համար» կարգախոսով:

Արևմտահայության բնաջնջումից հետո հույնների նկարմամբ որդեգրված քաղաքականությունը նպարակառուղիված էր կայսրության քրիստոնյա բնակչության նվազեցմանը, որը երկրի մահմեդականացման ու լիակարար թրքացման նպարակով փարվող ընդհանուր քաղաքականության մի մասն էր կազմում:

Հայոց ցեղասպանության դրվագների համապարփակ հետագործման հետ մեկտեղ Օսմանյան կայսրության մյուս քրիստոնյա ժողովուրդների զանգվածային գուղահանությունների և կոփորածների ուսումնասիրումը կարևոր նշանակություն ունի, հափկապես համեմատական հետագործությունների ծիրի մեջ դրանք քննարկելու գուսանելուց: Ուստի պատահական չէ այն հանգամանքը, որ ցեղասպանագիրության մեջ շարունակաբար աճում է նաև հույնների կոփորածների նկարմամբ գիրական հետագրքրությունը: Այս հետագործությունները կոչված են լրացնելու կարևոր այն բացերը, որոնց համեմատական ուսումնասիրությունը հնարավորություն կընձեռի լիարժեքորեն հասկանալ Օսմանյան Թուրքիայի կողմից հարյուրամյակներ շարունակ գործադրված «բռնության մշակույթի» առանցքային կենտրոն ու զաղափարաբանությունը, որոնք իրենց գագաթնակետին հասան պետքականափեղ քաղաքականության մաս դարձած ցեղասպանությունների իրականացման ընթացքում:

1922 թ. սեպտեմբերի 13-15-ի Զմյուռնիայի հրեներ, քաղաքի հայ և հույն բնակչության բոնի գուղահանությունները և զանգվածային կոփորածները, փաստորեն, Փոքր Ասիայի և Արևմտյան Հայաստանի լիակարար ապաքրիստոնեացման քաղաքականության վերջին արարներից մեկն էր, որն իր հերթին ազդարարեց նաև նոր թուրքական պետքականության՝ հանրապետական Թուրքիայի ծնունդը:

Գևորգ Վարդանյանի սույն մենագրությունն Օսմանյան կայսրության

## 8 ՄՈՒՏՏՔԻ ԽՈՍՔ

գոյության վերջին քառորդում հույն բնակչության նկատմամբ իրականացված զանգվածային գլեղահանությունների և կոփորածների քաղաքանությանը նվիրված արժեքավոր ուսումնասիրություն է, որը լուրջ ներդրում է հայ պատմագրության և ցեղասպանագիրության մեջ՝ այլ ժողովուրդների կոփորածների ուսումնասիրության բնագավառում առկա բացը լրացնելու առումով:

Հայկ Դեմոյան  
Հայոց ցեղասպանության  
թանգարան-ինստիտուֆի տնօրեն

## ԱՌԱՋԱԲԱՆ

14-15-րդ դդ. Օսմանյան կայսրության նվաճողական քաղաքականության հենքնանքով հույն ժողովուրդը հայրին վերջին և 19-րդ դարի սկզբին հույների ազգային-ազատագրական շարժման կարևոր ծերթբերումը դարձավ Օսմանյան կայսրության կողմից Հունաստանի անկախության ճանաչումը 1830 թ.: Սակայն հունական քարածքների մի զգալի մասը շարունակում էր մնալ Օսմանյան կայսրության կազմում: 19-րդ դարում ծավալված քարենորդական շարժումը, չնայած օրենսդրական ծևակերպումներին, չունեց կայսրության մահմեդականների և քրիստոնյա փոքրամասնությունների իրավահավասարության խնդիրը: 19-րդ դարի երկրորդ կեսին հույն ժողովուրդը շարունակեց ազգային-ազատագրական պայքարը՝ հիմնականում Կրետեում. առանձին ելույթներ եղան նաև Թեսալիայում, Էպիրոսում ու այլ վայրենում, որոնց նկարմամբ սուլթանական իշխանությունները որդեգրեցին ճնշման քաղաքականություն: Երիքթուրքերի՝ իշխանության գալուց հետո, չնայած նրանց դվագ խոսքումներին, հույն հսկադարձների նկարմամբ որդեգրվեց ավելի հետքադիմական դիրքորոշում:

Բայկանյան պարերազմների վերջին շրջանից սկսած մինչև Առաջին համաշխարհային պարերազմի ավարտը երիքթուրքական վարչակարգի որոշմամբ բռնագաղթի ենթարկվեց Արևելյան Թրակիայի և Արևմտյան Փոքր Ասիայի հույն բնակչության զգալի մասը. այդ ընթացքում փեղի ունեցան նաև դաժան կրորածներ: Քրիստոնյա փոքրամասնությունների ոչնչացման քաղաքականությունը շարունակվեց նաև 1919-1922 թթ. հույն-թուրքական պարերազմի քարիներին, եթե քեղահանվեց, արդաքսվեց և կոփորվեց Փոքր Ասիայի գրեթե ողջ հույն բնակչությունը<sup>1</sup>:

1 Հունական պարմագրության մեջ «Փոքրասիական աղետ» ընդունված է անվանել 1919-1922 թթ. հույն-թուրքական պարերազմում հունական բանակի պարզությունը, 1914-1923 թթ. Փոքր Ասիայի. Դուստրությունը և Արևելյան Թրակիայի հույն բնակչության բռնի գեղահանություններն ու կոփորածները, ինչպես նաև Զմյուռնիայի՝ 1922 թ. սեպտեմբերյան ողբերգությունը: Այդպես է կոչվել նաև այն պարճառով, որ դրանով վերջ դրվեց Փոքր Ասիայում հույների՝ մոտ երեքհազարամյա ներկայությանը, միաժամանակ այն խորհրդանշում է հունական հողերի ազգարկրման մեծ ծրագիր՝ «Մեծ գելականի» («Մեծ Հունաստանի զաղախարի») վերջը: Որոշ հետինակներ «Փոքրասիական աղետ»-ի սկիզբը համարում են 1453 թ., եթե թուրքերը գրավեցին Կոստանդնուպոլիսը: Այդ մասին գեն Crossing the Aegean, An Appraisal of the 1923 Compulsory Population Exchange between Greece and Turkey, /Edited by Renée Hirschon/, New York–Oxford: Berghahn Books, 2006, p. 14.

Սույն աշխափությունը հայրենական պատմագրության մեջ առաջին փոքրերից է՝ համապարփակ ներկայացնելու 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին Օսմանյան կայսրությունում հույների դրությունը, բնակության շրջանները, թուրքական իշխանությունների կողմից հույն ժողովրդի նկարմամբ դարձող բոնի գեղահանությունների և կորուրածների հետևողական քաղաքականությունը՝ աղերսներ գեսնելով հայ ժողովրդի նկարմամբ վարած քաղաքականության հետ:

Մենագրությունը ժամանակագրորեն ընդգրկում է 19-րդ դարի երկրորդ կեսից 20-րդ դարի առաջին քառորդը: Միևնույն ժամանակ աշխափանքի մեջ հիշարակվող որոշ փասդեր և իրադարձություններ դրւում են ժամանակագրական այդ շրջանակներից, ինչը պայմանավորված է ըննության առարկա հիմնահարցն առավել խորությամբ հետազոտելու անհրաժեշտությամբ:

Աշխափության աղբյուրագիրքական հենքն են կազմում Հայափանի ազգային արխիվի<sup>2</sup>, Կոսփանդուպոլիսի հունական տիեզերական պատրիարքարանի փասփաթերն ու նյութերը<sup>3</sup>, ինդրու առարկա հիմնահարցի ժամանակահարվածում արքերկի հունական կազմակերպությունների հրադարակած դեղեկագրերը<sup>4</sup>, ինչպես նաև փասփաթը-

2 ՀԱԱ, ֆ. 200 և ֆ. 409:

3 The Black Book of the Sufferings of the Greek People in Turkey from the Armistice to the End of 1920: Constantinople: Press of the Patriarchate, 1920; Livre Noir: La Tragédie Du Pont 1914 - 1922 [Black Book: The Tragedy of Pontus 1914 – 1922], Athènes: Imprimerie Phoenix, 1922; Oecumenical Patriarchate, Persecution of the Greeks in Turkey 1914 – 1918, Constantinople: Press of the Greek Patriarchate, 1919; Soteriadis G., An Ethnological Map Illustrating Hellenism in the Balkan Peninsula and Asia Minor, London: Edward Stanford, Ltd., 1918.; René Puaux; La Déportation et le Rapatriement des Grecs en Turquie: Paris: Édition du Bulletin Hellénique, 1919; Karavangelis G., The Turkish Atrocities in the Black Sea Territories: Copy of Letter of His Grace Germanos, Lord Archbishop of Amassia and Samsoun, Delegation of the Pan – Pontic Congress, Manchester: Norbury, Natzio & Co. Ltd., 1919; Les Atrocités Turques au Pont-Euxin, Copie d'une lettre de S. E. l'Archevêque d'Amassia et Samsoun Germanos, Paris: Imp. Dubois et Bauer, 1918.

4 London Committee of Undreemed Greeks, The Liberation of the Greek people in Turkey, Manchester: Norbury Natzio & Co., 1919; Manchester League of Unredeemed Hellenes, Turkey's Crime: Hellenism in Turkey, Manchester: Norbury, Natzio & Co., 1919; Papadopoulos A, Persecution of the Greeks in Turkey before the European War, New York; Oxford University Press American Branch, 1919; Այս տեղեկագրերը հասանելի են <http://www.greek-genocide.org> կայքում:

Oeconomos L., The Martyrdom of Smyrna and Eastern Christendom, A File of

թերի ժողովածուները<sup>5</sup>: Ընդ որում հունական կազմակերպությունների գրեթեկազբերի ու հունական արխիվային փաստաթղթերի ժողովածուների<sup>6</sup> նյութերը շատ կարևոր են և Հայաստանում առաջին անգամ են դրվում զիշտական շրջանառության մեջ: Դրանք պարունակում են մեծ քանակությամբ արժեքավոր փեղեկություններ հոյսների զանգվածային գրեթահանությունների և կողորածների մասին:

Սույն մենագրության մեջ հոյսն ժողովրդի պարմության և Օսմանյան կայսրությունում նրանց դրության հետ կապված հարցերի մեկնաբանման համար լայնորեն օգբագործվել են ինչպես հոյսն և հայ, այնպես էլ եվրոպացի ու ամերիկացի հասարակական գործիչների, դիվանագելքների, զինվորականների, բժիշկների, ականավոր ժամանակակիցների աշխարհանքներ՝ նամակներ, հուշագրություններ և այլն<sup>7</sup>:

---

**Overwhelming Evidence, Denouncing the Misdeeds of the Turks in Asia Minor and Showing their Responsibility for the Horrors of Smyrna, London: George Allen & Unwin Ltd., 1922.**

5 Հայաստանը միջազգային դիվանագիփության և սովետական արդարին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), Պրոֆ. Զ. Ս. Կիրակոսյանի խմբագրությամբ, Երևան, 1972; Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, Փաստաթղթերի և կյութերի ժողովածու Մ. Գ. Ներսիսյանի խմբագրությամբ, Երևան, 1991; Положение армян в Турции до вмешательства держав в 1895, М.: Тип. – литогр. т – ва И. Н. Кушнерев, 1896; Baltazzi G., Les Atrocités Turques en Asie Mineure et dans le Pont, Athènes, 1922; L'extermination des Chrétiens d'Orient: Faits, Documents et Témoignages Anglais et Américains, Paris: P. Thévoz, 1922; Lausanne Conference on Near East Affairs 1922 – 1923. Records of Proceedings and Draft Terms of Peace, London, 1923; Les Grecs en Turquie: Deux Articles, traduits de l'Anglais, de la Revue The New-Europe, de Londres ( Nos des 14 et 21 novembre), Paris: Imprimerie Chaix, 1918; Noradoungian G., D'Actes internationaux de l'Empire Ottoman, Tome Deuxième (1789-1856), Paris: Cotillon a. o., 1900, Առյվի՛ Դ'Actes internationaux de l'Empire Ottoman, Tome Troisième (1856-1878), Paris: Cotillon a. o., 1902.

6 Greek Ministry for Foreign Affairs, Persecution of the Greek Population in Turkey since the Beginning of the European War: According to Official Reports of Hellenic Diplomatic and Consular Agents, London: Constable & Co. Ltd., 1918; Տ՛ս նաև՝ Les Persécutions antihelléniques en Turquie, depuis le début de la guerre européenne: D'après les rapports officiels des agents diplomatiques et consulaires, Paris: Bernard Grasset, 1918; Հունական արխիվային փաստաթղթեր հայ-հունական հարաբերությունների մասին Առաջին Համբավանդության շրջանում (1918-1920), բազմանություն հունարենից Ռ. Թարթիկյանի, Երևան: Վեղինակային հրապ., 1998:

7 Սարայան Դ., Զմյուռնիա 1922, Բժիշկ Կարապետ Խաչերյանի օրագիրը,

## Ուսումնասիրության մեջ բարձրացվող խնդիրների լուսաբանման

**Երևան:** Նահապետ, 2005; Մակարեան Ա., Ցուշագիրը Թրակիոյ և Մակեդոնիոյ հայ զաղութեանորու, Աելանիկ: Տայ. «Նորիգոն» օրաթերթի, 1929; Նանսեն Ֆ., Խարքած ժողովուրու, Ազգերի ընկերակցության գլխավոր հանձնակալարի հետքազորական ճանապարհորդությունը Վրաստան և Հայաստան, (Թարգմ. և առաջարանը՝ Է. Մակարյան), Երևան: Գասպրինսկ. 2009; Պատովի Հ., Սարսափի Երկրին մեջ: Նահապակ Հայաստան (Թարգմ.), Միջայլ Շամբաննեան, Կ. Պոլիս: Տպագր. Յ. Ասաբորեան և որդիիք, 1919; Պիպեննեան Ա., Օսմաննեան պետքորթին, Կ. Պոլիս: «Հայրենիք», 1913; Ուելսու Է., Լազիսկան, Հայաստան և Քյուրդիստան: Վիլիկիա, Փոքր Ասիա, Միջազգեպք, Ասորիք և Պաղեստին, Վաղարշապատ: Մայր աթոռ վայ., 1893; Սապահ-Գիլեան Ա., Պարասիանակունեղը, Փրավիլէնս: ՍԴ Հնչ. կուս. Ամերիկ. շրջ. գործ. հանձն., 1916; Զուեան Յ., Հայր ի Զմիւնիա եւ ի շրջակայու, Վ. Ա. Զմիւնիա և Հայր, Վիեննա: Միխիթ վայ., 1899; Սեմչին Մ. Ա., Изображение современного состояния Турции в географическом, статистическом, религиозном и военном отношениях, (Пер. с франц.), СПб: Тип. П. Отд. Собственной Е. И. В. Канцелярии, 1854; Розен Դ., История Турции от победы реформы в 1826 г. до Парижского трактата в 1856 году.- Часть 2: От вступления на престол Абдул-Меджида до Парижского трактата в 1856 году., СПб., 1872; Churchill W., The World Crisis- The Aftermath, New York: Charles Scribner's Sons, 1929; Horton G., The Blight of Asia: An Account of the Systematic Extermination of Christian Populations by Mohammedans and of the Culpability of Certain Great Powers, with the True Story of the Burning of Smyrna, Indianapolis: The Bobbs-Merrill Company Publishers, 1926; Anglo – Hellenic League, Letters on the Expulsion of Greeks from Asia Minor, and in reply to ill-treatment inflicted on Turks in Greek Macedonia, London: The Anglo – Hellenic League, 1914; Mandelstam A., Le Sort de l'Empire ottoman, Lausanne – Paris: Payot et cie, 1917; [National Delegation of the Euxine Pontus], Memorandum submitted to the Peace Conference, Manchester: Norbury, Natzio & Co. Ltd., 1919; [Ottoman Greek Parliamentary Deputies], Memorandum presented by the Greek members of the Turkish parliament to the American Commission on Mandates over Turkey, New York: American – Hellenic Society, 1919.; Morgenthau H., Ambassador Morgenthau's Story. Garden City-New York: Doubleday, Page & Co., 1918; Naayem J., Shall this Nation Die, New York: Chaldean Rescue, 1921; Oecumenical Patriarchate, Persecution and Extermination of the Communities of Macri and Livissi (1914-1918), Paris, Imprimerie Chaix, 1919; Kyriakides N. G., The Tragedy of the Sea of Marmora: How the Greeks of Marmora Were Expelled from Their Homes and Scattered among the Villages around Kermasti or the Unwritten Testament of the Greeks who Forced to Embrace Mohammedanism, New York: Relief Committee for Greeks of Asia Minor, 1918; Ward Mark H., The Deportations in Asia Minor 1921-1922, London: Anglo-Hellenic League & British Armenia Committee, 1922; Διωγμοί των Ελλήνων εν Θράκῃ και Μικρασίᾳ: Αυθεντικά εκθέσεις και επίσημα κείμενα: Έκκλησις προς το ελληνικόν γένος και την δημοσίαν Γνώμην του πεπολιτισμένου κόσμου, Επιτροπή των εν Μυτιλήνη Μικρασιατών Προσφύγων, Αθήνα: Πανελλήνιον Κράτους, 1915;

դեսանկյունից հագրություն է դարձվել ժամանակի հայկական, Եվրոպական և ամերիկյան մամուլում կեղ զբած մի շարք կարևոր հրապարակումների, որոնցում ներկայացվում են հույների կոփորածների դրվագներ և թվային դրվագներ<sup>8</sup>:

Աշխափության համար բավական օգտակար են եղել հույն պարմարանների գործերը: Ուշագրավ է, որ Վերջին շրջանում հույն հետպարզուներն ավելի շար են սկսել անդրադառնալ իրենց պարմարակյան այդ ողբերգական դեպքերին: Դիմնահարցի նկարմամբ գիրական հետքարքրության բարձրացման հիմքում չափազանց մեծ դեր ուներ Հունասրանում հասրաված զայթական հույների մով ողբերգական իրադարձությունների հիշողության պահպանումը: Կարելի է շեշտել, որ հենց հիշողությունը դարձավ այն հիմնական շարժիչ ուժը, որը գիրական և քաղաքական մեծ հետքարքրություն առաջ բերեց հիմնահարցի վերաբերյալ: Այս առումով եական դեր խաղաց պրեկոսի հույների մով սկիզբ առած «հիշողության իրավունք» շարժումը, որի արդյունքը եղավ «Պոնդույան ուսումնասիրությունների կենտրոնի» («ԿԵՊՈՄԵ») հիմնադրումն Արթուրում 1985 թ. մայիսին: 1987 թ. այդ կենտրոնը Ս. Խարալամբրիդիս և Կ. Ֆոփիադիսի համահեղինակությամբ հրապարակեց «Պոնդուցիներ. Դիշողության իրավունք» գիրքը<sup>9</sup>: Խարալամբրիդիսը

---

Լամέրաς Կ., Η Περί Μικράς Ασίας και των εν Αυτή Κρυπτοχριστιανών, Αθήνα, 1921; Το Μαρτυριον του Ποντου, Ελληνικός Σύλλογος Κοινωνίας Εθνών Αθήνα: Αλεξ. Βιτσικουνακη, 1922; Barton J., Story of Near East Relief (1915-1923)-An Interpretation, New York: Macmillan, 1930; Bierstadt E. H., The Great Betrayal. A Survey of The Near East Problem, New York: Robert M. McBride and Company, 1924.

8 Այոր, Ա փարի, №6, 1910; *Քիզանիոն*, ապրիլի 14 (27), 1914; 2(15) հունիսի, 1914;; 5 (18) հունիսի, 1914 ; 9 (22) հունիսի, 1914 : *Վերջին լուր*, 6 հունիսի, 1921; 22 հունիսի, 1921:

*"The Scotsman"*, 19 հունիսի 1914; 11 հունվարի 1915, 15 հուլիսի 1915; 18 օգոստոսի 1921; 12 սեպտեմբերի 1921; 7 հոկտեմբերի 1921; *"The Times"*, 21 մարտի 1919; 26 հոկտեմբերի 1921; 8 հունիսի 1922; *"The New York Times"*, 21 մարտի 1919; 10 հուլիսի 1921; 24 սեպտեմբերի 1922:

9 Փուանձ, Կառուտանτίօն Է.; Խարալամπίծ, Միշալէց, Պոնտօ: Դικայωμա սու մնիմա. Թեսσαλοնիկէ: Կένտրո Պոντιαկան Մελետան, 1987. Նոյնը ուսւերնեն բարզմանությամբ՝ Խարալամպիծ Մ., Փուանձ Կ., Պոնտանի, Պրաօ նա պայտէ, Սալոնիկ: Իզլ. "ԿԵՊՈՄԵ", 2004. Տես նաև Կ. Ֆոփիադիսի հետքայաց աշխափությունները՝ Փուանձ Կ., Օ Էչիսլամիսօւ դէս Միկրաս Ասիա և օւ Կրυպտοχριստոնօւ դէս Պոնտօ, Թեսσαλոնիկէ, էկճուկօս Օւկօս Ածէլֆօն Կուրիակիծ, 1988; նոյնի՝ Հ Գեռուտոնա տաւ Էլլինաւ դէս Պոնտօ, Շճրսա դէս Յուլիս տաւ

փեսական հիմնավորում տվեց այդ շարժմանը, որը գիրականից բացի ուներ նաև քաղաքական կողմ<sup>10</sup>:

Հոյն հերազդորությունների՝ վերջին շրջանում լույս դրեսած մի շարք աշխափություններում հսկակ ընդգծվում է հիմնահարցին առավել համայիր նորեցման սկզբունքը: Այդ հեղինակները հակված են Պոնտոսում, Զմյուռնիայում, Թրակիայում և կայսրության այլ մասերում հակահունական քաղաքականությունը դիմարկելու որպես մեկ ամբողջություն: Այդ միտումը նկատվում է Խ. Ցիրկինիդիսի<sup>11</sup> և Թ. Մալկիդիսի<sup>12</sup> աշխափություններում: Նրանք հերկողականորեն զարգացնում են «Օսմանյան կայսրության հոյների ցեղասպանության» թեզը:

Պակմազիրական մեծ կարևորություն են ներկայացնում նաև ազգությամբ հոյն հեղինակներ Ի. Խասիոփիսի<sup>13</sup>, Ա. Ալեքսանդրիսի<sup>14</sup>,

---

**Ελλήνων για τον Κοινοβουλευτισμό και τη Δημοκρατία, Αθήνα, 2004; նոյնի՝ The Annihilation of the Greeks in Pontus by the Turks: Tübingen: Union of the Fighters for the Liberation of the Greek Lands Seized by Turkey, 1987.**

10 Στίγματα Charalambidis M., The Pontian Question in the United Nations, Thessaloniki, 2004.

11 Tsirkinidis H., “At last we uprooted them...”: The Genocide of Greeks of Pontos, Thrace and Asia Minor, through the French Archives, Thessaloniki: Kyriakides Brothers, 1999.

12 Малкидис Ф., История Греков Понта, Александруполис, Изд. Союз. Репатриантов Овласти Эврос, 2010; նոյնի՝ Η Γενοκτονία των Ελλήνων. Θράκη, Μικρά Ασία, Πόντος, Εκδόσεις Αγγείον, Λευκωσία, 2010.

13 Hassiotis I., The Greeks and the Armenian Massacres (1890-1896), Neo-hellenika 4 , Austin, Texas, 1981; նոյնի՝ “Shared Illusion: Greek – Armenian Co-operation in Asia Minor and the Caucasus (1917-1922)”, Greece and Great Britain During World War I, Thessaloniki: Institute of Balkan Studies, 1985, pp. 144 – 160; նոյնի՝ “The Armenian Genocide and the Greeks: Response and Records (1915-1923)”, The Armenian Genocide; History, Politics, Ethics (ed. R. Hovhannisyan), New York: St. Martin’s Press, 1992, pp. 129-151.

14 Alexandris A., The Greek Minority of Istanbul and Greek-Turkish Relations 1918-1974, Athens: Centre for Asia Studies, 1992.

Յ. Ակցոյլու<sup>15</sup>, Ա. Պալիսի<sup>16</sup>, Ս. Լադասի<sup>17</sup> և Ն. Սվորոնոսի<sup>18</sup> ինչպես հունարենով, այնպէս է այլ լեզուներով գրված աշխափությունները:

Աշխափության մեջ օգտագործվել են խորհրդային<sup>19</sup>, եվրոպական և ամերիկյան<sup>20</sup> պարմարանների աշխափությունները, որոնցում որոշակի

15 Ակցոյլու Յ., Ակիծված առյուծի բնաջնջումը: Մեր Անապոլիսյի հելլենականության մերոդափորված բնաջնջման գործնթացի իրար հաջորդող փուլերը (Տուն. թարգմ.՝ Լ. Վարդանյան, Խմբ. Ս. Գրքաշարյան), Երևան: Ճարդարագետ, 2007.

16 Pallis A. A., *Greece's Anatolian Venture and After. A Survey of the Diplomatic and Political Aspects of Greek Expedition to Asia Minor (1915-1922)*, London: Methuen, 1937.

17 Ladas S., *The Exchange of Minorities, Bulgaria, Greece and Turkey*, New York: The Macmillan Company, 1932.

18 Svoronos N., *Histoire de la Grèce moderne*, Paris, 1964.

19 Арш Г., Тайное общество “Филики Этерна”, Из истории борьбы Греции за свержение османского ига, Москва: Наука, 1965; Առաջին՝ Էթերիստское движение в России, Освободительная борьба греческого народа в начале XIX в. и русско – греческие связи, Москва: Наука, 1970, Балканские исследования. Вып. 11, Политические, общественные и культурные связи народов СССР и Греции (XIX-XX вв.), М.: Наука, 1989; Восточный вопрос во внешней политике России, Конец XVIII - начало XX в., Москва: Наука, 1978; Дружинина Е., Ключук-Кайнарджийский мир 1774 года, Москва: Изд-во Акад. Наук СССР, 1955; Галкин И. С., Дипломатия Европейских держав в связи с освободительным движением народов Европейской Турции в 1905-1912 гг., Москва: Изд-во Моск. Ун-та, 1960; История Дипломатии (под редакцией ак. В. П. Потемкина), Том второй, Дипломатия в новое время (1872 – 1919 гг.), Москва: Госполитиздат, 1945, Корсун Н. Г., Греко – Турецкая война 1919 – 1922 гг., Москва, 1940; Миллер А. Ф., Краткая история Турции, Москва, Госполитиздат, 1948; Никитина Т. В., Греция накануне Первой мировой войны, особенности внутриполитического развития, Москва, 1984; Нарочницкая Л., Россия и национально-освободительное движение на Балканах 1875-1878 гг., Москва: Наука, 1979; Международные отношения на Балканах, 1815-1830 гг., Москва: Наука, 1983; Новичев А., Турция. Краткая история, Москва: Наука, 1965; Петросян Ю., Османская империя, могущество и гибель, Москва: Наука, 1990; Сенкевич И., Россия и Критское восстание 1866-1869 гг., Москва, 1970; Шамсутдинов А. М., Национально-освободительная борьба в Турции 1918-1923 гг., Москва: Наука, 1966; Шеремет В. И., Турция и Адрианапольский мир 1829 г.: Из истории Восточного Вопроса, Москва: Наука, 1975; Шеремет В., Османская империя и Западная Европа. Вторая треть XIX в., М.: Наука, 1986.

20 Adalian R. P., “Comparative Policy and Differential Practice in the Treatment

անդրադարձ կա Օսմանյան կայսրությունում ապրող հույներին: Հայուկ ուշադրություն է դարձվել թուրք և բուրգամենք հեղինակների գործերին, որոնք ամեն կերպ խեղաթյուրված են ներկայացնում Օսմանյան կայսրությունում հույների նկատմամբ կիրառված քաղաքականությունը<sup>21</sup>: Բացառություն են կազմում թուրք հեղինակ Թաներ Արշամի գործերը, ո-

---

of Minorities in Wartime: the United States archival evidence on the Armenians and Greeks in the Ottoman Empire”, *Journal of Genocide Research* (2001), 3(1), pp. 31–48; Ahmad Feroz, *The Young Turks: The Committee of Union and Progress in Turkish politics 1908 – 1914*, Oxford: Clarendon, 1969; Boyajian D. H., *Armenia: The Case for a Forgotten Genocide*. Westwood, New Jersey: Educated Book Crafters, 1972; Driault E., *La Question d’Orient depuis ses origines jusqu’à nos jours*, Paris: Felix Alcan, 1898; Greene Fr., *Armenian Massacres or The sword of Mohammed*, Washington: American Oxford Publ., 1896; Howard Harry N., *The Partition of Turkey, A Diplomatic history 1913-1923*, New York, 1966; Murat J., *The Great Extrition of Hellenism and Christianity in Asia Minor, the Historic and Systematic Deception of World Opinion Concerning the Hideous Christianity’s Uprooting of 1922*, Miami, Florida, USA, February, 1999; Krikorian M. K., *Armenians in the Service of Ottoman Empire 1860-1908*, London: Routledge & Kegan Paul, 1977; Marriott J. A. R., *The Eastern Question, A Historical Study in European Diplomacy*, Oxford: Clarendon Press, 1951; Milton G., *Paradise Lost, Smyrna 1922, The Destruction of a Christian City in the Islamic World*, New York, 2008; Pears E., *Turkey and Its People*, London: Methuen & Co., 1912; Rummel R., *Statistics of Democide: Genocide and Mass Murder since 1900*, Munster, Lit, 1998; Sacher H., *The Emergence of the Middle East: 1914-1924*, New York: Alfred A. Knopf, 1969; Smith M. L., *Ionian Vision: Greece in Asia Minor, 1919-1922*, New York: St. Martin’s Press, 1973; Tashjian J., *Turkey: Author of Genocide, The Centenary Record of Turkey 1822-1922*, 212 Stuart Street, Boston, Massachusetts, 1965; Toynbee A. J., *The Western Question in Greece and Turkey. A Study in the Contact of Civilizations*, London: Constable and Co., 1922; Walker Chr., *Armenia: The Survival of a Nation*, New York: St. Martin’s Press 1980; Yale W., *The Near East, A Modern History*, Michigan: The University of Michigan Press, 1958; Zürcher E. J., *The Unionist Factor: The Role of the Committee of Union and Progress in the Turkish National Movement 1905 – 1926*: Leiden: E. J. Brill, 1984.

21 Կեմալ Մ., *Путь новой Турции 1919-1927*, т. 1, *Первые шаги национально-освободительного движения 1919*, Москва: Литиздат, 1929; Karpat K. H., *Ottoman Population 1830-1914, Demographic and Social Characteristics*, Wisconsin: The University of Wisconsin Press, 1985; McCarthy J., *Muslims and Minorities, The Population of Ottoman Anatolia and the End of the Empire*, New York and London: New York University Press, 1983; Shaw Stanford J., *Shaw Ezel Kural, History of the Ottoman Empire and Modern Turkey, Volume 2 : Reform, Revolution and Republic: The Rise of Modern Turkey, 1808-1975*, Cambridge-London-New York-Melbourne: Cambridge University Press, 1977.

րոնք աչքի են ընկնում մի շաբթ օրյեկտիվ դիրարկումներով և գնահատականներով<sup>22</sup>:

Թեմայի ուսումնասիրման համար կարևորություն է փրկել Ս. Զուլայսանի<sup>23</sup>, Զ. Կիրակոսյանի<sup>24</sup>, Հր. Բարթիկյանի<sup>25</sup>, Վ. Դադրյանի<sup>26</sup>, Ռ. Հովհաննիսյանի<sup>27</sup>, Շ. Ինճիկյանի<sup>28</sup>, Հր. Սիմոնյանի<sup>29</sup>, Ա. Կիրակոսյանի<sup>30</sup>,

22 Ակչամ Տ., *Տուրքությունը և Հայոց պատմությունը. Հայոց ազգային պատմությունը և Հայոց պատմությունը*. Մոսկվա: ԱՕ “Արև-Հիկս”, 1995; Առաջին աշխարհականի պատմությունը և Հայոց պատմությունը. Լոնդոն: Constable, 2007.

23 Զուլայսան Ս. Կ., «Դեվլիդը»-և (մասնահավաքը) Օսմանյան կայսրությունում ըստ թուրքական և հայկական աղբյուրների. Պատմա-բանասիրական հանդես, 1959, թիվ 2-3, Երևան: ՌՍՍՀ ԳԱԱ հրատ., էջ 247 - 256:

24 Կիրակոսյան Զ., Բորժուական դիվանագիրությունը և Հայաստանը (XIX դարի 70-ական թթ.), Երևան: Հայաստան հրատ., 1978:

25 Բարթիկյան Հր., Օսմանականի և Խորհրդային Միության հույները: Վերաբնակեցումներ և գեղահանություններ: Պատմա-բանասիրական հանդես, 1999, թիվ 2-3, Երևան: ՀՀ ԳԱԱ «Գիրություն» հրատ., էջ 397 - 407; Առյանի՝ Հունական «Հիոր» հանրագիրարանը Հայաստանի և հայերի մասին. Պատմա-բանասիրական հանդես, 1981, թիվ 2, Երևան: ՌՍՍՀ ԳԱԱ հրատ., էջ 290 - 299:

26 Dadrian V., “The Determinants of the Armenian Genocide”. Working Paper GS 02. Yale Center for International and Area Studies. H. F. Guggenheim Foundation, 1998, pp. 1 – 32; Առյանի՝ *The History of the Armenian Genocide: Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the Caucasus, Providence* – Oxford: Berghahn Books, 1995; Առյանի՝ *Warrant For Genocide: Key Elements of Turko-Armenian Conflict*, New Brunswick: Transaction Publish., 1999.

27 Հովհաննիսյան Ռ. Գ., Հայաստանի Հանրապետություն, Հափոր Ի. Առաջին պարիս, 1918-1919 (ՀՀ ԳԱԱ Պատմ. ինստ., Խմբ.՝ Ա. Խառավյան), Եր.: Տիգրան Մեծ, 2005; Առյանի՝ *Международные отношения Республики Армения, 1918 – 1920 гг.* (Пер. с англ. Г. Г. Махмурян), Институт истории НАН Армении. – Еր.: Тигран Мец, 2007; Առյանի՝ *Armenian Pontus, The Trebizond-Black Sea Communities* (edited by Richard G. Hovannisyan), California: Mazda Publishers, Inc., 2009; Առյանի՝ *Armenia on the Road to Independence 1918*, Los Angeles, 1967.

28 Ինճիկյան Շ. Գ., Օսմանյան կայսրության անկումը: Անդիալ-Վլստեսական պանարկ, Եր.: Հայաստան, 1984; Առյանի՝ *Եղիշեաց Օսմանական կայսերությունը*, Եր.: Հայաստան, 1986:

29 Սիմոնյան Հր., Թուրք ազգային բորժուազիայի գաղափարաբանությունն ու քաղաքականությունը, Եր.: «Հայաստան», 1986:

30 Կիրակոսյան Ա., Բրիգանձական դիվանագիրությունը և արևմտահայության խնդիրը (19-րդ դարի 30-ական թթ. - 1914 թթ.), Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիրություն» հրատ., 1999:

Ա. Ավագյանի<sup>31</sup>, Ռ. Սաֆրաստյանի<sup>32</sup>, Գ. Քիլիմջյանի<sup>33</sup>, Ա. Ուղոնյանի<sup>34</sup> և հայ այլ պատմաբանների գործերին, ովքեր իրենց աշխափանքներում որոշակիորեն անդրադարձ են կարարել քննարկվող խնդրին:

31 Ավագյան Ա., Գеноцид 1915 թ., Механизмы принятия и исполнения решений, Ереван: "Гитутюн", 1999; Առաջին Կայսրություն. Ցեղասպանության ծրագրի ձագումնաբանությունը (1876-1920), Եր.: «Լուսակ» հրատ., 2009; Առաջին Դоктрина османализма в политической жизни Османской империи (50-70 гг. XIX в), Ереван: Изд- во АН Арм. ССР, 1985.

32 Սաֆրաստյան Ռ., Օսմանյան կայսրություն. Ցեղասպանության ծրագրի ձագումնաբանությունը (1876-1920), Եր.: «Լուսակ» հրատ., 2009; Առաջին Դоктрина османализма в политической жизни Османской империи (50-70 гг. XIX в), Ереван: Изд- во АН Арм. ССР, 1985.

33 Քիլիմջյան Գ., Թուրք-հունական հարաբերությունները 1908-1914 թվականներին, Երևան: Երևանի համալսարանի հրաժարակազություն, 1988; Առաջին Երիտրությունի ազգային քաղաքականության հարցի շուրջը, «Լրաբեր» հասարակական գիրությունների, թիվ 8, 1970, Երևան: ՀՍՍՀ ԳԱԱ հրատ., էջ 11-16; Առաջին Թուրք-հունական հարաբերություններն Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին (1913-1914), «Լրաբեր» հասարակական գիրությունների, թիվ 10, 1976, Երևան: ՀՍՍՀ ԳԱԱ հրատ., էջ 32 - 41:

34 Սլունյան Ար., Политическая история современной Греции, Москва, 1998; Առաջին Կ իстории Армяно-Греческих отношений в 1918-1919 гг., Историко-филологический журнал, 1987, N4, Ереван: Изд. Акад. Наук. Арм. ССР, с. 230 - 233.

## ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

# ՀՈՒՅՆԵՐԻ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՄՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒԹՅՈՒՆՆ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ XIX ԴԱՐԻ ՎԵՐջին ԵՎ ԽՍ ԴԱՐԻ ՄԿՋԲԻՆ

## 1.1. Տույների բնակության շրջաններն Օսմանյան կայսրությունում XIX դարի վերջին և XX դարի սկզբին

Տույներն Օսմանյան կայսրության տարածքում ապրող քրիստոնյա ամենամեծ ազգային փոքրամասնություններից մեկն էին: 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին նրանք բնակվում էին կայսրության ինչպես եվրոպական, այնպես էլ ասիական հարկածում: Տույները մեծ թիվ էին կազմում հայկական Բալկանյան թերակղզում, Էգեյան ծովի կղզիներում, Փոքր Ասիայի արևմտյան ու հյուսիսային հարկածներում: Զգալի հոյն բնակչություն կար նաև Փոքր Ասիայի կենտրոնական և հարավային վիլայեթներում ու կայսրության այլ շրջաններում:

Մինչև 18-րդ դ. օսմանահապահակ հոյների շրջանում չկար միասնական առաջնական ազգային գիրակցություն: 18-րդ դարում և 19-րդ դարի սկզբին ազատագրական շարժման վերելքից և 1830 թ. անկախության վերականցնումից հետո միայն նրանք սկսեցին իրենց համարել հելլենների (հուն՝ «Էլլηνες») անփիկ ժառանգության կրողներ: «Հելլեն» էթնոնիմը դառնում է Տունաստանի (հուն՝ «Էլլάս», ժամանակակից հունարենում՝ Էլլադա՝ «Էլլածա») բնակիչների անվանումը: Ի տարբերություն Տունաստանի՝ Օսմանյան կայսրության մեջ հունական ինքնությունը տարբեր էր ու բազմազան: Տույների բացարձակ մեծամասնությունն ուղղափառ քրիստոնյա էր, բայց կային նաև կաթոլիկ հոյներ: Վյսկեղ ապրում էին նաև թուրքախոս ուղղափառ հոյներ (Կապաղովկիայի կարամանի հիններ): Հայածանքների, բոնածնշումների և ոչնչացման օրինկի դարձավ հենց Rum milleti-ն՝ Օսմանյան կայսրության ուղղափառ հոյն բնակչությունը:

Անդրադառնալով Օսմանյան կայսրությունում ապրող ժողովուրդների՝ փվյալ դեպքում հոյների թվաքանակին՝ որոշ հեղինակներ կարծում են, որ պետք է մեծ վերապահությամբ նորբենալ Վիճակագրական փվյալներին: Ա. Ուրիշինին նշում է. «Նարավոր է, որ փվյալներն այնքան ել ճիշդ չեն, քանի որ դժվար է որոշել մի երկրում, որտեղ վիճակա-

գրությունը նոր է միայն զարգանում»<sup>35</sup>: Սակայն անճշտությունները պայմանավորված չեն միայն Օսմանյան կայսրությունում վիճակագրական զիգության ուշ զարգացումով: Վիճակագրությունը երկրում փարզում էր քրիստոնյաների թվի կրթուկ նվազեցմամբ ու մահմեդականների թվի ավելացմամբ: Այս փասդը շաբ դիպուկ է նվարագրվել Փարիզի հաշվության կոնֆերանսին Հայոց պարփիրակության ներկայացրած հուշագրում: «Թուրք կառավարության կավարած վիճակագրությունների սովորական սիստեմն է հետևյալը. 1. նախ, առանց շաբ փոխելու ամբողջ բնակչության թիվը՝ ըստ կարելվույն նվազեցնել քրիստոնյաների թիվը և դարբերությունն ավելացնել մահմեդականների թվի վրա. 2. զգուշանալ փալ ազգությունների ճզգրիվ թիվը, այլ նրանց խմբավորել ըստ կրոնի...»<sup>36</sup>: Այսինքն՝ նրանք առանձին էին հաշվում քրիստոնյա ժողովուրդներին, անգամ նույն ժողովուրդի ուղղափառ, կաթոլիկ կամ բողոքական հարվածներին և որպես մեկ ամբողջություն՝ թուրք մահմեդականներին՝ թուրքերին, քրիստոնյաներին, թաթարներին և այլոց՝ հաշվի չառնելով նրանց՝ առանձին ժողովուրդներ լինելու հանգամանքը»<sup>37</sup>:

Չնայած նշված հանգամանքին՝ նախ փորձենք հույնների թվաքանակը դիբարկել ըստ Օսմանյան վիճակագրական դիվալների: 1844 թ. անցկացված մարդահամարի դիվալներով Օսմանյան կայսրության (ներառյալ Աֆրիկան) 35.350.000 բնակչությունը կազմված էր թուրքերից (12.8 մլն), սլավոններից (6.2 մլն), արաբներից (4.7 մլն), ռումիններից (4 մլն), հայերից (2.4 մլն), հույններից (2 մլն), ալբանացիներից (1.5 մլն), քրդերից (1 մլն), ասորի-քաղողեացիներից (235 հազար), գնչուններից (214 հազար), հրեաներից (150 հազար), թուրքմեններից (85 հազար), թաթարներից (36 հազար) և դրուզներից (30 հազար): Այս դիվալները մինչև 19-րդ դարի 70-ական թթ. պաշտոնապես ընդունվում էին կառավարության կողմից և դրամադրություն օսմանյան վիճակագրությամբ հետաքրքրվող առանձին եվրոպական հեղինակներին, օրինակ Ուրիշինինին<sup>38</sup>: Նույն աղյուրը նշում

35 Յնիչինի Մ. Ա., *Изображение современного состояния Турции в географическом, статистическом, религиозном и военном отношениях*, (Пер. с франц.), СПб: Тип. П. Отд. Собственнной Е. И. В. Канцелярии, 1854, стр. 14.

36 Հայկական հարցը Հաշվության կոնֆերանսի առաջ, Հայոց ցեղասպանության պատմության և պարփառության հարցեր, թիվ 5, Երևան: Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի հրատ., 2002, էջ 167:

37 Սրա հիմքում ընկած է այն մորենումը, որ Օսմանյան կայսրությունը կրուսականություն էր, օրենքները հիմնված էին Շարիաթի վրա, և թուրք մահմեդական ժողովուրդները դիբարկում էին որպես մեկ մահմեդական «ումա»:

38 Յնիչինի Մ. Ա., նշվ. աշխ., էջ 8-9:

Ե, որ 2 մն հույների կեսն ապրում էր Եվրոպական, մյուս կեսը՝ ասիական թուրքիայում: Սակայն, հաշվի առնելով թուրքական մարդահամարի դիմագորությունը՝ քրիստոնյաների թվաքանակի հաշվին մեծացնել մահմետականներինը, կարծիք է Ենթադրել, որ նրանց թիվն ավելին է եկել:

Ա. Սինվեն 1878թ. Փարիզում լույս բեսած «Օսմանյան կայսրության հույները» աշխատության մեջ նշում է, որ 1870-ական թթ. Օսմանյան թուրքիայում ապրում էր 4.324.369 հույն<sup>39</sup>:

### Աղյուսակ 1.

Թրակիա	728.747
Մակեդոնիա	587.860
Էպիրոս	617.892
Թեսալիա	247.776
Եվրոպական այլ փարածքներ	70.000
Էգեյան կղզիներ	724.000
Ասիա	1.188.094
Սիրիա	125.000
Հույն կաթոլիկներ	35.000
<b>Ընդամենը</b>	<b>4.324.369</b>

1881 թ. սուլթան Աբդուլ-Համիդ 2-րդի օրոր անցկացվեց մարդահամար, որի համաձայն կայսրությունում ապրում էր 17.388.604 մարդ: Բարձր Դուռը, կապված 1878 թ. Թեղինի պայմանագրով սպաննանձ պարփակորություններով, ճգփում էր ամեն կերպ նվազեցված ներկայացնել հայերի թվաքանակը: Այս քաղաքականությունից անմասն չմնացին նաև հույները, որոնց թիվը գնահատվում էր 2.332.197 մարդ<sup>40</sup>: 20-րդ դարասկզբի վիճակագրական դվյալների համաձայն՝ Օսմանյան կայսրությունում բնակվում էին 2.852.812 հույն<sup>41</sup>: Սակայն չպետք է մոռա-

39 Synvet A., Les Grecs de l'Empire Ottoman, Paris, 1878, p. 8., Մեջբերումն արված է՝ ըստ Karpat K. H., Ottoman Population 1830-1914, Demographic and Social Characteristics, Wisconsin: The University of Wisconsin Press, 1985, p. 48.

40 Karpat K. H., Աշխ. աշխ., էջ 148:

41 Նոյն տեղում, էջ 168:

նալ, որ նշված թվերը վերաբերում են ամբողջ կայսրության հույն բնակչության թվաքանակին՝ ներառելով նաև Էպիրոսը, Թրակիան, Մակեդոնիան, Էգեյան կղզիները և այլն: Ուստի դժվար է հավասի ընծայել նշված դպյալներին, մասնավանդ որ դրանք հակասում են ոչ միայն հունական, այլ նաև հայկական ու եվրոպական աղբյուրներին: Մշտիկ Ավելիսայանը նշում է, որ 19-րդ դարի վերջին Օսմանյան կայսրությունում հույների թիվը 4 միլիոնի էր հասնում, և որ հույները շատ գորավոր էին կայսրության հարկացին արևմբյան մասում<sup>42</sup>:

Անդրադարձնալով Օսմանյան կայսրության բնակչությանը՝ Էդվին Փիբուն իր «Թուրքիան և նրա բնակչությունը» աշխափության մեջ նշում է, որ մինչև Բալկանյան պատերազմներն Օսմանյան պետքության գրարածում ապրել է շուրջ 3.8 մլն հույն, որից 1.7 մլն-ը՝ Եվրոպայում (ներառյալ Կ. Պոլիսը), 1.6 մլն-ը՝ Ասիայում, իսկ 500 հազարը՝ Էգեյան կղզիներում<sup>43</sup>: Բալկանյան պատերազմների արդյունքում Հունասփանին անցան հարավային Մակեդոնիան, հարավային Էպիրոսը, Կրետեն և Էգեյան կղզիները՝ 1.357.000 հույն բնակչությամբ<sup>44</sup>, և հասկանալի պարբառներով կայսրությունում հույների թիվը նվազեց: Այդուհանդերձ մինչև Առաջին համաշխարհային պատերազմն Օսմանյան Թուրքիայում շարունակում էր ապրել շուրջ 2.5 մլն հույն<sup>45</sup>:

Սակայն թուրքական մարդահամարները, հավաքարիմ ծևավորված ավանդույթներին, շարունակում էին հույների, ինչպես նաև այլ քրիստոնյաների իրական թվաքանակի կնդման քաղաքականությունը: Համաձայն օսմանյան վերջին՝ 1914 թ. նախապատերազմյան մարդահամարի՝ պետքության մեջ ապրում էր 18.520.016 մարդ, որից 15.044.846 մահմեդական, 1.792.206 հույն (որից 62.468 կաթոլիկ), 1.229.007 հայ, 134.687 ասորի-քաղողեացի, 187.073 իրենա, 65.844 գարբեր ազգության բողոքական և այլք<sup>46</sup>: Սակայն ինչպես հույների, այնպես էլ հայերի ու ասորիների թվաքանակը չի համապատասխանում իրականությանը: Դեռևս 1870-

42 Մ. Ավելիսայան, Թուրքիայի հայերն ու իրենց դրացիները, Մարտել: Հրա. Մ. Փորբուզյան, 1890, էջ 11-12:

43 Pears E., Turkey and Its People, London: Methuen & Co., 1912, p. 94.

44 Pallis A. A., Greece's Anatolian Venture and After, A Survey of the Diplomatic and Political Aspects of Greek Expedition to Asia Minor (1915-1922), London: Methuen, 1937, p. 224.

45 London Committee of Undreemed Greeks, The Liberation of the Greek people in Turkey, Manchester: Norbury Natzio & Co., 1919, p. 3.

46 Karpat K. H., Աշխ. աշխ., էջ 188-189 :

ական թթ. Օսմանյան կայսրությունում հայերի թիվը կազմել է շուրջ 3.6 մլն<sup>47</sup>, սակայն հաշվի առնելով 1890-ական թթ. կոտորածները, առանձին ջարդերը, արփազաղթը՝ պարմաբան Ա. Համբարյանի հաշվարկներով Առաջին աշխարհամարտի նախօրեին արևմտահայության թիվը կազմել է 2.583.692 մարդ<sup>48</sup>. Կտորիների թիվը ևս շաբթ հեռու է իրականությունից, քանի որ միայն 123.000 ասորի ապրել է հայկական վիլայեթներում, իսկ ամբողջ կայսրությունում և նրան հարակից գարածքներում պարմաբան Ա. Խոսրովայի հաշվարկներով գարբեր դավանանքի (նեստորական, հակորինյան, քաղենացի և այլն) ասորիների թիվը նախապատերազմյան շրջանում հասնում էր անգամ 1 մլն-ի<sup>49</sup>:

Օսմանյան կայսրությունում քրիստոնյաների թվի նվազեցման միգրում ընկապվում է նաև 20-րդ դարի մի շարք թուրքամենք հեղինակների մոտք, որոնցից որպես շաբթ մեծքերվող հեղինակ կարելի է առանձնացնել ամերիկացի Զասթին Մըքքարթիին: Նրա «Մահմետականներն ու փոքրամասնությունները» աշխափությունը գրվել է՝ հիմնվելով օսմանյան պաշտոնական գրվածների վրա փորձելով կասկածի գրակ դնել Հայոց ու Դունաց պատրիարքարանների, հայ, հույն ու օքարերեկրյա ամենապարբեր հեղինակների գրվածները: Նրա հաշվարկների ու վերլուծությունների արդյունքում հույնների թվաքանակն էլ ավելի է նվազում՝ հասնելով 1.254.333-ի<sup>50</sup>: Փաստորեն, նրա գրվածներն ավելի կեղծ են, քան թուրքական պաշտոնականը. նա «վարպետորեն» նենգափոխել է Փոքր Ասիայի քրիստոնյա քնակչության թվաքանակի վերաբերյալ գրվածները<sup>51</sup>:

1918 թ. Փարիզում առանձին գրքույկով լույս բեսավ «Դոյները Թուրքիայում» հոդվածը, որն անգերենից ֆրանսերեն էր փոխադրվել հեղինակավոր «New-Europe» («Նոր Եվրոպա») հանդեսից: Դոդվածում ներ-

47 Համբարյան Ա., Արևմտահայերի թվաքանակի հարցի շուրջ, Բանբեր Երևանի համապարանի, Երևան, 1969, N2, էջ 110:

48 Նուև տեղում, էջ 111:

49 Խոսրովա Ա., Կտորիների ցեղասպանությունն Օսմանյան Թուրքիայում և հարակից թյուրքանակ վայրերում (XIX դարի վերջ - XX դարի առաջին քառորդ): - Եր.: Շեղինակային հրատարակություն, 2004, էջ 39:

50 McCarthy J., Muslims and Minorities, The Population of Ottoman Anatolia and the End of the Empire, New York and London: New York University Press, 1983, p. 110.

51 Մըքքարթիի աշխափության քննադապությունը գեն Ասանյան Ա., Հայոց ցեղասպանության ժխտման նոր փորձ. Թուրքական պարմական ընկերակցության «Հայեր, աքսոր և զայթ» աշխափության մասին, Եր.: ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի հրա�., 2005, էջ 16-20:

կայացված վիճակագրական աղյուսակը նախապատերազմյա թուրքիայում հաշվում էր 2.515.000 հուն<sup>52</sup>, որոնց գեղարաշխում այսպիսին էր.

Աղյուսակ 2.

<b>ԵՎՐՈՊԱ</b>	Աղբիանապոլիս և Գալիպոլի (Փելիբոլու)	350.000
	Կոստանդնուպոլիս	450.000
	<b>ԸՆԴԱՄՄԵՆԸ (ԵՎՐՈՊԱ)</b>	<b>800.000</b>
<b>ԱՍԻՒ</b>	Կ. Պոլսի ասիական մաս	45.000
	Բիզա	40.000
	Իզմիթ	70.000
	Բրուսա	350.000
	Այդըն	500.000
	Կոնյա	100.000
	Անկարա	80.000
	Տրավիզոն	250.000
	Էրզրում	5.000
	Սեբաստիա	110.000
	Աղանա	70.000
	Դիարբեքիր	25.000
	Դալեչ	30.000
	Կաստամոնու	40.000
	<b>ԸՆԴԱՄՄԵՆԸ (ԱՍԻՒ)</b>	<b>1.715.000</b>
<b>ԸՆԴԱՄՄԵՆԸ</b> (ԵՎՐՈՊԱ և ԱՍԻՒ)	-	<b>2.515.000</b>

Փոքր Ասիայի հույների պատմության մասնագետ Լեռն Մակասը | «Փոքր Ասիայի հելլենիզմը» մենագրության մեջ անդրադառնում է Փոքր Ասիայում հույների գեղարաշխմանն ըստ նահանգների, սանջակների

կազմաների: Հսկ նրա՝ Օսմանյան կայսրության միայն փոքրասիական վիլայեթներում ապրում էր.

### Աղյուսակ 3.

Արևմտյան Անապոլիս	773.756
Կողմաների գորփի և Վ. Պոլսի Սկզբության թաղամաս	186.421
Հյուսիսային Անապոլիս	378.452
Կենտրոնական և հարավային Անապոլիս	359.745
Հայկական վիլայեթներ	129.537
<b>Ընդամենը</b>	<b>1.827.911 (հույն)</b> <sup>53</sup>

Ազգերի լիգայի՝ Փախստականների հարցերի հանձնաժողովի անդամ Q. Ա. Պալիսը, հենվելով Մակասի գրվածների վրա, և դրան գումարելով Աղանայի (Կիլիկիա) 66.200 հույներին, նշում է, որ ամբողջ Փոքր Ասիայի հույների նախապատերազմյան թվաքանակը եղել է 1.888.111<sup>54</sup>:

Օսմանյան կայսրության հոյն բնակչության թվաքանակի վերաբերյալ առավել ամբողջական պատկերացում են բալիս Դունական պատրիարքարանի 1912 թ. գրվածները, որոնք հրապարակվել են Արենքի համասարանի պրոֆեսոր Չորջ Սովերիադիսի կողմից 1918 թ.: Դրանք ընդհանուր առմամբ համընկնում են Մակասի գրվածների հետ, սակայն անդրադառնում են նաև կայսրության այլ շրջաններին: Համաձայն պատրիարքարանի 1912 թ. գրվածների՝ Օսմանյան կայսրությունում՝ ներառյալ Փոքր Ասիան, Աղրիանապոլսի վիլայեթը, Դոդեկանեսյան, Իմրոս, Տեսլեռու և Կասպիկորիցո կղզիները, ապրում էր 2.543.343 հոյն<sup>55</sup>:

Սակայն Դոդեկանեսյան կղզիները՝ 102.727 հոյն բնակչությամբ, Թուրքիալական պատերազմի արդյունքում հայփնացին իրալացիների իշխանության գրակ: Բացի այդ, որոշ հեղինակներ չեն հաշվում Սիրիայի, Լիբանանի ու Պաղեստինի հոյներին: Այսպես միայն ուղղափառ հոյների

53 Maccas L., L'Hellenisme de l'Asie Mineure: Son histoire, sa puissance, son sort, Paris-Nancy: Berger-Levrault, 1919, p. 78-87.

54 Pallis A. A., Աշխ. աշխ., էջ 226:

55 Soteriadis G., An Ethnological Map Illustrating Hellenism in the Balkan Peninsula and Asia Minor, London: Edward Stanford, Ltd., 1918, p. 14 -15.

թիվը 19-րդ դարի 90-ական թթ. հասնում էր 100.000-ի<sup>56</sup>:

Փոքր Ասիան՝ Օսմանյան Անապոլիսան, վարչականորեն վիլայեթների բաժանվեց 1864 թ.: Մինչև Առաջին համաշխարհային պատերազմը կար 14 փոքրասիական վիլայեթ և երկու անկախ սանջակ: Օսմանյան կայսրության փոքրասիական և այլ շրջանների վիլայեթներում հոյն բնակչության գործարակում հետևյալ պատկերն է ներկայացնում:

**Արևմույսն Փոքր Ասիան** չափազանց կարևոր գործում Օսմանյան կայսրության աշխարհագրական միջավայրում: Ներառում էր Այդընի և Հուդավենդիկյարի վիլայեթները, Իզմիթի ու Բիգայի անկախ սանջակները ու Կոստանդնուպոլիս քաղաքի ասիական հարվածը (Սկյուռքար):

**Այդընի վիլայեթը** գրադեցնում էր Փոքր Ասիայի արևմույսն ափի մեծագույն մասը<sup>57</sup>: Նահանգում հունական էթնոսի ներկայությունը մի քանի հազարամյակի պարմություն ուներ, իսկ օսմանցի թուրքերն այդպես հայքների էին միայն 11-12-րդ դարերում: Զմյուռնիա քաղաքում և սանջակում ինչպես Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին, այնպես էլ 19-րդ դարում հոյներն իրենց թվաքանակով գերազանցել են թուրքերին: Անգամ անգլիացի Կարլայլ Մակ-Կուանը, ով չափազանց նվազեցված է ներկայացրել Օսմանյան պետությունում հոյների թիվը, նշում է, որ 1860-70-ական թթ. Զմյուռնիա քաղաքի 180-200 հազար բնակչությունից 80 հազարը հոյն էր և միայն 70 հազարը՝ թուրք<sup>58</sup>: Մինչև Առաջին համաշխարհային պատերազմը բնակչության թիվը բավական աճեց՝ 1912 թ. կազմելով մոտ 1.659.529 հազար մարդ, և վիլայեթը դարձավ բավական խիստ բնակչության համար՝ 31 մարդ/քառ. կմ<sup>59</sup>: Մակասի գվայալների

56 Ունկյու Է., Հագիստան, Հայաստան և Քյուրդիստան: Կիլիկիա, Փոքր Ասիա, Միջագետք, Ասորիք և Պաղեստին, Վաղարշապատ: Մայր աթոռ տպ., 1893, էջ 141:

57 Արևելքում սահմանակից էր Կոնիայի, հյուսիսում և հյուսիս-արևմութքում՝ Հուդավենդիկյարի վիլայեթներին, արևմութքում ողողվում էր Եգեյան ծովի ջրերով:

1899 թ. Այդընի վիլայեթն ուներ 89.696 քառ. կմ քարածք, բաղկացած էր Այդընի, Զմյուռնիայի (Իզմիթի), Դենիզլիի, Մասիսայի ու Մենքնշենի սանջակներից, 35 կազաներից ու 2.787 գյուղերից: Արդեն 1914 թ. օսմանյան վիճակագրության մեջ Մենքնշեն ներկայացվում է որպես առանձին սանջակ: Stéphane Karpat K. H., և այլն, էջ 210-211:

58 Մակ-Կոան Կ., Հաշ հովայ պրոտեկտորատ. Օписание географических, этнографических и экономических свойств Турецкой Азии, М.: Унив. Тип., 1884, стр. 248.

59 Պիտենոնան Ա., Օսմանեան պետութիւն, Կ. Պոլիս: «Հայունիք», 1913, էջ 6:

համաձայն, որոնք համընկնում են Սովերիադիսի թվերին, Այդընի նահանգում 1912 թ. բնակվում էին.

#### Աղյուսակ 4.

Մանջակ	Դույներ	Թուրքեր	Այլք	Ընդամենը
Զմյուռնիա	449.044	219.494	85.508	754.046
Մանիսա	83.625	247.776	6.522	337.925
Այդըն	54.633	162.554	2.772	219.959
Դենիզլի	7.710	197.317	430	205.457
Մենթեշեն	27.798	113.700	644	142.142
Հնդամենը	622.810	940.843 (սկզբանայիցում անձշուրբուն կա, պնդը է լիներ 940.841)	95.876	1.659.529 <sup>60</sup>

Մակասի դվյալների կարևորությունը չափազանց մեծ է, քանի որ Հունասրանի վարչապետ Է. Վենիգելոսը Փարիզի հաշվության կրնֆերանսին ներկայացրած հուշագրում հիմնվել է դրանց վրա<sup>61</sup>:

Զմյուռնիայի սանջակը վիլայեթի ամենամարդաշավու ու զարգացած շրջանն էր: Այսինքն էր ապրում նահանգի քրիստոնյաների մեծամասնությունը: Սանջակի վարչական կենտրոնը համանուն Զմյուռնիա (թրք. Իզմիր) քաղաքն էր՝ հունական փոքրասիական զաղութային քաղաքակրթության հնագույն կենտրոններից մեկը: Օսմանյան թուրքերի՝ Փոքր Ասիս նվաճելուց հետո քաղաքն ընկնում է «թմբիրի» մեջ: 17-18-րդ դարերից Եվրոպայի հետ առևտրական կապերի վերականգնման հետ սկսում է քաղաքի զարգացումը: Ժամանակի ընթացքում աճում է բնակչությունը, հարկապես հույների թիվը: Եթե 19-րդ դարի սկզբին՝ 1812 թ., Զմյուռնիայում ապրում էր 106.000 մարդ, ապա դարավերջին՝ 1898 թ.՝ 340 հազար մարդ<sup>62</sup>: Արդեն 1912 թ. Հունական պատրիարքարանի դվյալներով քաղաքի բնակչության թիվը կազմել է 416.494 մարդ, որից հոյներ էին 243.879-ը, մահմեդականներ՝ 96.250-ը, մնացած՝ հայեր,

60 Maccas L., նշվ. աշխ., էջ 78-87: Sénus նաև՝ Soteriadis G., նշվ. աշխ., էջ 9:

61 Pallis A. A., նշվ. աշխ., էջ 57-58:

62 Քոսեան Յ., Հայք ի Զմիւռնիա եւ ի շրջակայս, Դ. Ա. Զմիւռնիա եւ Հայք, Վիեննա: Մյուհիթ. դպ., 1899, էջ 43:

հրեաներ, օդարերկրյա քաղաքացիներ և այլք<sup>63</sup>:

Այդըն քաղաքը համանուն վիլայեթի ու սանջակի վարչական կենտրոնն էր: Դին անվանումը եղել է Տրալես: Չնայած մահմեդականները քաղաքում և սանջակում մեծամասնություն էին կազմում, այնուամենայնիվ քրիստոնյաների ներկայությունը զգալի էր: Այդըն քաղաքում ապրում էր 19.982 հույն և 46.578 մահմեդական, իսկ սանջակի քաղաքներից մեկում՝ Սոլիխայում, հույնները երկու անգամ գերազանցում էին թուրքերին՝ համապատասխանաբար 25.801 և 12.987<sup>64</sup>:

Հույնազգաբնակչությանքանակով երկրորդը Մանիսայի (Մազնեսիա) սանջակն էր: Համանուն վարչական կենտրոնում ապրում էին 38.926 հույն, 37.900 թուրք, 2.000 հայ և 1.000 հրեա<sup>65</sup>:

Օսմանյան պաշտոնական վիճակագրությունն իր հաշվարկները կափարելիս հավկապես անսփոյզ ու անարդարացի է զինվել Այդընի վիլայեթի հույնների նկագմամբ: Փորձ է արվել ամեն կերպ նենգափոխել էթնիկական իրական պափկերը՝ կորուկ նվազեցնելով հույնների թվաքանակը և դրա հաշվին ավելացնելով մահմեդականներինը: Դա ամենին էլ պարահական չէր, քանի որ նահանգը գտնվում էր հունական թագավորության դարաձբային հավակնությունների գործում և փոքրասիական այն շրջաններից էր, որ Փարիզի հաշվության կոնֆերանսում պահանջում էր Է. Վենիգելոսը<sup>66</sup>: Դրա հետևանքով հույնների թվաքանակը վիլայեթում նվազեցվել է երկու անգամ: Ըստ թուրքական աղյուրների՝ 1906-1907 թթ. Այդընում ապրում էր 285.133 հույն (285.105 ուղղափառ և 28 կաթոլիկ), իսկ 1914 թ. մարդահամարով՝ ներառյալ Մենթեշի սանջակը, 319.020 հույն<sup>67</sup>:

Զ. Մըքքարթին, հիմնվելով օսմանյան պաշտոնական գրվալների վրա, որոշ «ուղղումներ» է կափարում և հույնների թիվը նահանգում 1914 թ. համար հասցնում 384.732-ի<sup>68</sup>: Ուշադիր վերլուծության դեպքում հենց նրա աշխարհության մեջ զինում ենք այն հարցի պարասխանը, թե որը է «անհետպանում» վիլայեթի հույնների մյուս կեսը: Այսպես, իր մենագրության սկզբում վկայակոչելով 1911-1912 թթ. սանամենները՝ Մըքքարթին Այդընի նահանգի մահմեդականների թիվը նշում է 1.249.067,

63 Soteriadis G., Խվ. աշխ., էջ 9:

64 Նոյն դեղում:

65 Նոյն դեղում:

66 Pallis A.A., Խվ. աշխ., էջ 57-58:

67 Karpat K. H., Խվ. աշխ., էջ 168 և 188-189:

68 McCarthy J., Խվ. աշխ., էջ 110:

այնուհենին «լրացումներ» կարարելով, իբր ներառելով մահմեղական գաղթականներին, դայիս է «ճշգրված» թիվը՝ 1.517.616<sup>69</sup>: Այնուհենին աշխափության 6-րդ բաժնում ներկայացրած աղյուսակում, չգիրես ինչու, մահմեղականները դառնում են 1.734.179, իսկ ամբողջ բնակչությունը՝ 2.194.419<sup>70</sup>: Եթե անգամ վերջին գումարային թիվը հանենք մնացած ազգությունների և մահմեղականների՝ «նախապես ճշգրված» ու ոչ թե կրկնակի կեղծված թիվը, ապա սկսած վրա է. 2.194.419 (ընդհանուր թիվ) - 1.517.616 (մահմեղականներ) - 75.508 (մնացած ազգեր) = 601.295: Սկսած արդյունքը շատ մոտ է Այդընի հույների իրական թվին: Փասբորեն, Մըքքարթիկ աշխափության մեջ միայն Այդընի վիլայեթում «անհետանում» է 216.563 հույն, որը սկսած վրա է 601.295-ի ու նրա ներկայացրած 384.372-ի փարբերությունն է:

**Իզմիթի և Բիզայի անկախ սանչակներն Օսմանյան կայսրության վարչական կառուցվածքում համարվում էին առանձին միավորներ՝ կապված դրանց բացառիկ աշխարհագրական և ուսումնական նշանակությամբ: Իզմիթի սանչակը<sup>71</sup> գրնվում էր Փոքր Ասիայի հյուսիսարևմտյան հարվածում: Հունական պատրիարքարանն Իզմիթ (Ըիկումեղիա) քաղաքում հաշվում էր 18.550 հայ, 18.223 թուրք ու 3.603 հույն, իսկ ամբողջ սանչակում՝ 48.635 հայ, 73.134 հույն և 116.949 թուրք<sup>72</sup>: Իրականում հայերի թիվն ավելի է եղել. ըստ Հայկական պատրիարքարանի տվյալների՝ 61.675<sup>73</sup>: Սակայն այսպես, ինչպես և այլ վայրերում, վկայաների փոքրիկ անհամաշափությունները պայմանավորված են երկու պատրիարքարանների աշխարհագրական չափումների ու չափման միավորների փարբերությամբ: Ամեն դեպքում սանչակում քրիստոնյա ազգաբնակչությունը գերազանցում էր մահմեղականներին:**

Բիզայի (Դարդանելի հարվածը) անկախ սանչակում<sup>74</sup> ապրում էր

69 Նոյն գեղում, էջ 13:

70 Նոյն գեղում, էջ 110:

71 Արևելքում սահմանակից էր Կասպաննուի, հարավում՝ Հուդավենդիյարի վիլայեթներին, արևմուղքում ողողվում էր Մարմարա, իսկ հյուսիսում՝ Սև ծովի ջրերով: Բաղկացած էր Աղաբազարի, Կարամուսապի, Ցաղովայի, Կեյվեի ու Գանփիրեի կազաներից և գրադացում էր շուրջ 12,000 քառ. կմ քարածք: Տես Պիանոնյան Ա., Խշվ աշխ., էջ 17:

72 Soteriadis G., Խշվ. աշխ., էջ 6:

73 Անական Ա., Խշվ աշխ., էջ 37:

74 Արևելքում սահմանակից էր Դուդավենդիյարի վիլայեթին, հյուսիսում Մարմարա ծովն էր, հարավում և հարավարևմտյան մասում ողողվում էր Էգեյան ծովի ջրերով: Կազմված էր հինգ կազաներից և գրադացում էր շուրջ 7,000 քառ.

138.902 թուրք, 32.830 հույն և 2.336 հայ<sup>75</sup>: Օսմանյան կայսրության համար Բիզարի սանջակն ուներ կենսական նշանակություն. Դարդանելի ջրանցքն առաջին, իսկ Բոսֆորը երկրորդ դարպասն էր Միջերկրական - Էգեյան ծովերից դեպի Սև ծով:

**Կուպանուպովիսը՝** Օսմանյան կայսրության մայրաքաղաքը, գլխավոր է Թուրքիայի Եվրոպական և ասիական հարվածները բաժանող Բոսֆորի ջրանցքի երկու ափերին<sup>76</sup>: Հոնական պարտիաքարանի գլուխաներով 1912 թ. Կ. Պոլիսը Չաթալջայի հետ միասին ուներ 1.173.673<sup>77</sup> բնակիչ, որոնց գեղաքաշխումն այսպիսին էր.

#### Աղյուսակ 5.

-	Թուրքեր	Հույներ	Հայեր	Այլք	Ընդամենը
Վ. Պոլիս	308.733	235.215	122.730	174.430	841.108
Չաթալջայ	16.100	54.787	903	2.285	74.075
Սևյուղար	124.281	74.457	35.560	24.192	258.490
<b>Ընդամենը</b>	<b>449.114</b>	<b>364.459</b>	<b>159.193</b>	<b>200.907</b>	<b>1.173.673</b>

1914 թ. Օսմանյան վիճակագրությունը մոտ 1,7 անգամ նվազեցնում է հույների և 2 անգամ հայերի թիվը Վ. Պոլսում.

#### Աղյուսակ 6.

Մահմետականներ	Հույներ	Հայեր	Այլք	Ընդամենը
560.434	205.762	82.880	60.902	909.978 <sup>78</sup>

#### **Կուղավենդիզյարի (Բրուսայի) վիլայեթը<sup>79</sup> հույների բնակու-**

կմ տարածք: Տե՛ս Պիավեննեան Ա., նշվ. աշխ., էջ 17:

75 Soteriadis G., Խշվ. աշխ., էջ 6:

76 Հյուսիսից ողողվում էր Սև, հարավից՝ Մարմարա ծովի ջրերով, Արևելքում՝ ասիական հարվածում, սահմանակից էր Իզմիթի սանջակին, իսկ արևմտաքրում՝ Եվրոպական մասում, Էղիրսեթի (Աղրիանապոլսի) վիլայեթն էր: 20-րդ դարի վկացին գրանցեցնում էր 5,900 քառ. կմ տարածք, որից 1,900-ը Եվրոպայում, 4,000-ը Ասիայում: Տե՛ս Պիավեննեան Ա., նշվ. աշխ., էջ 5:

77 Soteriadis G., Խշվ. աշխ., էջ 6:

78 Karpat K. H., Խշվ. աշխ., էջ 188:

79 Արևելքում սահմանակից էր Կասպարանուի ու Անկարայի, հարավ-արևելքում՝ Կովկասի, հարավ-արևմտաքրում՝ Այրենի վիլայեթներին, արևմտաքրում՝ Բիզարի սանջակն էր, իսկ հյուսիսում՝ Իզմիթի սանջակն ու Մարմարա ծովը: 1899 թ. Կուղավենդիզյարի վիլայեթն ուներ 91,412 քառ. կմ տարածք, կազմված

թյան ավանդական շրջաններից էր: 1914 թ. Օսմանյան պաշտոնական մարդահամարի համաձայն՝ անջարված սանջակների հետ միասին Հուդավենդիջյարի հույների թիվը 183.974 էր<sup>80</sup>: Մըքքարթին «բարեխողնորեն» թիվը հասցնում է 208.362-ի<sup>81</sup>: Որոշ գրվածների համաձայն նահանգում ապրում էր 350.000 հույն<sup>82</sup>: Սակայն առավել արժանահավաք է Հունական պարքիաբարքարանի արձանազրած 278.421 թիվը<sup>83</sup>, որն ըստ սանջակների դեղաբաշխնում էր հեգույալ կերպ:

#### Աղյուսակ 7.

<i>Սանջակ</i>	<i>Հույների թիվը</i>
Բրուսա	82.505
Բիլեջիկ	26.970
Աֆիոն-Կարասիսար	1.200
Քյութահիա	16.800
Բալըքեսիր	150.946
<b>Ընդամենը</b>	<b>278.421</b>

Բրուսա (թրք. Բորսա) քաղաքը համանուն սանջակի ու վիլայեթի վարչական կենտրոնն էր: Օսմանյան պետքության երբեմնի մայրաքաղաքում 19-րդ դարի 60-70-ական թթ. ապրում էր 73.000 մարդ՝ գլխավորապես թուրքեր, հույներ և հայեր<sup>84</sup>: Առաջին համաշխարհային պատերազմի և ախօրեին քաղաքն ուներ 113.226 բնակչություն, որից 72.993-ը՝ թուրք, 21.850-ը՝ հույն, 14.584-ը՝ հայ, 2.548-ը՝ հրեա և 1.251-ը՝ գարբեր ազգություններ:

Բալըքեսիրի սանջակը վիլայեթի՝ հույներով ամենահոն բնակեցված շրջանն էր: Սանջակի քաղաքներից Այվալին (Կիլոնիա, թրք.՝ Այվալըք)

---

Եր Բրուսայի, Բալըքեսիրի, Աֆիոն-Կարասիսարի, Բիլեջիկի ու Քյութահիայի սանջակներից, 26 կազակներից և 3,450 գյուղերից: Տես Karpat K. H., Աշվ. աշխ., էջ 210-211: Վիլայեթը շատ է վարչական վերաբաժանումների և թարկվել: 1906-1914 թթ. ընթացքում Հուդավենդիջյարի վիլայեթի 2/3-ը անջարվում է մայր վիլայեթից և կազմում չորս անկախ սանջակ՝ Էսքիշեհիր, Կարենս, Կարենս ու Քյութահիա: Տես McCarthy J., Աշվ. աշխ., էջ 10:

80 Karpat K. H., Աշվ. աշխ., էջ 188-189:

81 McCarthy J., Աշվ. աշխ., էջ 112:

82 Les Grecs en Turquie..., p. 4.

83 Soteriadis G., Աշվ. աշխ., էջ 8:

84 Mak-Koan K., Աշվ. աշխ., էջ 250:

գրեթե միադարր հունարնակ քաղաք էր՝ 46.130 հույներով, իսկ Արտակիայում (Էրդեթ) ապրում էր 54.700 հույն, 5.418 թուրք և 952 հայ<sup>85</sup>:

Փաստորեն Արևմտյան Փոքր Ասիայում ապրում էին.

### Աղյուսակ 8.

Այդըն	622.810
Հույսավենադիզար	278.421
Իզմիթ	73.134
Բիզա	32.830
Կ. Պոլիս (ասիական հարված)	74.457
<b>Ընդամենը</b>	<b>1.081.652 (հոյն)</b>

**Հյուսիսային Փոքր Ասիան**<sup>86</sup> ներառում էր Օսմանյան կայսրության հյուսիսային հարվածը և զբաղեցնում Ան ծովի գրեթե ողջ հարավային ափը: Այսպես էին գրնվում առևտրական ու ռազմավարական մեծ նշանակություն ունեցող այնպիսի քաղաքներ, ինչպիսիք էին Տրապիզոնը, Սինոպը, Սամսոնը, Կերասունը և այլն:

Հյուսիսային Փոքր Ասիան ընդգրկում էր օսմանյան Կասպամոնուի և Տրապիզոնի վիլայեթները: Մինչև 1910-1911 թթ. Բոլորի սանջակի առանձնացումը **Կասպամոնուի վիլայեթում**<sup>87</sup> փարբեր գնահա-

85 Soteriades G., Աշվ. աշխ., էջ 8:

86 Տարածքում հոյս բնակչության ներկայության մասին առաջին գրավոր հիշաբակումը պարկանում է Քսենոփոնին, թեև հոյները այսպես հաստափվել էին դրանից մի քանի դար առաջ: Տե՛ս Քսենոփոն, Անարախս (Թարգմ.՝ Սիմոն Կրկյաշարյան), Երևան: ՀՍՍՀ Գիտ. ակադ. իրավ., 1970, գիր 4, պարք. 22-23, էջ 107:

Մ. թ. ա. 3-րդ դարում սրբեղծել էր անկախ Պոնտական պետությունը, որն անկում էր ապրել մ. թ. ա. 1-ին դարում՝ ընկներով հռոմեական փիրապետության տակ: 395 թ. կայսրության բաժանումից հետո անցավ Արևելյան՝ բյուզանդական մասին: 1204 թ. խաչակիրների կողմից Բյուզանդիայի մայրաքաղաքի գրավումից ու թալանից հետո այս դարածքում առաջացել էր առանձին ու անկախ հունական պետություն, որը կոչվում էր Տրապիզոնի կայսրություն և գոյագունեց շորշ 2,5 դար: Օսմանյան թուրքերը 1453 թ. Կ. Պոլիս գրավումից ութ տարի անց՝ 1461 թ., գրավեցին ու վերջ վավեցին նաև Տրապիզոնի հունական պետության գոյությանը:

87 Վիլայեթն ուներ 73,312 քառ. կմ տարածք, կազմված էր Կասպամոնուի, Բոլորի, Չանկիրիի և Սինոպի սանջակներից, 18 կազմաներից և 4,045 գյուղերից:

դրականներով ապրում էր  $24.919^{88}$  -  $40.000^{89}$  հույն:

**Տրապիզոնի վիլայեթը<sup>90</sup>** հույն բնակչության թվով առաջիններից մեկն էր Փոքր Ասիայում, սակայն Տրապիզոնի հույնների թվաքանակի մասին փվալները շատ հակառական են: Հունական պատրիարքարանի փվալների համաձայն՝ վիլայեթում՝ ներառյալ Զանիքի սանչակը, հաշվում էր  $353.533$  հույն<sup>91</sup>:

Այսուսակ 9.

Սանչակ	Հույններ
Տրապիզոն	154.774
Զանիք (Մամուն)	136.087
Լազիստրան (Ոխգե)	2.924
Գյումուշխանե (Խալիֆիա)	59.748
<b>Ընդամենը</b>	<b>353.533</b>

1914 թ. թուրքական նախապատերազմյան մարդահամարի համաձայն՝ Տրապիզոնի վիլայեթում և Զանիքի անկախ սանչակում միասին հաշվում է

Այսուսակ 10.

Տրապիզոն	161.574
Զանիք	98.739
<b>Ընդամենը</b>	<b>260.313<sup>92</sup></b>

Տե՛ս Karpat K. H., նշվ. աշխ., էջ 210-211:

88 Soteriadis G., նշվ. աշխ., էջ 13:

89 Les Grecs en Turquie..., թ. 4. Ըստ Թէոդիկի՝ վիլայեթում ապրում էր 10,000 հոյ: Տե՛ս Թէոդիկ, «Ամենուն դրաբուցոյցը», ԺԶ դարի, 1922, էջ 261-263:

90 Ընդգրկում էր պարմական Պոնտոսի զգայի մասը, գրադեցնում էր Աև ծովի հարավային ափի գրեթե կեսը: Արևելքում սահմանակից էր Ռուսաստանին, հարավում՝ Էրզրումի ու Սերբաստիայի, իսկ արևմուգուում՝ Կասպանուուի վիլայեթներին: 20-րդ դարի սկզբին գրադեցնում էր  $37,894$  քառ. կմ դրասածք, կազմված էր Տրապիզոնի, Զանիքի (Մամուն), Լազիստրանի (Ոխգե) և Գյումուշխանեի սանչակներից, 18 կազաներից և  $2,738$  գյուղերից: Զանիքի սանչակը Տրապիզոնի վիլայեթից անջակեց ու անկախ վարչական միավոր դարձավ 1910 թ.: Տե՛ս Karpat K. H., նշվ. աշխ., էջ 210-211:

91 Soteriadis G., նշվ. աշխ., էջ 11:

92 Karpat K. H., նշվ. աշխ., էջ 188-189:

Սակայն, որպես կանոն, Հյուսիսային Փոքր Ասիան ընկալվում է Պոնտոս<sup>93</sup> պատմական եզրի շրջանակներում: Օսմանյան կայսրության հոյսն բնակչության հաշվման գրեսանկյունից առավել ճիշդ է Պոնտոսը դիմարկել որպես մեկ ամբողջություն՝ ենթավարածքի պատմական զարգացման առանձնահավաքությունից: Պոնտոսի գարբեր շրջանների հոյսները միմյանց հետ ավելի շատ ընդհանրություններ ունեին, նրանց լեզուն՝ պոնտական հունարենը, ժամանակակից հունարենի բարբառներից մեկն է և շատ նման է Կապաղովկիայի ու Կիպրոսի հունարենին:

Պոնտոսի հոյսն բնակչության ճշգրիֆ թվաքանակը չափազանց դըժվար է որոշել: Անհամաշափություն կա ոչ միայն հունական, թուրքական, ամերիկյան աղբյուրների միջև, այլև հենց հոյսն գարբեր հեղինակներ ու ժամանակակիցներ նշում են իրարամերժ, անգամ մեկը մյուսին երկու անգամ գերազանցող թվեր: Նախ Հունական պարբիարքարանի վկյաները համադրելով՝ Պոնտոսի համար սրբանում ենք հետևյալ պատկերը.

#### Աղյուսակ 11.

Տրապիզոնի վիլայեթ (Ներառյալ Զամիք)	353.533	
Կասբամոնտի վիլայեթի Մինոսի սանջակ	7.986	
Մերասդիայի վիլայեթի	Ամասիայի սանջակ	36.739
	Շապիս Գարահիսարի սանջակ	27.761
	Թոքափի սանջակ	27.174
<b>Ընդամենը</b>	<b>453.193<sup>94</sup></b>	

93 Հունական Պոնտոսը Փոքր Ասիայում ուներ 71.500 քառ. կմ գարածություն, որից Տրապիզոնի վիլայեթին (չհաշված Զամիքի սանջակը) բաժին էր հասնում 31.300 քառ. կիլոմետրը: Stéphane Economides D. E., The Pontus and the Right Claims of its Greek Population: Topographical, Ethnographical and Historical Study: With two Maps and Various Statistics, Constantinople: Imprimerie Française Léandre Mourkidès, 1920, p. 6. Օսմանյան վարչական միավորներից Պոնտոսը ընդգրկում էր այս Տրապիզոնի վիլայեթը, բ) Զամիքի առանձնացված սանջակը, զ) Կասբամոնտի վիլայեթի Մինոսի սանջակը և յ) Մերասդիայի վիլայեթի Ամասիայի, Շապիս Գարահիսարի ու Թոքափի (Եվդոկիա) սանջակները: Օսմանյան վարչական այս միավորները մինում էին Պոնտոսի 6 միգրոպոլությունների մեջ: Դրանք էին Տրապիզոն, Առողջապոլիս (Ձեվիզիկ), Խալիֆա (Գյումուշխանե), Կորոնիա (Սիկոպոլիս - Շ. Գարահիսար), Նեղուսարիա (Նիքուս), Ամասիա: Բաժանումը հարաբերական է, և դրվում է՝ համաձայն հունական (պոնտական) աղբյուրների: Դժվար չէ նկարել, որ որո՞շ շրջաններ բուն հայկական էին:

94 Soteriadis G., Խշկ. աշխ., էջ 7, 11, 13:

Սփացված արդյունքը մոտ է ամերիկյան աղբյուրում նշված գ57.000 թվին<sup>95</sup>: Խսկ օսմանյան վերջին մարդահամարի դպյալները համադրելով՝ սփառում ենք 363.000 թիվը, որն իրականությունից հեռու է:

Հայդնի է, որ Փարիզի հաշվության կոնֆերանսում «Պոնդրոսի դարձքը ընդգրկվում էր ոչ թե Հունասփանի, այլ Հայկական պատվիրակության դարձքային հավակնությունների գործում»: Պոնդրոսի հոյների Ազգային միության նախագահ Ա. Օեկոնոմոսը և նրանց Ազգային կոնգրեսի նախագահ Կ. Զ. Կոստանդինիին իրենց կազմած հուշագրում, որն ուղղված էր Փարիզի հաշվության կոնֆերանսին, ներկայացնելով իրենց ազգային պահանջները, նշում էին, որ հոյների թվաքանակը դարձքում մոտ 700 հազար էր՝ չհաշված այն 250 հազար պոնդրոսիներին, որ դարիների ընթացքում հայդնվել էին Կովկասում և Ռուսասփանի այլ շրջաններում<sup>96</sup>:

1920 թ. Կոստանդինոպոլսում լույս դրեսած «Պոնդրոսը և նրա ժողովրդի արդարացի պահանջները» գրքում, հիմնվելով «Պոնդրական արքեպիսկոպոսության և Ազգային միության ներկայացրած դպյալների վրա, ըստ պոնդրական 6 միդրոպոլությունների հոյն ընակության դեղաբաշխման, նշվում են երկու՝ միմյանցից խիստ դարբեր թվեր»<sup>97</sup>:

#### Աղյուսակ 12.

Տրապիզոն	95.500	125.282
Ռումուպոլիս (Զևիզլիկ)	57.000	75.000
Խալիխա (Գյումուշխանե)	108.000	218.849
Կոլոնիա (Նիկոպոլիս - Շ. Գարահիսար)	67.000	100.500
Նեռկեսարիա (Նիքսար)	100.000	85.122
Անասիա	272.500	205.230
<b>Ընդամենը</b>	<b>700.000</b>	<b>809.983</b>

95 <http://www.greek-genocide.org/pontus.html>

96 Հայկական հարցը Հաշվության կոնֆերանսի առաջ, Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր, թիվ 5, Երևան: Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի հրապ., 2002, էջ 158-159:

97 [National Delegation of the Euxine Pontus], Memorandum submitted to the Peace Conference, Manchester: Norbury, Natzio & Co. Ltd., 1919, p. 2.

98 Economides D., Խշ., աշխ., էջ 42 :

Նոյն աղբյուրում գեղաքաշխումն արվում է նաև ըստ վարչական միավորների.

Ալյուսակ 13.

Տրավիզոն և Զանիք	Մինոպ	Սեբաստիայի սանջակներ			Ընդամենը
		Ամասիա	Շ. Գարահիսար	Թոքար	
523.000	23.000	55.500	51.500	47.000	700.000 <sup>99</sup>

Օսմանյան խորհրդարանի հույն անդամների՝ 1919 թ. Թուրքիայի հարցերով գրադպող ամերիկյան հանձնաժողովին ներկայացրած հուշագրում, անդրադառնալով Օսմանյան կայսրության գործեր շրջաններին, նշվում է նաև Պոնտոսի մասին: Հուշագրում նրանք պնդում են, որ պոնտոսիների իրական թիվը՝ Կովկաս զայթածներին ներառյալ, կազմում է 800.000<sup>100</sup>:

Պետք է նշել նաև, որ Պոնտոսի հարցով գրադպող որոշ հեղինակներ կանգ են առնում 750.000-ի վրա<sup>101</sup>:

Անշուշտ, դժվար է որոշել պոնտոսիների ճշգրիտ թիվն աղբյուրների հակասության ու իրարամերժության պատճառով՝ հաշվի առնելով նաև պոնտոսի հույնների ազգային պահանջները: Չի կարելի հասդարականորեն պնդել հիշափակված և ոչ մի վրյալի բացարձակ ճշգրիտ լինելը: Անզամ պոնտական հուշագրում նշվում էր. «Քանի որ վիճակագրական ծառայությունը թուրքիայում ճշգրիտ չէ, անհնար է վրալ որևէ սպույզ վրյալ երկրի բնակչության փոփոխության մասին»<sup>102</sup>: Եթե հաշվի առնենք նաև, որ գործում հաշվվում էին 85.000 մահմեդական, ովքեր իրականում ծնունդով հույներ էին<sup>103</sup>, ապա պարզէրն ավելի է խճճվում, քանի որ ոչ բոլոր հեղինակներն են նշում, թե արդյոք իրենց վրյալները վերաբերում են միայն քրիստոնյա՝, թե՛ նաև մահմեդականացված հույներին: Ուստի

99 Նոյն գեղում, էջ 45:

100 [Ottoman Greek Parliamentary Deputies], Memorandum Presented by the Greek Members of the Turkish Parliament to the American Commission on Mandates over Turkey, New York: American – Hellenic Society, 1919, p. 14.

101 Charalambidis M., The Pontian Question in the United Nations, Thessaloniki: Pontian Society of Thessaloniki “Euxinos Leschi”, 2004, p. 14.

102 [National Delegation of the Euxine Pontus], Memorandum Submitted to the Peace Conference, Manchester: Norbury, Natzio & Co. Ltd., 1919, p. 2.

103 Economides D., նշվ. աշխ., էջ 46:

կարծիք կա անգամ, որ նախապատերազմյան շրջանում Փոքր Ասիայի Պոնդոսի շրջանի հույն բնակչությունը չէր կարող գերազանցել 500.000-ը<sup>104</sup>:

**Կենտրոնական և Հարավային Փոքր Ասիայի մեջ են մրնում Անկարայի, Կոնիայի, Սերասպիայի (Սերասպիան աշխարհագրորեն գտնվում է Փոքր Ասիայի կենտրոնում, սակայն, պատրմական զարգացման դեսանկյունից ելեներով, ավելի ճիշգ է դիմարկել Հայկական վիլայեթների հետ), Արանայի ու Հալեպի վիլայեթները: Չնայած աշխարհագրական հսկա փարածությանը՝ հույներն այսուղ ավելի քիչ էին, քան Փոքր Ասիայի արևմուգրում և հյուսիսում: Այնուամենայնիվ հույն բնակչությունը ներկայացված էր նաև այս վիլայեթներում:**

**Անկարայի վիլայեթի<sup>105</sup> համանուն կենտրոն Անկարա քաղաքն ուներ մոտ 46.000 բնակչություն, որից 1/3-ը՝ շուրջ 15.000-ը, քրիստոնյաներ՝ էին՝ 12.000 հայ և 3.000 հույն<sup>106</sup>: Վիլայեթի Կեսարիայի ու Յոզդարի սանջակներում ապրում էին ավելի մեծ թվով հայեր ու հույներ: Դուռական պատրիարքարանի դպյաներով միայն Կեսարիա քաղաքում ապրում էին 14.152 հույն և 27.080 հայ, Յոզդարում՝ 3.230 հույն և 22.000 հայ, իսկ ամբողջ վիլայեթում՝ 45.873 հույն և 98.798 հայ<sup>107</sup>:**

Փաստորեն Անկարայի վիլայեթում կար զգալի թվով քրիստոնյա բնակչություն: Հարկապես մեծարթիվ էին հայերը, որոնց թիվը, ըստ Թեոդիլի, հասնում էր 115.000-ի<sup>108</sup>:

Հոյն բնակչությունն ավելի մեծաքանակ էր Կոնիայի վիլայեթում<sup>109</sup>: Վիլայեթի սանջակներից Նիյրեում էր ապրում նահանգի հույների 65

104 <http://www.greek-genocide.org/pontus>.

105 Արևելքում սահմանակից էր Սերասպիայի, հյուսիսում՝ Կասպանուուի և Արանայի վիլայեթներին: Դարասկրիս գրադացնում էր 98.416 քառ. կմ փարածք, կազմված էր Անկարայի, Յոզդարի, Կեսարիայի, Կիրշենիրի ու Չորումի սանջակներից, 21 կազաներից և 2.765 գյուղերից: Տե՛ս Karpas K. H., նշվ. աշխ., էջ 210-211:

106 Mak-Koan K., նշվ. աշխ., էջ 251:

107 Soteriadis G., նշվ. աշխ., էջ 10:

108 Թեոդիլ, «Ամենուն փարեցոյցը», ԺԶ փարի, Կ. Պոլիս: Տպ. Մ. Հովակիմեան, 1922, էջ 261-263:

109 Կոնիան վարչականորեն արևելքում սահմանակից էր Աղանայի, արևմուգրում՝ Այղընի ու Հուդակենի վիլայեթներին, իսկ հարավում Միջերկրական ծովն էր: Փոքրասիական թերակղզու ամենամեծ վիլայեթն էր՝ 158.944 քառ. կմ փարածքով, կազմված էր Կոփիայի, Նիյրեի, Բուրդուրի, Խսպարլայի ու Անթալիայի սանջակներից, 25 կազաներից և 1.939 գյուղերից: Տե՛ս Karpas K. H., նշվ. աշխ., էջ 210-211:

%-ը: Հունական պարփիարքարանի գրվալներով Նիյդեի սանջակում և ամբողջվիլայեթում ապրում էր համապարփախանաքար 55.518 ու 87.021 հույն<sup>110</sup>: Ամենայն հավանականությամբ պարփիարքարանի՝ Կոնիայի վերաբերյալ գրվալները թերի էին, քանի որ անզամ Մըրքարքին նահանգում հաշվում է 121.812 հույն<sup>111</sup>:

**Աղանայի վիկայեթը**<sup>112</sup> (Կիլիկիա) ևս հույների բնակության շրջաններից էր: Վիրապ Զինեն նշում է, որ 1890-ական թթ. Աղանայի վիլայեթում ապրում էր 97.450 հայ, 46.200 հույն, 20.900 ուղղափառ ասորի և 158.000 մահմեդական, որոնցից միայն 93.200-ն էր թուրք<sup>113</sup>: Սակայն Զինեի գրվալները, ամենայն հավանականությամբ, հիմնված են օսմանյան պաշտոնական գրվալների վրա: Սիյուռքահայ պարմաքան Սարգիս Կարաջյանն այն կարծիքին է, որ Զինեի գրվալները 50-60 %-ով պակաս են իրական թվերից<sup>114</sup>: Ըստ Հայկական պարփիարքարանի՝ 1913 թ. միայն Աղանայի վիլայեթում ապրում էր 119.414 հայ<sup>115</sup>, իսկ ըստ Թեոդիկի՝ Կիլիկիայում հայերի թիվը 205.000 էր<sup>116</sup>: Հույների թվաքանակի հարցում հունական աղբյուրները գրագանվում են 66.200-ի<sup>117</sup> ու 70.000-ի<sup>118</sup> միջև:

**Տալեպի վիկայեթում**<sup>119</sup> 19-րդ դարի վերջին բնակվում էր 19.923 հույն<sup>120</sup>: Օսմանյան 1914 թ. մարդահամարը Հալեպի նահանգում հաշվում

110 Soteriadis G., Եշվ. աշխ., էջ 12:

111 McCarthy J., Եշվ. աշխ., էջ 110:

112 Արևելքում սահմանակից էր Հալեպի, հյուսիսում՝ Անկարայի ու Մերասփիայի, արևմուղքում՝ Կոնիայի վիլայեթներին, իսկ հարավում՝ Միջերկրական ծովին: 1899 թ. զբաղեցնում էր 71.600 քառ. կմ տարածություն, կազմված էր Աղանայի, Մերսինի, Կոզանի, Էջելի ու Պայասի սանջակներից, 15 կազաներից և 1.632 զյուղերից: Տես Karpat K. H., Եշվ. աշխ., էջ 210-211:

113 Cuinet V., La Turquie d'Asie, vol. 2, Paris: Leraux, 1892, p. 5.

114 Karajian S. J., An Inquiry Into the Statistics of the Turkish Genocide of the Armenians 1915-1918, The Armenian Review 25 (Winter 1972), p. 9.

115 Անալյան Ա., Եշվ. աշխ., էջ 37

116 Թեոդիկ, Եշվ. աշխ., էջ 261-263:

117 Pallis A. A., Եշվ. աշխ., էջ 226 :

118 Soteriadis G., Եշվ. աշխ., էջ 15:

119 Դարասկզբին ուներ 117.248 քառ. կմ տարածք, կազմված էր Հալեպի, Մարաշի և Ուրֆայի սանջակներից, 26 կազաներից ու 3.450 զյուղերից: Տես Karpat K. H., Եշվ. աշխ., էջ 210-211: 1910-1913 թթ. վիլայեթից անջարվում և անկախ սանջակներ են դառնում նախ Ուրֆան, ապա Մարաշը: Տես McCarthy J., Եշվ. աշխ., էջ 30:

120 Krikorian M. K., Armenians in the Service of Ottoman Empire 1860-1908,

է 21.990 հույն<sup>121</sup>: Հայկական պարփիրակության՝ Փարիզի հաշվության կոնֆերանսին ներկայացրած հուշագրում նշվում էր, որ Կիլիկիայում (Աղանայի վիլայեթ, Մարաշի սանչակ) 1912 թ. դրությամբ ապրել են 40.000 հույն և 41.000 ասորի, 205.000 հայ և 156.000 մահմեդական<sup>122</sup>: Այս գրեղեկություններից երևում է, որ Կիլիկիայում քրիստոնյաները գերազանցում էին ինչպես թիրքերին, այնպես է բոլոր մահմեդականներին միասին վերցրած:

**Հայկական (Արևելյան) վիլայեթներն** Օսմանյան կայսրության արևելյան հարվածում գրինվող այն վեց վարչական միավորներն էին, որոնք Արևմտյան Հայաստանի մաս էին կազմում: Խոսքը վերաբերում է Սեբաստիայի, Էրզրումի, Վանի, Բիթլիսի, Խարբերդի ու Դիարբերիի վիլայեթներին, որոնց բնակչության զգալի մասը հայեր էին: Նշված նահանգներում ապրում էին նաև ոչ մեծ թվով հույներ:

Հույն բնակչության քանակով առաջինը Սեբաստիայի (Սվազ)<sup>123</sup> վիլայեթն էր: Հունական պարփիարքարանը նահանգում հաշվում էր 99.376 հույն<sup>124</sup>, որոնց գրեղեկությունն ըստ սանչակների այսպիսին էր.

#### Աղյուսակ 14.

Սեբաստիա	7.702
Անասիա	36.739
Շապին Գարահիսար	27.761
Թոքար	27.174
<b>Ընդամենը</b>	<b>99.376</b>

Սակայն Սեբաստիայի վիլայեթի Ամասիայի, Շապին-Գարահիսարի և Թոքարի սանչակների հույններին, ինչպես զիբենքը, հունական աղբյուրները հաշվում են Տրավիզոնի ու Սինոպի հույնների հետք՝ որպես Պոնդոսի հույններ: Ուստի ճիշդ է միայն համանուն՝ Սեբաստիայի սանչակի 7.702

London: Routledge & Kegan Paul, 1977, p. 81-82.

121 Karpat K. H., Աշվ. աշխ., էջ 188-189:

122 Հայկական հարցու Հաշվության կոնֆերանսի առաջ, Հայոց ցեղասպանության և պարմության հարցեր, թիվ 6, Երևան: Հայոց ցեղասպանության թանգարան-ինստ. հրատ., 2002, էջ 115:

123 19-րդ դարի վերջին կազմված էր Սեբաստիայի, Անասիայի, Թոքարի (Եվլոկիա) ու Շապին Գարահիսարի սանչակներից, 28 կազմաներից և 4.761 գյուղներից: Տե՛ս Հայկական հարց, հանրագիրարան, Երևան, 1996, էջ 408:

124 Soteriadis G., Աշվ. աշխ., էջ 7:

հույներին ներառել հայկական վիլայեթների հույն բնակչության մեջ:

Էրգրումի վիլայեթում Քինեհի տրվածներով 1890-ական թթ. ապրում էր 3.725 հույն<sup>125</sup>: Հայոց պատրիարքարանը Հայկական վիլայեթներում Սեբաստիայից բացի միայն Էրգրումում է հիշալակում հույների գոյության մասին, համաձայն որի՝ 1913 թ. դրությամբ այդպեղ ապրում էր 12.000 հույն<sup>126</sup>:

Հայկական մյուս չորս վիլայեթներում հույների գուղաքաշխումն ըստ փարբեր աղբյուրների այսպիսին էր.

#### Աղյուսակ 15.

Վիլայեթ	Քինե Վ., 1890	Օսմ. 1914 թ. մարդահամար	Մոքքարժի, 1912-1914
Վան	-	1	1
Բիթիս	210	-	-
Խարբերդ	-	971	1.227
Դիարբեքիր	9.440	1.935	2.355
Ըստամենը	9.650	2.907	3.583

**1913 թ.-ին Հունասրանին անցած գրարածքներ:** Բականյան պատրերազմներում Օսմանյան կայսրությունը պարզվեց ու կորցրեց Եվրոպական տիրույթների մեծ մասը: Թուրքիային մնաց միայն Արևելյան Թրակիան՝ Աղրիանապրուսով (Էղիրնե): 1913 թ. օգոստոսի 10-ին կնքված Բուխարեստի պայմանագրով Հունասրանին անցան Հարավյային Մակեդոնիան, Հարավյային Էպիրոսը, Էգեյան ծովի արևելյան կղզիները և Կրետեն:

Մակեդոնիայի հարցն Արևելյան հարցի բաղկացուցիչն էր: Ինչպես նշում է Էդվին Փիլսը, Մակեդոնիան աշխարհագրական եզր է, որ օգտագործվում է՝ արդարականություն ունեցող գրարածքական մեծություններ: Հաճախ այն ներառում է նույնիսկ ամբողջ Բականյան թերակղզին, բացառությամբ Հունասրանի, Բուլղարիայի, Սերբիայի ու Չեռնոգորիայի<sup>127</sup>: Սակայն սովորաբար ընդունվում է հույն հեղինակների կարծիքը, համաձայն որի՝ Մակեդոնիան նախկին Մոնասդիրի ու Մալոնիկի վիլայեթների գրադեցրած գրարածքն է<sup>128</sup>:

125 Cuinet V., նշվ. աշխ., էջ 136.

126 Հայկական հարցը Հաշության կոնֆերանսի առաջ, Հայոց ցեղասպանության պակմության և պատրմագրության հարցեր, թիվ 6, 2002, էջ 115:

127 Pears E., նշվ. աշխ., էջ 228 :

128 Նոյն գուղում, էջ 228 :

Մակեղոնիան կայսրության ամենաբազմազգ հարվածներից էր. այս դեպքում էին մեծաքանակ հույներ, թուրքեր, բուլղարներ, սերբեր, վալախներ, հրեաներ, ալբանացիներ: Բայկանյան պարերազմներից առաջ ոչ միայն Հունասփանը, այլ նաև դաշնակից մյուս պետքությունները լուրջ հավակնություններ ունեին Մակեղոնիայի նկարմամբ: Հակամարդությունը մի քանի հանգույց ուներ՝ մի կողմից դեղական ժողովուրդների ու Օսմանյան կայսրության, մյուս կողմից հենց վեղաբնակների միջև: Ինչպես դիպուկ նկարել է Արևելյան հարցի անվանի մասնագետ Զ. Մարիովը, «Մակեղոնիան Բայկանյան խնդրի մանրակերպն է»<sup>129</sup>:

Մինչև Բալկանյան պարերազմները Մակեղոնիայի եթերիկական պարկերը չափազանց աղավաղված է ներկայացվում թուրքական մարդահամարի կողմից, որի համաձայն Սալոնիկի ու Զ. Մոնասփիրի սանչակներում ապրում էին.

#### Աղյուսակ 16.

Վիճակեր	Մահմետականներ	Հոյներ	Բուլղարներ	Դրեաներ	Այլ	Ընդամենը
Սալոնիկ	419.604	266.574	156.230	52.395	26.556	921.359
Մոնասփիր	328.551	286.001	197.088	5.459	7.729	824.828
<b>Ընդամենը</b>	<b>748.155</b>	<b>552.575</b>	<b>353.318</b>	<b>57.854</b>	<b>34.285</b>	<b>1.746.187<sup>130</sup></b>

Փիրսի վվյալներով Սալոնիկի ու Մոնասփիրի վիճայեթներում միավին ապրում էր 777.000 մահմետական, 659.000 հոյին և 374.000 բուլղար<sup>131</sup>: Անշուշփ, հոյներն այսպես ամենամեծ եթերիկական խումբն էին, քանի որ ոչ բոլոր մահմետականներն էին ազգությամբ թուրք:

Ինչպես նշվեց, 1913 թ. Բուլղարեասպի պայմանագրով միայն հարավային Մակեղոնիան անցավ Հունասփանին: Այս ներառում էր Դրամայի, Սերեսի ու Սալոնիկի շրջանները (ներառյալ Խալկիդիչան)՝ կազմելով շուրջ 34.000 քառ. կմ տարածք: Ամբողջ հարավային Մակեղոնիան ուներ 1.079.000 բնակչություն, որից 518.000 հոյին, 348.000 մահմետական, 213.000 բուլղարացի, հրեա և այլք<sup>132</sup>:

Հունասփանին անցած տարածքներից Էպիրոսն ընկած էր Բալկան-

129 Marriott J. A. R., *The Eastern Question, A Historical Study in European Diplomacy*, Oxford: Clarendon Press, 1951, p. 409.

130 Karpat K. H., Աշկ. աշխ., էջ 166:

131 Pears E., Աշկ. աշխ., էջ 231 :

132 Pallis A. A., Աշկ. աշխ., էջ 224 :

յան թերակղզու Աղբյակի ափին և մինչև Բալկանյան պատերազմ-ները մտնում էր օսմանյան Յանինի (Յանինայի) վիլայեթի մեջ: Բուխարեստի պայմանագրով, սակայն, ամբողջ Էպիրոսը չհանձնվեց Հունասփանին: Հյուսիսային մասը, որն ընդգրկում էր Յանինի վիլայեթի Երիգրիի ու Բերապի սանչակները, միավ նորասփեղծ Ալբանական պետության կազմի մեջ: Միայն Էպիրոսի հարավը, այսինքն Յանինի վիլայեթի Յանինի ու Պրևեզեի սանչակները, բաժին հասավ Հունասփանին: Ըստ Պալիսի՝ 7.000 քառ. կմ քարածք ունեցող Նարավային Էպիրոսում ապրում էր 271.000 հույն, 20.000 մահմետական և քարբեր ազգությունների 2.000 ներկայացուցիչներ (բուղարներ, հրեաներ, օդարերկրյա հպատակներ և այլն)<sup>133</sup>:

Կրեստ կղզու բնակչության բացարձակ մեծամասնությունը հույներ էին: Կրեստն օքաղեցնում էր 8.000 քառ. կմ քարածքը, ուներ 347.000 բնակչություն, որից 321.000-ը հույներ էին, 23.000-ը՝ մահմետականներ, իսկ 3.000-ը՝ այլ ազգություններ և օդարերկրյա հպատակներ<sup>134</sup>:

Դեռևս 19-րդ դարի երկրորդ կեսին Կարլայլ Մակ-Կուանի թերի ու նվազեցված քվյալներն անգամ վկայում էին Էգեյան կղզիներից յուրաքանչյուրում կամ հույների բացարձակ մեծամասնության, կամ ամբող-ջությամբ հունաբնակ լինելու մասին:

#### Աղյուսակ 17.

Իմրեռու	3.000 հույն
Տեներու	5.000 բնակիչ, 2/3-ը հույն
Լեմնոս	12.000 հույն
Միթիլեն	60.000 բնակիչ, բացարձակ մեծամասնությունը հույն
Քիոս	65.000 բնակիչ, 60.000-ը հույն, 2.000-ը թուրք, մնացածը հրեա, ֆրանկ և այլն
Սամոս	34.300 բնակիչ, 34.000-ը հույն
Իկարիա	8.000 հույն
Կարմոս	4.000 հույն
Կալիմնոն	7.000 հույն
Կոս	16.000 բնակիչ, գրեթե բոլորը հույն
Հոռոնու	40.000 բնակիչ, 32.000-ը հույն, 6.000-ը թուրք, 2.000-ը հրեա <sup>135</sup>

133 Նոյն գեղում.

134 Pallis A. A., Աշվ. աշխ., էջ 224:

135 Mak-Koan K., Աշվ. աշխ., էջ 18-24 :

Օսմանյան պաշտոնական դրվագների համաձայն՝ մինչև Բայկանյան պափերազմները կղզիներում (ներառյալ Կրեքեն) հաշվում էր 364.223 բնակիչ, որոնց բացարձակ մեծամասնությունը կազմում էին հույները՝ 316.842, մահմետականների թիվը՝ 37.601 էր, այլք՝ 9.780<sup>136</sup>. Պարզ է նաև, որ, չնայած մահմետականների չնչին ներկայությանը, ամեն կերպ նվազեցված է ներկայացվում հույների թիվը:

Իմբրոս և Տեներոս կղզիների պափկանելիության հարցն առաջնահերթ խնդիր էր ոչ միայն հույն-թուրքական, այլև միջազգային հարաբերությունների ծևաչափում: Դրանք իրենց աշխարհագրական դիրքով և ռազմավարական նշանակությամբ կապվում էին նեղույների հետ, քանի որ աշխարհագրորեն շատ մոտ էին դրանց: Թուրքական կողմից համար այդ կղզիների դերը մեծ էր, սակայն դրանք հիմնականում հունարնակ էին: Տեներոսն ուներ 5.000 բնակիչ, որի ավելի քան 2/3-ը՝ 3.752-ը, հույներ էին, իսկ Իմբրոսում ապրում էր 8.125 հույն<sup>137</sup>: Սակայն ի վերջո այս երկու կղզիների պափկանելիության հարցը լուծվեց հօգուփ թուրքերի:

Դեռևս 1911-1912 թթ. իդալաթուրքական պափերազմի հետևանքով թուրքերը կրցրել էին Էգեյան ծովի հարավային՝ Դոդեկանեսյան կղզիները: Իդալիային անցած թվով 12 այդ կղզիները բացառապես հունարնակ էին.

#### Աղյուսակ 18.

<b>Պայմանս</b>	<b>2.700</b>
<b>Լեռոս</b>	<b>6.000</b>
<b>Կայիմաս</b>	<b>18.000</b>
<b>Կոս</b>	<b>10.550</b>
<b>Նիսիրոս</b>	<b>5.000</b>
<b>Ասդիպալեա</b>	<b>1.200</b>
<b>Սիմի</b>	<b>16.000</b>
<b>Տիլոս</b>	<b>1.300</b>
<b>Խալիք</b>	<b>2.740</b>
<b>Հոտրոս</b>	<b>25.010</b>
<b>Կարպատոս</b>	<b>8.527</b>
<b>Կաստոս</b>	<b>5.700</b>
<b>Ընդամենը</b>	<b>102.727<sup>138</sup></b>

136 Karpat K. H., Աշվ. աշխ., էջ 162:

137 Soteriadis G., Աշվ. աշխ., էջ 15:

138 Նոյն դեղում:

Բուխարեստի պայմանագով Հորակիային մնացին Դողնկաննայան կղզիները, որոնք ի վերջո Հունասփանին վերադարձվեցին միայն 1947 թ.:

Պալիսի բայլուներով հունական Միթիլեն (Լեսբոս), Քիոս, Սամոս, Լեմնոս, Իմբրոս, Տեսլոս և Իկարիա կղզիներում միասին ապրում էր 260.000 մարդ, որից 247.000-ը՝ հույն, 8.000-ը՝ մահմետական և 5.000-ը՝ քարբեր ազգություններ<sup>139</sup>:

Փորձենք համարոել հույն բնակչության թվաքանակը բոլոր կղզիներում.

#### Այլուսակ 19.

Դարդանելից մինչև Դոդեկանես	247.000
Դոդեկանես	102.727
Կրետե	321.000
<b>Ընդամենը</b>	<b>670.727</b>

Ինչ վերաբերում է Օսմանյան կայսրության մյուս շրջաններին, ապա Ադրիանապոլիսի վիլայեթում (Արևելյան Թրակիա) ապրում էր 366.363 հույն<sup>140</sup>: Հույների որոշ զանգվածներ կային նաև Սիրիայի, Պաղեստինի, Լիբանանի շրջաններում: Մասնավորապես օսմանյան վերջին մարդահամարի համաձայն՝ Բեյրութի վիլայեթում ապրում էր 87.244 ուղղափառ, 24.210 կաթոլիկ, Սիրիայում՝ 60.978 ուղղափառ, 27.662 կաթոլիկ, Երուսաղեմի շրջանում՝ 26.035 ուղղափառ և 1.086 կաթոլիկ հույն<sup>141</sup>:

Այսպիսին էր հույների գեղաբաշխումն Օսմանյան կայսրությունում մինչև Բականյան, ապա նաև մինչև Առաջին համաշխարհային պատերազմները: Հույն բնակչության թվաքանակի վերաբերյալ ամենագրեթեր աղբյուրների համադրումը և վերլուծությունը ցույց է դրախս, որ, չնայած թուրքական մարդահամարների դիքավորությանը՝ կեղծել ու նվազագույնի հասցել հույների թիվը, Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին Օսմանյան կայսրությունում ապրում էր շուրջ 2,5 մին հույն<sup>142</sup>: Հունական գարը հարկապես մեծարիվ ու ներկայացուցական էր կայսրության արևմտյան հարվածում:

139 Pallis A. A., Աշխ., էջ 224:

140 Soteriadis G., Աշխ., էջ 15:

141 Karpat K. H., Աշխ., էջ 188-189:

142 St. և նաև՝ London Committee of Undreemed Greeks, The Liberation of the Greek people in Turkey, Manchester: Norbury Natzio & Co., 1919, p.3.; Λαμέρας Κ., Η Περί Μικράς Ασίας και των εν Αυτή Κρυπτοχριστιανών, Αθήνα, 1921, σελ. 8.

## 1.2. Հույների ազատագրական շարժումն ու կողորութեան XIX դարի երկրորդ կեսին և XX դարի սկզբին

19-րդ դարում հույները փակավին գլուխում էին Օսմանյան գիրապետության վակը: Օսմանյան կայսրությունում հույները մինում էին հունական ուղղափառ համայնքի (Millet-i Rum կամ Rum Milleti) մեջ: «Միլլեթի» գլուխ կանգնած էր Կոստանդնուպոլիսի հունական պատրիարքը<sup>143</sup>: Վերջինս համարվում էր «Հույն ուղղափառ ազգի» հոգևոր և ազգային առաջնորդը («Եթնարքոց»): Այս գիրդոսն առաջինը շնորհվել է Գենադիոս 2-րդ Սիոնարիոսին՝ առաջին հետքյուղանդական պատրիարքին, սուլթան Մեհմեն 2-րդի կողմից 1454 թ.<sup>144</sup>: Ժամանակի ընթացքում պատրիարքը դառնում է Օսմանյան բյուրոկրատիայի անդամ: Հունաց պատրիարքը, ի հավելումն իր հոգևոր ազդեցության, սրբանում է նաև բավականին մեծ քաղաքական իշխանություն ամբողջ միջերի գործերի կառավարման մեջ<sup>145</sup>:

Ընդհանրապես ոչ մահմեդականների իրավական կարգավիճակն իսլամական օրենքներում հիմնվում էր Ղուրանի փարբեր այարների և Շարիաթի (մահմեդական իրավունքի կանոնների) վրա: Դամաձայն դրա ել հասարակությունը բաժանվում էր մուսուլմանների և ոչ մուսուլմանների, իսկ վերջիններս ել իրենց հերթին կազմված էին «ահլ ուլ քիրաբ»-ից՝

143 Բացի Կ. Պոլսից Օսմանյան կայսրությունում հույներն ունեին ևս երեք պատրիարքարան՝ Երևասաղնմի, Ալեքսանդրիայի ու Անդրիայի, որոնք ինքնուրույն էին՝ ունենալով հավասար իրավունքներ: Այսուամենայնիվ ավագության իրավունքը պատրիարքում էր Կոստանդնուպոլիսի պատրիարքությանը:

144 Alexandris A., The Greek Minority of Istanbul and Greek-Turkish Relations, 1918-1974, Athens: Centre for Asia Studies, 1992, p. 22.

145 1461 թ. սփեղծվեց նաև Կոստանդնուպոլիսի Հայոց պատրիարքարանը, որն իր հերթին դարձավ օսմանահապահակ հայերի հոգևոր և ազգային հարցերը գնորհնող հասարակություն: Սուլթանը նպագակ ուներ այն դարձնելու յուրաքեսակ հակալիշտո Կոստանդնուպոլիսի Հունաց պատրիարքարանին և Էջմիածնի Հայ առաքեական կաթողիկոսությանը: Սփեղծվեց նաև Հրեական միլեթը: Ժամանակի ընթացքում Օսմանյան կայսրությունում մեծ գերությունների ազդեցության մեծացման հետևանքով սփեղծվեցին նորերը: Այսպիս, Ֆրանսիայի և Ավստրիայի ճնշմամբ կայսրության կաթողիկ հայերը հասան երան, որ 1831 թ. ճնշազվեց նաև Կաթողիկ միլեթը, իսկ Մեծ Բրիտանիայի աջակցությամբ 1850 թ. սփեղծվեց Բողորական միլեթը: 1882 թ. Սիրիական (Ասորական) Ուղղափառ եկեղեցին կրկին Մեծ Բրիտանիայի ճնշմամբ ճանաչվեց առանձին միլեթ և դարձավ անկախ Հայկական պատրիարքարանից: 1914 թ. Օսմանյան կայսրությունում կար 17 առանձին միլեթ: Տես Alexandris A., Աշխ. էջ 21:

«գրքի մարդկանցից» (Միասփածներ, ովքեր ունեին Սուրբ գիրք) և մնացածներից (կոպապաշտներ, աթեխսփներ)՝<sup>146</sup>: Նոյներն Օսմանյան կայսրությունում այլ քրիստոնյաների և հրեաների նման զրկում էին յուրահարուկ կարգավիճակում: Նրանք համարվում էին «ահլ ուլ քրիստով»՝ «գրքի մարդիկ» և մահմեղականների համեմափ զրկված էին մի շարք իրավունքներից: Նոյներն այլ քրիստոնյաների և հրեաների նման իրավունք չունեին գենք կրելու, ծի հեծնելու, նրանց փռները պետք է լինեին ավելի ցածր, քան հարեւան մահմեղականներինը: Նրանք պետքական պաշտոններ գրեթե չեն զբաղեցնում, կրում էին հարուկ զգեստներ, որոնցով փարբերվում էին մահմեղականներից: Միաժամանակ «գրքի մարդիկ» չեն ընկալվում որպես «քաֆիր» կամ «զյավուր». այդ անվանումը փրկում էր միայն «անհավաքներին» կամ կոպապաշտներին, որոնք ամենացածր խավն էին:

Այնուամենայնիվ բոլոր ոչ մահմեղականները՝ փվյալ դեպքում կայսրության ուղղափառ հոյները, ունեին «դիմինի»-ի իրավական կարգավիճակ, այսինքն՝ մարդիկ, ովքեր ապրում էին իսլամական պետքության հովանավորության ներքո կամ մահմեղական գերիշխանության դակ՝<sup>147</sup>: Նրանք գտնվում էին մահմեղական կառավարիչների իշխանության ներքո, վճարում էին հարուկ հարկեր՝ «ջիզյե», որը հավաքվում էր յուրաքանչյուր ոչ մահմեղական բողոքական կամ ազգային կողմանից, և այդ պարագաները ել շաբ ծնողներ թարցնում էին իրենց արու զավակների իրական թիվը՝<sup>148</sup>, և «հարաց»՝ բնամթերքով հարկը, որը վերացվեց 1852 թ. և փոխարինվեց «քեդել ի ասքերի»-ով՝ զինվորական հարկով: Բացի այդ, այլ հարկերը մի քանի անգամ ավելի էին մահմեղականների վճարած հարկերից: Օսմանյան կայսրությունում երկար ժամանակ քրիստոնյաների նկարմամբ դրսնորված դաժանություն էր «Դեվշիրմեն»՝ մանկահավաքը՝<sup>149</sup>: Այն սկիզբ էր առել դեռևս 14-րդ դարի երկրորդ կեսին սուլթան Մուրադ Առաջինի (1362-1389) օրոք: «Դեվշիրմեն» կափարվում էր յուրաքանչյուր երկու-երեք կամ հինգ տարին մեկ անգամ. 8-20 տարեկան երեխաներից ու պատանիներից ֆիզիկապես «ամենաառաջնականներին ու գեղեցիկներին» ընդունում և հավաքում

146 Akçam T., A Shameful Act, The Armenian Genocide and the Question of Turkish Responsibility, London: Constable, 2007, p. 6.

147 Նոյն բեղում, էջ 7:

148 Սա ևս մեկ հանգամանք էր, որ դառնում էր վիճակագրական փվյալներում թվերի անճշտության պահճառ:

149 Դայթնի է ևաս փղայահավաք, փղայաժողով, «արյան հարկ» անվանումներով: Տե՛ս Շաքարյան Ա., «Վրյան հարկը» Օսմանյան կայսրությունում. Դեվշիրմեն, Եր.: Տեղինակային հրաբուրակություն, 2006, էջ 6:

Էին Ենիշերիության համար<sup>150</sup>: Նրանց դաստիարակում էին մահմեղական ոգով, դարձնում մոլի մահմեղականներ, ովքեր հետազայում պարուիհաս էին դառնում քրիստոնյա ազգաբնակչության համար: Ի վարքերություն հայկական նահանգների՝ Բալկաններում դրանք սկսվել են ավելի շուրջ և կափարվել են ավելի մեծ քափով: Ըստ ակադեմիկոս Մ. Զուլայշանի՝ «Դեվլիհրմեները» շարունակվել են մինչև 18-րդ դարը<sup>151</sup>: Ընդ որում, սկզբում «Դեվլիհրմեն» ենթարկվում էին հիմնականում հովները, հետո այն դարածվեց քրիստոնյա այլ ժողովորդների վրա:

Այսպիսով, «դիմիները»՝ ոչ մահմեղականները, դառնում էին երկրորդ կարգի մարդիկ<sup>152</sup>: Այդպես էին նրանք ընկալվում ոչ միայն հշխանությունների, այլ նաև հասարակության կողմից: Միևները դարձան «դիմիներին» ըստ կրոնի կամ կրոնական փարբեր ուղղությունների միավորող համակարգ: Այս վերաբերմունքն առավել հասկանալի է դառնում, եթե հաշվի առնենք, որ Օսմանյան կայսրությունն իր էությամբ կրոնապետություն էր, և սուլթանը համարվում էր նաև բոլոր մուսուլմանների հոգնոր առաջնորդը՝ խալիֆը<sup>153</sup>:

Ինչպես քրիստոնյա մյուս հպարակների՝ հայերի, ասորիների, սրբականների և այլոց, այնպես էլ հովների վիճակը բավական ծանր էր: Թուրքական փիրապետությունն ամեն կերպ խոչընդունում էր պետքականության հարուստ ավանդույթներ ունեցող և զարգացման ավելի բարձր ասպիրանտ վրա գրնչող հովների ազգային զարգացումը:

Ներևս 1768 թ. սկսված ոուս-թուրքական պատերազմը հոյս էր ներշնչել հովն ժողովրդին՝ ազարպարվենու թուրքական լիից, հեթևաբար հոյսներն ակտիվորեն մասնակցում էին պատերազմին: 1770 թ. Մորեայում (Պելոպոնես) ապստամբություն է բռնկվում Օսմանյան իշխանության դեմ: Սակայն Մորեայում ոուսական ցամաքային զորքերի սակավությունը և որոշ ռազմական սխալներ թուրքերին հնարավորություն են փախս հաշվեհարդար փեսնել փեղացի հովների հետ: Դրա հետևանքով 40.000

150 Զուլայշան Մ. Կ., «Դեվլիհրմեն»-ն (մակահավաքը) Օսմանյան կայսրությունում ըստ թուրքական և հայկական աղբյուրների, Պատմա-բանասիրական հանդես, 1959, թիվ 2-3, Երևան: ՀՍՍՌ ԳԱ հրատ., էջ 251:

151 Զուլայշան Մ. Կ., նշվ. աշխ., էջ 255:

152 Hofmann T., Co-Victims in Genocide: The Christians during the last decade of Ottoman Rule, p. 4 – 5.

153 Օսմանյան սուլթանները, այն բանից հետո, երբ 1517 թ. Սելիմ Առաջին Սիեղը (1512-1520) նվաճեց Եգիպտոսը, համարում էին, որ իրենց է անցել խալիֆի պիտույքը: Տես Միլլեր Ա. Փ., Կրաτկա հայություն, Մոսկվա: Գոսպոլիտնադատ, 1948, с. 18.

մորեացի հույն է սպանվում, սփրկության վաճառվում կամ լրում երկիրը<sup>154</sup>: Պատերազմում թուրքերը պարփակում են, և 1774 թ. հուլիսին կնքվում է Քյուչուկ-Կայնարջիի հաշտության պայմանագիրը:

Պայմանագրի յոթ հոդված (1, 7, 14, 16, 17, 23, 25) նվիրված էր թուրքահապարակ քրիստոնյաների իրավունքների ու շահերի պաշտպանությանը: Մասնավորապես 7-րդ հոդվածը Բարձրագույն դռանը պարփակությունը էր քրիստոնեական օրենքի ու եկեղեցու հարակ պաշտպանությունը<sup>155</sup>: Այս և մյուս հոդվածների պարունակությունը Ռուսասփանին հնարավորություն էր բարիս այն օգիտագործել Բ. Դուանը նոր պահանջներ առաջարկելու համար՝ նրան հպատակ քրիստոնյա (ուղղափառ) ազգերի շահերից ենելով:

«Ենք Քյուչուկ-Կայնարջիի պայմանագրից հետո Օսմանյան կայսրության քրիստոնյա հարվածների բախսը դառնում է եվրոպական դիվանագիրության առարկա՝ դադարելով զուր Թուրքիայի ներքին խնդիրը լինելուց: Այս պայմանագրից հետո եվրոպական դիվանագիրության մեջ միայն հումանիտար ինիվերվենցիա (ֆր. *l'intervention d'humanité*) հասկացությունը՝ որպես լծակ՝ թերևսացնելու թուրքական ճնշումը հպատակ քրիստոնյա ազգերի վրա<sup>156</sup>: Անվանի ցեղասպանագենը Վ. Դահըրյանն այն կարծիքն է հայփառությունը, որ այս պայմանագրի կարևոր և առանցքային դերն այն էր, որ սերբորեն կապված էր բարձրացող Վրեւան հարցի հետ: Հարց, որի եռաթյունը գոյություն ունեցող մշտական հակամարդությունն էր մի կողմից օսմանյան իշխանությունների, մյուս կողմից նրանց ենթակա ոչ մահմեդական ազգերի միջը<sup>157</sup>:

«Վրեւան հարց» հասկացությունն առաջին անգամ օգտագործվել է 1822 թ. Վերոնայի վեհաժողովում: «Նարկանշական է այն փասքը, որ դրա օգիտագործումը կապված էր հույն ժողովրդի՝ Օսմանյան գիրապետության դեմ ազգային ազարպարական շարժման վերելքի և Բալկաններում սփեղծված իրավիճակի քննարկման հետ<sup>158</sup>:

154 Ариш Г., Этеристское движение в России, Освободительная борьба греческого народа в начале XIX в. и русско – греческие связи, Москва: Наука, 1970, с. 82.

155 Дружинина Е., Кючук-Кайнарджийский мир 1774 года, Москва: Изд-во Акад. Наук СССР, 1955, с. 352.

156 Dadrian V., The History of the Armenian Genocide: Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the Caucasus, Providence – Oxford: Berghahn Books, 1995, p. 8.

157 Նոյն գեղութ, էջ 11:

158 Կիրակոսյան Ա., Բրիդանական դիվանագիրությունը և արևմտահայության խնդիրը (19-րդ դարի 30-ական թթ. - 1914 թթ.), Եր.: ՀՀԳԱԱ «Գիտություն» իրադարձություն, 1999, էջ 27:

19-րդ դարի սկզբին հոյն ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը մեծապես կապված էր 1814 թ. Օդեսայում հիմնված «Ֆիլիփի եթերիա» (հուն՝՝ «Φιλική Εταιρεία», «Ընկերական միություն») զաղկնի կազմակերպության և հետքաջայում դրա ղեկավար Ալեքսանդր Խաչիլյանի անվան հետք: 1821 թ. փետրվարին Խաչիլյանին ապստամբության փորձ է անում Մոլդովայում, որը ճախողվում է: Փոխարենը մեկ ամիս անց այն բորբոքվում է Մորեայում և արագ գարածվում ամբողջ Հոնաստանում:

Թուրքական իշխանությունները հոյների ապստամբությանը պատրասխանում են դաժան կոտրուածներով: Մայրաքաղաքում Հոնական պատրիարքարանի դարպասների վրա կախաղան է բարձրացվում պատրիարք Գրեգորի 5-րդը (1797-1798, 1806-1808, 1818-1821), ինչպես նաև կոտրուվում է 10.000 հոյն<sup>159</sup>: Զարդեր են լինում նաև այլ քաղաքներում: Վյուհանները արդեն 1822 թ. հունվարի դրությամբ գրեթե ողջ Մորեան ապստամբների ծեռում եր: Էսփիդավրոս քաղաքում հրավիրվում է Ազգային ժողով, որն էլ 1822 թ. հունվարին ընդունում է Սահմանադրություն և հոչակում Հոնաստանի անկախությունը<sup>160</sup>: Սուլթանը դիմում է իր վասալ, Եգիպտոսի կառավարիչ Մուհամեդ Ալիին, ով էլ իր որդի Իբրահիմ փաշային ուղարկում է հոյների դեմ: 1826 թ. Եգիպտական քանակը դիրք Մորեայի մեծ մասին<sup>161</sup> և դաժան հաշվեհարդար դեսավ հոյների հետք: Միասուլունգի 15.000 քնակչությունից փրկվեց միայն 4.800-ը<sup>162</sup>, մնացածը կոտրուվեցին Իբրահիմի կողմից: Դեռևս 1822 թ. սկզբին, երբ թուրքերը մարտեր էին մորում Պալրաս քաղաքի շրջանում, իսկական հաշվեհարդար են դեսնում բնակչության հետք՝ կոտրուելով 15.000 հոյն<sup>163</sup>: Տարկապես դաժան էին Քիոս կղզում դեղի ունեցող իրադարձությունները<sup>164</sup>: Տարբեր

159 Պետրօսյան Յ., Օսմանская империя, могущество и гибель, Москва: Наука, 1990, с. 180.

160 Svoronos N., Histoire de la Grèce moderne, Paris: Presses Universitaires de Paris, 1964, p. 42.

161 Новиков А., Турция. Краткая история, Москва: Наука, 1965, с. 74.

162 Driault E., La Question d'Orient depuis ses origines jusqu'à nos jours, Paris: Felix Alcan, 1898, p. 117.

163 Նոյն դեղուում, էջ 110:

164 Քիոսի կոտրուածը լայն արձագանք ունեցավ Եվրոպայում: Ֆրանսիացի գեղանկարիչ Է. Շելակուուայի «Քիոսի կոտրուածը» կրավը նվիրված է ողբերգական այդ իրադարձություններին:

գնահարականներով Զիսում կոդորվել է 30<sup>166</sup>-50<sup>166</sup> հազար, իսկ գերեվարվել և սպրկության վաճառվել՝ 35<sup>167</sup>- 43<sup>168</sup> հազար հույն:

1828-1829 թթ. ոուս-թուրքական պատերազմի և 1829 թ. սեպտեմբերի 14-ին Աղրիսանապոլսի պայմանագրից հետո որոշվեց Հունասրանի ճակարտագիրը: Պայմանագրի 10-րդ հոդվածով թուրքական կառավարությունը ճանաչում էր Հունասրանի ինքնավարությունը<sup>169</sup>: 1830 թ. փետրվարի 3-ին Լոնդոնում Ֆրանսիան, Մեծ Բրիտանիան ու Ռուսասրանը համաձայնության եկան Հունասրանին անկախություն գրալու շորջ, և նրանց ճնշմամբ սուլթանը 1830 թ. ապրիլի 24-ին ճանաչեց Հունասրանի անկախությունը: Փետրվարյան այս արձանագրության պահմական կարևորությունը Հունական պետքության միջազգային ճանաչման մեջ է: Սակայն ոչ բոլոր հունական հոդերն ընդգրկվեցին նորասրեղծ պետքության մեջ: Խոսքը Վերաբերում է Թեսալիային, Էպիրոսին և Կրետեին. Օսմանյան կայսրությանն էին մնում նաև Մակեդոնիան, Թրակիան, Էգեյան կղզիների մեծ մասը և այլն: Ռուս դիվանագենը Ա. Ռիբոպիերի խոսքերով Հունասրանի սահմանները «ժապորեն սեղմված էին»<sup>170</sup> և անցնում էին Սպերսիոս և Վինելոս գետերով:

Նագկապես սուր էր դրված Սամոս և Կրետե (Կանոնիա) կղզիների հարցը: Կղզիներից յուրաքանչյուրի բնակչության ճնշող մեծամասնությունը հույններ էին, ուստի անարդարացի էր դրանք թողնել Թուրքիայի կազմում: Իրենց մեղքը «քավելու» համար հովանավոր գերություններն արձանագրության մեջ հավուկ կերպ մրցրին, որի համաձայն «կղզիների բնակչության նկարմամբ ոչ մարդասիրական վերաբերմունքի դեպքում «հովանավոր գերություններից» յուրաքանչյուրն իր պարփքը կհամարի ազդել, ճնշել թ. Դռան վրա, որպեսզի պաշտպանի նշված կղզիների բնակչության անվտանգությունն անօրինական գործողություններից և

165 Dadrian V., *The History of the Armenian Genocide...*, p. 12:

166 Greene Fr., *Armenian Massacres or the Sword of Mohammed*, Washington: American Oxford Publ., 1896, p. 96. Տիւ նաև՝ Rummel R., *Statistics of Democide: Genocide and Mass Murder Since 1900*, Münster, Lit, 1998, p. 24.

167 Driault E., Եղվ. աշխ., էջ 110-111:

168 Арш Г., Тайное общество “Филики Этерия”, Из истории борьбы Греции за свержение османского ига, Москва: Наука, 1965, с. 111.

169 Шеремет В. И., Турция и Адрианапольский мир 1829 г.: Из истории Восточного Вопроса, Москва: Наука, 1975, с. 155.

170 Международные отношения на Балканах, 1815-1830 гг., Москва: Наука, 1983, с. 275.

ճնշումներից»<sup>171</sup>:

Տոյն ժողովրդի ազգային-ազարքազրական պայքարը և անկախ Հունասփառնի սպեղծումն էական ազդեցություն ունեցան նաև Օսմանյան պետքության վերնախավի վարած քաղաքականության վրա՝ կապված պետքության ամբողջականության պահպանման հետ: Գիրակցություն ամրապնդվեց, որ եթե իրադարձությունները դասավորվեն նախկինի պես, ապա հնարավոր էին ազգային նոր շարժումներ, որոնք էլ, ամենայն հավանականությամբ, բերելու էին փարածքային նոր կորուսփներ: Ուստի սկզբեց նոր մոլորդումների մշակումը, որի ուղղությամբ առաջին քայլերը կարարվեցին 19-րդ դարի 20-30-ական թթ. Մահմուդ 2-րդի (1808-1839) օրոք, ով հայրարքեց, թե կայսրության բոլոր հպատակներն իր հարազար զավակներն են, որոնց ինքը վերաբերվում է հավասարապես՝ նրանց միջև փարբերություն դնելով միայն կրոնական առումով<sup>172</sup>:

Ժամանակի նշանավոր օսմանյան պետքական գործիչ Մուսքաֆա Մեշիդի փաշան ևս գտնում էր, որ միայն բարեփոխումների միջոցով կարելի է պահպանել Օսմանյան կայսրությունը և անգամ հասնել նրա երբեմնի հզորությանը: Նա հասկանում էր նաև, որ բարեփոխումները պետք է շոշափեն նաև քրիստոնյա ազգերի շահերը: Մուսքաֆա Մեշիդի կազմած բարենորոգումների ծրագիրը կայսերական որոշման գենք սփացակ և որպես հրովարքակ հրապարակվեց 1839 թ. նոյեմբերի 3-ին Վբրուլ-Մեշիդի սուլթանի օրոք: Գյուղաների հարթ-ը շերիֆը, ինչպես կոչվեց այն, առաջ էր քաշում հեփսյալ համալիր սկզբունքները.

- Օսմանահպատակ բոլոր քաղաքացիների (այդ թվում նաև քրիստոնյաների) կյանքի, գույքի և պատվի անձեռնմխելիություն,
- Առանց գործող դարպագնոի պարիճ չկիրառել որևէ մեկի նկարմամբ,
- Հարկային համակարգի բարեփոխումներ՝ նոր օրենքների ընդունման դեսրով, որոնց նպատակը ոլորդում արդարության հասքափումն էր,
- Նոր օրենսդրություն բանակի և դրա կազմակերպման համար<sup>173</sup>:

171 Сенкевич И., Россия и Крымское восстание 1866-1869 гг., Москва: Наука, 1970, с. 9.

172 Сафрастян Р., Доктрина османизма в политической жизни Османской империи (50-70 гг. XIX в.), Ереван: Изд- во АН Арм. ССР, 1985, с. 26.

173 Noradoungian G., D'Actes internationaux de l'Empire Ottoman, Tome Deuxième (1789-1856), Paris: Cotillon a. o., 1900, p. 288-290. Տն ևս՝ Ռոզեն Դ., История Турции от победы реформы в 1826 г. до Парижского трактата в 1856 году.- Часть 2: От вступления на престол Абдул-Меджида до Парижского трактата в 1856 году., СПб., 1872, с. 274-278.

Մեծ գերությունները ողջունեցին բարենորոգումների ծրագիրը։ Ինչպես ֆրանսիական, այնպես էլ բրիտանական դիվանագիրությունը լիովին պաշփառնում և նպասգրում էր օսմանյան պերական գործիքների բարենորոգչական ծրագրերի իրականացմանն ազգային հարցում, քանի որ դրանով կարելի էր կանխել ազգային-ազարագրական շարժումները, որոնց ծավալումը կարող էր մեծացնել Ռուսասրանի ազդեցությունը։

1840-ական թթ. Օսմանյան կայսրության՝ քրիստոնյաների նկարմամբ վարվող քաղաքականությունն ամեն կերպ նպարակ էր հետապնդում չնչին օրենսդրական գիշումներով քրիստոնյա ազգաբնակչությանը «կապել» իշխանություններին։ Այս քաղաքականության իրականացումը մեծապես կապված էր «հավասար վերաբերմունքի» և մինչև Ղրիմի պատերազմի սկիզբը դրա հետ գուգակցվող «սուլթանի բոլոր հպատակների միասնության» սկզբունքների հետին<sup>174</sup>։ Իրականում թուրքական իշխանությունները նման քաղաքականությամբ նպարակ ունեին լուծել երեք հիմնական խնդիր։

1. Քրիստոնյաների ազարագրական պայքարի կանխարգելում,
2. Բոլոր հպատակների հավասարության և միասնականության կեղծ ցուցադրություն,
3. Որպես բոլոր հպատակների համախմբված պայքարի միջոցի օգբագործում կայսրության թշնամիների՝ առաջին հերթին Ռուսասրանի դեմ։

1850-ական թթ. սկզբին Արևելյան հարցի սրումը հանգեցրեց Ղրիմի պատերազմին (1853-1856 թթ.): Պատերազմի ընթացքում ուժեղացան քրիստոնյա ժողովուրդների ազգային շարժումները։ 1853 թ. Վերջին և 1854 թ. սկզբին սասպիկացան ժողովրդական ելույթները Բուլղարիայում, 1854 թ. հունվարից աննախադեն հակաթուրքական շարժումներ եղան Էպիրոսի, Թեսալիայի և Էգեյան կղզիների հոյների շրջանում։ Պատերազմի ընթացքում և հետո զգալիորեն աճեց Ֆրանսիայի և Մեծ Բրիտանիայի ազդեցությունն Օսմանյան կայսրության վրա, փոխարենը սասանվեց Ռուսասրանի միջազգային հեղինակությունը։

Մինչև Փարիզի պայմանագրի ստորագրումը 1856 թ. փետրվարի 18-ին հրապարակվեց սուլթանի՝ կայսրության փոքրամասնությունների արդունություններին վերաբերող շնորհագիրը՝ Շաթթ-՛ հյումայունը, իսկ երեք օր անց՝ փետրվարի 21-ին, թուրքական փեղական մամուլում

հայտնվեց շնորհագրի գեղսպը հունարեն, հայերեն, երրայերեն, ֆրանսերեն և անգլերեն<sup>175</sup>: Մեծ դերությունները ձգվում էին պահպանել Օսմանյան կայսրության ամբողջականությունն ու կանխել ազարպագրական շարժումների ծավալումը, Ռուսասփառի դերի մեծացումը: Նրանք դրանք մի իրավունք ունեին կայսրության վճիռեսության մեջ, ուստի Օսմանյան Թուրքիայի կայունությունը պեսքը էր առաջին հերթին հենց նրանց: Բավական է նշել, որ 1856 թ. դրությամբ միայն Ֆրանսիան Օսմանյան կայսրություն էր ներմուծում 91.9 մլն ֆրանկի և արդարանում 131.5 մլն. ֆրանկի ապրանք, իսկ Մեծ Բրիտանիան՝ համապարախանաբար 141.3 մլն և 80 մլն<sup>176</sup>:

**Հաթթ-ը հյումայունի** բովանդակությունը հիմնականում ամրագրում էր **Հաթթ-ը շերիֆով** գրված իրավունքները, չնայած ուներ որոշ հավելումներ: Մասնավորապես ազգային համայնքները ներկայացուցություն էին ունենալու ընդհանուր բաժինների վարչական խորհուրդներում, երկրի գավառներում, իսկ այլ պետքությունների քաղաքացիներն իրավունք էին սրանում անշարժ գույք ձեռք բերելու Օսմանյան կայսրության դրամագրությունում<sup>177</sup>:

Օսմանյան կայսրությունում բարենորոգչական շարժումը մեծ ազդեցություն ունեցավ նաև քրիստոնյա համայնքների ներսում: Ինչպես արևմը-դրահայության դեպքում օսմանահապարակ հույսների մով էլ սկսվեց «Սահմանադրական շարժում»: Այն ուներ գրեթե նույն շարժադրիթներն ու պարբառները: Մասնավորապես Կոստանդնուպոլսում հունական աշխարհիկ մկանականությունն ու գործարար հագուստի վերնախավը հակասության մեջ են մտնում Ուղղափառ պատրիարքարքարանի ու միերթի կազմակերպության ավանդական գաղափարախոսությանեւը: Կունական միջին դասը պայքարում էր միերթի համակարգի օլիգարխիկ կառուցվածքի ժողովրդավարացման համար: Կունական կղերական իշխանություններն այնքան էլ խանդակապած չեն բարենորոգչական շարժմամբ. նրանք դիմադրում էին փոփոխություններին, որ նպագրակ ունեին ավելացնել աշխարհիկ ներկայությունը համայնքային գործերի կառավարման մեջ<sup>178</sup>:

175 Шеремет В., Османская империя и Западная Европа. Вторая третья XIX в., М.: Наука, 1986 с. 242.

176 Նույն դեղուում, էջ 50:

177 Noradoungian G., D'Actes internationaux de l'Empire Ottoman, Tome Troisième (1856-1878), Paris: Cotillon a. o., 1902, p. 83-88.

178 Երկուու կրեուու Ուղղափառ միերթի նկարմամբ կղերական իշխանության բուլացումից՝ հունական բարձրագույն հոգևորականությունն առաջարկում էր շարունակել և զարգացնել «gerondismos»-ի համակարգի հասպարումը, որն

Քրիստոնյա (հայ և հոյն) բուրժուազիան բավական ամուր դիրքեր ուներ Օսմանյան կայսրությունում: Դոյների գննութեական ներկայությունը հավաքապես զգալի էր մայրաքաղաքում և ծովեղոյա բնակավայրերում: Ենց նրանք էին վերահսկում Արևմուտքի հետ կափարվող առևտուրը: Պատրահական չէ, որ 1884 թ. հիմնված օսմանյան Առևտրարդյունաբերական պալատում մինչև Բալկանյան պատերազմները հոյները մեծամասնություն էին կազմում<sup>253</sup>: Դոյները հավաքապես մեծ ազդեցություն ունենին ֆինանսների ոլորտում: Գալաթայի հայրնի բանկիրները (սարաֆները) գլխավորապես հոյներ և հայեր էին: Նրանք ունեին գննութեական մեծ հզորություն և ազդեցություն, քանի որ համեստ էին զալիս որպես Բ. Դուանը և նախարարություններին դրամական փոխառություններ փողողներ: Մասնավորապես 1879 թ. Գալաթայի բանկիրները, համագործակցելով Եվրոպական գործարարների հետ, Բ. Դուանը բրամադրեցին 8.725.000 օսմանյան լիրա<sup>254</sup>: Ավանդաբար սուլթան-

252 Maccas L., Աշվ. աշխ., էջ 87;

253 Ինձիկյան Օ. Գ., Բորջուազիա Օսմանյան իմպերի, Եր.: Խթ-ՅԱ Արմ. ԱՊՀ, 1977, ս. 157.

254 Այդ հոյն ֆինանսիսիրներն էին Զարիֆիսը, Սպեֆանովիկ-Սկիլիծիսը, Թ. Մավրոկորդակոսը, Ա. Վլասփոսը, Կորոնայոսը և Նեգրեպոնդիսը: Տես Alexandris A., Աշվ. աշխ., էջ 31:

ների ֆինանսական խորհրդավուները քրիստոնյաներ են եղել: Մասնավորապես Արդու Համբի 2-րդը պարբերաբար խորհրդակցում էր հոյն բանկիր Զարիֆիսի հետ: Մեկ այլ հոյն ֆինանսիսիք՝ Զագրոֆոսը, սուլթան Մուրադ 5-րդի (1876 թ.) բանկիրն էր:

Հոյներն ու հայերը համարում էին հետևյալ մասնագիտությունները՝ բժիշկներ, դեղագործներ, ճարպարագետներ, իրավաբաններ, բանկային կառավարիչներ, ուսուցիչներ և այլն: Նրանք նաև կազմում էին Թուրքիայում եվրոպական ձեռնարկություններում աշխատող միջին խավը: Նոյնիսկ Կոստանդնուպոլիսում քաղաքային որակյալ բանվոր դասի մեծ մասը կազմված էր հոյներից: Ըստ հոյն պարմարան Ալ. Ալեքսանդրիսի՝ 1914 թ. դրությամբ Օսմանյան կայսրության գնդեսության մեջ հոյների ներդրումը հասնում էր 50 տոկոսի<sup>255</sup>:

Երիբարքության հակահունական քաղաքականությունն ակտիվ դրսնորվեց գնդեսական բնագավառում: Կայսրության մի շարք վայրերում իթթիհաղականները հակահայկական և հակահունական բոյկուր հրահրեցին<sup>256</sup>: Հոյների և հայերի դեմ ուղղված բոյկուրը շար հեշտությամբ վերածվում էր կողոպուտի և թալանի<sup>257</sup>: Հունական նավերին թույլ չին փալիս կանգնել կայսրության նավահանգիստներում, արգելված էին նաև հունական ապրանքները<sup>258</sup>: Հակահունական և հակահայկական բոյկուրը դարածվեց ամբողջ Փոքր Ասիայում:

Տնտեսական պարժամշացների կիրառումը նպագրակ ուներ հարվածելու քրիստոնյաների դիրքերին: Դա առաջին հերթին ծառայելու էր նրանցից ազակվելու ծրագրին: Հաջորդ կարևոր նպագրակաները, թուրք պարմարան Հիքմեթ Բայուրի խոսքերով, «Օսմանյան կայսրության՝ հոյների հետ առևտրական հարաբերությունները խզելու մասին կառավարության ու «Միություն և առաջադիմություն» կուսակցության գաղղինի որոշումը մի կողմից նպաստելու էր նրանց գնդեսական ազգեցության խարիսխանը, իսկ մյուս կողմից՝ դյուրացնելու էր գնդեսական ասպա-

255 Alexandris A., Աշվ. աշխ., էջ 32: Համեմապության համար տես Ինձիկյան Օ. Ռ., Աշվ. աշխ., էջ 212-214:

256 Ալայօյածեան Ա., Պարմութիւն Եվրոկիոյ Հայոց, Կահիրե: Նոր ասպր լուս., 1952, էջ 1212-1219:

257 Քիլիմջան Գ., Թուրք-հոյնական հարաբերությունները 1908-1914 թվականներին. Երևան: Երևանի համալսարանի իրավարակցություն, 1988, էջ 164:

258 Photiades K., The Annihilation of the Greeks in Pontus by the Turks: Tübingen: Union of the Fighters for the Liberation of the Greek Lands Seized by Turkey, 1987, p. 13.

րեզում թուրքերի խիստ թույլ դիրքերի ամրապնդումը»<sup>259</sup>: Փաստորեն երիտրուրբերը ցանկանում էին նաև քրիստոնյաների փնտեսական կարողությունն օգտագործել թուրքական բուրժուազիայի ամրապնդման համար:

Հույների փնտեսական դիրքերը թուլացնելը, ապա նաև փնտեսությունից նրանց դուրս մղելը կազմում էր թուրքացման քաղաքականության բարկացուցիչ մասը, այլ կերպ ասած՝ վնասության թուրքացումը: Կուսակցության ինչպես Սալոնիկի, այնպես էլ Կոստանդնուպոլիսի ժողովներում (1913 թ.) առաջ էր քաշվել «ազգային փնտեսության» գաղափարը<sup>260</sup>: Մասնավորապես, Զմյուտնիայի շրջանում փնտեսության թուրքացման քաղաքականությունը հաջողությամբ իրականացնելու համար այսպես «Միություն և առաջադիմության» պարասխանափու քարփուղար Զելալ Բայարին աջակցելու է ուղարկվում «Հարուկ կազմակերպության» գործակալ Կարա Քենալը<sup>261</sup>:

Այսպիսով, հույների փնտեսական դիրքերի թուլացումը, կայսրության փնտեսական կյանքից նրանց դուրսմղումը կազմում էին 1913-1914 թթ. հակահունական քաղաքականության փնտեսական կողմը: Տեսքության թուրքացման քաղաքականության դիրքարկմամբ առավել ամբողջական է դառնում երիտրուրբերի «հունական» քաղաքականության եռթյունը:

#### **Գ. Փոխանակո՞ւմ, թէ՝ արդարուում:**

Բայկանյան պարերազմների հետևանքով Հունասփանի և Բուլղարիայի կազմում հայփնվեցին զգալի մահմեղական բնակչություն ունեցող գրարածներ: Կոստանդնուպոլիսի՝ 1913 թ. սեպտեմբերի 29-ին սպորազըր-ված պայմանագրով նախարեսվում էր Թուրքիայի և Բուլղարիայի սահմանամերձ շրջանների (15 կմ հորությամբ) բնակչության փոխանակում: Դրա հիման վրա էլ 1913 թ. նոյեմբերի 15-ին սպորազըրվեց թուրք-բուլղարական «Բնակչության փոխանակման վերաբերյալ պայմանագիրը»:

259 Մեծքերվում է ըստ՝ Զիլիմջյան Գ., Երիտրուրբերի ազգային քաղաքականության հարցի շուրջը, «Լրաբեր» հասարակական գիտությունների, 8(332), Երևան, 1970, էջ 15:

260 Uğur Ümit Üngör, Seeing like a nation-state: Young Turk Social Engineering in Eastern Turkey, 1913-50, "Journal of Genocide Research, (2008), 10(1), March, p. 21.

261 Մեծքերվում է ըստ՝ Uğur Ümit Üngör, Seeing like a nation-state..., էջ 23-24: Կարա Քենալը (Մուստաֆա Քենալ թէ, 1868-1926) «Միություն և առաջադիմություն» կոստակցության ԿԿ-ի անդամներից էր: Skú Zürcher E. J., The Unionist Factor: The Role of the Committee of Union and Progress in the Turkish National Movement 1905 – 1926: Leiden: E. J. Brill, 1984, p. 81.

Բուլղարիայի գարածքից 9.714 մահմեդական ընդանիք (48.570 մարդ) փոխանակվեց արևելյան թրակիայի 9.472 բուլղար ընդանիք (46.764 մարդ) հետո<sup>262</sup>:

Երիտրուրբական վարչակարգը ուներ նման մի պայմանագիր կնքել նաև Հունասփանի հետ: Սակայն Հունասփանի հետ պայմանագրի կնքումը միայն պարզ փոխանակման նպագակ էր հետպահնդում: Բանն այն է, որ երիտրուրբերի միահեռությունները միայն կղզիներով չեն սահմանափակվում: Հույն բնակչությունը բավական մնձաթիվ էր ոչ միայն Արևմտյան Փոքր Ասիայում, այլ նաև Բալկանյան պատերազմներից հետո Օսմանյան կայսրությանը մնացած Արևելյան թրակիայում: Նշված շրջանների հույն բնակչությունից ազագվելը կնպաստեր նաև այդ գարածքները կորցնելու վիճանգի վերացմանը:

1914 թ. մայիսին Աթենքում օսմանյան դեսպան Գալիք Քեմալը Հունասփանի վարչապետ Է. Վենիգելոսին առաջարկեց Զմյուռնիայի շրջանի քրիստոնյաներին փոխանակել Մակեդոնիայի մահմեդականների հետ: Նամակագրական կապի միջոցով ձեռք բերվեց նախնական պայմանավորվածություն: Դրա համաձայն փոխանակումը պետք է կը դրեր կամավոր բնույթ, իսկ գաղթականների անվիճակության երաշխավորները պետք է լինեին երկու պետություններով<sup>263</sup>: Սկեղծվելու էր համագեղ հանձնաժողով, որը պետք է գրադարձ ընթացիկ հարցերով: Այս հանձնաժողովը միջոցներ ծեռնարկեց պայմանավորվածության վերջնական իրագործման համար և հանդիպեց Զմյուռնիայում 1914 թ. հունիսի վերջերին՝ իր առջև խնդիր ունենալով հսկակեցնել հոյների և մահմեդականների փոխանակման պայմանները: Դրանից հետո էլ հանձնաժողովը մի քանի հանդիպում ունեցավ, սակայն պայմանների վերջնական հսկակեցում դեղի չունեցավ: Եվ մի կարևոր հանգամանք ևս, որ միանգամից ակնհայտ է դառնում: Եթե Բուլղարիայի հետ 1913 թ. նոյեմբերի 15-ին ստորագրվեց պայմանագրի, ապա Հունասփանի հետ համաձայնությունն այդպես էլ վերջնական պայմանագրի գենք չսրացավ՝ մնալով միայն նախնական համաձայնություն<sup>264</sup>:

262 Ladas S., *The Exchange of Minorities, Bulgaria, Greece and Turkey*, New York: The Macmillan Company, 1932, p. 19-20.

263 Ladas S., նշվ. աշխ. էջ 21-22:

264 Դեռևս խնդր ատարկա հիմնահարցի ժամանակակից և դրանով գրադարձ Ս. Լազարս իր աշխատության մեջ որևէ կոնկրետ պայմանագրի մասին չի խոսում: Նա ներկայացնելով այդ շրջանում Օսմանյան կայսրության և Բալկանյան պետությունների միջն ստորագրված փոխանակման բոլոր պայմանագրերը, 1914 թ. հոյն-թուրքական որևէ փոխանակման պայմանագրի ստորագրման մասին չի նշում.

Ավելացր է, որ 1914 թ. հույն-թուրքական համաձայնագիրն իրականում նախնական պայմանավորվածություն էր: Առաջին աշխարհամարդը հնարավորություն չդիմեց հսկակեցնել փոխանակման մեխանիզմները: Սակայն այսինքն ուշադրություն է գրավում մի կարևոր հանգամանք: համաձայնագրի վերաբերյալ բանակցությունները և դրա կայացումը ընթանում էր 1914 թ. մայիս-հունիս ամիսներին: Դա հենց նոյն ժամանակահավաքածն էր, եթե երիտրուրքական իշխանությունները սասպիկացրել էին Արևելյան Թրակիայի և Արևմտյան Փոքր Ասիայի հունաթափումը: Այս համաձայնագրի շինծու լինելն ապացուցում է հենց իրադարձությունների ժամանակագրությունը: Եթե դրան գումարենք նաև այն, որ մինչև 1914 թ. մայիսին արդեն բազմահազար հույներ արքաքավել էին, դրա անթարությունն ավելի համոզիչ է դառնում: Այդ դեպքում ինչը՝ էր ծառայելու այդ համաձայնագիրը: Փաստերի դիրքարկումը և վերլուծությունը թույլ է դրալիս հանգելու այն եղրակացության, որ դա ճկուն դիրքանագիրական խաղ էր, որը միանագամից հետքապնդում էր երկու նապարակ: Նախ պայմանագրի կնքումով կվավերացվեր մինչև 1914 թ. մայիսը բազմահազար հույների գենուահանությունը, ապա նաև «կարձակեր թուրքերի ծեռքերը» նշված դրամածրների հունաթափումն իրականացնելիս՝ խորականություն չդնելով բռնի և կամավոր միջոցների միջև: Ինչո՞ւ չէ, նաև կեղեկ հունական կառավարության ուշադրությունը, քանզի մինչ ընթանում էին բանակցությունները, բռուն կերպով գեղի էր ունենում նշված դրամածրների հունաթափումը: Իսկ որ Օսմանյան կառավարությունն այս համաձայնագիրն օգտագործում էր Հունասփանի հանդեպ իր քաղաքականությունում, մեկ անգամ ևս երեսաց Լոգանի կոնֆերանսի ժամանակ, եթե քննարկվում էր հույն-թուրքական պայմանագրի կնքման հարցը: Թուրքական պարվիրակության դեկավար Իսմեթ Ինոնյուն նշեց, որ այդ հարցում մեղավոր են հենց իրենք՝ հույները, և Վենիգելոսը, քանի որ փոխանակում դեղի է ունեցել դեռևս 1914 թ.<sup>265</sup>:

Հույների բռնի գրեղահանությունը սխալ և անբեղի է բացարձել 1914 թ. հույն-թուրքական համաձայնությամբ:

## **Դ. Բոլոր գրեղահանությունների ընթացքը և հետևանքները:**

Նարկ է նշել, որ արդեն Բալկանյան պատերազմների ընթացքում

նա միայն ներկայացնում է հինգ կետից բաղկացած նախնական համաձայնագրի գիրքը, որն էլ վերցրել է Հունասփանի արքագործնախարարությունում պահպատ Վենիգելոսի և Գայիր թեյի նամակագրությունից: Տե՛ս Ladas S., նշվ. աշխ. էջ 21-22: 265 Ակցուլու Յ., Անիծված առյուծի բնաջնջումը..., էջ 110:

թուրքական իշխանությունները սկսեցին հույների գեղահանություններ և սպանություններ կատարել: Այդ գործողությունները, որպես կանոն, գոնե մինչև 1913 թ. ամառ ավելի շուրջ կրում էին առանձին դեպքերի բնույթ<sup>266</sup>: Իրավիճակը փոխվեց հայկապես սկսած 1913 թ. հուլիսից, երբ թուրքական բանակն անցավ հարձակման: Առաջիններից մեկը հարվածի դրական Արևելյան Թ-րակիայի Մալգարայի շրջանը: Այսդեպ թուրքերն իրենց գործողություններում փարբերություն էին դնում հոյների և հայերի միջև: Թուրքական զորքերի հրամանափարությունը կարգադրել էր իր զինվորներին «քանդել, այրել, կոփորել»<sup>267</sup>: Թե որքան մարդ զոհ գնաց թուրքական բանակի դաժանություններին, նժամար է որոշել: Մալգարայի շրջանում (համանուն քաղաքը և շրջակա 18 զյուղերը, ինչպես նաև Խարիուպոլիս քաղաքն իր 7 զյուղերով), բռնության է ենթարկվել 2.860 հոյն ընդամենիք՝ 17.160 մարդ<sup>268</sup>: Խարիուպոլիս քաղաքում բռնություններից, թալանից և սպանություններից հետո կայմակամը գեղի նշանավորներին սպիտեց սպորագրել փաստաթուղթ, որի համաձայն բոլոր բռնություններն իբր կափարվել էին բոլղարական բանակի կողմից<sup>269</sup>:

«Ույներ՝ Արևելյան Թ-րակիայում սկսված բռնագաղյօն ու սպանությունները 1914 թ. գարնանը սպանում են համակարգված բնույթ: Այսպես, Կ. Պոլսի «Բիզանդիոն» թերթը 1914 թ. ապրիլի 14 (27)-ին գրում է, որ Թուրքիայի ծովեզերքին (Ռոդոսիքոյում) 15.000 հոգի շոգենավի և սպասում՝ բոլորն էլ հիվանդ և ուժասպառ<sup>270</sup>: Խակ Սալոնիկում փողոցներն արդեն լիքն են ժամանած զաղթականներով: Օսմանյան իշխանությունները, ըստ հայկական պարբերականի, վրարյալներին ասում էին. «Ասկէ Վերջը հոս միայն խլամները պիտի բնակին: Եթե մնալ կուգէք, խլամութիւնն ընդունեցէք»<sup>271</sup>:

266 Այդ համաերեսաբում կարելի է նշել նաև օսմանյան բանակում ծառայող քրիստոնյա զինվորների սպանության դեպքերը: Այսպես, 1912 թ. նոյեմբերի 3-ին Կ.Պոլսից Նունասպանի Արդարին գործերի նախարարություն հասած մի գեկույցից պարզ է դատնում, որ բացի խաղաղ հոյւս բնակչության նկարմամբ կիրառված բռնություններից, մի առիթով հենց թուրք զինվորների կողմից հրամանափարի ցուցումով սպանվել է ավելի քան հարյուր քրիստոնյա զինվոր: Stein Papadopoulos A, Persecution of the Greeks in Turkey Before the European War, New York; Oxford University Press American Branch, 1919, p. 24.

267 Papadopoulos A, Աշկ. աշխ., էջ 50:

268 Նոյյն գեղում, էջ 52:

269 Նոյյն գեղում, էջ 44-45:

270 Բիզանդիոն, ապրիլի 14 (27), 1914:

271 Նոյյն գեղում:

Սկսած 1914 թ. գարնանից՝ հակահունական բռնությունների թափերաբեմ է դառնում Արևմտյան Փոքր Ասիան: Մինչև Առաջին համաշխարհային պատերազմի սկիզբն այսպեղ շարունակվող հալածանքները լրիվ գեղավորվում էին երիտրուրքերի՝ 1911 թ. Սալոնիկի համագումարի որոշումների շրջանակում: Դիմնական նպատակն էգեյան ծովափի «մաքրումն» էր հունական փարրից, որպեսզի պատերազմի սկզբնուրուց հետո կանխվի այդ փարածքների հնարավոր միացումը Հունասփանին: Այդ ժամանակ դեռևս շեշտը դրվում էր արդարաբումների վրա<sup>272</sup>, սակայն իրականացվեցին նաև մեծաքանակ սպանություններ: Առաջին նկարելի իրադարձությունները ծավալվեցին Զմյուռնիայից 70 մղոն հյուսիս գգնվող Աղրամիփիում քաղաքում: 1914 թ. մայիս ամսին այսպեղ ժամանեցին մեծ քանակությամբ մահմեղական փախստականներ, որոնց ուղեկցում էին հրոսակախմբեր՝ զինված մահակներով, դանակներով և հրացաններով: Տարյուրավոր հույններ սպիտակած էին փախչել իրենց վրներից և ապաստան գրինել քաղաքի եկեղեցում: Մինելով քաղաք՝ մահմեղական խուժանը սկսեց թալանել հույնների վրներն ու խանութները: Նրանք ջարդում էին դրները, թալանում գույքը, անարգում աղջկներին, քշում մնացած բնակչիններին վրներից և հետո նորից շարունակում ավարառությունը<sup>273</sup>:

Աղրամիփիումի դեպքերը դարձան կայսրության էգեյան ծովափի հույն բնակչության համակարգված հալածանքների «մեկնարկը»: Արդարաբումներն ու երկրի հունաթափումն արագացնելու համար լայն հակահունական քարոզչություն էր փարվում նաև մահմեղական բնակչության շրջանում<sup>274</sup>: Ի դեմս հույնների՝ ծևավորվում էր թշնամու կերպարը: Գաղափարական աշխարհանքը հույններին ներկայացնում էր իրքն «դավաճաններ» և «երկրի թշնամիններ»: Տարածվում էին Բալկանյան պատերազմների ժամանակ հույնների կողմից «մահմեղականների կոփորածների» լուսանկարներ: Սրան գումարվեց նաև Առաջին աշխարհամարտի փարիներին հայդարարված «ջիհաղը»:

Արևմտյան Փոքր Ասիայի հունաշաբ քաղաքները մեկը մյուսի հետևից ենթարկվեցին գեղահանությունների: Այսպես, Պերգամոնում կայմակամն

272 Ավակյան Ա., Գеноալդ 1915 թ., Մեխանիզմ ու պրակտիկա..., ս. 34:

273 Διαγμοί των Ελλήνων εν Θράκη και Μικρασία: Αυθεντικάι εικθέσεις και επίσημα κείμενα: Έκκλησις προς το ελληνικόν γένος και την δημοσίαν Γνώμην του πεπολιτισμένου κόσμου, Επιτροπή των εν Μυτιλήνη Μικρασιατών Προσφύγων, Αθήνα, Πανελλήνιον Κράτους, 1915, σελ. 78-88.

274 Horton G., Խշվ. աշխ., էջ 42:

իր մովք է կանչում Եկեղեցական տեղապահին և նրան հայդնում, որ հոյները պետք է քաղաքը թողնեն երկու օրվա մեջ (1914 թ. հունիսի 14-ին):<sup>275</sup> Բնակչության մեծ մասը տարիհանվում է՝ վախենալով բռնություններից, մնացածն էլ ենթարկվում է «չբեսնված բռնության»: Հունիսի 17-ին, երբ այսինքն են ժամանում մահմեդական փախարականները, ոչ բուն քաղաքում, ոչ էլ շրջակայքում այլևս հոյն չեր մնացել: Միայն Պերգամոնում հոյներին պարճապես 20 միլիոն ֆրանկի վնասը:<sup>276</sup>

Կիդոնիա (Այվալը) քաղաքը, որն Այդընի վիլայեթի երկրորդ խոշոր հոյնական քաղաքն էր Զմյուռնիայից հետո, ևս զերծ չմնաց վայրագություններից: Կայսմակամի հրամանով ծիրապվողի վնկադաշտերը, որ կիդոնիացի հոյների գոյագրման հիմնական աղբյուրն էին, բռնագրավվեցին ու փոխանցվեցին այսինքն ժամանած մահմեդականներին: Եվ դրանից հետո, երբ վնկադաշտերն այլևս չեին պարկանում հոյներին, նրանք շարունակեցին հարկվել դրանց համար: 1914 թ. մայիսի վերջին սկսվում են Կիդոնիա քաղաքի ու շրջակա գյուղերի հոյն բնակչության դաժան բռնագաղթն ու դրան ուղեկցող սպանությունները:<sup>277</sup>

Փոքր Ասիայի արևմույան հարկածի հոյնաթափումն այնպիսի ծավալներով էր տարկում, որ արդեն 1914 թ. հունիս ամսին Չեշմեի հոյն միքրոպոլիքը հեռագրում է Տիեզերական պարիիարքարան՝ նշելով, որ իր թեմը բոլորովին պարապել է, այլևս հոդ չունի, և հարցնում է, թե ինչ անի:<sup>278</sup> Եվ դա այն բանից հետո, երբ ընդամենը երկու շաբաթ առաջ էր Չեշմե քաղաքում նոր կառավարիչ (Շիլմի Ուրան) նշանակվել:<sup>279</sup>

Ամենաբավարկորդը Ֆոկեայում ծավալված ողբերգական իրադարձություններն էին: Այդ քաղաքն ուներ 8.000 հոյն և 400 թուրք բնակչություն: Այսինքն կարարված ոճագործություններին ականափես են եղել Ֆրանսիացի հնէաբաններ Մ. Մանսիեն և Ֆ. Սարդին: Վերջինս նշում է, որ 1914 թ. հունիսի 11-ին հին Ֆոկեայի շրջակա գյուղերի (Գյորեն-Քյոյ, Սույուզուկ, Բաղ-Արասսի, Վարի) հոյն բնակչությունը ենթարկվում է հարձակման:<sup>280</sup> Բուն Ֆոկեայի վրա հարձակումը գեղի է ունենում հունիսի 12-ին, սկսվում

275 Διωγμοί των Ελλήνων εν Θράκη και Μικρασία..., σελ. 90.

276 Sartiaux F., Le Sac de Phocée et l'Expulsion des Grecs Ottomans d'Asie-Mineure en Juin 1914, Revue des Deux Mondes, 15 Décembre 1914, Paris, p. 682.

277 Διωγμοί των Ελλήνων εν Θράκη και Μικρασία..., σελ. 103-116.

278 Թիգամդին, հունիսի 5 (18), 1914 թ.:

279 Crossing the Aegean, an Appraisal of the 1923 Compulsory Population Exchange Between Greece and Turkey, Edited by Renée Hirschon, New York-Oxford: Berghahn Books, 2006, p. 83.

280 Sartiaux F., նշվ. աշխ., էջ 658.

է հույն բնակչության ջարդը: Ֆ. Սարփիոն նկարագրում է այդ օրվա և զիշերպա դեպքերի մանրամասները՝ զոհերի ճիշերը, ծերերի, կանանց, երեխաների փանջանքներն ու սպանությունները<sup>281</sup>:

Ֆոկեայի ջարդը մեծ արձագանք ունեցավ Մարտելում՝ որպես Ֆոկեայից զաղթած հույների վերաբնակեցման քաղաք<sup>282</sup>: Սպանությունները, կանանց և աղջիկների առևանգումները, թալանը և արփաքսումները շարունակվում են ամբողջ հունիս ամսվա ընթացքում<sup>283</sup>: Այս շրջանում 3.800 դժուներից 3.000-ը քանդվեց: Բնակչությունն արփաքսվեց հիմնականում շրջակա կղզիներ: Արդեն հույսի կեսերին Փոքր Ասիայից արփաքսվածների թիվը հասել էր 120.000-ի, որից 47.000-ը Միջիեւնում էր, 25.000-ը Քիոսում, մնացածները գեղակայվել էին Սալոնիկի և Պիրեայի միջև<sup>284</sup>:

Հակահունական արշավը չափազանց ծանր հեփսանքներ ունեցավ հույն ժողովրդի համար: 1914 թ. ամռանը Կոստանդնուպոլսում մեծ գերությունների դեսպանափների աշխադակիցներից կազմվեց միջազգային հանձնաժողով՝ Էգեյան ծովափին կափարվածը քննելու համար<sup>285</sup>: Այսպես, Ֆրանսիայի, Գերմանիայի, Մեծ Բրիտանիայի, Ավստրո-Հունգարիայի, Իտալիայի և Ռուսասփանի ներկայացուցիչներից կազմված միջազգային հանձնաժողովը Թալեաթի ուղեկցությամբ Էգեյան ծովեզերքին կափարած շրջազայության ժամանակ արձանագրեց, որ այդ ամենի հեփսանքով այդ շրջանների զգալի մասը վերածվել էր անապափի: Հրդեհված ու կործանված էին հունական զյուղերն ու ավանները, ավերված՝ վները, այգիներն ու դաշտերը: Այդ հանձնաժողովի անդամ, ռուսական ներկայացուցիչ Տուխոլկան հաղորդում է, որ ամբողջ Էգեյան ծովափից հույնների վկարման ծրագիրը նախօրոք մշակված էր կառավարության կողմից<sup>286</sup>:

1913-1914 թթ.՝ մինչև Առաջին համաշխարհային պատերազմի սկիզբը գեղահանված և կոփորված հույների թիվն ըստ Կ. Պոլսի

281 Anglo – Hellenic League, Letters on the Expulsion of Greeks from Asia Minor, and in Reply to Ill-Treatment Inflicted on Turks in Greek Macedonia, London: The Anglo – Hellenic League, 1914, p. 8-9.

282 Horton G., Աշխ. աշխ., էջ 46:

283 Turkish Atrocities against Greeks: Massacres in Asia Minor, “The Scotsman”, 19 June, 1914, p. 7.

284 Sartiaux F., Աշխ. աշխ., էջ 679:

285 Թիգանդին, հունիսի 9 (22), 1914 թ.:

286 Քիլմշյան Գ., Երիտրութերի ազգային քաղաքականության հարցի շուրջ..., էջ 14:

Տիեզերական պատրիարքարանի գրվալների կազմում է 284.172 մարդ<sup>287</sup> (Թրակիա և Փոքր Ասիա՝ առանց Պոնտոսի), որից 153.890-ը՝ Փոքր Ասիայից, իսկ 130.282-ը<sup>288</sup>՝ Թրակիայից: Այլ աղբյուրների գրվալները հիմնականում համընկնում են Պատրիարքարանի թվերի հետ՝ մի քիչ ավել կամ պակաս ներկայացնելով: Մասնավորապես, ըստ Բարթոնի, նշված ժամանակահարվածում միայն Փոքր Ասիայի արևմբյան ափից բռնագաղթված հույների թիվը ավելի քան 100 հազար<sup>289</sup> էր (այս գրվալը չի ներառում այլ շրջանները): Իսկ բրիտանական «Morning Post» օրաթերթի համաձայն՝ Թրակիայից և Փոքր Ասիայից վարարվածների թիվը կազմում է 350.000<sup>290</sup>:

### **Ե. Թուրքական ժխրողականության վաղ դրսերումները՝ կապված հոյների բռնագաղթի հետ:**

Ներք է նշել, որ երիտրուրբական իշխանությունները սկզբից սեթ որդեգրեցին հոյների բռնի գրեթե անությունների փասդի ժխրման քաղաքականություն: Սակայն ակնհայտ է, որ նրանք չեն կարող պնդել, որ հոյները շարունակում են ապրել իրենց բնակավայրերում, ուստի ժխրումն իրականացվում էր այլ միջոցներով: Հոյների բռնագաղթի ժխրումն «արդարացնող փասդարկները» հերքյալներն են՝

1) Հոյների բռնագաղթը կապվում էր պատերազմի հետ, այսինքն՝ բնակչությունը զայդել է Բալկանյան պատերազմների ժամանակ ծագալիքած ու ուզմական գործողությունների հետևանքով: Սակայն վերևում արդեն ներկայացվել է արևելյան Թրակիայում թուրքական գորքերի հրամանադրության կողմից արձակված հրամանը («Քանդել, այրել, կոփորել»): Այսպես պետք է նշել, որ բնակչության զանգվածային փեղահանությունները և կոփորածը պատերազմի պարփառից պայման չեն: Բացի այդ, Բալկանյան Բ պատերազմն ավարտվեց 1913 թ. ամռանը, իսկ

287 René Puaux, նշվ. աշխ., էջ 8:

288 Չնայած այս փոլում կոփորածների գենակարար կշիռը համեմատաբար փոքր էր, այնուամենայնիվ, դժվար է որոշել, թե այս գրվալների մեջ կոփորվածների թիվը որքան է: Տվյալներ կան անգամ, որ Թրակիայում գեղահանվածներից կոփորվել է նվազագույնը 15.690 հոյն: Տես Սաքայան Դ., Զմյուսիա 1922, Բժիշկ Կարպատեա Խաչերյանի օրագիրը..., էջ 8:

289 Barton J., Story of Near East Relief (1915-1923) An Interpretation, New York: Macmillan, 1930, p. 63.

290 Manchester League of Unredeemed Hellenes, Turkey's Crime: Hellenism in Turkey, Manchester: Norbury, Natzio & Co., 1919, p. 31.

բռնազարդի ակդիվացումը եղել է դրանից հետո՝ 1913 թ. աշնանից սկսած:

2) Հոյների՝ 1913-1914 թթ. բռնազարդը ոչ մի աղերս չուներ պետքական քաղաքականության հետ: Դա Հոյնասփանում ծավալված հակաթուրքական գործողությունների արձագանքն է: Այս դրույթն առաջ է քաշվել դեռևս այն ժամանակ Վթենքում օսմանյան դեսպան Գալիք Քեմալի կողմից<sup>291</sup>: Սակայն այս փաստարկը չի դիմանում քննադարության, քանի որ ժամանակի բազմաթիվ արխիվային փաստաթղթեր և վկայություններ են խոսում այդ քաղաքականության՝ պետքական բնույթ ունենալու մասին: Բավարարվենք՝ միայն հիշաբակելով Թալեաթի՝ հուշագրական բնույթի մի սկզբնաղբյուրում պահպանված կոչն Արևելյան Թրակիայի Մակրիի մահմեդականներին. «Գյավուրներից մեր երկրի ազադման ժամը եկել է... Կարգադրում ենք հետևյալը. 1) դուք չեք հարուցելու Մակրիի և Լիվսիի գյավուրների նկարմամբ ծեր որևէ դրամական պարփակորություն, 2) դուք պետք է վորդեք բոլոր գյավուրներին իրենց գյուղերից, 3) դուք կրիիք երանց դաշտերին, գներին, գույքին և ամբողջ սեփականությանն ու պետք է բաժանեք դա իրար մեջ եղբայրաբար, 4) որևէ դեպքում չգնե՞ք կամ չվաճառե՞ք երանց ոչինչ»<sup>292</sup>: Այսինքն՝ մահմեդականներին հենց թուրքական պետքության առաջին դեմքերն են հրահրել դուրս գալ խաղաղ քրիստոնյա բնակչության դեմ:

3) Տեղահանություններին կամ դրվում էր բնակչության փոխանակման բնույթ (որի մասին արդեն խոսվել է), կամ էլ մեղքը բարդում էին հոյների վրա: Ավելին, փորձ էր արվում ներկայացնել, որ իրենք՝ հոյներն են իրենց նախաձեռնությամբ գաղթում կայսրության փարածքից: Փոխարենը, իբր թուրքական իշխանություններն ամեն ինչ անում են՝ կասեցնելու «արդագաղթը»: Այդ մասին վկայում է «Բիզանտիոն» թերթը, որի համաձայն Թալեաթը փեղեկություններ է դարածում, որ իբր 1914 թ. հունիսին Այվալըքի շրջանում փորձում է կանգնեցնել հոյների զայթը, կարգ ու կանոն հասդարձել և երանց վերադարձնել իրենց փնտը<sup>293</sup>: Ձե ինչ արժեք ունեին Թալեաթի այս հաղորդումները, կարելի է պարկերացում կազմել ուսական մամուլում փեղ գրած հետևյալ հրապարակումից: Այսպես, հոյների վեղահանությունը դարպապարփող իր մի ելույթից հետո

291 Y. H. Bayur, Türk İnkılap Tarihi, C.II, III. Kisim, Ankara, 1951, s. 118. Մեջբերվում է ըստ՝ Քիլմջյան Գ., Երիբարբերի ազգային քաղաքականության հարցի շորջը..., էջ 15:

292 [Ecumenical Patriarchate], Persecution and Extermination of the Communities of Macri and Livissi (1914-1918), Paris, Imprimerie Chaix, 1919, p. 3.

293 Բիզանտիոն, 2(15) հունիսի, 1914:

Թալեաթն իր մոդ է կանչում իշխանության ներկայացուցիչներին և հրահանգում. «Ոչ մի ուշադրություն չդարձնեք ժողովրդին ուղղված իմ խոսքերին: Մեր պարզքն է մինչև Վերջ իրագործել նշված ծրագիրը և շարունակել մեր երկրից քրիստոնյաների վրարումը»<sup>294</sup>:

Թաքցնելով հակահունական քաղաքականության իրական պարճառությունը և նպատակները՝ կառավարությունը 1914 թ. ապրիլի 14-ին հաղորդագրություն փարածեց, որում ներքին գործերի նախարար Թալեաթը, բերելով մի շարք անհիմն ու անբեղի արդարացումների՝ կապված հույների արքաքառումների պարճառությունը հետո, մասնավորապես նշում էր, որ «12.000 հույն դասալիք մեր բանակից սփիպել են իրենց ընդունակություններին իրենց հեգությունում»<sup>295</sup>:

4) Փորձ է արվել ամեն կերպ անուշադրության մարմել և նվազեցնել գեղահանված հույների թիվը՝ այն ներկայացնելով որպես նվազ նշանակություն ունեցող երևոյթ: Մասնավորապես շրջանառության մեջ էր դրվել այն գեղահանված թիվը՝ որ «զարթած» հույների թիվը կազմում էր 1.000 մարդ<sup>296</sup>: Այնինչ, եթե այն բաղդատում ենք վերևում արդեն հիշաբակաված փվալների հետ, ակնհայտ է դառնում, որ այս «փաստարկը» ևս ոչ մի լուր հիմքեր չունի:

Նշված «փաստարկների» հիշաբակումը մեզ հնարավորություն է գալիս ուրվագծել թուրքական ժխտողականության ամենավաղ օրինակները:

Այսպիսով, օսմանյան իշխանությունների կողմից 1913-1914 թթ. հույն ժողովրդի նկարմամբ իրականացվել է բօնի գեղահանությունների քաղաքականություն, որը թուրքական կողմը հեփսողականորեն փորձել է ներկայացնել որպես բնակչության կամավոր փոխանակում: Դրա նպատակն Արևելյան Թրակիայի և Արևմտյան Փոքր Ասիայի հունաթափումն էր: Այն գնդեսական պարմամիջոցների հետ միասին Օսմանյան կայսրությունում թուրքացման քաղաքականության մի մասն էր կազմում: Այդ քաղաքականությունը սերգործեն կապված էր մի շարք գործոնների հետ, որոնցում առաջնակարգ դեղ էին զբաղեցնում հույն-թուրքական լարված հարաբերությունները:

294 Санкт – Пестервургскис վեճոմուտ, 2(15), VII, 1914; Մեջբերվում է ըստ՝ Քիլմշյան Գ., Երիտրուրբերի ազգային քաղաքականության հարցի շուրջը. «Լրաբեր» հասարակական գիտությունների, թիվ 8, էջ 14:

295 Στένη Papadopoulos A, Persecution of the Greeks in Turkey, p. 97.; Στένη Սան Բրιգանդիոն, 14(27) ապրիլի, 1914:

296 Քիլմշյան Գ., Երիտրուրբերի ազգային քաղաքականության..., էջ 16:

## ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

### ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՀՈՒՅՆ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆՆ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՀԱՐՄԱՅԻՆ ԵՎ 1919-1922 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀՈՒՅՆ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱՋՄՆԵՐԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ: ՀԱՅ-ՀՈՒՆԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՉԵՐԸ

#### 2.1. Հույների զանգվածային տեղահանություններն ու կողու- ռածներն Առաջին համաշխարհային պատերազմի դարիներին

Բալկանյան պատերազմներից հետո (նաև ընթացքում) վարվող հակահունական քաղաքականությունը բավական ծանր վիճակի մեջ դրեց Օսմանյան կայսրությունում բնակվող հույներին: 1913 թ. երկրորդ և 1914 թ. առաջին կեսերին մեծաքանակ հույն բնակչության արփաքսումը թրակիայից և Փօքր Ասիայի Էգեյան ծովափից լուրջ հիմքեր էր դարձիս ենթադրելու, որ սպասվող Համաշխարհային պատերազմի ժամանակ թուրքականական հույներն ապահովության ոչ մի երաշխիք չէին ունենալու, քանի որ նման դեպքերի կրկնությունը սպասելի էր: Բալկանյան պատերազմներից հետո դեղույն ունեցած հակահունական դրամադրությունների արմադրականացումը<sup>297</sup> հենավում էր նաև դրանց՝ իսլամի դրույթներով հիմնավորելու վրա. Երիտրուրքերի հոգեբանության ու քաղաքական գործունեության մեջ ընդգծվեցին կրոնական շեշտադրումները: Այդ քաղաքականության դրամաբանական շարունակությունն Օսմանյան կայսրության՝ Առաջին համաշխարհային պատերազմի մեջ ներքաշվելուն հետևած ջիհադի (սրբազան պատերազմի) պաշտոնական հայդարարումն էր: Այս միրումը շարունակվեց ոչ միայն Առաջին աշխարհամարդի դարիներին, այլև 1919-1922 թթ.<sup>298</sup>:

1914 թ. օգոստոսի 1-ին թոնկվեց Առաջին համաշխարհային պատերազմը: Երիտրուրքական կառավարությունը հայդարարեց իր չնզորության մասին, սակայն պատերազմի մեջ ներքաշվելը միայն ժամանակի խնդիր էր: Աշխարհամարդը բարեհաջող մթնոլորդ էր

297 Կրեպեի, Էգեյան ծովի կղզիների և Եվրոպական Թուրքիայի մեծ մասի կորսարից հետո կայսրությունում ապրող ոչ թուրք ժողովուրդների (կվյալ դեպում՝ հույների) նկազմամբ անվարականությունը դարձավ Երիտրուրքերի ներքին քաղաքականության երակերերից մեկը: Տես Զիլիմջյան Գ., Թուրք-հունական հարաբերությունները 1908-1914 թվականներին..., 1988, էջ 157:

298 Hofmann T., Co-Victims in Genocide..., p. 20.

սպեղծում նաև ազգայնամոլական ծրագրերի իրականացման համար: Ձեն ազգային քաղաքականության բնագավառում ինչ էր սպասում քրիստոնյաներին, ևս մեկ անգամ փաստում են կայսրության ներքին գործերի նախարար Թալեաթի խոսքերը՝ ուղղված ամերիկյան դեսպան Շ. Մորգենթաուին դեռևս պարերազմից առաջ. «Որպեսզի Թուրքիան ապրի, գոյագիտի, մենք պետք ենք ազագվենք օպար ժողովուրդներից»<sup>299</sup>: Այսինքն՝ Թուրքիան՝ թուրքերին, և հերկարար, ինչպեսցույց վկացնեաբերի հետագա ընթացքը, մնացած ժողովուրդները՝ զիշավորապես քրիստոնյաները՝ հայերը, հույները և ասորիները, դափապարտվում էին մահվան:

Նախուկ ուշադրության է արժանի Հունասփանի դիրքորոշումը Վերահաս պարերազմի և օսմանահպատակ հույների ճակարագրի նկարմաբ: Առաջին համաշխարհային պարերազմն ամեննին է միանշանակ չընդունվեց Հունասփանի կառավարող շրջաններում: Այսպես, թագավորական ընդամենքը և անձամբ արքա Կոստանդինոս ունեին ընդգծված գերմանամսդ դիրքորոշում: Կոստանդինոս ամուսնացած էր գերմանական կայզեր Վիլհելմ 2-րդի քրոջ հետ: Դրան հակառակ՝ Է. Վենիգելոսը և նրա զիշավորած Լիբերալ կուսակցությունը գգնում էին, որ Հունասփանը պետք է համագործակից Անդրանիկի հետ և պարերազմի մեջ մինչ ընդդեմ Գերմանիայի ու նրա դաշնակից Թուրքիայի: 1915 թ. հունիսի 13-ի ընդրությունները բավական ամրապնդեցին Վենիգելոսի դիրքերը, ուն կողմնակիցները խորհրդարանում սպացան 184 վենից 123-ը<sup>300</sup>: Սակայն շուրջով հակասությունները Կոստանդին թագավորի և վարչապետ Է. Վենիգելոսի միջև այնքան խորացան, որ Վերջինս հոկտեմբերին հրաժարական վկաց: Ավելին, դեկտեմբերյան նոր ընդրություններին նա չմասնակցեց: Դրա փոխարեն 1916 թ. օգոստոսի 30-ին Վենիգելոսի կողմնակից սպաներն ընդգետեցին, և սեպտեմբերին է. Վենիգելոսը Սալոնիկում կազմեց ժամանակավոր հեղափոխական կառավարություն, որը պարերազմ հայդարարեց Գերմանիային ու նրա դաշնակիցներին<sup>301</sup>: Նա կարողացավ նույնիսկ հասնել նրան, որ 1917 թ. Կոստանդինը հրաժարվեց զահից՝ հօգութ իր որդի Ալեքսանդրի: 1917 թ. հունիսին Վենիգելոսի կառավարությունը հասպատվեց Աթենքում: Հունիսի 30-ին Անդրանիկի թշնամիներին պարերազմ հայդարարեց նաև Աթենքում հասպատված կառա-

299 Morgenthau H., Ambassador Morgenthau's Story. Garden City-New York: Doubleday, Page & Co., 1918, p. 51.

300 Սլունյան Ար., Политическая история современной Греции, Москва: ИВИ РАН, 1998, с. 103.

301 Pallis A. A., Աշվ. աշխ., էջ 157:

Վարությունը<sup>302</sup>: Պատերազմին Հունասփանի մասնակցության գիշավոր նպարակն Օսմանյան կայսրության կազմում գտնվող հունական հողերի ազադագրումն էր:

Առաջին համաշխարհային պատերազմի դարիներին հույների հալածանքներն ու ջարդերը, որոնք սկսվեցին ավելի վաղ, քան հայերինը, ընդհանուր առմամբ այն նույն քաղաքականության շարունակությունն էին, որ նրանց նկարմամբ կիրառվեց Բավկանյան պատերազմների վերջին շրջանում և 1914 թ. գարնան և ամռան ամիսներին: Այն «Միություն և առաջադիմություն» կուսակցության հակաքրիստոնեական քաղաքականության բաղկացուցիչն էր և դրա «առաջին արարը»: Սակայն այս փուլում արդեն այդ քաղաքականությունն աչքի ընկավ ճեռնարկված միջոցառումների և ընդգրկած դարաձքի մասշտաբայնությամբ: Եթե նախորդ շրջանում հիմնական շեշտը դրվում էր արդարադատության վրա, իսկ գործողության դարաձքը միայն Թրակիան և Փոքր Ասիայի արևմտյան ծովափին էր, ապա Առաջին համաշխարհային պատերազմի դարիներին բացի այն, որ դեղի ունեցան հույների զանգվածային ջարդեր, դրանք ընդգրկեցին կայսրության ամբողջ դարաձքը: Իսկ մեխանիզմների բազմազանությունը՝ սկզբում դեռևս օրենքների և հրամանների դեսպով, դրսնորվեց պատերազմի հենց առաջին օրերին:

Թուրքիայում հակահունական քաղաքականության ուսումնասիրնան համար աղբյուրագիրական բացառիկ նշանակություն ունեն Կոստանդնուպոլիսի հունական դիեզերական պատրիարքարանի հրապարակած փաստաթյուրը, որոնք լույս են դրենել նույն շրջանում և փասլական հարուստ նյութ են պարունակում հույների դիեզահանությունների և կուրորածների մասին: Այս առումով առանձնանում են «Սև գրքերը»: Դրանցից առաջինը դեռևս 1920 թ. հրապարակել է հենց «Պատրիարքարանը»<sup>303</sup>, իսկ մյուսը՝ «Պատրիարքարանի հաղորդած փվյալների հիման վրա»՝ «Պոնվոսի կենդրունական խորհուրդ» կազմակերպությունը 1922 թ.<sup>304</sup>: Պատրիարքարանի հրապարակած դեղենկազմական իր կարևորությամբ առանձնանում է նաև «Հույների հետապնդումները Թուրքիայում 1914-1918 թթ.» ժողովածուն<sup>305</sup>: Հույն զոհերի թվաքանակի վերաբերյալ լավ պատկերա-

302 Նոյն դեղում, էջ 33:

303 The Black Book of the Sufferings of the Greek People in Turkey from the Armistice to the End of 1920: Constantinople: Press of the Patriarchate, 1920.

304 Livre Noir: La Tragédie Du Pont 1914 - 1922 [Black Book: The Tragedy of Pontus 1914 - 1922], Athènes: Imprimerie Phoenix, 1922.

305 Oecumenical Patriarchate, Persecution of the Greeks in Turkey 1914 – 1918.

ցում է փայիս Ռենե Պյույի հրադարակած գրեթեկագիրը, որն ամբողջ տպիքամբ հիմնված է Պաքրիարքարանի հավաքած գրվածների վրա<sup>306</sup>: Ուշագրավ է այն փաստը, որ Նունական Պաքրիարքարանի գրեթեկագրերում մեծաքանակ գրեթեկություններ կան նաև հայերի գրեղահանությունների և սպանությունների վերաբերյալ:

Առաջին համաշխարհային պատերազմի սկսվելուց հետո Երիվարութական վարչակարգն ընդունեց մի շարք օրենքներ ու հրամաններ, որոնք պետք է կարգավորված և նպարակային բնույթ հաղորդեին հակահունական քաղաքականությանը: Դրանցից առաջինը 1914 թ. օգոստոսի 3-ին Ռազմական նախարարության հրամանն էր, որի համաձայն 18-45 փարեկան բոլոր գործարդիկ ենթակա էին գորակոչման: Կարճ ժամանակ անց գորակոչված քրիստոնյաներին զինաթափ էին անում և նրանցից կազմում աշխատանքային գումարդակներ, գրեղափոխում Փոքր Ասիայի խորքերը՝ ճանապարհներ կառուցելու և ամենափարբեր ծանր աշխատանքներ կարարելու համար: Սակայն հերթագայում պարզ է դառնում, որ աշխատանքային գումարդակների կազմակերպման գլխավոր նպատակը ոչ թե քրիստոնյա աշխատութիւն ծրի օգտագործումն էր, այլ նրանց ոչնչացման փուլային փարբերակներից մենքն ամբողջ պատերազմի ընթացքում: Թե ինչ վիճակում էին գրեթե գրիստոնյա զինվորներն աշխատանքային գումարդակներում, կարելի է պարկերացում կազմել Կոնհայում Նունասպանի հյուպատոսի՝ 1917 թ. մարտի 7-ի հաղորդագրությունից (այն Աթենք է հասել միայն սեպտեմբերի 18-ին): «.... Տեղավորված աշխատանքային գումարդակներում՝ այս դժբախտները ցրված են կայսրության խորքերում ամենափարբեր ուղղություններով՝ սկսած Փոքր Ասիայի ափերից և Սև ծովից մինչև Կովկաս, Բաղդադ, Միջազգեր ու Եգիպտոս՝ մի մասը ռազմական ճանապարհներ կառուցելու, մյուսները՝ Բաղդադի երկաթուղու թունելները փորենու համար... Ես գետել եմ այդ դժբախտներին Կոնհայի հիվանդանոցներում՝ ընկած իրենց մահճակալներին կամ գեփնին՝ նման կենդանի կմախքների՝ անհամբեր սպասելով մահվան, որպեսզի վերջ գրվի իրենց գառապանքներին... Այս աղեքալի իրավիճակը բնութագրելու համար ես պետք է սահմանափակվեմ՝ ասելով, որ մեծաքանակ մահացության պատճառով Կոնհայի գերեզմանագունը լի է այդ գումարդակներում ծառայողների դիերով, և որ յուրաքանչյուր փոստում, ինչպես շուն ընկած է, չորս, հինգ, երբեմն՝ վեց

Constantinople: Press of the Greek Patriarchate, 1919.

306 René Puaux; La Déportation et le Rapatriement des Grecs en Turquie: Paris: Édition du Bulletin Hellénique; 1919.

ηήιακ»<sup>307</sup>:

Աշխարանքային ծանր պայմաններին չղիմացողները, ովքեր սփիա-ված փախչում էին, 1915 թ. մարտից հայփարարվեցին օրենքից դրւու: Սակայն կան բազմաթիվ փասդեր, որոնց համաձայն օսմանյան բանակում ծառայող ինչպես հույն, այնպես էլ հայ զորակոչիկներն աչքի են ընկել իրենց խիզախությամբ և ավելի լավ են ծառայել, քան որևէ ոչ թուրքական փարր:<sup>308</sup> Սակայն այդ ամենը չի խանգարել, որ զորակոչվածներին պա-փերազմի ընթացքում ասդիմանաբար ոչնչացնեն: Նպարակը նույնն էր, ինչ որ հայերի դեպքում՝ զրկել բնակչությանն ուժեղ, աշխարփունակ, զենք վերցնելու ընդունակ հարփածից՝ մնացածների արդարատումն ու կոփորածը ոյուրացնելու համար: Ֆրանսիական հետփախուզության դրվագները ևս հասպարում են աշխարանքային գումարփակներում հույների դժոխային վիճակը: 1917 թ. օգոստոսի 5-ին սփացված գեղեկության համաձայն՝ միայն մեկ դեպքում 30.000 երիփասարդ է սպանվում<sup>309</sup>: Ընդհանուր առմամբ, ըստ հունական դրվագների, աշխարանքային գումարփակներում հավաքված 18-45 դարեկան հույների թիվն անցնում էր 200.000-ը<sup>310</sup>, որոնցից առնվազն 150.000-ը նահարփակվել է<sup>311</sup>:

Կակահունական քաղաքականությունը փարզում էր նաև նրանց գրքն-փեսական հզորությանը հարփածներու ուղղությամբ: «Միություն և առա-ջադիմություն» կուսակցությունը սկսեց փակել ու փարածել թռուցիկներ՝ թուրքիայի բոլոր դժբախփությունների համար մեղադրելով հաջողակ հույն գործարարներին: «Տունասպանը թշնամին է մեր կրոնի, պարմու-թյան, փառքի, ժառանգության, ավելին՝ մեր իրական գոյության: Դուք

307 Les Persécutions antihelléniques en Turquie, depuis le début de la guerre européenne: D'après les rapports officiels des agents diplomatiques et consulaires, Paris: Bernard Grasset, 1918, p. 18-19.

308 Օրինակ՝ թիշկի Կ. Խաչեմյանը, ով նաև սպացել էր զինվորական շքանշաններ, կամ Սարգիս Թորոսյանը: Տե՛ս Սաքայան Դ., Խշկ. աշխ., էջ 34 և 142; Torossian S., From Dardanelles to Palestine, A True Story of Five Battle Fronts of Turkey and Her Allies and a Harem Romance, Boston: Meader Publishing Company Publishers, 1947.

309 Τσίρκινιδης. Χάρης, Η Γενοκτονία των Ελλήνων της Ανατολής, (Πόντου - Μικράς Ασίας - Ανατολικής Θράκης - Κωνσταντινούπολης-Κύπρου) Ένα διαρκές, ατιμώρητο έγκλημα, σελ. 9. «Ամացանց՝ <http://www.hecucenter.ru/word-files/Tsirkinidis%20Gr.doc>

310 Φωτιάδης Κ., Οι Εξισλαμισμοί της Μικράς Ασίας και οι Κρυπτοχριστιανοί του Πόντου, Θεσσαλονίκη: Εκδότικος Οίκος Αδελφών Κυριακίδη, 1988, σελ. 442.

311 [Manchester League of Unredeemed Hellenes], Turkey's Crime: Hellenism in Turkey, Manchester: Norbury, Natzio & Co., 1919, p. 30.

չպեսք է ոչինչ զնեք հույներից կամ որևէ մնակից, որ նման է հույնի (...) Դա այն ճանապարհն է, որով մենք կպահենք մեր ազգային ժառանգության և կրոնի փառքը»<sup>312</sup>:

1915 թ. մայիսին ընդունվեց «Տեղահանության օրենքը»<sup>313</sup>, որը բանակին լիազորություններ էր փալիս այնքեն, որդեռ անհրաժեշտ է, փոխադրել և երկրի խորքերը բնակեցնել քրիստոնյա բնակչությանը: «Վերաբնակեցում» անվան փակ մինչև 1918 թ. բազմահազար հույներ բռնազարդի ենթարկվեցին: Նրանց փոխարեն այդ փարածքները բնակեցվեցին մահմեղական փախստականներով, ովքեր էլ փիրացան հույների գույքին: Այս ամենն իրականացվում էր «Նարուկ կազմակերպության» միջոցով<sup>314</sup>:

Վերը հիշապակված բոլոր միջոցառումները մասն էին կազմում հսկակ ծրագրված քաղաքականության, որ որդեգրել էր երիտրուրքական վարչակարգը և որի «նպարակային» իրագործման հաջողությունը պայմանավորող «հիմնաքարերն» էին.

- գրնժենական և ամեն կարգի առավելությունների վերացում,
- հույների ապրանքների բոյկով,
- բոլոր քրիստոնյաների հաշվառում-առանձնացում,
- զորակոչ-աշխարհանքային գումարդակների սպեղծում և երիտրասարդների սպանություն,
- բոնի իսլամացում,
- գեղահանություններ և զանգվածային սպանություններ-կուրորածներ:

Չնայած պարերազմի ընթացքում հակառանական քաղաքականությունը փարվում էր կայսրության ամբողջ փարածքում, այնուամենայնիվ կառավարության ուշադրությունը հիմնականում կենդրոնացած էր Թրակիայի, Մարմարա ծովի շրջակայրի, Այդընի նահանգի և Պոնտոսի հույն բնակչության վրա, քանի որ օսմանահպատակ հույների մեծամասնությունը կենդրոնացված էր հենց այդ վայրերում:

Պարերազմն սկսելուց շուրջ մեկ անց Թալեաթ փաշան իր զինակիցների հետ «շրջագայության մեկնեց» Արևելյան Թրակիայի Մակրիի ու Լիվիսիի շուրջ յոթանասուն գյուղեր և մահմեղականներին կոչ

312 Milton G., Paradise Lost, Smyrna 1922, The Destruction of a Christian City in the Islamic World, New York: Basic Books, 2008, p. 66-67.

313 Hovannessian R., Armenia on the Road to Independence 1918, Berkley - Los Angeles: University of California Press, 1967, p. 51.

314 Dadrian V., The History of the Armenian Genocide..., p. 236.

արվեց ակդիվորեն մասնակցել հակահունական քաղաքականությանը<sup>315</sup>:

Մակրիում և Լիվիսիում ծավալված ողբերգությունը, որն աչքի ընկավ դեպքերի բավական դանդաղ, բայց հետևողական զարգացմամբ, շարունակվեց ամբողջ պատերազմի ընթացքում: Հոյմերին ասդիճանաբար արդարացնեցին Փոքր Ասիա: Մակրիի բնակչությունից ավելի քան երեք հազարը դեղակայվում են աշխարհանքային գումարփակներում: Այդընի վիլայեթում մեկ քարի աշխարհեցներուց հետո նրանց ուղարկում են պետքության խորքերը<sup>316</sup>: Մի քանի քարի շարունակվող հալածանքներից, սպանություններից և արդարացներից հետո այդ բնակավայրերը դառնում են անմարդաբնակ: 1918 թ. ապրիլին Լիվիսիի ինը հարյուր ընդառնիքից մնացել էր 25-ը, իսկ Մակրիի հինգ հարյուր ընդառնիքից՝ 11-ը<sup>317</sup>: Այս փոքրիկ բնակավայրերի հունաթափումը, կիրառված միջոցներն ամենայն մանրամասնությամբ ուսումնասիրենու դեպքում, պարզ կարելի է դեսնել ոչ միայն Արևելյան Թքակիայի, այլև ամբողջ կայսրության քարածքում հոյների ցեղասպանության «մանրակերպը»:

Հակահունական քաղաքականությունը ոչ պակաս դաժանությամբ դրսորվեց նաև Մարմարա ծովի շրջանում: Մարմարա ծովի ափերի հունաթափումը սկսվել էր դեռևս Առաջին աշխարհամարդկան առաջ, սակայն իրադարձություններն այսպես «բուռն ծավալվեցին» հափկապես պատերազմի սկսվեցներու: Այսպես, 1915 թ. հունիսի 5-ին Մարմարայի<sup>318</sup> կառավարիչն իր մոտ է կանչում հունական համայնքի վարչության

315 Persecution and Extermination of the Communities of Macri and Livissi (1914-1918), Paris, Imprimerie Chaix, 1919, p. 3.

316 Նոյն գեղում, էջ 8:

317 Նոյն գեղում, էջ 9:

318 Մարմարան համանուն կղզու գլխավոր քաղաքն է: Մարմարա կղզին գրեսվում է Մարմարա ծովի կենտրոնական մասում՝ Դարդանելի ու Բոսֆորի միջև, ուսի ռազմավարական կարևոր դիրք: Կղզում կար հինգ հունարևսկ գյուղ՝ Պրոաստեիոն, Կլազումի, Աֆրոնիոն, Պալաթիա և Գալիմի: Կղզին ուներ մոտ 15.000 բնակչություն՝ գերազանցապես հոյներ, 29 հունական եկեղեցի, 12 դպրոց, 50 ուսուցիչ, 50 քահանա և 1.500 աշակերդ (երկու տեղի): Մարմարայում կարպարված ջարդերի կարևոր վկայություն է Պ. Թեոդոսիոսի՝ մի վերապրոցի պատմությունը, որը, փասփացի, զոհերից մեկն է եղել: Նա, սակայն, կարողացել է փախչել Վթեւք: Նրա վկայությունը հետազայնում զրի է առնվում մի գիլկոն՝ Սերաֆիս Ֆեյկեսի և նրա ըրոց կողմից: Տե՛ս Kyriakides N. G., The Tragedy of the Sea of Marmora: How the Greeks of Marmora Were Expelled from Their Homes and Scattered Among the Villages Around Kermasti or the Unwritten Testament of the Greeks Who Forced to Embrace Mohammedanism, New York: Relief Committee for Greeks of Asia Minor, 1918.

(խորհրդի) անդամներին և հաղորդում նրանց, որ պետքության վիճակի հետ կապված՝ Մարմարայի բնակիչները պետք է ուղարկվեն Փօքր Ասիա, և այս փասդը պետք է հայրնի լինի համայնքի վարչության անդամներին։ Նրանք սկզբում շար են ահաբեկվում այս որոշումից, սկսում են արդասվել և կառավարչից օգնություն խնդրել, խորհուրդ են հարցում նրանից, թե իրենք ինչպես կարող են ակնկալել կառավարության խղճահարությանը։ Առանց որևէ ավելորդ գրասիրության կառավարիչը նրանց դրւում է վոնդրում հետևյալ խոսքերով. «Դուքս կորեք, խարդախնե՞ր»։ Դրանից հետո, արդեն հունիսի 7-ից սկսում է Մարմարայի հոյսն բնակչության բռնագաղթը։ Խսդրականություն չդնելով կանանց, երեխաների ու ծերերի միջն՝ նրանց վիքարում են իրենց գրներից։ Հոյներին գրեղավորում են շոգենավերում, այնուհետև ուղարկում Պանդերմա (Պանորմոս), ուր շաբերը սպանվում են կամ մնանում սովոր։ Կանանց և երեխաների գգալի մասն է հափշրակվում և մահմեղականների կողմից<sup>319</sup>։ Արդեն 1915 թ. հուլիսի դրությամբ Մարմարա ծովի ափերի և կղզիների բնակավայրերից գրեղահանված և հելքագայում սպանված հոյների թիվը հասակ մոդավորապես 30.000-ի<sup>320</sup>։ Այս բնակավայրերը, որոնք հիմնականում բնակեցված էին մահմեղականներով, ևս «մաքրվեցին» հոյներից։

Փօքր Ասիայի արևմբյան ափի հունաշաբ բնակավայրերը ևս գերծ չմնացին ողբերգական իրադարձություններից, որդեռից մինչև 1914 թ. Վերջն արդեն գրեղահանվել էր 120.000 հոյներ<sup>321</sup>։ Կիդոնիա (Այվալի, Այվալը) քաղաքը, որը գլխավորապես հունաբնակ էր և ուներ ավելի քան 30.000 հոյսն բնակչություն, լիովին դադարկվեց։ Քաղաքացիների գրեղահանությունները կապարվեցին ոչ անմիջապես։ Մի մասը գրեղահանվեց 1914 թ. ընթացքում, երկրորդ մասը՝ 1915 թ. հուլիսին, իսկ Վերջինը՝ 1917 թ. ապրիլին<sup>322</sup>։

Շաբուկ ուղարկության է արժանի Հոնիայում՝ Արևմբյան Փօքր Ասիայում, գերմանացիների վերաբերմունքը հոյների գրեղահանությունների վերաբերյալ։ Դա հափշրապես ակնհայտ է դառնում Առաջին համաշխարհային պատերազմի սկզբում և վերջում Լիման ֆոն Սանդերսի՝ գերմանական ուղղական առաքելության դեկապարի վարքագծի փո-

319 Kyriakides N. G., Աշվ. աշխ., էջ 5-9:

320 Persecution of Greeks, Turco-German Plan, «The Scotsman», 15 July, 1915, p. 6

321 Greeks in Asia Minor, Fresh Campaign of Persecution, «The Scotsman», 11 January, 1915, p. 8.

322 Oecumenical Patriarchate, Persecution of the Greeks in Turkey 1914 – 1918..., p. 64-69.

փոխության պարագայում: Այսպես, նա Գերմանիայի Վրդգործնախարարության աջակցությամբ կանխում է 1916 թ. Հռնիայում առավել մեծաքանակ գլուհանությունը, իսկ 1917 թ. Վերջերին Զմյուռնիայի հույների բռնազաղթը՝ ճնշում գործադրենով նահանգապետ Ռահմի բեյի վրա<sup>323</sup>: Տեղեկություններ են պահպանվել, որ նա եղել է Պանդեմայից գլուհանված որք երեխաների համար հափուկ հիմնադրամ սփեղողներից մեկը և անգամ դրամնական փոխանցում է կապարել<sup>324</sup>: Սակայն նոյն Լիման ֆոն Սանդերսը 1917 թ. գարնանը հրամայեց «Էվակուացնել Այվալին և նրա շրջակայքը»: Գլխավոր հիմնավորումն Այվալիի «Մշրական դավաճանությունն էր և լրիտառությունը հօգուր Անդանդի երկրոների»<sup>325</sup>: Փաստորեն մինչև Հունասրանի՝ պատերազմի մեջ մգնելը գերմանացիներն, այնուամենայնիվ փորձում էին առնվազն չմասնակցել հակառական քաղաքականությանը:

Գերմանական դեսպանափան թարգմանիչ Շվյորբելը, ով 1915 թ. ամռանը երկու անգամ եղել է Փոքր Ասիայի արևմբյան շրջանում, հաղորդում է, որ Սոմա-Պանդերմա երկարգծի մոտ գոյություն է ունեցել «համակենտրոնացման ճամբար»<sup>326</sup>: Այդինք են հավաքվել հոյս երեխաներ, կանայք և ծերունիներ, ովքեր արդաքսվել են Մարմարայի ափերից: Այնուհետև վկայակոչենով երկարգծի բժշկի տվյալները՝ նա գլուհացնում է, որ սովոր և տարբեր պայմաններով մահացածների թիվը չափազանց մեծ է: Նա նշում է նաև, որ Փոքր Ասիայի արևմբյան ափի հունական քաղաքակրթությունը կործանվում է, և այդ գործում մեծ «ներդրում» ունի Զմյուռնիայի նահանգապետ Ռահմին, իսկ 1914 թ. մայիսից Մակերոնիայից ու Միթիլեն կղզուց մահմենականների հոսքն այս շրջան քրիստոնյաների հետ հաշվեհարդար դեսնելու նպատակներին է ծառայում<sup>327</sup>:

Տեղահանված հոյներին համակենտրոնացման ճամբարներում գլուհավորելու մասին հիշաբակություն կա նաև «Նյու Յորք Թայմ Թայմս»-ի 1916 թ. օգոստոսի 21-ի համարում, որ նշվում է, որ «Թուրքական իշխանությունները Ան ծովի շրջանում հոյսների հետ վարվում են այնպես, ինչ պես գերմանացիները հյուսիսարևելյան Ֆրանսիայի գրավված հապվածի քաղաքային բնակչության հետ: Թուրքական (գլուհական - Գ. Վ.) իշխա-

323 Hofmann T., Խշ. աշխ., էջ 31-32:

324 Les Persécutions antihelléniques en Turquie..., p. 27.

325 Oecumenical Patriarchate, Persecution of the Greeks in Turkey 1914 – 1918..., p. 68.

326 Hofmann T., Խշ. աշխ., էջ 29:

327 Նուև տեսում. էջ 29-30:

նությունները, ցուցումներ սրբանալով Կոստանդնուպոլիսից, որդիկ ողջ իշխանությունը գերմանացիների ծեռքում է, զյուղերից մեծ քանակությամբ բնակիչների քշում են և ուղարկում համակենդրոնացման ճամբարներ՝ դեպի Երկրի խորքերը: Այս միջոցները գործնականում մահվան վճիռ էին մեծաթիվ մարդկանց համար, որոնց հարկադրում էին գնալ ուրով, բացարձակապես առանց սննդի: Խողահարություն առաջացնող այդ բարավանները ճանապարհին թուրքերի կողմից ենթարկվում էին հարձակումների, ովքեր հափշրակում էին նրանցից հնարավոր ամեն ինչ, դժբախտ մայրերին զրկում էին երեխաններից: Տեղահանությունն ահոռնի չափերի է հասել».<sup>328</sup>:

Այդընի և Բրուսայի վիլայեթների գրեթե ոչ մի բնակավայր գերծ չմնաց գեղահանություններից, ջարդերից և թալանից: Դրանց թվում էին Չեղմնն, Սոկիան (Անեռն), Մագնեսիան (Մանիսա), Պիսիդիան (Աղալիա) և այլն:

Նակահունական արշավը մոլեզնում էր նաև Փոքր Ասիայի կենտրոնական հագուստում: Այսպես, Կոնիայի հունական միջրոպոլիտ (արքեպիսկոպոս) Պրոկոպիոսի հաղորդմամբ այս վիլայեթի հույները զբնվում էին ավելի ծանր վիճակում, քան երրայնշները՝ Եզիջպոսում: Նրանք կրեցին անասելի բառապանքներ՝ վրնիքնական հարստահարություններ, թալան, գեղահանություններ, բռնություններ և բնակչության անզութ սպանդ:<sup>329</sup>

Պոնդրոսում հակահունական քաղաքականությունը փարվում էր պատրազմի սկզբից: Սակայն այսպես իրադարձությունները սկսեցին ավելի բուտն ծավալվել 1916 թ. ապրիլից սկսած՝ կապված ոուսների կողմից փարածքի գրավման, այնուհետք նահանջի հետք: Տրապիզոնի գրավումը ոուսների կողմից և հունական պարտիզանական ջոկապների հարկադիր սպենդումը լրացնուիչ ազդակ դարձան, որպեսզի ոուսների նահանջից հետո թուրքերը իսկական հաշվեհարդար դրեսնեն հույն բնակչության հետք: Ընդհանուր առմամբ Պոնդրոսում դրեդի ունեցած ջարդերն ու արդարացումները ոչ մի առանցքային դրաբերություն չունեին Փոքր Ասիայի այլ վայրերի կամ Թրակիայի դեպքերից: Դա հույն ժողովրդի պոնդրական հագուստի բնաջնումն էր: Երկար դրաբերներ Պոնդրոսում դրեդի ունեցածը դիմումների կամ թրակական դեպքերից:

328 “Turks Deporting Greeks”, The New York Times, 21 August, 1916, p. 2. Զնայած այս հոդվածում չափազանցված է ներկայացվում գերմանացիների դերը քրիստոնյա բնակչության նկարմամբ թուրքական իշխանությունների բարպարականությունը նկարագրելիս, այնուամենայնիվ որպես ալբյուր հոդվածը չի կորցնում իր կարևորությունը:

329 Oecumenical Patriarchate, Persecution of the Greeks in Turkey 1914 – 1918..., p. 95.

է որպես առանձին՝ «պոնտական ազգի» ցեղասպանություն։ Տարիներ շարունակ այդ խնդրով հիմնականում զբաղվել են պոնտական ծագում ունեցող հոյսներ։ Այս առումով հետքաքրքիր է, որ «Պոնտական» և «Հունական» կողորածները ոգեկոչում են դարբեր օրեր՝ համապարասիանաբար մայիսի 19-ին և սեպտեմբերի 14-ին։ Սակայն Պոնտոսում բազմահազար հոյսների կողորածները և արքաքառումները ողջ թուրքահապարակ հոյսների նկարմամբ իրականացված ցեղասպան քաղաքականության մի մասն են։ Ուստի նպատակահարմար է և արդարացված դրանք դիմարկելու որպես մեկ ցեղասպանություն՝ չփարանջափելով միմյանցից։

Պոնտոսում ջարդեր դրեի ունեցան բոլոր շրջաններում՝ Տրապիզոն, Ռոդոպոլիս (Ձեվիզիկ), Խալիխա (Գյումուշխաննե), Կորլիխա (Նիկոպոլիս - Շապին Գարահիսար), Նեռկեսարիխ (Նիքսար), Ամասիա։ Այսդեղ հակահունական հալածանքների հիմնական կազմակերպիչներից էր Տրապիզոնի վալի, «Նախուկ կազմակերպության» ակդիվ գործիչ Ձեմալ Ազմին<sup>330</sup>։ Ընդհանրապես, Պոնտոսում թուրքական վայրագությունների արձանագրման և հետքազա սերունդներին փոխանցման գործում մեծ ավանդ ունեն Պոնտոսի հոյսն միդրոպոլիսիվները, որոնց հաղորդագրություններում հաճախ ամենայն մանրամասնությամբ նկարագրվում են հոյսն ժողովրդի չարչարանքները։ Նրանցից էր Ամասիայի և Սամսունի արքեպիսկոպոս Գերմանոսը։ Պոնտոսից փրկված հոյսների կոմիստերի նախագահ Կոսկանոյին հիմնած 1918 թ. դեկտեմբերի 29-ին ուղղված նամակում Գերմանոսը որպես ականադես պարմում է, որ Փոքր Ասիայի շրջաններից Պոնտոսը ենթարկվեց ամենամեծ փորձությունների և ողջ բախչությունների։ Առաջինը Մինոպ քաղաքը և շրջակայքը դարձարկվեցին, այնուհետև Այաջիկը և Կարգան իրենց շրջակա զյուղներով ենթարկվեցին նոյն ճակարտագրին։ Նրանք ցրվեցին Կաստամոնուի շրջանում, քայլ նրանց մեծ մասն արդեն ճանապարհին կործանվեց հոգնածությունից և փանջանքներից։ Այաջիկի շրջանում (Մինոպի կազայում) միայն հունական երկու զյուղեր՝ Ցոկարի-Քյոյը և Սերնեյը, խուսափեցին ջարդերից, քանի որ ամբողջությամբ մահմեդականացվեցին<sup>331</sup>։

330 Հոյս հեղինակներից Թ. Մալկիդիս այն կարծիքն է հայքնում, որ Պոնտոսի հոյսն բնակչության կողորածի ծրագիրը մշակվել և ընդունվել է Թաթեարի ու Էնվերի կողմից 1916 թ. դեկտեմբերին։ Տե՛ս Մալկիդ Փ., История Греков Понта, Александруполис։ Ինձ. Союз. Репатриантов Овласти Эврос, 2010, с. 26.

331 Karavangelis G., The Turkish Atrocities in the Black Sea Territories: Copy of Letter of His Grace Germanos, Lord Archbishop of Amassia and Samsoun, Delegation of the Pan – Pontic Congress, Manchester: Norbury, Natzio & Co. Ltd., 1919, p. 4; Տե՛ս նաև՝ Les Atrocités Turques au Pont-Euxin, Copie d'une lettre de S. E. l'Archevêque

1916 թ. դեկտեմբերի կեսերից սկսվում է Ամիսոսի (Սամսոնի) հունաթափումը: Ամենից առաջ թուրքական բանակը մոխրի է վերածում քաղաքի շրջակայքը: Գրեթե բոլոր գյուղերը՝ հարուստ ծխախովի փնկասպաններով, նախ կողոպտվում են, ապա կրակի մադճվում: Մեծարիվ էին նաև Ամիսոսից արփաքսված հոյսները, ովքեր ուղարկվում էին հիմնականում Անկարայի վիլայեթ՝ Չորում, Սունգորուլու և ավելի հեռու: Ամասիայի հունական միգրոպոլիկ Գերմանոսը գեղենկացնում է, որ դեկտեմբերի 24-ին ձերքակալվում է նաև հոյս առևտրականների զգալի մասը և արփաքսվում<sup>332</sup>: Արդեն 1917 թ. հունվարի 6-ին և հաջորդող օրերին թուրքական ոսդիկանության սպաներն ավերում են մի շարք հունական եկեղեցիներ: Այդ ժամանակ է, որ բազմաթիվ առևտրականների հետ միասին արփաքսվում են զգալի թվով գիբնականներ, արվեստագերներ և փարբեր ոլորփների նշանավոր մարդիկ<sup>333</sup>:

Կոսդանինուպոլսում Ավստրո-հունգարական կայսրության դեսպան Պալավիշինին Ամիսոսի շրջանում կափարված ողբերգության վերաբերյալ Վիեննա է հաղորդում հետքեալը. «1916 թ. դեկտեմբերի 11 - Դինգ հունական գյուղեր թալանվել են, իսկ հետո այրվել: Բնակիչներն արփաքսվել են: 1916 թ. դեկտեմբերի 12 - Քաղաքի շրջակայքի գյուղերն այրվում են: 1916 թ. դեկտեմբերի 14 - Այրվում են ամբողջ գյուղեր դպրոցներով և եկեղեցիներով: 1916 թ. դեկտեմբերի 17 - Սամսոնի շրջանում այրվել է 11 գյուղ: Թալանը շարունակվում է: Գյուղերի բնակիչները ենթարկվում են բռնության: 1916 թ. դեկտեմբերի 31 - Մոտ 18 գյուղ այրվել է ամբողջությամբ, իսկ 15-ը՝ մասնակիորեն, մոտ 60 կին է բռնաբարվել: Թալանվել են անգամ եկեղեցիները»<sup>334</sup>:

1916 թ. նոյեմբերին Կոլոնիայի արքեպիսկոպոսության Նիկոպոլսի (Շապին Գարահիսար) շրջանի Վալջանա, Տրուաջի բնակավայրերը ենթարկվում են հարձակման: Բնակիչների մի մասին քշում են, մյուս մասին՝ սպանում: Շրջանի մյուս գյուղերը, որ դեռևս չին ենթարկվել հարձակման, ամեննին էլ ավելի լավ վիճակում չին գտնվում: Նիկոպոլիս քաղաքը կրակի մադճվեց այն հայերին գտնելու համար, ովքեր փորձել են ապաստան գրենել հոյսների փներում: Այսպես թուրքերը կազմակերպեցին քրիստոնյաների՝ հայերի և հոյսների լիակատար կոփորած և ունեց-

d'Amassia et Samsoun Germanos, Paris: Imp. Dubois et Bauer, 1918, p. 3-4.

332 Les Atrocités Turques au Pont-Euxin..., p. 5.

333 Նոյն գեղում:

334 Μαλκίδης Θ., Η Γενοκτονία των Ελλήνων. Θράκη, Μικρά Ασία, Πόντος, Λευκωσία: Εκδόσεις Αιγαίον, 2010, σελ. 196.

վածքի թալան: Նրանցից հսկայական թվով մարդիկ բռնի մահմեղականացվեցին<sup>335</sup>:

Հագուկ ուշադրության է արժանի այն փաստը, որ երիտրուրքերն իրենց վարած հսկաքրիստոնյա քաղաքականությունում զգալի գույք է կատարում համարական մասին: Այդ երևոյթը հագուստապահության մեջ չափերով դրսևորվեց Կոլոնիայի շրջանի բնակավայրերում, ինչի մասին են վկայում Տիեզերական պատրիարքարան հասած բազմաթիվ դեղեկությունները: Այսպես, Նիկոպոլսի մի թուրք բնակիչ՝ Խալիլ Թոփհանօղլուն, հրապարակայնորեն խոսում էր այն մասին, որ մինչև պատերազմը նա «մեռնում էր սովից», իսկ այժմ ապրում է շարք լավ՝ համարյա դրախտում, բազմաթիվ թուրքացված (մահմեղականացված) հոյն աղջիկների հետ<sup>336</sup>:

Խալիլիայի արքեպիսկոպոսության Արքիրուպոլսի (Գյումուշխաննի) շրջանում Տրապիզոնի վայի Ձեմալ Ազմի հրամանով թուրքական պաշտոնյաները հայքարարեցին հունական ապրանքների բոյկոտ: Դա չափազանց ծանր դրության մեջ դրեց հոյներին: Բացի այդ քրիստոնյա հոյների զորահավաքի հեվլսանքով այս շրջանում երիտրասարդ և առողջ հոյն փղամարդիկ գրեթե չէին մնացել, որ պաշտպանեին իրենց ընկրանիքները: Զափազանց նպաստավոր պայմաններ էին սպենդել հունական համայնքների ոչնչացման համար: Այս իրավլիճակում ուսական զրբերի առաջխաղացումն ուղղակի զազարնակեփին հասցեց հունական փարրի նկարմամբ եղած ապելությունը: Եթե ոռուները զրավեցին Էրզրումը, Արքիրուպոլսից և շրջակայից մեծաթիվ թուրքեր գեղափոխվեցին Սերբաստիա՝ այդ ընթացքում թալանելով և ավերելով քրիստոնեական գյուղերը<sup>337</sup>:

Դիվանագիրական մի գեկուցազրից պարզ է դառնում, որ Կերասունի շրջանում շուրջ 38 գյուղ է հունաթափվել, մոտ 23.000 հոյն՝ արփաքսվել<sup>338</sup>:

335 Oecumenical Patriarchate, Persecution of the Greeks in Turkey 1914 – 1918..., p. 97.

336 Մալկուլս Փ., նշվ. աշխ., էջ 27:

337 Այդ ընթացքում Վերին Տարսոս, Ներքին Տարսոս, Մելեն, Ուլու-Մելյրան, Մակրոլիթ, Ցառու, Զիման, Կումպափուր, Պապուց, Զապուփի, Պինծանփա, Թումանօղլու, Սոմկի, Պարոծի, Զանգեր և Սիոն գյուղերի ողջ քրիստոնյա քանչությանը՝ բացառությամբ 200 հոգու, արփաքսեցին Սերբաստիա: Տերը եկեղեցիները և դպրոցները սկզբում թալանվեցին, այնուհետև այրվեցին: Շարժական գույքը կողոպսվեց, իսկ անշարժ գույքը բռնազրավեց թուրքերի կողմից: Տես Օւենական Պատրիարքական Պատրիարքության առաջարկը՝ 1914 – 1918..., p. 97.

338 Les Persécutions antihelléniques en Turquie..., p. 53.

Թուրքերը, կենծ մնադրանք ներկայացնելով հոյներին, թե իր ռուսները զինել են նրանց, Սինոպից մինչև Ալաշամ ամբողջ ծովափի հոյն բնակչությանը ենթարկեցին թալանի և արգաքսեցին. միդրոպոլիք Գերմանոսի տվյալներով նման ճակարտագիր էր սպասվում նաև Ալաշամից մինչև Կերասուն ընկած ծովափի հոյներին<sup>339</sup>:

Ռողոպոլսի (Ձեմիզլիկ) արքափակոպոսության համանուն քաղաքի հոյն բնակչությանը 1916 թ. ապրիլի 13-ին թուրքական իշխանությունները իրամայեցին չորս օրվա ընթացքում զաղթել Վրդիրուպոլսի կողմերը: Նոյները հայրենիքին բավական ծանր իրավիճակի մեջ: Այսպես, նրանցից 4.000-ն ուղղվեց Վրդիրուպոլսի անփառները՝ հոյս ունենալով քաջանվել այնպես, 2.500-ը շարժվում են Խալիֆայի Վրդաշեհի լեռները, 650 հոգի ապասփան է գինում Վազելոն վանքում, և 200 հոգի էլ թաքնվում Կանեկա գյուղի մեծ քարանձավում: Վրդյունքում Ռողոպոլսի բնակչության միայն փոքր մասին հաջողվեց անցնել ռուսական զորքերի վերահսկման գործի. մեծ մասը ոչնչացվեց թուրքերի կողմից<sup>340</sup>:

339 Φωτιάδης Κ., Η Γενοκτονία των Ελλήνων του Πόντου, Θεσσαλονίκη, Ίδρυμα της Βουλής των Ελλήνων Για τον Κοινοβουλευτισμό και τη Δημοκρατία, Αθήνα: Ίδρυμά της Βούλης των Ελλήνων, 2004, σελ. 169.

340 Les Persécutions antihelléniques en Turquie..., p. 53. Պոնդոսում հականուական արշավի բաղկացուցիչն էր հուսական եկեղեցիների և վանքերի վրա հարձակումը և դրանց ավերումը: Դարեր շարունակ թուրքական բռնափիրության պայմաններում հոգնոր այդ հասկապությունները պոնտացի հոյների համար կափարեն են ազգապահանության կարևոր գործառույթ: Բացի այդ, դրանք համապնդարձեն են ինքնապաշտպանության կարևոր կենտրոններ: Այդ պարզաբանվ թուրքերն առանձնակի ափեղություն ունեն դրանց նկարմամբ և հարմար առիթի դեպքում ավերում էին դրանք: Պոնդոսում հուսական վանքերն ու եկեղեցական հասկապությունները բավական մնացիվ էին, սակայն դրանցից իրենց մնալությամբ և ճարպարապետական հորինվածքով հափկապես առանձնանեռն էին երեքը՝ Սումելայի, Վազելոնի և Սուրբ Գևորգ Պերփերենուդայի վանքերը, որոնցից յուրաքանչյուրը համապահախանարար ուներ դասնիհինգ, քան և դասնմեկ գյուղ: Տես Armenian Pontus, The Trebizond-Bleack Sea Communities/ edited by Richard G. Hovannissian, California: Mazda Publishers, Inc., 2009, p.56.

Սուրբ Գևորգ Պերփերենուդայի Պոնդոսի այն սակավաթիվ վանքերից էր, որ փրկվեց, այն էլ ուսւների շնորհիվ: Սումելայի վանքի ճակարտագիրը, սակայն, այլ կերպ դասավորվեց: 1916 թ. ապրիլի 19-ին թուրքական զորքերը թալանեցին եկեղեցու բոլոր հոգևոր հարսփություններն ու գանձերը և այրեցին այն: Էլ ավելի ողբերգական էին Վազելոն վանքի շուրջ ծավալվող իրադարձությունները: Ապրիլի 22-ին այն շրջապատվեց թուրքական գիևկորսերի ու ժամադրմների կողմից, որոնց հրամանադրը կարգադրեց վանականներին՝ այդպես եղած 780 հոյս և 29 հայ փախստականներից ազատել վանքը: Վանականները բանակցությունների

Առաջին համաշխարհային պատերազմի վարիներին Պոնդոսում կափարված ջարդերի մի յուրօրինակ վիճակագրական ամփոփագիր է Տրապիզոնի հունական հոգևոր առաջնորդի գեկուցագիրը՝ ուղղված գնդապետ Կաթենակիսին 1919 թ. մայիսի 20-ին: «Անաձայն այդ փասբաթեթի՝ Ամասիայի շրջանում պատերազմից առաջ հունական բնակչությունը կազմում էր 136.768 մարդ: Այդ թվից 73.375-ը արքաքանչեց կամ գրեահանվեց, ընդ որում 70 %-ը զոհվեց աքսորի ժամանակ, և միայն 30 %-ը վերադարձավ: Նեռլեսարիայի շրջանից արքաքանչեց 25.000 մարդուց փրկվեց զյուղացիների միայն 6 %-ը, իսկ քաղաքացիների՝ 35 %-ը, ընդ որում փրկվածները թալանված էին և մերկ՝ հիրավի ներկայացնելով թուրքերի բարբարոսության կենդանի վկայություն: Կոլոնիայի շրջանում բոլոր զյուղերը դափարկվել էին, իսկ Նիկոպոլսում քերն էին ողջ մնացել: Խալիֆա-Կերասունի հափածում հունական ամբողջ բնակչությունը կազմում էր 167.450 մարդ: Նրանցից 45.000-ը ոռուսական գրավման ժամանակ ապաստան խնդրեց Ռուսաստանից, իսկ ավելի քան 90.000-ն արքաքանչեց Փոքր Ասիայի խորքերը: 80 %-ը մահացավ սովոր, հետքապնդումներից և հարձակումներից: Կերասունի 72 հունական զյուղերից ոչ մեկը չմնաց<sup>341</sup>:

Կոսփանդնուպոլսի Հունական փիեզերական պատրիարքարանը, ամփոփելով Առաջին աշխարհամարտի ժամանակ Պոնդոսում հոյն զոհերի թվային փլայաները՝ ըստ վեց միկրոպոլությունների, պայմանագրավորությունը:

Մեջ են մինում թուրքերի հետ, որի ընթացքում ինչն վանական և 300 քրիստոնյա կարողանում են զաղբնի հեռանապ վանքից: Սակայն թուրքերն անդրվեկի էին: «Զաջորդ օրը նրանց է միանում նաև շրջակայթի մահմեդական բնակչությունը, որոնք է գրավում և թալանում են վանքը: Եկեղեցական գույքը յուրացվում է, իսկ ձեռագիր մարդյանները, արխիվներն այրվում են: Երկու տարի անց Ռուբրոպոլիսի միկրոպոլիք Կիրիլը գրում է, որ ոչ պատճառ, քան 487 քրիստոնյան է կուրորվել Վազելոն վանքում: Տե՛ս Oecumenical Patriarchate, Persecution of the Greeks in Turkey 1914 – 1918..., p. 110-111. Տե՛ս նաև՝ King W. H., Turkish Atrocities in Asia Minor, Washington: United States Government, Printing Office, 1992, p. 16-17.

341 Photiades K., Խշկ. աշխ., էջ 28:

## Աղյուսակ 20.

Կասպամբոլ	27.216
Անասիա	89.370
Կոլոնիա	19.938
Ռուբառիլիս	17.479
Տրապիզոն	38.434
Խալիֆա	64.582
<b>Ընդամենը</b>	<b>257.019<sup>342</sup></b>

Հայկական վիլայեթներում ևս գտնի ունեցան հոյների գեղահանություններ: Այսպես, Բիթլիսի, Մուշի, Կարինի, Երզնկայի հոյները թուրքերի գործած վայրագությունների հեվեսանքով հայերի հետ կրկորվեցին, նրանց մի մասն է գտնի հայության հետ բռնեց զաղքի ճամփան: Իսկ ահա Կարսի մարզի հոյները, որոնք բավական մնձարիվ էին, հունական հյուպարտության վկայությունների փվալներով դեռևս 1914 թ. դեկտեմբերի 23-ին և 25-ին, երբ թուրքերը գրավում և թալանում են Օլժին ու Արդահանը, իսկ դեկտեմբերի 26-31-ը պաշարում Սարիդամիշը, սկսում են մեծ զանգվածներով հեռանալ իրենց բնակավայրերից: Այս շրջանում Կարսի մարզի շուրջ 20.000 հոյն հեռանում է դեպի արևելյան և հյուսիսարևելյան նահանգներ: Օլժիի ու Սարիդամիշի հոյները շարժվում են դեպի Կարս, իսկ Արդահանում հասկրագվածները՝ ապաստանում Վիսարլալաքի հունական գյուղերում: Բացի այդ, այս շրջանում միայն Վիսաշեն և Երևան էին հասել 8.900 հոյն, որոնց մի մասն առավել ապահովության համար շարժվեց դեպի Թիֆլիս և Դյուսիսային Կովկաս:<sup>343</sup>

Առանձնակի բարդություն է ներկայացնում պարերազմի բարիներին հոյն զոհերի ու արդարավածների ընդհանուր թվի որոշումը: Որոշ հետքազորդներ հակված են կաթելու, որ այդ թիվը բարդանվում է 240.000-300.000-ի միջև, որից քառորդը զոհվեց սովոր ու զրկանքներից:<sup>344</sup> 240.000

342 René Puaux, նշվ. աշխ., էջ 7:

343 Բարթևլյան Հր., Ռուսասփանի և Խորհրդային Միության հոյները: Վերաբնակեցումներ և գեղահանություններ: Պարմա-բանասիրական հասերս, 1999, թիվ 2-3, Երևան: ՎՎ ԳԱԱ «Գիտություն» հրատ., էջ 400:

344 Sacher H., The Emergence of the Middle East: 1914-1924, New York: Alfred A.

դվյալը հյուպարուսների հաղորդագրություններում նշված թվերի գումար է, սակայն չի ներառում Փոքր Ասիայի այն շրջանները, որոնք դեռ չեն զբլ դրանցում<sup>345</sup>: Ուստի այդ թիվը բավական պակաս է իրական թվից: Առավ ամբողջական և արժանահավաք են բրիտանական «The Morning Post» օրաթերթի կոսդանդնուալյան հագուկ թղթակցի դվյալները, որոն համաձայն Առաջին համաշխարհային պարտերազմի դարիներին 450.000 հույ բռնագաղթվեց, որի ընթացքում 150.000-ը դեղափոխվեց աշխարհանքայի գումարի ակներ և սպանվեց, իսկ 250.000-ը Փոքր Ասիայից և Թրակիայի արդարավեց Հունասրան: Նոյն աղբյուրի համաձայն դրան պետք է ավելացն Բայկանյան պարտերազմներից (ներառյա) մինչև Առաջին աշխարհամարդ ընկած ժամանակահարվածում արդարաված չուրչ 350.000 հույներին<sup>346</sup>:

Սկզբնաղբյուրային նշանակություն ունեն Հունական գիեզերակա պարտիարքարանի դվյալները, որոնց համաձայն Փոքր Ասիայում (առան Պոնտոսի) գոհերի թվաքանակի պարկերը հետքեալն եր.

Աղյուսակ 21

Շրջան (թեմ)	Բայկանյան պարտերազմներից հետք	Առաջին համաշխարհային պարտերազմ	Ընդամենը
Եփեսոս	49.695	8.239	57.934
Դելիուպոլիս	-	9.842	9.842
Չեղմե	60.496	-	60.496
Զայտոնյա	9.250	-	9.250
Այվալի	5.657	20.730	26.387
Մողմիսին	-	6.000	6.000
Ֆիալենֆիա	-	1.959	1.959
Սիզիկ	8.628	7.519	16.147
Անեռն	-	13.813	13.813
Դարդանել	19.055	6.520	25.575
Նիկոմեդիա	444	8.446	8.890
Պիսիդիա	665	6.395	7.060
Մարմարա	-	29.600	29.600
Բրուսա	-	12.076	12.076
Ուորոս	-	370	376
Տարտոս և Աղանա	-	3.650	3.650
Քաղելեյոն	-	9.394	9.394
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>153.890</b>	<b>144.559</b>	<b>298.449<sup>347</sup></b>

345 Les Persécutions antihelléniques en Turquie, ..., p. 60 - 62.

346 [Manchester League of Unredeemed Hellenes], Turkey's Crime..., p. 31.

347 René Puaux. Առ. առև. Էօ 7:

Ըստ Պարբիարքարանի՝ Թրակիայում զոհերի պարփերը հետևյալն ե.

Աղյուսակ 22.

Հրօան (թեմ)	Բականյան պարփերագներից հետո	Առաջին համաշխարհային պարփերազմ	Ընդամենը
Արքանապոլիս	17.334	-	17.334
Էտոս	1.457	3.625	5.082
Վիզա	20.677	8.106	28.783
Խանո-Խորա	7.018	-	7.017
Դերկոս	13.542	-	13.542
Դեմոքրիկա	13.148	5.368	18.516
Ներակիա	29.081	22.688	51.769
Գալիպոլի	-	32.825	32.825
ՄիրիտՓիլոն	-	4.060	4.060
Քիրք-Քիլիսէ	3.500	11.493	14.993
Սրիվոլի	2.960	-	2.960
Սուզուպոլիս	7.850	-	7.850
Չորյու	13.715	-	13.715
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>130.282</b>	<b>88.165<sup>348</sup></b>	<b>218.447<sup>349</sup></b>

Կ. Պոլսի Հունական գիեղերական պարբիարքարանի գրյալների համադրումը Թրակիայի, Փոքր Ասիայի և Պոնտոսի համար Բականյան պարփերազմներից մինչև Առաջին համաշխարհային պարփերազմի ավարտն ընկած ժամանակահարվածի համար հետևյալն է.

Աղյուսակ 23.

Տարածաշրջան	Բականյան պարփերագներից հետո	Առաջին համաշխարհային պարփերազմ	Ընդամենը
Թրակիա	130.282	88.165 (88.485)	218.447 (218.767)
Փոքր Ասիա	153.890	144.559	298.449
Պոնտոս	-	257.019	257.019
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>284.172</b>	<b>489.743 (490.063)</b>	<b>773.915 (774.235)</b>

348 Նոյն աղյուսակում 88.165 գրյալը հիշարքակվում է նաև որպես 88.485: Տե՛ս René Puaux, Խշկ. աշխ., էջ 8:

349 René Puaux նույն որպես էջ 7:

Փաստորեն, երեք դարածաշրջանների՝ Թրակիայի (218.767), Արևմբրդյան Փոքր Ասիայի (298.449), Պոնտոսի (257.019) նշված դպրաները և դրանց գումարը (774.235) ներառում են 1913-1918 թթ. ընկած ժամանակահարվածում Օսմանյան կայսրությունում դեղահանված հույների հավաքական թիվը<sup>350</sup>:

Հույների զանգվածային ոչնչացման առաջին շրջանում գոհերի թիվը գրեթե նույնքան է նշում նաև Ռ. Մորգենթաուն: Ըստ նրա դպրաների՝ սկզբնապես դարագրված հույների թիվը 400.000 էր: Սակայն կոնկրետ թիվ չնշելով՝ նա գրում է. «(...) Նեփսարար հույների մարդիրությունն ընդգրկում էր երկու փուլ՝ պատերազմին նախորդող և 1915 թ. սկզբը: Առաջինը հարվածի ենթարկվեցին Փոքր Ասիայի ծովափում ապրող հոյները: Երկրորդը փուժեցին Թրակիայի և Մարմարա ծովի, Դարձանելի, Բոսֆորի, ինչպես նաև Ալ ծովի շրջանի հոյները: Այս վերջիններու հարյուր հազարներով ուղարկվեցին Փոքր Ասիայի խորքերը: Թուրքերը գրեթե նույն կերպ վարվեցին հոյների հետ, ինչպես վարվել էին հայերի հետ: Նրանք սկսեցին հոյներին դեղակայել Օսմանյան բանակի մեջ և հետո դեղափոխել աշխատանքային գումարդակներ՝ օգտագործելով նրանց ճանապարհներ կառուցելու համար Կովկասում և գործողորթյան այլ վայրերում: Հոյս զինվորները հայերի պես հազարներով մեռան ցրդից, քաղցից և որիշ զրկանքներից: Պահված գենքեր գտնելու համար վճռելուն նույն խուզարկությունները դեղի ունեցան հունական զյուդերում, և հոյս դրամարդիկ ու կանայք ծեծվեցին և կրդանքների ենթարկվեցին ճիշդ այնպես. ինչպես իրենց հայ ընկերները: Հոյներն էլ ենթարկվեցին նոյն բոնագրավունների, որոնք հանգեցրին ամենամեծ կողոպութի, ինչպես դա դեղի էր ունեցել հայերի հետք: Թուրքերը փորձեցին հոյս հապատակներին բռնի մահմեդականացնել. հոյս առջիկները հայ առջիկների պես առևանգվեցին և թուրքական հարեմներ դարվեցին, հոյս դրաները հափշրակվեցին և մահմեդականների դներում դեղավորվեցին: (...) Ամենուր հոյները խմբերով հավաքվեցին և թուրք ժանարմների այսպես կոչված պաշտպանության դակ փոխադրվեցին. զիսավորապես հերիտուրն, երկրի խորքերը: Թե այս ձևով քանի հոգի ցիրուցան եղան. որոշակիորեն հայրնի չէ. սակայն մորավոր հաշվը դարձանվում է 200.000-ից մինչև 1.000.000»<sup>351</sup>:

350 Tsirkinidis H., “At last we uprooted them...”: The Genocide of Greeks of Pontos, Thrace and Asia Minor, through the French Archives. Thessaloniki: Kyriakides Brothers, 1990, p. 107.

Տվյալների հակասականության և անճշգործությունների պարբռաներից մեկն է այն է, որ հաճախ անդեսվել կամ ոչ ճշգրիտ է ներկայացվել Պոլիգոսում գրեթերի թիվը:

Առաջին համաշխարհային պարերազմն ավարտվեց Գերմանիայի ու նրա դաշնակից Օսմանյան կայսրության պարբռությամբ, և 1918 թ. հոկտեմբերի 30-ին ստորագրվեց Մուղրոսի գինադադարը, որով Անդրանիկը և Դունաստանը պարփառքեցին Թուրքիային հնարավորություն փալ ողջ մնացած հույներին վերադառնալու իրենց քնակավայրերը: Սակայն կարճ ժամանակ անց պարզվեց, որ վերադառնալով իրենց փները, հույները դրանք գինում էին ավերված, թալանված և այրված, իսկ վերահաս քեմալական ազգայնամոլական շարժումն արդեն ազդարարել էր հույն ժողովրդի նոր կողմութեաների սկիզբը:

## 2.2. Տույների զանգվածային տեղահանություններն ու կողոքածները 1919-1922 թթ. հոյսն-թուրքական պատերազմի ընթացքում: Զննուունիայի աղեղը

Առաջին համաշխարհային պատերազմում Գերմանիայի ու նրա դաշնակից Օսմանյան կայսրության պարբությունից հետո 1919 թ. հունվարին իր աշխափանքներն սկսեց Փարիզի հաշվության համաժողովը, որը շարունակվեց մինչև 1920 թ. հունվար: Հունասփանը, մասնակցելով պատերազմին և կափարելով դաշնակցային իր պարբավորությունները, սպասում էր, որ Անդրանիկի իր դաշնակցներն էլ կափարեն իրենց խոսքումները, և արդարացի լուծում գրվի թուրքահապարակ հոյների խնդրին: Հունասփանը լուրջ հոյսեր ուներ՝ միավորելու Թուրքիայի կազմում գրնադարձ հունարանակ հողերը: Փարիզի հաշվության համաժողովին Է. Վանիզելոսը ներկայացրեց հուշագիր, որով պահանջում էր Հունասփանին միացնել Այդընի Վիլայեթի գրեթե ողջ տարածքը, Դարդանելի առանձին սանջակը և Բրուսայի Վիլայեթի արևմտյան հավաքածը՝ 125 հազար քառ. կմ տարածքով և այդ ժամանակ արդեն 800.000 հոյն և 30.000 հայ բնակչությամբ: Դրան պետք է գումարվեր նաև Իմրոսից հարավ՝ մինչև Կասպելորից ընկած կղզիները՝ որպես արևմտյան Փոքր Ասիային աշխարհագրորեն պարկանող տարածք, որպես կար 370.000 հոյն և 130.000 թուրք, իրեա և այլ ազգության բնակչություն<sup>352</sup>:

Հոյն-թուրքական պատերազմը սկսվեց 1919 թ. մայիսի 15-ին, երբ հունական զինված ուժերը Փարիզի հաշվության համաժողովի որոշումների հանաձայն<sup>353</sup> իրենց հսկողության տակ վերցրին Զմյուռնիա քաղաքը<sup>354</sup>: Հունական կողմից այս քայլի համար իրավական հիմնավորում էր ծառայում Մուղրոսի՝ 1918 թ. հոկտեմբերի 30-ին կնքված զինադադարի 7-րդ հոդվածը, որը դաշնակցներին իրավունք էր վերապահում իրենց անվտանգության դեմ սպառնակիցի դեպքում զբաղեցնել ցանկացած ռազմավարական կետ Թուրքիայում<sup>355</sup>:

352 Pallis A. A., նշվ. աշխ., էջ 58:

353 1919 թ. մայիսին դաշնակցների Գերագույն խորհուրդը թոյլ տվեց Հունասփանին գրանցնել քաղաքը: Տե՛ս Pallis A. A., նշվ. աշխ., էջ 66:

354 Անդրիկյան նախադատումի իրամանադրաբի՝ Զմյուռնիան դաշնակցների ընդհանուր հսկողության տակ դնելու ծրագիրը չիրականացվեց: Բրիտանական ներկայացուցիչն առաջարկեց դա թողնել հոյներին, որ իրենք «առանձին գրավեն թագերաբնմը և թոյլ տվան, որ իրենց դերը խալամ»: Տե՛ս Horton G., նշվ. աշխ., էջ 73:

355 Toynbee A. J., *The Western Question in Greece and Turkey. A Study in the Contact of Civilizations*, London: Constable and Co., 1922, p. 77.

Թուրքական և խորհրդային պատմագրության մեջ փարածված է այն կարծիքը, որ հունական կողմը զլիսավոր ազրեսորն էր և արևմտյան խմբերի ականակարգությունը կամակափարը: Իրականում հունական բանակի զլիսավոր խնդիրների մեջ էր մինում Թուրքիայի փարածքում իրենց հայրենակակիցների պաշտպանությունը: Նարկ է հաշվի առնել այն հանգամանքը, որ Մուղրոսի զինադադարից հետո սկսեցին արագ ձևավորվել «ինքնապաշտպանական խմբեր» ընդդեմ Անդրանիկի, իրականում ընդդեմ Հունաստանին և Հայաստանին փարածք զիջելու<sup>356</sup>: Այդ խմբերի գործողությունների թիրախ դարձավ ոչ թե Անդրանիկը, այլ հույն և հայ բնակչությունը: Այդ խմբերին անդամագրվում էին շատ մահմեդականներ, որոնք ժամանակին մասնակցել էին հայերի, հույների և ասորիների դեմ ոճրագործություններին և խուսափում էին պատրախանափակվությունից<sup>357</sup>:

Տիեզերական պարիփարաքանի կողմից 1920 թ. Կ. Պոլսում հրաժարակած «Թուրքիայի հելլենականության փառապանքների (Վկայությունների) Սև Գիրք զինադադարից մինչև 1920 թ.» գեղենկագիրն անդրադառնում է այդ դեպքերին՝ ներկայացնելով հույների սպանությունների և արդաքտումների բազմաթիվ օրինակներ<sup>358</sup>: Նշված ժամանակահարվածում հույների հայածանքները լայն արձագանք են սպացել նաև ժամանակի արևմտյան մամուլում: Այսպես, 1919 թ. մարտի 21-ին Լոնդոնի «The Times»-ը գրում է, որ Այդընի շրջանում «ոսպիկանությանը հրամայված էր պարապարվել հույն բնակչության ոչնչացմանը... Ցուրաքանչյուր աշխարհական հրամայված էր սպանել չորս կամ հինգ հույնի ...»<sup>359</sup>: Նոյն ամսին Զմյուռնիայի մով՝ Բուրջայում, մի խումբ հույն գյուղացիներ, որ վերադառնում էին դաշտից, ենթարկվում են հարձակման: Սպանվում է հիսուն հույն: Հաղորդվում է նաև, որ այս շրջանում հունական փարրի շատ

356 Ավակյան Ա., Չերքեսկան ֆակտօր Յ Օսմանական կայսրությունում, ս. 246 – 247.

357 Այդ կազմակերպությունները ժամանակի ընթացքում բավական շաբաթել էին: Դրանց թվում էր, օրինակ, «Կարակոլը», որի անդամների մեծամասնությունը «Թեղրիլաթ-ը մահտուսեի» նախկին գործիչներ էին: Կային նաև Կիլիկիայի, Զմյուռնիայի, Թրակիայի և այլ շրջանների «իրավունքների պաշտպանության կոմիտեներ»: Տես Միքայել Կ., Թուրքիայում ազգայնական շարժման հարցի շուրջ 1918-1919 թթ., Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Եր.: ԴՊԱ «Գիլություն» հրատ., պր. XVI, 1996, էջ 127-129:

358 Անզամ հենց զինադադարի սորորագրման օրը թուրքական մի հրոսակախումբ հարձակվում է Ռոդոպլասի (Պոնքոսում) Լիվիդիա գյուղի վրա, կողոպտում, բալանում՝ սպանելով նաև մի կտոր՝ Զոյն Վասիլիոյ անունով: Տես The Black Book of the Sufferings of the Greek People ..., թ. 50.

359 “Extermination of Greeks”, The Times, 21 March, 1919, p. 9.

սպանություններ ու կողոպութբներ են լինում<sup>360</sup>:

Գրինական զորքերի՝ Զմյուռնիայում ափիանումից մի քանի օր անց՝ 1919 թ. մայիսի 19-ին գեներալ Մ. Քեմալի ուղարկվեց Սամսուն՝ ունենալով ուազմական նախարարի և մեծ վեճիր Դամադ Ֆերիդ փաշայի կողմից գրված հրահանգը, որի համաձայն նա պետք է կարգուկանոն հասդարձեր այս շրջանում, որքան հնարավոր է շուրջ հավաքեր փարբեր վայրերում գրեղակայված գենքն ու զինամթերքը, դրանց նկարմամբ սահմաններ հսկողություն<sup>361</sup>: Իրականում Մ. Քեմալը, ժամանելով Սամսուն, ծերոնամուխ եղավ ոչ թե սուլթանի և կառավարության հրամանների կարգարմանը, այլ սկսեց իր շուրջը համախմբել Թուրքիայի արևելքում գործող փարբեր ազգայնական ուժերի: 1919 թ. հունիսի 21-ին Ամասիայում Ռազուֆ Օքբայը (Մուղրոսում Օսմանյան պերության պարվիրակ, ծովային նախարար), Ալի Ֆուադ (Ձերեսոյ) փաշան (Անկարայում 20-րդ բանակային կորպուսի հրամանադրար), Ռեֆիկ բեյը (3-րդ բանակային կորպուսի հրամանադրար Սամսունի մով), սպորագրեցին այսպես կոչված Ամասիայի արձանագրությունը, որում նշվում էր, որ երկրի ամբողջականությունը և ազգի անկախությունը վկանգի մեջ է. պետք է ազգային կոնգրես գումարվի Սվազում, իսկ մինչ այդ Էրզրումում հուլիսի 10-ին կիրավիրվի արևելյան վիլայեթների կոնգրես<sup>362</sup>:

1919 թ. հուլիսի 23-ից օգոստոսի 7-ը կայացավ Էրզրումի կոնգրեսը, որը կարևոր դեր խաղաց ազգայնական (քեմալական) շարժման հետքազարդացման և հաջողության գործում: Նամաժողովի արդյունքում ընդունված բանաձևն ու հոչակագիրն ակնհայփորեն ուղղված էին առաջին հերթին հույնների և հայերի դեմ: Նսրակ ընդգծվում էր, որ Տրապիզոնի վիլայեթը, Զանիքի սանջակը, ինչպես նաև Էրզրումի, Սերասպիայի, Դիարբեքիրի, Խարբերդի, Վանի և Բիթլիսի վիլայեթները կազմում են մեկ ամբողջություն և ոչ մի դեպքում չեն կարող անջափվել Օսմանյան կայսրությունից կամ բաժանվել: Երեսապաշտորնեն նշելով, որ իրենք հասդարում են Օսմանյան կայսրության փարածքում բնակվող քրիստոնյաների ձեռք բերած իրավունքները, միաժամանակ ընդգծում էին, որ թույլ չեն դա, որ հույնները կամ հայերն այնպիսի դիրքորոշում հանդես բերեն, որ իրենց՝ թուրքերի գոյության համար վկանգ սպեղծվի: Եթե Օսմանյան կառավարությունը

360 “Turks Massacre Greeks”, The New York Times, 21 March, 1919, p. 3.

361 Шамсутдинов А. М., Национально-освободительная борьба в Турции 1918-1923 гг., Москва: Наука, 1966, с. 68.

362 Кемаль М., Путь новой Турции 1919-1927, т. 1, Первые шаги национально-

սդիպված լինի հրաժարվել «Արևելյան Անափոլիայի» վիլայեթներից, իրենք կսդուղեն ժամանակավոր կառավարություն, որը թույլ չի փա «ովրնափակ գալ իրենց հայրերի հողը»<sup>363</sup>: Այս գործառույթները դրվում էին «Արևելյան Անափոլիայի իրավունքների պաշտպանության կոմիտեի» վրա:

Էրգրումի համաժողովում ձևակերպված դրույթները զարգացվեցին և հսկակեցվեցին 1919 թ. սեպտեմբերի 4-11-ը գեղվ ունեցած Սվազի (Մերասդիայի) համաժողովում, ուր ի վարբերություն առաջինի՝ ներկայացված էին ոչ միայն «Արևելյան Անափոլիայի», այլ նաև Արևմբյան Անափոլիայի և Ռուսակայի ներկայացուցիչները: «Համաժողովում որոշվեց կազմակերպությունն անվանել «Արևելյան Անափոլիայի իրավունքների պաշտպանության կոմիտե»: Մեկ անգամ ևս հիշապակելով 1918 թ. Մուդրության գինադադարով ճանաչված սահմանները՝ հոչակագրի երրորդ կերպում ամրագրեցին, որ իրենք միաձայն ընդունում են ինչպես Այդընի, Մազնեսիայի (Մանիսա) և Բալըքեսիրի ռազմաճակարներում, այնպես էլ օսմանյան գարածքի ցանկացած մասում ամեն դեսակի ներխուժումների և բանազավթումների դեմ պայքարի և դիմադրության օրինական բնույթը, որը նպագրակ ունի հունական կամ հայկական պետության սպեհում<sup>364</sup>: Փաստորեն քեմալյական ազգայնամոլական ուժերը պատերազմ էին հայփարարում կայսրության քրիստոնյա ժողովուրդներին:

Էրգրումի և Սվազի համաժողովներում ընդունված որոշումները հող նախապատրաստեցին 1920 թ. հունվարի 28-ին «Ազգային ոլխոփ» ընդունման համար:

Մ. Քեմալի ժամանումից հետո Պոնքոսում հակահունական քաղաքականությունը նոր թափ սպացավ և որոշակիորեն համակարգվեց<sup>365</sup>: Ամենուր գարվում էր քարոզչական ուժեղ պայքար ընդդեմ հույների՝ կոչ անելով հավաքացյալներին սպանել «զյավուրներին»: Ամենուր

363 Կեմալ Մ., նշվ. աշխ., էջ 419:

364 Նույն գեղում, էջ 419:

365 Որոշ գեղեկությունների համաձայն այս շրջանում հունական կատավարության և Կոստանդնուպոլսի Դուսական գիներական պարրիարքարանի աջակցությամբ հիմնադրվեց «Մավրի Միրա» (հուն.) «Սև բախուր», որը խորհրդանշում էր բորբական լուծը) հունական ազգային կազմակերպությունը, որը նպագրակ ուներ պաշտպանել Պոնքությանը հույն բնակչությանը և հասնել անկախության: Ըստ Մ. Քեմալի՝ այն դեկավարվում էր անմիջականորեն Է. Վենիգելոսի կողմից: Տե՛ս Կեմալ Մ., Պуть новоой Турции 1919-1927, т. 1, Первые шаги национально-освободительного движения 1919, Москва: Литиздат, 1929, с. 6, 199, 350.

հայրարարություններ էին փակցվում՝ թուրքական դպրոցներում, սրճարան-խանութներում, մզկիթներում և մեղրեսեներում, բոլոր պետական հասպարություններում, նոյսնիսկ փողոցի անկյուններում՝ դրդելով թուրքերին բնաջնջել հոյսներին և մաքրել Թուրքիան այդ «անհավագ շնորհ»<sup>366</sup>: Հակահունական քարոզությունը «սնվում» էր հունական ափիանման ժամանակ թուրքերի «մեծաթիվ» սպանությունների «փասփարկներով»<sup>367</sup>: Ամերիկյան հյուպալոս Զ. Նորքոնը, ով հոյսների ափիանումից անմիջապես հետո վերադարձել էր Զմյուսնիա, գրում է. «Ճափ է խոսվել դաժանությունների ու ջարդերի մասին, որ թույլ են փրկել 1919 թ. մայիսի 15-ին հունական զորքերը: Իրականում դեպքերը, որ դեղի են ունեցել այդ օրը և դրան անմիջապես հաջորդող օրերին, այնպես են չափազանցվել, որ դրանց ազդեցությունը հասարակական կարծիքի վրա շափակելի մեծ եղավ, քան թուրքերի կողմից իրագործված որոշ ազգությունների կանխանդակած բնաջնջումը: Կարծես ոչ հաշվի առնվեց հունական իշխանությունների կողմից ծեռնարկված՝ նման անկարգությունների անմիջական ճնշումը, ոչ է բուն հանցավորների նկարմամբ խսփագույն պարիճների, այդ թվում՝ նահապատժի կիրառումը»<sup>368</sup>: Ամերիկյան ականավոր Վիլյամ Փեմբեր Նիկվոր նշում է, որ սպանվել է յոթանասունվեց հոգի գլխավորապես հոյսն զինվորների և մասամբ քաղաքի ամբոխի կողմից: Այլ ազգությունների ևս հարյուր մարդ է սպանվել<sup>369</sup>: Ընդհանուր առմամբ սպանվել է 50-300 մարդ և դադապապարփակել 74 անձ՝ երեքը մահապատժի, չորսը՝ քաժանակիր աշխարհանքի, որոնցից երկուսը՝ երկար փարիների, քասաներկուսը՝ երկարափռ և հիսուներեքը՝ կարծ ժամկետով բանփարկության: 74 դադապարփակածներից 48-ը հոյսն էր, քասաներեքը՝ թուրք, քասաներկուսը՝ հայ և մեկ հետա: Երեք հոյսնից, որ մահապատժի էին ենթարկվել, մեկը զինվոր էր<sup>370</sup>.

Այդ նոյսն ժամանակ Պոնքոսում իրավիճակը դառնում էր ճգնաժամային: Ամասիայի միքրոպոլիտ Գերմանոսի՝ 1919 թ. մայիսի 31-ի հաղորդագրությունից պարզ է դառնում, որ ամբողջ ամռան

366 Murat J., The Great Extriction of Hellenism and Christianity in Asia Minor, the Historic and Systematic Deception of World Opinion Concerning the Hideous Christianity's Uprooting of 1922, Miami-Florida: A Triantafyllis publ., 1999, p. 60-61.

367 Թուրքական լրագրերը հունական բանակի՝ Զմյուսնիայում ափիանումից հետո «թուրքերի կորորածի» արդյունքում սպանվածների թիվը հասցեցին անգամ դասելակ հազարների: Տե՛ս Murat J., Եշվ. աշխ., էջ 66:

368 Horton G., Եշվ. աշխ., էջ 72-73:

369 Նոյսն գեղում, էջ 75:

370 Նոյսն գեղում, էջ 75-76:

ընթացքում շարունակվել է հոյն բնակչության կողոպուտը, երեխաների հափշտակությունը, սպանություններն ու ահարեւկությունը՝ օգբագործելով նաև լազերին<sup>371</sup>: Այս շարունակական դաժանությունները սդիմացին Պոնդոսի հոյներին բարձրանալ լեռները և դառնալ պարփիզաններ (հոյն. Պալիկար): Զինադադարից հետո, երբ այսպես ժամանեցին անգլիական զորքերը, լեռներում ապաստանած հոյների մեծ մասն իջակ իրենց բնակավայրերը, սակայն նրանց հեռանալուց հետո թուրքերի հալածանքների հետևանքով հոյները կրկին բարձրացան լեռները: Նրանք ծեռնարկեցին ինքնապաշտպանական միջոցներ և ասդիճանաբար սկսեցին զորեղանալ, ու անգամ նրանց սկսեցին անվանել «Պոնդոսի հոյն չեթեներ»: Մենքի մերձափնյա շրջանի հոյների գեղահանության ժամանակ Սամսունի, Բաֆրայի, Կավգայի բոլոր այն հոյն գյուղացիները, ովքեր կարողացան, անգամ իրենց ընդառնիքներով լեռները բարձրացան: Այսպես, Բաֆրայից մինչև Զարշամբա ընկած լեռներում ապաստանեց 20-25.000 մարդ՝ այր, կին և մանուկ, որից 3-4 հազարը զինված էր<sup>372</sup>: Հայուսկային պայքարի զինավոր օջախներ դարձան Բաֆրան, Սանկան և Օրդուն, շուրջով պարփիզանական ջոկագներ հայփնվեցին Տրապիզոնում և Կարսի շրջանում: Կունական ինքնապաշտպանական շարժման գրադանդավոր և նշանավոր ներկայացուցիչներն էին Վասիլիս աղան (Վասիլիս Անֆոպուլոս), Խարալ փաշան, Անդրոն Զառուշ, Էվլիլիս Կուրիդիդին, Անաստրաս աղան, Աքածիսը, Դելի աղան, Էմիլ աղան և այլք<sup>373</sup>: Նրանք պաշտպանում էին ողջ մնացած հոյն բնակչությանը, չնայած ունենին զենքի ու զինամթերքի և հագրկապես պարենի պակաս: Արկասահմանի պոնդացի հոյները Սանկայի հերոսական պաշտպանության ժամանակ որոշակի օգնություն ցույց փութեցին Փիդյայիներին ոչ միայն հանգանակություններով, այլ նաև ուրիշ միջոցներով: 1919 թ. Բաթումում հիմնադրվեց «Սանկացի դիմադրողների դրսի կազմակերպության կոմիտեն» (նախազահ՝ Խրիստոս Միքմալիդես), որի նպատակն էր նյութական և բարոյական օժանդակություն ցույց բարձրացներին<sup>374</sup>: Առաջին գումարը, որ հավաքվել էր կոմիտեի կողմից, փոխանցվեց սանկացի ուսուցիչ Ֆիդյայոս Խիմոնիդեսին, երբ վերջինս եկել էր Բաթում, որպեսզի շփման մեջ մրներ Ազգային խորհրդի և Պոնդոսի ազգային ժողովի

371 The Black Book of the Sufferings..., p. 31-32.

372 Հայկուի Դ. Ա., Թօփապ Օսման և դէպերը Մարզուանի մէջ Զինադադարէն յեպոյ, Աքենք: Տպ. «Նոր օր», 1924, էջ 29:

373 Photiades K., նշվ. աշխ., էջ 29:

374 Կույլ դաշտում, էջ 30:

հետ<sup>375</sup>:

«Ունական զինված խմբերը որոշ ժամանակ թուրքական զորքերին դիմադրելուց հետո սպիտակած եղան հեռանալ Հունասրան: Ներաքրքիր է այն փասդը, որ հունական ինքնապաշտպանական մարտերը, ինչպես հայերինը, որոշակիորեն ապահովեցին խաղաղ բնակչության անվտանգությունը: Պոնդոսի հույների խնդրով գրաղվող անվանի մասնագետ Վ. Ֆոփիադիսը նշում է. «Մինչդեռ այն շրջաններում, որ չէին կարող գործել պարտիզանները, թուրքերն անարգել շարունակում էին կապարել իրենց կործանիչ գործը: Ամեն օր սպացվում էին ողբերգական լուրեր»<sup>376</sup>:

1919 թ. հուլիսի 25-ին Պոնդոսի հույների՝ Բաթումում ընթացող կոնգրեսի նախազահ Վ. Իոաննիդեսը նամակ ուղարկեց Վ. Պոլսում Հունասրանի դեսպանին՝ գեղեկացնելով փիրող վիճակի մասին և խընդ-րելով հունական կառավարության անհապաղ միջամբությունը<sup>377</sup>: Մինչ այդ՝ 1919 թ. հունիսի 14-ին, Հունասրանի վարչապետ Է. Վենիգելոսը դիմեց Հաշորության կոնֆերանսի Բարձրագույն խորհրդին՝ խնդրելով դաշնակիցներին թույլ փալ ընդարձակելու հույների գրադերած գո-փին՝ հիմնավորելով, որ միայն այդ ճանապարհով կկանխվեն թուրք ոճրագործների կողմից այդ փարածքներում կարարվող շարունակական արյունահեղ հարձակումները<sup>378</sup>:

Սակայն Վենիգելոսի դիմումը մնաց անպարասխան, իսկ հույն բնակչության հալածանելու շարունակվում էին ոչ միայն Պոնդոսում, այլ նաև կենտրոնական և արևմտյան Փոքր Ասիայում: Այսպես, 1919 թ. մայիսի 27-ին հունական բանակն ազարագրեց Այդըն քաղաքը, սա-կայն շուրջով սպիտակած եղավ հետ քաշվել և նորից գրադեցնել այն հուլիսի 4-ին: Այդ ընթացքում թուրքերն այրեցին քաղաքը. Այդընի երկու երրորդը կործանվեց<sup>379</sup>: Հունական բանակի՝ քաղաքը լքելուց հետո ավելի քան երեք հազար հույն արտաքսվեց Դենիզուիի ուղղությամբ<sup>380</sup>: Այդընի հունիսյան դեպքերից հետո մոտ 7.000 հույն Այդընից, Օնորլուից, Ակշեից, Կիոսկից և շրջանի այլ քաղաքներից արտաքսվեց Նազի<sup>381</sup>: Բրիտանացի

375 Photiades K., նշվ. աշխ., էջ 31:

376 Խարալամպիծ Մ., Փոտիած Կ., Պոնտիանց, Право на память, Салоники: Изд. “КЕПОМЕ”, 2004, с. 99.

377 Photiades K., նշվ. աշխ., էջ 29:

378 Murat J., նշվ. աշխ., էջ 60:

379 Smith M. L., նշվ. աշխ., էջ 91:

380 The Black Book of the Sufferings..., p. 90.

381 Նոյն գեղում, էջ 103:

պարմաբան Ա. Թոյնբիի փվյալներով հունիս ամսին Այդընի գրաքանչում միայն սպանված հոյների թիվը 500 էր<sup>382</sup>: Մոդավորապես նոյն հարվածում բրիտանական «Daily Telegraph»-ի փվյալներով 3.500-ն է սպանվեց բռնազարդի ժամանակ<sup>383</sup>:

Ակնհայր է, որ հունական ուժերի կողմից վերահսկվող գրաքանչուց դուրս քրիստոնյաների վիճակը շարունակում էր մնալ ճգնաժամային՝ թորքական «ազգային կազմակերպությունների» կողմից ձեռնարկված միջոցառումների հետևանքով: Ուղղակի անհրաժեշտություն էր դարձել հունական ուժերի առաջխաղացումը՝ խաղաղ բնակչությանը փրկելու համար: 1920 թ. հունիս ամսին հունական կառավարությունն սպացավ դաշնակիցների համաձայնությունը՝ ընդլայնելու Փոքր Ասիայում գրադեգրած գրաքանչում<sup>384</sup>: Մինչ այդ պահը՝ 1919 թ. մայիսի 15-ից մինչև 1920 թ. հունիսի 22-ը, հունական զորքերի կողմից վերահսկվող գրաքանչը հարավում հասնում էր Այդըն, արևելքում՝ Ղասարա, հյուսիսում՝ Այվալըք քաղաքները<sup>385</sup>:

1920 թ. հունիսի 22-ից հունական բանակը հարձակում սկսեց Զմյուռնիայի գրուուց՝ կարարելով դեսանքային գործողություններ Մարմարա ծովի ափերին և նպագակ ունենալով վերահսկել Դարդանելից ու Մարմարա ծովից հարավ ընկած շրջանները<sup>386</sup>: Նոյն այդ շրջանում հոյների առաջխաղացումն Արևելյան Թրակիա գլւեց մեկ շարաթ (1920 թ. հուլիսի 20-27), և միայն դաշնակիցների ճնշումը խանգարեց նրանց գրավել Կոտաֆանդնուպոլիսը<sup>387</sup>: Դա կարարվեց այն բանից հետո, երբ հոյների՝ Զմյուռնիայի գրուախումբը և Գ. Կոնդիլիսի 3-րդ հետևակային գունդը փոխադրվեցին Պանդերմայից Ռուդոսպրո: Զաֆար Թայարի՝ արևելյան Թրակիայում թուրք ազգայնական առաջնորդի թույլ և անկազմակերպ ու-

382 Toynbee A. J., Աշխ., էջ 151, 273-274:

383 Boyajian D. H., Armenia: The Case for a Forgotten Genocide. Westwood, New Jersey: Educated Book Crafters, 1972, p. 153.

384 Smith M. L., Աշխ., էջ 125:

385 Корсун Н. Г., Греко – Турецкая война 1919 – 1922 гг., Москва: Гос. Военное изд. Наркомата Обор. СССР, 1940, с. 8 – 9.

386 Նոյն գլւում, էջ 9:

387 Shaw Stanford J., Shaw Ezel Kural, History of the Ottoman Empire and Modern Turkey, Volume 2 : Reform, Revolution and Republic: The Rise of Modern Turkey, 1808-1975, Cambridge-London-New York-Melbourne: Cambridge University Press, 1977, p. 358. Նոյների գրադեգրած գրաքանչը Արևմտյան Թրակիայում (1919 թ. հոկտեմբերի 18) կազմում էր 8.405 քառ. կմ, իսկ Արևելյան Թրակիայում՝ 20.634 քառ. կմ: Տես Pallis A. A., Աշխ., էջ 65:

Ժերը սեղմվեցին հույսների կողմից և ցիրուցան եղան: Ինքը՝ Թայարը, գերի ընկավ<sup>388</sup>: 1920 թ. հուլիսի 26-ին հունական զորքերը մրան Աղբիանապոլիս:

Ահա այս պայմաններում 1920 թ. օգոստոսի 10-ին սկսորագրվեց Սկրի պայմանագիրը դաշնակցների և Օսմանյան Թուրքիայի միջև: Հունասփանն սփացավ Այղընի վիլայեթի Զմյուռնիայի և Մանիսայի սանչակները, Բրուսայի վիլայեթի Բալըբեսիրի սանչակը: Եվրոպական Թուրքիայում Հունասփանին ամրագրվեց Արևելյան Թրակիան՝ մինչև Չարաչայի գիծը<sup>389</sup>: Զմյուռնիան պետք է կառավարվեր Հունասփանի կողմից հինգ քարով, սակայն նավահանգստում պետք է բարձրացված մնար սուլթանական դրոշը: Ժամկետի ավարտից հետո այն պետք է փոխանցվեր Հունասփանին, եթե դեղական խորհրդարանը կամ հանրաքեն այդպես որոշեր: Հունասփանին անցան նաև Իմբրոս և Տեներոս կղզիները, որոնք վերահսկում էին մուտքը դեպի նեղուցներ<sup>390</sup>: Մնացած քարածըները, որոնց նկարմամբ Հունասփանը մեծ հեփքքրություն ուներ, հարկապես Էպիրոսը, Կիպրոսը, Կոստանդնուպոլիսը, նեղուցների գորին և Պոնտոսը, դրւու մնացին նրա ճեղքերումների շրջանակից<sup>391</sup>:

1920 թ. հոկտեմբերին հունական բանակը շարունակեց իր առաջխաղությունը՝ նպագակ ունենալով մեծացնել ճնշումը քեմալականների վրա, որպեսզի վերջիններս ճանաչեն Սկրի պայմանագիրը և Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարությանը սպիթեն գնալ խաղաղ բանակցությունների: Հունական նոր առաջխաղացումն սկսվեց Է. Վենիգելոսի լիբերալ կառավարության օրոք, որը, սակայն շուրջով կորցրեց իշխանությունը և փոխարինվեց Դ. Գունարիսի կառավարությունով<sup>392</sup>: Իշխա-

388 Smith M. L., Եշվ. աշխ., էջ 128:

389 Pallis A. A., Եշվ. աշխ., էջ 59:

390 Howard Harry N., The Partition of Turkey, A Diplomatic history 1913-1923, New York; Howard Fertig, 1966, p. 245.

391 Smith M. L., Եշվ. աշխ., էջ 129:

392 Հունասփանում 1920 թ. նոյեմբերի 1-ին դեղի ունեցան խորհրդարանական ընկրություններ: Է. Վենիգելոսը և իր կողմնակիցները պարզություն կրեցին՝ խորհրդարանում սփանալով 118 դեղ՝ 369-ից: Հոկտեմբերին մահացավ նաև Աթենքանդր արքան (1917-1920): Իրադրությունն առավել բարդացավ, եթե Կոստանդնին արքայի մյուս որդին՝ արքայազն Պավլոսը (Պոլ), իրաժարվեց գահից՝ պարբռառաքանելով, որ իր հայրը երբեք չի իրաժարվել զահի նկարմամբ իր իրավունքից, ուստի դեռ շարունակում է մնալ երկրի օրինական քաջակուրը: Նոր կառավարությունը հանրաքվեով զահին վերադրեց Կոստանդնին Առաջին արքային (1913-1917 և 1920-1922): Տես Murat J., Եշվ. աշխ., էջ 97-98:

նության փոփոխությունը և մանավանդ Կոստանդին արքայի վերադարձը բացասաբար ընդունվեց դաշնակիցների, հարկապես Մեծ Բրիտանիայի կողմից<sup>393</sup>: Իր վերադարձից հետո արքան փոխեց Առաջին աշխարհամարտի վերաբան սպաներից շափերին և ավագ պաշտոններում նշանակեց միապերական անփորձ սպաների<sup>394</sup>: Հունական բանակի սպայակազմը, որը պաշտպանում էր Զմյուռնիան և Փոքր Ասիայի ափերը, հիմնականում «ազարվեց» Վենիգելոսի կողմնակիցներից:

1920 թ. դեկտեմբերին հունական ուժերը, մոտենալով Էսքիզեհիրին երկու ճակարով՝ հյուսիս-արևմութքից և Զմյուռնիայից, 1921 թ. հունվարի 10-ին ճակարամարտ վկեցին քեմալականներին Ինոնյու գետի ափին՝ ճիշդ Քյութահիայից հյուսիս: «Ինոնյուի առաջին մարտից» հետո հույներն սկսեցին նահանջել դեպի Բրուսա: Դա պատերազմում թուրքերի առաջին «մեծ հայրանակն» էր Արևմուրան ճակարի հրամանադրար Խանթ փաշայի (հետագայում՝ Ինոնյու) գլխավորությամբ<sup>395</sup>: Չնայած դա փոքր ճակարամարտ էր՝ ներառելով միայն մեկ հունական դիվիզիա, սակայն կարևոր նշանակություն ունեցավ թուրք ազգայնականների ոգևորությունը բարձրացնելու գենանկյունից և, որ ամենակարևորն է, որոշակիորեն «սրբազն» դաշնակիցներին՝ ի հայր բերելու հույների հարցում իրենց հետքնթացը Սևրի պայմանագրի դրույթներից: Դա դրսերվեց արդեն 1921 թ. փետրվարի 21-ից մարտի 12-ը գեղոյի ունեցած Լոնդոնի կոնֆերանսում, որտեղ լրջորեն քննարկվեց Փոքր Ասիայում գիրող ռազմական իրավիճակը: Կոնֆերանսին մասնակցում էին և՛ Կ. Պոլսի, և՛ Անկարայի կառավարությունները: Հունական կողմը հասպարեց իր բանակի պարբառադրակամությունը և մարդունակությունը՝ ազարագրելու Անարքութայի հունական քնակչությանը թուրքական լծից: Վարչապետ Կալոգերոպուլոսի խոսքերով՝ Անարքութայում իրենց գինուժի քանակը կազմում է 120.000 մարդ, մինչդեռ թուրքերինը՝ 65.000: Դա հնարավորություն կրաք հունական զորքերին երեք ամսվա ընթացքում ջախջախել քեմալականներին և Փոքր Ասիայում լիակարար կարգուկանոն հասպարել<sup>396</sup>: Մինչդեռ քեմալականները պահանջում էին թուրքիայի

393 Դա պայմանավորված էր Առաջին աշխարհամարտի գարիներին Կոստանդինի վարած գերմանամսներ քաղաքականությամբ: Դաշնակիցները հայրարարեցին, որ Հունաստան այլև չի սրբանա ֆինանսական օժանդակություն: Տե՛ս Murat J., Եշվ. աշխ., էջ 175:

394 Վերջին լոր, 6 հունիսի, 1921:

395 Shaw Stanford J., Shaw Ezel Kural, Եշվ. աշխ., էջ 358:

396 Шамсугдинов А. М., Եշվ. աշխ., էջ 235-236:

ճանաչում 1913 թ. սահմաններով: Ընդհանուր առմամբ, Լոնդոնյան կոնֆերանսը ոչ մի շոշափելի արդյունքի հիմասավ<sup>397</sup>:

Ինույուի առաջին ճակարտարգի հետո հույները քաշվեցին իրենց նախկին դիրքերը՝ Բրուսայի և Ուշակի միջև: Լոնդոնի կոնֆերանսից հետո՝ 1921 թ. մարտի 23-ին, հույները սկսեցին նոր հարձակում: 1921 թ. մարտի 27-ից ապրիլի 1-ն Ինույու գետի ափին գեղի ունեցավ երկրորդ մարտը, որը նշանավորվեց որպես Իսմեր քեյի զիսավորած թուրքական գորքի երկրորդ հաղթանակ<sup>398</sup>:

1921 թ. հուլիսին ուժեղացված հունական բանակը՝ բաղկացած ինը դիվիզիայից, սկսեց ուժեղ հարձակում Աֆիոն-Կարահիսար-Քյութահիա-Էսքիշեհիր գծով Իսմերի զիսավորած թուրքական ուժերի դեմ: Հույները հուլիսի 12-ին գրավեցին Աֆիոն-Կարահիսարը, հուլիսի 17-ին՝ Քյութահիան, իսկ հուլիսի 20-ին՝ Էսքիշեհիրը: Թուրքերը նահանջեցին և արդեն գտնվում էին Անկարայից միայն 50 կմ հեռավորության վրա<sup>399</sup>: Սակայն հույներն արագ չարգացրին իրենց ռազմական հաջողությունները: Թուրքական բանակը, նահանջելով Սաքարիա գետի արևելյան շրջան, կազմակերպեց պաշտպանության վերջին գիծը:

Եվ մինչ հունական բանակն առաջանում էր, թեմալականներն ուժեղացնում էին Փոքր Ասիան քրիստոնյաններից ազագներ գործնքացը: Դունական ինքնապաշտպանական օջախները ոչնչացնելու խնդիր ունենալով՝ Կերասունի թուրքական ուժերի հրամանագրար թոփալ Օսմանը լծվեց Պոնքոսում հակահունական հայածանքների ու բռնությունների գործին: Հայկական առյուրների համաձայն՝ Օսման աղան Բաֆրայից և Իներուուից մինչև Տրապիզոն 300 հունական զյուղ ավերեց և այն զյուղացիներին, ովքեր չէին կարողացել լեռներում ապաստանել, դների մեջ ողջակիցեց<sup>400</sup>:

Պերության և բանակի դեկավարությունը՝ արքա Կոստանդինը, վարչապետ Դ. Գունարիսը և գեներալ Պապուլասը, հանդիպեցին Քյութա-

397 Կոնֆերանսի հերազարդ արյունք, թերևս, կարելի է համարել 1921 թ. հոկտեմբերի 20-ի Ֆրանս-թուրքական համաձայնագիրը, որով Ֆրանսիան դարձավ դաշնակիցներից առաջինը, որ բռնեց Անկարայի կառավարության ճանաչման ուղին:

398 Ինույուի հաղթանակի պարզվին թուրքական ուժերը զիսավորող Իսմերը 1934 թ. սփացավ Ինույու պատրանուն:

399 Շամսուդինօվ Ա. Մ., Խշկ. աշխ., էջ 244:

400 Հայկունի Պ. Ա., Խշկ. աշխ., էջ 244: Կերասունի հունական վարժարանը գրավելով՝ թուրքերն այն վերանվանեցին «Օսման աղա մեքրերի»: Տնտ Վերջին լուր, 22 հունիսի, 1921:

հիայում, ուր քննարկեցին ռազմական գործողությունների հետագա ընթացքը: Որոշվեց շարունակել հարձակումը: 1921 թ. օգոստոսի 13-ին յոթ հունական դիվիզիա կտրեց անցավ Սաքարիա գետը (հուն.՝ Սանգարիս): Նկրման համերի գլխավորած ուժերի նահանջմն՝ հունական բանակն ի վերջո 21-օրյա ճակարպամարդ մղեց թուրքերի դեմ (1921 թ. օգոստոսի 23-սեպտեմբերի 13), որպես հույները պարփություն կրեցին:

Հոյները ռազմական արշավը հաջողությամբ ավարտելու համար դիմեցին դաշնակիցների օգնությանը: Սակայն վերջիններս արդեն 1922 թ. վերջերին հանգել էին այն միջին, որ Սևրի պայմանագիրը չի կարող կենսագործվել: Դա հարկապես վերաբերում էր Ֆրանսիային և Իտալիային: Արտահայտելով մրահոգություն Փոքր Ասիայում հունական ուժերի ճակարպագրի վերաբերյալ՝ վարչապետ Գունարիսը լորդ Քերգոնին 1922 թ. փերփարի 22-ին ուղղված նամակում նշում է, որ դրամի ու պաշարների պակասն ուժասպառ է արել հոյներին, իսկ քենալականներն սկրանում են օգնություն ոչ միայն Օուսասկրանից<sup>401</sup>, այլ նաև «որոշ դաշնակից գերություններից» (հավանաբար ակնարկելով Ֆրանսիային և Իտալիային): Հոյնասրանն անհապաղ համալրման կարիք ունի՝ թարմ ռազմական նյութերի և ֆինանսների փեսքով<sup>402</sup>: Ի վերջո դաշնակիցները մարդի վերջին հունական և թուրքական կողմերին զինադադար կնքելու առաջարկ արեցին<sup>403</sup>: Սակայն քենալական կառավարությունը չընդունեց նրանց առաջարկը՝ բացաբերնով, որ ինքը դրան կիամաձայնի միայն օրար բանակների՝ թուրքիայից դուրս բերվելուց հետո<sup>404</sup>:

401 1921 թ. մարտի 16-ին կերպած խորհրդա-թուրքական պայմանագրի համաձայն՝ Թուրքիան սպասում էր 10 մն. ոորիթի ոսկով ֆինանսական և ռազմական օգնություն: Դրանից հետո ևս շարունակվեց օգնությունը Թուրքիային: 1921 թ. մարտի 23-ին Խորհրդային Աղրբեջանը թուրքական բանակի կարիքների համար Կարս ուղարկեց 30 վագոն նավթ, 2 վագոն թենզին և 8 վագոն կերոսին: Ապրիլին Խորհրդային կառավարությունը «Կարմիր կիսալուսի» միությանը փոխանցեց ևս 30 հազար ոորիթի ոսկով, որին 1921 թ. մայիսի 25-ին հետևեց նոր ֆինանսական օգնություն քենալականներին՝ 50 մն. ոորիթի ոսկով: Թուրքիային օգնությունը շարունակվեց նաև հետագայում: Տե՛ս Շամսուդին Ա. Մ., նշվ աշխ., էջ 202-209:

402 Howard Harry N., նշվ. աշխ., էջ 265:

403 Հանդիպելով Փարիզում Քերգոնը, Պուանկարեն և Սանգերը 1922 թ. մարտի 27-ին իրապարակեցին իրենց պաշտոնական հայդարարությունը՝ ուղղված Հոյնասրանին և Թուրքիային, որը պարուսակում էր հաշվության առաջարկություն երկու երկրներին: Առաջարկվող հաշվության պայմանների մասին գետս Howard Harry N., նշվ. աշխ., էջ 266:

404 Shaw Stanford J., Shaw Ezel Kural, նշվ. աշխ., էջ 361:

Այս շրջանում՝ սկսած 1921 թ. մարտից, ուժեղացան հոյվն-քուրքական ռազմաճակապից արևելք ընկած փարածքների հոյվների հալածանքները: Պահպանվել է Ամերիկյան նպաստամագրույց կազմակերպության Խարբերդի հիվանդանոցի գրնօրեն Մարկ Ն. Ուարդի օրագիրը, որում, սկսած 1921 թ. մայիսի 26-ից մինչև 1922 թ. փետրվարի 23-ը, ներկայացվում են հոյվների կողորության ու արդարաբումները Կոնխայից, Կեսարիայից, Ամասիայից, Բիթղիլից, Էսքիշեհիրից, Բրուսայի շրջակա գյուղերից, Էրեզլիից, Աֆիոն-Կարահիսարից, Քյութահիայից, Միվրի-Դիսարից, Կերասունից, Սամսունից, Մարզվանից, Խապարվայից և այլ վայրերից: Ըստ Ուարդի՝ Խարբերդ հասած զաղթականների թիվը կազմել է 20.378 մարդ, որից 18.000-ը՝ հոյվն, իսկ 2.000-ը՝ հայ էր<sup>405</sup>: Նա պնդում է, որ այս շրջանում Սվագից Խարբերդ պետք է ուղարկված լինի 30.000 մարդ, որից 5.000-ը փախել է՝ անցնելով փարբեր գյուղերով և քաղաքներով: Միայն Մալաթիայում աշնան և ձմռան ամիսներին կար 4.000 զաղթական, որոնցից 600 երեխայի Ամերիկյան նպաստամագրույց կազմակերպությունը գեղավորեց որբանոցներում, ևս 400 հոգու ապահովեց սննդով: Մնացած 1.000 հոգուն ամերիկացինները չկարողացան ճեղք մնենակ կամ խնամել: Մալաթիայում մնացած 2.000-ն է ձմռան ընթացքում մահացան քաղցից կամ դիմից<sup>406</sup>:

Քանի որ փարագրվածները հետքապնդվում և հայածվում էին, շափերը հոգնածությունից ընկնում էին ճանապարհի եզրերին կամ ձմռան գիշերներին ցրպահարությունից մահանում էին: Ամերիկացի մի ականաբես 1922 թ. դեկտեմբեր ամսին Մերասպիայից Խարբերդ ճանապարհվելիս փեսել է 1.500 դիմակ: Մեկ ուրիշը Մալաթիայից Խարբերդ ճանապարհին նույն ամսին փեսել է կանանց և երեխաների 150 դիմակ: Այսպիսով, 5.000 հոգու մահանալուց և նույնքան էլ փախուստի դիմելու հետո միայն 20.000-ը հասավ Խարբերդ<sup>407</sup>:

Մոտ 15.000 փարազիր ուղարկվեց հարավ՝ Դիարբեքիր, բայց, ըստ

405 Ward Mark H., *The Deportation in Asia Minor 1921 – 1922*, London: Anglo – Hellenic League & British Armenia Committee, 1922, p. 3.

406 Նոյն գեղում:

407 Նրանցից 5.000-ը մնում էր Խարբերդում և շրջակա գյուղերում, 3.000-ը պարբերաբար ստանում էր հացի բաժին Մերձավոր արևելքի ամերիկյան նպաստամագրույց կազմակերպության կողմից: Ցուրք ձմռան ընթացքում, սակայն, նրանցից շափերը մահացան սովոր և անպաշտպանվածությունից: Ամենուր մոլեզմում էր դիմք: Խարբերդում շորջ 1.300 զաղթական փարվեց Ամերիկյան հիվանդանոց, և չնայած լավ խնամքին՝ նրանցից 341-ը մահացավ (շորջ 25 դոկտոր): Տե՛ս Ward Mark H., նշվ. աշխ., էջ 4:

ամերիկացիների, միայն 12.000-ը ժամանեց քաղաք: Մնացած 3.000-ը ցրից կործանվեց բարձր լեռներում: 30.000-անոց բարավանից, որ դուրս էր եկել Սեբաստիայից և անցել Խարբերդով, միայն 10.000-ը Դիարբեքիրի մոտ անցավ Տիգրիս գետը և հասավ Բիթլիսի վիլայեթ<sup>408</sup>:

Այս շրջանում հույների արյաքառումների և սպանությունների կարևոր վկայություն է նաև երկու այլ ամերիկացիների՝ միսս Բաներման-Մուրդոչի և Մ. Ի. Մ. Կոսավի հաղորդած փեղեկությունները, ովքեր այդ ժամանակ եղել են Արարկիրում: Հսկ նրանց՝ 1921 թ. հովհանք մինչև 1922 թ. Արարկիրով անցել է 10.000 հույն տարագիր<sup>409</sup>:

Դեռևս 1920 թ. ապրիլի 10/23-ին Անկարայում իր աշխատանքներն է սկսում Ազգային մեծ ժողովը, որը նոյն ամսի 29-ին ընդունեց «Դայրենիքի դավաճանության», իսկ սեպտեմբերի 11-ին՝ «Դասալիքների վերաբերյալ» օրենքները: Դրանից հետո արդեն երևան եկան հագուկ դրիբունալները՝ «Անկախության դադարանները»: Շոյն-թուրքական պատրիարքի ընթացքում հիմնվեց դասն այդպիսի դավարան՝ Անկարայում, Էսքիշեհիրում, Խսպարտայում, Դիարբեքիրում, Կոնիայում, Պոզանփիում, Մերքասպիայում, Կասպամոնիում, Սամսունում և Յոսդարթում<sup>410</sup>: Այդ դավարանները մահվան դադարձիռներ էին կայացնում հույների դեմ, որոնց թվում կային շատ գործարարներ, քաղաքապետեր, գյուղապետեր, իրադարարակիցներ, Օսմանյան խորհրդարանի հույն նախկին պատրամավորներ: Մի քանի ամսվա ընթացքում Փոքր Ասիայի հույն մկրավորական և քաղաքական էլիտարն սպանելի ենթարկվեց: «Պոն-Գոսմի»<sup>411</sup> անվան քակ ծերքակալվեցին նաև մեծաքանակ հույն մեծահարուսդ երևելիներ: Միայն Ամասիայի անկախության դավարանը շուրջ 600 մարդու դավապարքեց, ովքեր կախաղան բարձրացվեցին՝ դափնելով որպես «Պոնգոսմի»<sup>412</sup>: Տեղեկություններ են պահպանվել անզամ, որ միայն 1921 թ. սեպտեմբերին մեկ օրվա ընթացքում կախաղան է բարձրացվել 60 ան: Ազգերի լիգային ուղղված իր հեռագրում Կ. Պոլսի դիեզերական պատրիարքը դաշտ է մի ցանկ, որում հիշաբակվում է 168 հույնի, 3 հայի, երկու չեղոք ամերիկացու (մեկը միսիոներ, մյուսը՝ Մարզվանի Ամերիկյան

408 Kemalist War on Christians, „The Times”, 8 June, 1922, p. 3.. Տես նաև՝ Ward Mark H., Աշվ. աշխ., էջ 4:

409 L'extermination des Chrétiens d'Orient: Faits, Documents et Témoignages Anglais et Américains, Paris: P. Thévoz, 1922, p. 106.

410 Ակցուլու Յ. Զ., Աշվ. աշխ., էջ 104-105:

411 Պոնգոսմի կամ փուլքոսչու (pontosçu) – Պոնգոսի անկախության կողմանակից:

412 Հայկունի Պ. Ա., Աշվ. աշխ., էջ 32:

քոլեջի դասախոս) անուններ, ովքեր մահվան դադապարփվեցին և ենթարկվեցին մահապարփի<sup>413</sup>:

Մահվան դադապարփվածների ցուցակը փափազրվել է Սամսոնի թուրքական «Ամալի» և «Նիալ» թերթերում սեպտեմբերի 18-ին, 19-ին և 25-ին<sup>414</sup>: Նրանց թվում էին Տրավիզոնի միքրոպոլիք Խրիստանթոսը, Կերասունի և Խալիջիայի միքրոպոլիք Հավրենքիոսը, Նիքսարի միքրոպոլիք Պողկիարպուր<sup>415</sup> և բազմաթիվ եպիսկոպոսներ:

Քեմալականները լրջորեն նախապարհասպվում էին Անկարայի պաշտպանությանը, և քանի որ Սաքարիա գերի ափին էին հավաքվում բոլոր կարևոր ուժերը, Օսման աղան ևս իր 3.500 չեթեռվ ուղղվեց այնքետ: Այս խումբը Մարզվան պետք է հասներ Կավզայի ճանապարհով: 1921 թ. հուլիսի 20-ին Կավզա հասնելով՝ նախօրոք կազմված ծրագրով նրանք ամբողջ քրիստոնյա բնակչությանն առանց որևէ մենքին կենդանի թողնելու՝ մեծից մինչև նորածին, այր թե կին, հայ թե հոյն, ջարդեցին<sup>416</sup>:

Մարզվանում ևս իրադարձությունները ողբերգական ընթացք ունեցան, ուր Թոփալ Օսմանի ուժերը մինում են 1921 թ. հուլիսի 23-ին: Մարզվանում 1921 թ. հուլիս ամսին կափարփած ջարդերին է անդրադանի բրիգանական «The Times» օրաթերթը բավական ընդարձակ հոդվածով, որին մասնավորապես նշվում է. «Մոտ 500 կին և երեխա է արփաքանչ գյուղերը՝ Մարզվանի մոտ՝ 15 մղոն հեռավորության վրա: Քաղաքի մեծահասակ բնակչության մեծ մասը սպանվել է: Անկանոն զորքերը մեծ ջանք են գործադրում՝ հայքնաբերելու հայերին, ովքեր մահմենականացվել են 1915-1916 թթ., բայց հետո վերադանել իրենց քրիստոնեական հավաքին, երբ բրիգանացիներն էին վերահսկում Մարզվանը»<sup>417</sup>: Այնուհետև պարզ է դառնում, որ քաղաք միքած անկանոն ուժերը, մի քանի օր մնալով քաղաքում, ավելի քան 2.000 քրիստոնյա (հայ և հոյն) բնակչությանը սպանուի են ենթարկում: Մարզվանում Օսման աղայի հրոսակախումբը 5 ժամվա ընթացքում այրում է քրիստոնյաների գները բնակիչներով հանդերձ՝ ծաղրելով. «Որքե՞ղ են ձեր անգիտացիները, ամերիկացիները և ձեր քրիստոսը, որ օգնեն ձեզ»<sup>418</sup>:

413 Alleged Turkish crimes- appeal to the League of Nations, “The Scotsman”, 7 October, 1921, p. 3.

414 Το Μαρτυριον του Ποντου, Ελληνικός Σύλλογος Κοινωνίας Εθνών, Αθήνα: Αλεξ. Βιτσικούνακη, 1922, σελ. 8-11.

415 Նոյն գեղում, էջ 12:

416 Հայկունի Պ. Ա., Աշկ. աշխ., էջ 36:

417 The Turk at work, „The Times”, 26 October, 1921, p. 11.

418 Livre Noir: La Tragédie Du Pont 1914 – 1922..., p. 21.

Քեմալական գորքերի առաջխաղացմանը զուգընթաց՝ Պոնդրոսում իրավիճակն ավելի էր լարվում: Այսպես, 1921 թ. հուլիս ամսվա ընթացքում Տրավիզոնից Ռիզե գրեթե ամբողջ արական բնակչությունը՝ 16-ից 50 տարեկան, արդարսվեց, և նրանց մեծ մասը կովորվեց ճանապարհին: Իսկ Տրիփոլի (Տիրեբոլու, հուն.) Տրίπολις, քաղաք Կերասունի շրջանում) 2.500 հույներից մնացել էր միայն 200 կին և երեխա, իսկ Կերասունի 14.000 հույներից 4.000 կին ու երեխա դեռևս ողջ էր<sup>419</sup>:

Սամսուն-Բաֆրա շրջանում հույն բնակչության բնաջնջումը տարվում էր ավելի համակարգված և առավել դաժանությամբ: Արական ստոր բնակչությունն այս շրջանից փարազրվեց հինգ փուլով. առաջին քարավանը՝ 2.000 անձ, երկրորդը՝ 1.900, երրորդը՝ ավելի քան 2.000, իսկ չորրորդն ու հինգերորդը՝ 500 ու 620 համապատասխանաբար: Այն ժամանակ, եթե այս խմբերն իջնում էին մի բարձունքից, որը գրնվում էր Կավակ (Սամսունից 8 ժամվա հեռավորության վրա) փոքրիկ քաղաքից ոչ հեռու, թուրքական ուղեկցող պահակախումբը հանկարծակի կրակ է բացում նրանց վրա և այսպես սպանում առաջին քարավանից 330 հոգի, իսկ երրորդից՝ 660 հոգի: Մնացած խմբերի կորուսպներն անհայտ են<sup>420</sup>: Բուն Կավակում ևս նոյն ոճիրները կափարվեցին, փրկվեց միայն ութուննամյա մի ծերունի: Մեկ այլ փոքրիկ բնակավայրում՝ Կավայում, Օսման աղան երեխաներին և կանանց քեց գետի ափ, որ նրանք կովորվեցին և ներփակվեցին գետը<sup>421</sup>:

Նոյների զանգվածային կովորած գեղի ունեցավ 1921 թ. հունիս-հուլիս ամիսներին Բաֆրայում և շրջակա գյուղերում: Թուրքական գորքերը՝ շուրջ 10.000 հոգի, ներխուժում են Բաֆրայի հունական գյուղերը, և Մուամի գյուղի բնակչիներին՝ մոտ 250 հույնի, փակում են մի փառ մեջ և ողջակիզում: Տեսնելով, որ գյուղերը փրկել այլևս անհնար է, հոյների մի մասն ապաստան է գրնում Բաֆրա քաղաքում: Սակայն թուրքերը, շրջապատելով քաղաքը, պահանջում են իրենց հանձնել այդպես թաքնվածներին, ինչպես նաև յուրաքանչյուր ընդունելու հանձնել մեկական դրամարդ՝ որպես ռազմագերի<sup>422</sup>: Ի վերջո թուրքերը կովրում են դիմադրությունը և սրի քաշում բնակչությանը<sup>423</sup>: Նունական ազարագրական պայքարի այս օջախը ևս ոչնչացվում է:

Այս դեպքերի առիթով «The Scotsman» թերթը գրում է. «Բաֆրայում

419 Το Μαρτυριον του Ποντού..., σελ. 15.

420 Νոյն փեղում:

421 Νոյն փեղում:

422 Livre Noir: La Tragédie Du Pont 1914 – 1922..., p. 23.

423 Νοյն փեղում: Σέν նաև՝ Το Μαρτυριον του Ποντού..., σελ. 15 - 16.

արական բնակչությունը իննդրամահ է արվել եկեղեցում և դպրոցներում։ Օսման աղան Զարայի շրջանում այրել է 18 գյուղ և հրամայել ընդհանուր ջարդեր իրականացնել Զարկի Կարահիսարում։ Աքբայում Օսման աղայի զինակիցները սպանել են 44 անձի միայն մեկ տան մեջ և հրկիցել 42 գյուղ։ Օսման աղայի հրամանով փասթ ընդունելի սպանվել էր Լանդիկլում»<sup>424</sup>։

Այս շրջաններից, հարկապես Սամսունից փրկվածները, որ հասել էին Կ. Պոլիս, հաղորդում էին, որ քեմակալաններն այդդեռ ողջակիցել են 3.000 հույն գյուղացու<sup>425</sup>։ Սամսունի և Բաֆրայի դեպքերից հետո «The New York Times»-ը գրում է. «...700.000 հույններ են կրտորպել, արտաքսվել կամ մահացել սովոր Թուրքիայի հետ պարերազմն սկսվելուց ի վեր»<sup>426</sup>։

Պոնդոսի շրջանը գրեթե ամբողջությամբ մաքրվեց հույն բնակչությունից։ 1922 թ. մայիսի 25-ին Կոստանդնուպոլսում գինվող հունական ռազմածովային բազան Հունաստանի Արքայության աշխարհաբուժուն ուղարկեց հաղորդագրություն, որում ասվում էր, որ Վերը նշված շրջաններում քրիստոնյաների վիճակն աղեքալի էր։ Գյուղական վայրերում գործնականում բնակչիներն արտաքսվել են, ճանապարհին մորթվել, իսկ ձերակալվածներն սպանվել են վրեղում կամ ողջակիցվել<sup>427</sup>։ Իսկ Թուփալ Օսմանը՝ «Պոնդոսի դահիճը», իր բարբարոսությունների համար Անկարայում մեծ գնահատանքի արժանացավ և Ազգային մեծ ժողովի դահիճում հայդարարեց. «Ես այս ոդքս ազգիս և հայրենիքիս սիրոյն հանար զոհեցի և մինչև որ հելլենները ծովը թափեմ, չպիդի նարիմ»<sup>428</sup>։

Հունաստանը 1922 թ. հուլիսի 29-ին դիմեց դաշնակիցներին՝ խնդրելով թույլ տալ Կ. Պոլիսը գրավել, որպեսզի ի վերջո խաղաղություն հասպարվի։ Դրան հետևեց 25.000 զինվորի դուրսերումը Ռոդոսով։ Սակայն դաշնակիցներն արգելեցին հունական բանակին գրադաւոնել Կ. Պոլիսը<sup>429</sup>։ Օգովելով դրանից և գրեթե ավարդելով Պոնդոսի հունաթափումը՝ քեմակալանները 1922 թ. օգոստոսի 26-ին սկսեցին «մեծ

424 Alleged Turkish atrocities, “The Scotsman”, 12 September, 1921, p. 7.

425 Villages fired by Kemalists – Inhabitants Reported to Have Been Burnt Alive. “The Scotsman”, 18 August, 1921, p.5.

426 700.000 Greeks Victims of Turks, “The New York Times”, 10 July, 1921, p. 4.

427 Photiades K., Աշվ. աշխ., էջ 33:

428 Հայկունի Պ. Ա., Աշվ. աշխ., էջ 44: 1912 թ. Բալկանյան պարերազմների ժամանակ Ըստը Զիլիսիեի մոտ բուլղարացիների հետ ընդհարման ժամանակ նա ծնկից վիրավորվել էր, որի հետևանքով կաղ էր մնացել։ Այդ պարբռառվ նրան կոչում էին Թուփալ Օսման։ «Գյավուրի» զնդակով իրեն հասցված վիրավորանի համար քրիստոնյաների նկարմամբ վրեժով էր լցված։

429 Howard Harry N., Աշվ. աշխ., էջ 267:

**հարձակումը»:** Թուրքական զորքերը կդրեցին հոյսների պաշտպանության վերջին գիծը և հաջորդ օրվա վերջին առաջացան 50 կմ հարավ և 20-30 կմ արևելք: Զարգացնելով հարձակումը՝ նրանք հետ վերցրին Քյութահիան, Էսքիշենիրը, իսկ Դոմուփինարի վճռորչ ճակարամարդում (օգոստոսի 30) հաղթանակ բարան գեներալ Տրիկոպիսի խմբավորման դեմ, որն սփիզված էր գերի հանձնվելի իր զորքերի մնացորդների հետ (5.000 մարդ)<sup>430</sup>: Արդեն սեպտեմբերի 1-ին Մ. Շեման արդարերեց իր հայրնի հրամանը թուրքական բանակին. «Զինվորներ, ձեր առաջին նպատակակետը Միջերկրականն է, առաջ»<sup>431</sup>: Սեպտեմբերի 2-ին թուրքական զորքերը մրգան Էսքիշենիր, և հունական կառավարությունը խնդրեց Մեծ Բրիտանիային՝ զինադադար կնքելու միջնորդության համար, որը գոնե կապահպաներ հունական իշխանությունը Զմյուռնիայում<sup>432</sup>: Դրան հետոնց սեպտեմբերի 6-ին Բալըքեսիրի և Բիյթշիլի, հաջորդ օրը՝ Այդընի, իսկ սեպտեմբերի 8-ին Մանիսայի գրավումը: Աթենքում կառավարությունը հրաժարական փուցեց: Թուրքական հեծելազորը մրգավ Զմյուռնիա սեպտեմբերի 9-ին, Մուղանիան ընկավ սեպտեմբերի 11-ին, և ամբողջ հունական դիվիզիան անձնագործ եղավ:

Հունական զորքերի այս անկազմակերպ նահանջը, որը վերածվեց խևական փախուստի, շար է քննարկվել պատմագիրության մեջ: Ուստիմասիրողներին հաղկապես հետաքրքրում է այն փաստը, թե Անկարայի մագույցներում կանգնած հունական բանակն ինչպես կարողացավ մի քանի ամիսների ընթացքում ոչ միայն մի շարք պարկություններ կրել, այլ նաև կորցնել Փոքր Ասիան: Ընդհանուր առմամբ դա պայմանավորված էր մի շարք համալիր զործոններով: Նախ քեմալական բանակն օգնություն էր սպանում Խորհրդային Ռուսասփանից, մինչեռ հոյսներն օրեցօր ավելի էին զգում սննդամթերքի ու ռազմամթերքի պակաս: Խնձես նշում է Զ. Նորթոնը, «Տարիներով հունական բանակն առանց բավարար սննդի և հագուստի պահել էր ռազմաճակարի երկար գիծը...»<sup>433</sup>: Դաշնակից պերությունների նահանջը Անի պայմանագրի սկզբունքներից և հափկապես Ֆրանսիայի՝ քեմալականների հետ զործարքի մեջ մրգնելը ևս այն ժամանակ իր դերն ունեցավ: Խոսքը վերաբերում է 1921 թ. հոկտեմբերի 20-ին Անկարայում սփորազրված ֆրանս-թուրքական համաձայնագրին (Ֆրանկլին-Բույոն համաձայնագիր): Ի լրումն այլ

430 Kinross L., նշվ. աշխ., էջ 315:

431 Shaw Stanford J., Shaw Ezel Kural, նշվ. աշխ., էջ 362:

432 Նոյն գլուխում, էջ 363:

433 Horton G., նշվ. աշխ., էջ 93:

պայմանների՝ Ֆրանսիան Կիլիկիայում թուրքերին հանձնեց մնածաբանակ ռազմամթերք<sup>434</sup>: Կոստանդին արքայի վերադարձից հետո Բրիտանական կառավարության ոչ միանշանակ քաղաքականությունը շար լավ է նկարագրում այն ժամանակ գաղութերի հարցերով նախարարի պաշտոնը գրադարձնող Ու. Չերչիլը<sup>435</sup>: Ընդգծված թուրքամենք քաղաքականություն էր վարում 1919-1922 թթ. Թուրքիայում ԱՄՆ հանձնակարգը ծովակալ Մարկ Լ. Բրիսֆորը: Եթե 1922 թ. սեպտեմբերի 3-ին Զ. Նորթոնը հեռագիր է ուղարկում Բրիսփորին Կ. Պոլիս, որում խնդրում է նրան հանուն մարդասիրության խնդրել Պետրովարդին և այլ միջամբի Անկարայում՝ թուրքական բանակի կողմից հույսների հերապանումը դադարեցնելու և Զմյուռնիայում աղեղող կասեցնելու համար, հերքում է բացասական պարապահականը<sup>436</sup>:

Հունական զորքերի խուճապահար նահանջի հետ միաժամանակ քազմահազար հոյն բնակչիներ սկսեցին լրել իրենց բնակավայրերը՝ նահանջենով Զմյուռնիա: Արդեն 1922 թ. սեպտեմբերի 7-ին Զմյուռնիայի փողոցներում կար ոչ պակաս քան 150.000 անօթևան գաղթական<sup>437</sup>: Սեպտեմբերի 8-ին Զմյուռնիայից հեռացավ հունական բարձրագույն քաղաքացիական կառավարիչ Սպերդիանիսը, մինչ այդ քաղաքը լրել էին հունական զորքերը<sup>438</sup>: Հաջորդ օրը՝ սեպտեմբերի 9-ին՝ շաբաթ, անպաշտպան մնացած քաղաք մրտան քեմալական զորքերը Նորերդին փաշայի գլխավորությամբ<sup>439</sup>:

Թուրքերի՝ Զմյուռնիա միննելու հետո ամենաողբերգական դրվագներից էր Զմյուռնիայի միջրոպոլիտ Խորհուսպոմոսի սպանությունը. նրան չափազանց արում էին քեմալականները<sup>440</sup>:

434 Pallis A. A., Աշվ. աշխ., 111-112:

435 Churchill W., The World Crisis- The Aftermath, New York: Charles Scribner's Sons, 1929, p. 373 – 434 (chaps. 17-18).

436 Housepian M., Աշվ. աշխ., էջ 96: Նոյնը՝ Murat J., Աշվ. աշխ., էջ 120-121:

437 Milton G., Աշվ. աշխ., էջ 236:

438 Housepian M., Աշվ. աշխ., էջ 99-100:

439 Այդ դեպքերը շար լավ նկարագրվում են հայ ականաքեսի կողմից: Տե՛ս Սարգսյան Դ., Աշվ. աշխ., էջ 65-67:

440 Դա պայմանավորված էր այն հանգամանքով, որ դեռևս 1914 թվականին Խորհուսպոմոսը գրադպէ էր 120.000 հոյն գաղթականների վիճակով՝ Կոստանդինոպոլիսից հրավիրենով եկրոպական դիվանագետների և նրանց ուշադրությունը կենսդրուսացներով հոյնների նկարմամբ կագարկած ոճիրների վրա: Ուշագրավ է այն փաստը, որ 1922 թ. օգոստոսի 25-ին Զմյուռնիայի կաթողիկ արքեպիսկոպոսը Խորհուսպոմոսին նավ է առաջարկել՝ Զմյուռնիայից

Զմյուռնիայում քեմալականները նախ հարձակվում են հայկական քաղամասի վրա (Նայնոց): Բրիտանացի ականատես Ռ. Թրելրարի վկայությամբ Նորեդդին փաշայի հրամանով նրանք գուն առ գուն փնտրում էին հայերին: Երեջաբթի գիշերը (սեպտեմբերի 12 լուս 13) հազարավոր հայեր կուրորվեցին, իսկ նրանց մարմինները մնացին հողին չհանձնված, որի հետևանքով հաջորդ օրը դիակների գարշահովն ահավոր եր, և շար շրջաններ դարձել էին անհասանելի<sup>441</sup>:

Հայկականից հետո հերթը հունական և եվրոպական (Փրանկների) քաղամասերինն եր: Դեռևս քաղաքը գրավելուց առաջ քեմալականների սուրհանդակները դարածել էին հունարենով գրված թուուցիկներ: Դրանցում նշում եր, որ Անկարայի կառավարությունը չի կարող պարասիանավու լինել սպանությունների և ջարդերի համար<sup>442</sup>: Փաստորեն դրանով արդեն «նախազգուշացվում եր» սպասվող կուրորածների և աղետի մասին: Ուշագրավ է այն փաստը, որ անզամ հրդեհի պարասիանավությունը թուրքերն իրենց վրա չեն վերցնում՝ համարելով դա հույների և հայերի

փախելու համար և խնդրել է հեռանալ կործանման դափառարդված քաղաքից, իսկ նա հրաժարվել է՝ ասելով. «Հոյս եկեղեցու ավանդույթը և հոգևորականի պարգականությունը թեղադրում են համայնքի մոտ մնալ»: Իսկ մահվանից մի քամի օր առաջ՝ սեպտեմբերի 7-ին, Է. Վենիգետոսի գրած նամակից պարզ է դատնում, որ ևարդեն կամխազգացել է, թե ինչ է կափարվելու Զմյուռնիայի հետ. «Փոքր Ասիայի հելլենականությունը իշնում է դժոխք, որից ոչ մի ուժ ի վիճակի չի մնելու բարձրացնել ու փրկել նրան»: Տես Smith M. L., նշվ. աշխ. էջ 302: Մեկ այլ նամակում՝ օգոստոսի 31-ին ուղղված Կ. Պոլսի Տիեզերական պարբիարքին, նշում է. «Յուրաքանչյուր է զգում է, որ ամենամեծ վրաներներն են կախված անքափ քիսվույս բնակչության վրա երկրի ներքին շրջաններում և Զմյուռնիայում, որովհետք շար լավ հայվել է, որ բոլքական բնակչությունը՝ քաղաքացիական և զուղական, առանց որևէ բացառության, զինված է մինչև արամները... Այսպիսով, հոյսերը ենթարկվելու են ջարդերի և բևաջնօման: Նայուր հազարավոր հոյսեր կուրծանվեն առանց նույնիսկ մի քանի օրվա և ժամկա ամենափոքր պաշտպանության, մինչդեռ եվրոպացիների միջամբությունը կարող է փրկել իրավիճակը»: Տես Slain Archbishop foreaw Massacre: Chrysostomos Sent Letters to Foreign Officials Predicting Smyrna Disaster, „The New York Times”, 24 September, 1922, p. 35.

441 Oeconomos L., The Martyrdom of Smyrna and Eastern Christendom, A File of Overwhelming Evidence, Denouncing the Misdeeds of the Turks in Asia Minor and Showing Their Responsibility for the Horrors of Smyrna, London: George Allen & Unwin Ltd., 1922, p. 79.

442 Kemal won't Insure Against Massacres, "The New York Times", 11 September, 1922, p. 3.

կազմակերպած սաղրանքի արդյունք<sup>443</sup>, կամ էլ վերագրելով դա պատահականությանը: Սակայն կան օրաբերելուացի ականափեսների բազմաթիվ վկայություններ Զմյունիհայում այդ օրերին կափարված ոճրագրության խևկան պափճառների վերաբերյալ: Այսպես, Ամերիկյան իգական վարժարանի ուսուցչուի օրինարդ Մինհ Միլսը նշում է. «Ես իմ սեփական աչքերով դեսա մի թուրք սպայի՝ ձեռքին նավթի կամ բենզինի թիթեղյա դրուի, և մի քանի րոպեից դրու կրակի մեջ էր»<sup>444</sup>: Բնիփանացի պափմարան և լրագրող Ա. Թոյներին հավասդիացնում է, որ թուրքական զորքերը դիմումը մինչև հիմքերն այրել են յուրաքանչյուր դրուն»<sup>445</sup>: Բացի այդ պեսքը է հաշվի առնել, որ այրվեցին և կործանվեցին քաղաքի հայկական և հունական թաղամասերը, մինչդեռ թուրքականը մնաց անվնաս»<sup>446</sup>:

Ընդհանուր առմամբ, քաղաքի այրված հափշածը ներառում էր հայկական, հունական և եվրոպական թաղամասերը, արևմուտքում՝ Բելլա Վիսփա փողոցի հափշածից (ծովափի մոտ) մինչև առևսդրի դրուն, հարավում՝ առևսդրի փնից մինչև Բասմա-խաննե երկաթուղային կայարան, արևելքում՝ Այդընի երկաթգծից դեպի հյուսիս՝ մինչև ծխախոդի ֆարրիկա, իսկ հյուսիսում՝ Շաջի-փաշա, Մասուրդի և Բելլա Վիսփա փողոցները մինչև ծովափի<sup>447</sup>:

1922 թ. սեպտեմբերի 16-ին թուրքերի հրամանով 18-45 փարեկան հոյսն և հայ դրամարդիկ հայդրարարվեցին ոսազմագերիներ. Նրանք չափը է հեռանային: Իսկ մնացած քրիստոնյա բնակչությունը նոյն հրամանի համաձայն պեսքը է լրեր Թուրքիան մինչև հոկտեմբերի 1-ը<sup>448</sup>:

Մերձավոր Արևելքի Ամերիկյան նպաստամակույց կազմակերպության գործադիր քարտուղար Է. Ն. Բիերսթադը նշում է, որ մոդավոր հաշվարկներով 100.000 մարդ կուտրվեց, 280.000-ը քշվեց ծովափի, իսկ 160.000-ը արդարավեց թուրքերի կողմից երկրի խորքերը, որոնց այլև

443 Milton G., նշվ. աշխ., էջ 307:

444 Նոյն դուդում, էջ 306:

445 Toumbas A. J., նշվ. աշխ., էջ 152:

446 Եվրոպական թաղամասը ևս արժանացավ նոյն բախտին: Շնորհրդիր է, որ քաղաքի հրեական մասն անվնաս մնաց: Հրեեի հետևանքով դադարեցին գոյություն ունենալ հայկական, ֆրանսիական և հունական եկեղեցները, ֆրանսիական, բրիտանական, ամերիկյան, դանիական և գերմանական հյուպալուսարանները, Զմյունիհայի թագրոնք, ֆրանսիական փողոցի հրաշափի խանութները, ինչպես նաև բազմաթիվ շինություններ: Տես Օօսոնոմոս Լ., նշվ. աշխ., էջ 136:

447 Smith M. L., նշվ. աշխ., էջ 310:

448 Murat J., նշվ. աշխ., էջ 155:

«երբեք չփեսան»<sup>449</sup>: Ամերիկյան հյուպատոս Զ. Նորթոնը, ով Զմյուռնիայում էր մինչև 1922 թ. սեպտեմբերի 13-ը, նշում էր, որ զոհերի թիվը կազմում էր 100-120 հազար: Ըստ նրա՝ միայն հայերից ոչնչացվեց 25.000 մարդ<sup>450</sup>: Սակայն հենց ինքը Նորթոնը ընդգծում է, որ դժվար է փալ զոհերի ճշգրիտ թիվը:

Զմյուռնիայի կանանց հիվանդանոցի բժշկուհի Էսթեր Լավջոյի վկայությամբ ծովափին 1922 թ. սեպտեմբերի 24-ին կար գաղթականների ութ նավ: Հաջորդ օրը մի նավ ևս եկավ, բեռնվեց մարդկանցով և հետ գնաց: Սեպտեմբերի 26-ի գիշերը 19 նավ ժամանեց գաղթականների համար, և այդ ժամանակվանից սկսած՝ մեծարանակ նավեր էին ամեն օր գալիս մինչև շաբաթվա վերջը: «Կարելի է ասել, որ այդ շաբաթը հայրնի կղաղոնա որպես Զմյուռնիայի դարպարկման շաբաթ»<sup>451</sup>:

Թուրքական ինքնաթիոները կիրում անցնում էին այդ վայրերը և վայր ներփում թուուցիկներ, որոնցում ասվում էր՝ բոլորը պետք է 1922 թ. սեպտեմբերի 30-ին փարագրվեն պերության խորքերը՝ անկախ փարիթից և սեղից, երեխակին թե դղամարդ լիելուց<sup>452</sup>:

Զմյուռնիայի հրդեհը 1922 թ. սեպտեմբերի 13-15-ին, դրան հետևած բնակչության բռնի գեղահանությունը և զանգվածային կորորածներն իրենց պարզագույն իմաստով քրիստոնեական փարիթի ներկայության վերջն էին Փոքր Ասիայում: Քաղաքը, որն ամենամեծ քրիստոնեական կենտրոնն էր Փոքր Ասիայում, և որը հաճախ թուրքերի կողմից անվանվում էր «զյավուր Իզմիր» իր քրիստոնեական լինելու համար, կործանվեց:

Դունական բանակի պարզությունից և նահանջից ու Զմյուռնիայի

449 Bierstadt E. H., *The Great Betrayal, A Survey of The Near East Problem*, New York: Robert M. McBride and Company, 1924, p. 36.

450 Horton G., նշվ. աշխ., էջ 173-174:

451 Bierstadt E. H., նշվ. աշխ., էջ 39:

452 Այս դեպքերի կապակցությամբ Զ. Նորթոնը գրում է. «Այս վերջին գենարանը Զմյուռնիայի ծովափին ամբողջությամբ արդահայրում է թուրքերի սարսանայական և մնաթողաբար իրականացված ծրագիրը: Զինվորներին թույլ էր դրված բավարարելու իրենց՝ արյան ծարավը, բալանըլու ու բուսաբարելու՝ առաջինը ընկենուկ հայերի վրա՝ նորթենով և այրենով նրանց ու իրենց ազարդություն փառու նրանց կանանց հետք: Բայց հոյսներին, որոնց նկարմամբ առկա էր ավելի խոր արեգություն, վերապահված էր ավելի դանդաղ ու անշրապ մասի: Մի քանիսը, որ վերադառնում էին, պարմում էին սարսափելի պարմություններ: Որոշները գնդակահարվել էին կամ ոչնչացվել խմբերով: Թողորը սովահար էին լինում և հազարներով մետրով հիվանդությունից, հոգնածությունից և անպաշտպանվածությունից»: Տես Horton G., նշվ. աշխ., էջ 173-174:

աղեփից հետո Փոքր Ասիայի արևմտյան և հյուսիսարևմուրյան շրջաններում մնացած հույսները թուրքերի հետքապնդումներից փրկվելու համար հետքում էին հունական գորքերին: Այսպես, «The New York Times»-ը գրում էր, որ այն քիչ մարդիկ, որ փախել էին Դարդանելից, Բիզայից և շրջակա վայրերից, հավասարիացնում էին, որ Բիզայի քրիստոնյա բնակչությունը կոփրորվել էր թուրքական հրոսակախմբերի կողմից (Չորջ 900 անձ)<sup>453</sup>: Դարթանակած քեմալականները 1922 թ. հոկտեմբերի 11-ին սպառագրեցին Մուղանիայի զինադադարը: Քեմալականները պահանջում էին իրենց թույլ գույքը՝ գրավելու Կոստանդնուպոլիսը և արևելյան Թրակիան, բայց հաշվի առնելով այն փաստը, որ դաշնակիցներն այդ պահին ունեին միասնական դիրքորոշում, թուրքերն անկարող էին պնդել այդ պահանջի վրա:

Զինադադարի համաձայն հույսները պետք է դուրս հանեին իրենց զորքերը Թրակիայից՝ մինչև Մարիցա գետը՝ ներառելով անզամ Դեղեաղաճը (Ալեքսանդրուպոլիս)<sup>454</sup>: Դաշդության բանակցությունները սկսվելու էին Լոզանում: Զինադադարից հետո մեծ թափ է ստանում Արևելյան Թրակիայի դափարկումը հույս բնակչությունից: Միայն զինադադարին հաջորդող օրը՝ 1922 թ. հոկտեմբերի 12-ին, Կ. Պոլսի հունական անձնագրային վարչությունից Հունաստան մուգքի արքոնագիր է ստանում 32.000 փախստական<sup>455</sup>: Իսկ մեկ շաբաթ անց՝ հոկտեմբերի 17-ին, Արևելյան Թրակիայի Ռուռասորդ քաղաքից «Daily Telegraph»-ին ուղարկված հաղորդագրության մեջ հեղինակը նշում է. «Թրակիայի պարագումն սկսվեց քրիստոնյաների ահավոր խուժապով... Ես անցել եմ ամբողջ գյուղերով՝ առանց քրիստոնյա բնակչության... Սիլվիստրիմ, որ մի փոքր նավահանգիստ էր և սպասարկում էր քան զյուղի, դրությունը զարհուրելի էր: Երեք մասամբ լցված շոգենավ ծովերքից հեռու էին, և նավերը լցված դրանում էին զաղթականներին և նրանց հազուսիների կապոցները: Չորս հազար մարդ ծովափին նսպել էին իրենց թերթերի կողքին և համբերափար սպասում էին իրենց հերթին՝ կափարելու հաջորդ քայլը դեպի ազագություն, և նրանք մրածում էին խուսափել կոփորածից: Քաղաքից դուրս մարդիկ սպասում էին՝ դրևնելու թուրքերի ժամանումը և ահազանգ դալու, որով գաղթականները, իմ համոզմամբ, բոլորը

453 Report That 900 Christians Were Massacred in Biga, «The New York Times», September 27 1922, p. 1.

454 Մուղանիայի զինադադարի դեքստը՝ Mears E. G., Modern Turkey. New York, Macmillan, 1924, pp. 658-659: Մեջբերումն արված է ըստ՝ Howard H., նշվ աշխ, էջ 272-273:

455 Bierstadt E. H., նշվ. աշխ., էջ 52:

կմքնեին ծովը՝ նախընդրելով ջրասույզ լինելը թուրքական սրից...»<sup>456</sup>: Նոյնն էր վիճակը նաև Թրակիայի այլ շրջաններում: Թրակիայից քրիստոնյա հույների արքաքումը 1919-1922 թթ. հակահունական արշավի վերջին դրվագներից էր: Պափերազմն ավարտվեց Հունասփանի պարզությամբ: Դա միաժամանակ Փօքր Ասիայի և արևելյան Թրակիայի հելլենականության վերջն էր<sup>457</sup>:

**Նոյն զոհերի թիվը 1919-1922 թթ.:** Հուն-թուրքական պատերազմի վարիներին Թուրքիայի հունարափումը գտնի ունեցավ առավել մեծ ծավալներով: Ընդհանուր առմամբ ավարտին հասցվեց երկիրը հոյներից ազադելու քաղաքականությունը: Փօքր Ասիայում՝ հարկադիմ հունաշափ շրջաններում՝ Պոնդրոսում և Էգեյան ծովի ափերին, հոյն բնակչությունը գրեթե ամբողջությամբ ոչչացվեց: Պոնդրոսից գեղահանվածների ու կոփորվածների թիվը հասնում է շուրջ 100.000 մարդու: Այս թիվը նշվում է՝ հիմնվելով հետքայի աղբյուրների հաղորդած գտնեկությունների վրա՝ ա. ըստ հոյն պատմաբան Կ. Ֆուդիադիսի՝ այս շրջանում միայն Սեբաստիայից Խարբերդ ճանապարհին կոփորվեց 30.000-80.000 հազար մարդ, իսկ շուրջ 15.000-ը զոհվեց Դիարբեքիրի ճանապարհին<sup>458</sup>, բ. հաշվի առնելով, որ Պոնդրոսում հոյն զոհերի թիվը կազմում է ավելի քան 350.000 մարդ<sup>459</sup>, իսկ մինչև 1919 թ., ըստ Տիեզերական պարբիարքարանի, այս շրջանից արդեն գեղահանվել ու կոփորվել էր 257.019 մարդ<sup>460</sup>, ապա պարբերությունը ևս սփացվում է մոտ 100.000 մարդ:

Այս շրջանի զոհերի թվաքանակը հաշվելու գործում հաջորդ բարդությունը Զմյուռնիայի զոհերի թվաքանակի խնդիրն է: Արդեն նշվել է, որ ըստ Զ. Նորթոնի և Բիերսթադտի՝ զոհերի թիվը 1922 թ. սեպտեմբեր ամսին դաշտանվում էր 100-120 հազարի միջև: Սակայն Զմյուռնիայում եղել են նաև այլ վայրերից հանգրվանած մեծ քանակությամբ հոյներ: Զմյուռնիայի դեպքերը հիմնավոր հետքազորած Մ. Հովսեփյանը նշում է, որ անգամ կոպիկ հաշվարկներով այդ օրերին այդքեզ եղել է առնվազն 400.000 քրիստոնյա՝ դեղացիներ ու փախստականներ<sup>461</sup>, ուստի զոհերի թիվն անկասկած ավելի է եղել: Համեմատական ցեղասպանագիրության անվանի ներկայացուցիչ Ռումենը, համադրելով գոյություն ունեցող փաս-

456 Οεconomos L., նշվ. աշխ., էջ 204:

457 Ողբերգական այդ իրադարձությունները հունական պատմագրության մեջ ուրակվում են որպես «Փօքրասիական աղեմ»:

458 Photiades K., նշվ. աշխ., էջ 36:

459 Նոյն դեղում, էջ 6:

460 René Puaux, նշվ. աշխ., էջ 8:

461 Housepian M., նշվ. աշխ., էջ 190:

փերը, Զմյուսնիայի աղետի գոհերի միջին թիվ համարում է 183.000 մարդ<sup>462</sup>: Նոյն հեղինակը, ի մի բերելով իր ձեռքի գոակ եղած գովայները, նշում է, որ 1919-1922 թթ. ընթացքում հոյն գոհերի ընդիանուր թիվը գոականվում է 213.000-368.000-ի միջև (միջինը՝ 264.000)<sup>463</sup>:

**Նոյն գոհերի թվաքանակի խնդիրը 1914-1923 թվականներին:** Նոյն հայրնի պագմարան Խ. Ֆիրկինիդիսը նշում է, որ հաշվի առնելով, որ 1914 թ. Օսմանյան կայսրությունում բնակվել է 2.700.000 հոյն (յուրաքանչյուր 100.000 բնակչից ընդունվում էր մնկ պարզամավոր), որոնցից ողջ էր մնացել 1.221.000-ը, ապա գոհերի թիվը պետք է գոականվի 1.3-1.5 միլիոնի միջև<sup>464</sup>:

Նշվի առնելով Կոսկաննուապոսի հունական գիեզերական պատրիարքարանի գովայները, որոնց համաձայն Բալկանյան պարերազմներից մինչև Առաջին համաշխարհային պարերազմի ավարտն ընկած ժամանակահավաքածում Օսմանյան կայսրությունում ուղղափառ հոյն գոհերի թիվն ավելի քան 700.000<sup>465</sup> էր, և դրան գումարելով 1919-1922 թթ. կոփորածները, ակնհայր է դառնում, որ 1914-1923 թթ. Թուրքիայում երիտրուրքական և քենալական վարչակարգերի օրոք ֆիզիկապես ոչնչացվեց գրեթե 1.000.000 հոյն: Պարահական չէ, որ Լոզանի կոնֆերանսի՝ 1922 թ. դեկտեմբերի 1-ի Սահմանային և ռազմական հարցերի հանձնաժողովի նիստում Մեծ Բրիտանիայի պարվիրակ լորդ Քերգոնը հայրարարեց, որ Թուրքիայում 1.000.000-1.100.000 հոյն է գեղահանվել կամ սպանվել<sup>466</sup>:

Այսպիսով, 1919-1922 թթ. հոյն-թուրքական պարերազմի գարիներին Օսմանյան կայսրության գարածքում շարունակվեցին հոյն ժողովրդի զանգվածային գեղահանությունները և կոփորածները: Զեմալականներն «ավարտին հասցրին» երիտրուրքերի կողմից սկսված այն քաղաքականությունը, որի նպատակը կայսրության գարածքի «մաքրումն» էր հոյն հպատակներից: Հարյուր հազարավոր հոյներ քանի

462 Rummel R., նշվ. աշխ., էջ 95:

463 Նոյն գտնում, էջ 96:

464 Τσιρκινίδης. Χάρης, Η Γενοκτονία των Ελλήνων της Ανατολής, (Πόντου - Μικράς Ασίας - Ανατολικής Θράκης - Κωνσταντινούπολης - Κύπρου) Ένα διαρκές, απιμώρητο έγκλημα, σελ. 11. Դամացան՝ <http://www.hecucenter.ru/word-files/Tsirkinidis%20Gr.doc>

465 Մեկ այլ վկյալի համաձայն՝ 1918 թ. նոյեմբերի դրությամբ այդ թիվը 503.229 է (միայն Առաջին համաշխարհային պարերազմի ընթացքում): René Puaux; նշվ. աշխ., էջ 19:

466 Lausanne Conference on Near East Affairs 1922 – 1923. Records of Proceedings and Draft Terms of Peace, London: Publ. by His Majesty's Stationery Office, 1923, p. 121-122.

գեղահանվեցին իրենց քնակավայրերից: Նրանց մի մասը դաժանորեն կոփորվեց կամ զռիվեց բարագրության ճանապարհին, մյուս մասն էլ արդաքսվեց Հունաստան:

### 2.3. Նայ-հունական համագործակցության փորձերը (XX դարի առաջին քառորդ)

Օսմանյան փիրապելության վակ գրնվող քրիստոնյա երկու ժողովուրդների՝ հայերի և հոյների՝ սուլթանական բռնագիրության դեմ համագործակցության վաղ օրինակները հասնում են 17-րդ դար<sup>467</sup>: 18-րդ դարի երկրորդ կեսին համագործակցության անհրաժեշտությունը զիրակցեց նաև նոր ժամանակներում հոյնական ազգային-ազագագրական պայքարի առաջամարդիկ Ռիզա Ֆերենց Վելեսի լիազ (1757-1798): Բոցաշուս «Ըազմական երգ»-ում, որը նաև ազագագրական պայքարի ծրագիր էր, նա գրում է. «Քուղարներ, ալբանացիներ, հայեր և հոյներ, սևեր ու սպիրակներ, միահամուռ ավյունով ազագության համար սուր կապեր»<sup>468</sup>: Իսկ 1821 թ. սկսած՝ հոյների ազագագրական պայքարը գլխավորած «Ֆերիկի Էթերիա» գաղթնի կազմակերպությանն անդամագրվել են նաև հայեր, ովքեր այդ ապարամբության նպաստավոր ելքի հետ էին կապում հայ ժողովրդի ազագագրությունը<sup>469</sup>:

Նայ-հունական համագործակցության նոր շրջան է սկսվում 1890-ական թթ. արդուկհամբյան «զուլումի» գարիներին: 1890 թ. հովհաննելիս Գափուի ցուցից հետո Դունաստան են անցնում հայ փախստականների բազմաթիվ խմբեր: Կ. Պոլսից Աթենք է գրեղափոխվում նաև Դնչալյան կուսակցության կենտրոնական վարչությունը և հնչալյան նշանավոր գործիչներ Ռուբեն Խանազարյանը, Միհրան Տամարյանը: Նրանք կապ են հաստափում հոյն ազգայնականների հետ, իսկ Դնչալյան կուսակցությունը պաշփռնապես միանում է «հռչակավոր Արևելյան դաշնակցությանը (Անարուիթի Օմոսապոնդիա - Confederation Orientale), որը կազմված էր մակեդոնական, ալբանական և կրետական հոյն հեղափոխական մասնախմբերից»<sup>470</sup>: Դրա նպարակը թուրքական

467 Կրետեի պատերազմի ընթացքում (1645-1669) բաղիշեցի Մահիեսի Մուրայի գործունեությունը դրա վառ ապացույցն է: Նա կարևոր գործունեություն ծավալեց ֆրանսիական արքունիքում՝ վսրահեծենելով Լյուդովիկու 14-րդին, որ Օսմանյան կայսրության հայերն ու հոյներն օգնության գրանցարման դեաքում կրոբափեն թուրքական լուծը: Տես Անայան Հ., Նայ-հոյնական ազագագրական պայքարի մի էջ Կանդիայի պատերազմի շրջանից (XVII դար), ՇՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր» հասարակական գիրությունների, 1954, թիվ 3, էջ 95:

468 Բարթելիյան Հ. Մ., Դունական «Ֆիդրա» հանրագիրարանը Հայաստանի և հայերի մասին, Պարմա - բանախրական հանդես, 1981, թիվ 2, էջ 290:

469 Դոյս գեղորակ:

470 Կոկինսու Պ., Դունահայ գաղթութի պարմությունից (1918-1927), Երևան: ՇՍՍՌ ԳԱ հրատ., 1965, էջ 11:

բոնադիրության դեմ միասնաբար հանդես գալն էր:

Արևմտահայերի՝ 1895-1896 թթ. ջարդերի ժամանակ զգալի թվով հայ գաղթականներ ապաստան գրան Հունասփանում, որոնց հետք միասին այնպես էր հասել նաև հայ մնձ երգիծաբան Երվանդ Օդյանը, ով Արենքում հրափարակվող «Միություն» ամսաթերթի խմբագիրն էր<sup>471</sup>: 1896 թ. սկսված կրեպական ապստամբության և 1897 թ. բռնկված հոյնթուրքական պատերազմի ժամանակ հայ ժողովուրող որոշեց օգնության ձեռք մեկնել հոյներին: Դեռևս Ձեյթունի ապստամբությանը մասնակցող և արդասահմանում գրնվող իրենց ընկերներին հնչակյանները փեղեկացրել էին, որ պարտասպ լինեն և առաջին կոչով մեկնեն Հունասփան՝ մարդնելու: Այդ ընթացքում Ավետիս Նազարեէկյանը մեկնում է Փարիզ՝ ընդհանուր խորհրդակցության: Անհրաժեշտ էր հաշվի առնել նաև Նուբար Փաշայի դիրքորոշումը: Վերջինիս կարծիքով՝ հայերն առաջմ պետք է սպասողական դիրք գրավեին, շշտապեին և սպասեին «ղեպքների լիակատար զարգացմանը»<sup>472</sup>:

Այնուամենայնիվ 1897 թ. հոյն-թուրքական պատերազմի ժամանակ Հունասփանի տարածքում Շնչակյան կուսակցությունը կազմակերպում է 600 հոգուց բաղկացած հայ կամավորների մի խումբ՝ խմբապետ Նշան Միրաքյանի հրամանափարությամբ, որն ակդիր մասնակցություն է ունենում պատերազմական գործողություններին և պարզսադրվում հոյնական բանակի հրամանափարության կողմից<sup>473</sup>:

Հայ և հոյն ժողովուրդների համագեղ պայքարելու ձգբումը լայնորեն դրսերկեց նաև Բալկանյան պատերազմների ժամանակ: Հայրնի է, որ Առաջին Բալկանյան պատերազմի ժամանակ բուլղարական բանակի կազմում թուրքերի դեմ մարդինչում էր հայկական մի գորամիավորում («Հայկական վաշտ») Անդրանիկի և Գարեգին Նժդիկի զիսավորությամբ: «Հայկական վաշտը» մասնակցեց բազմաթիվ հոյնական բնակավայրերի ազարագրությանը: Իսկ մինչև Երկրորդ պատերազմի սկսվելը գորամասն ինքնակազմալուծվում է՝ չցանկանալով մասնակցել հոյնական բանակի դեմ մղված ռազմական գործողություններին: Անգամ օսմանյան և բուլղարական բանակներ գորակոչված հայ զինվորները հարյուրներով անցնում էին հոյնական բանակի կողմը: Միայն Սալոնիկում 1913 թ.

471 Հոյն գեղում, էջ 13:

472 Սապահ-Գիլեան Ս., «Պատասխանագրությունները, Փրավիդենս: ՍԴ ՀԱՀ կուս Ամերիկ. շրջ. գործ. հանձն., 1916, էջ 177:

473 Կոկինոս Պ., նշվ. աշխ., էջ 14:

հասդարվել էր հույների կողմն անցած 700-800 հայ զինվոր<sup>474</sup>:

Առաջին համաշխարհային պատերազմի վարիներին Օսմանյան կայսրության գրեթե գոլգահեռաբար իրականացվում էր երկու ժողովորդմերի զանգվածային կողորածների և արդարատւմների քաղաքականություն: Երկու բախփակից ազգերը, գեներալով և հասկանալով իրենց դրույթան ընդհանրությունը, ելքը գենան համագործակցության մեջ: Շարք վայրերում նրանք օգնում էին միմյանց կամ հանդես էին գալիս միասնաբար:

Այն վայրերում, որտեղ հայ և հույն բնակչությունն ապրել է հարևանությամբ, 1915-1923 թթ. Հայոց ցեղասպանության ժամանակ գտնի են ունեցել համագեղ ինքնապաշտպանության բազմաթիվ դեպքեր: Դա դրսնորվել է Տրապիզոնում, Սամսունում և այլ վայրերում: 1916-1922 թթ. այդ շրջաններում կազմվել են հայ-հունական միացյալ մարդաբանություն: Հարկանշական է Զանիքի լեռներում (Ամփոսի և Սամսունի միջև) հայկական հայդրոկային մարդաբանությունը՝ մղած երկարագու գոյամարդը, որի ընթացքում՝ 1916 թ. նոյեմբերին, ծանր կորուսքների գնով փրկվել և ռուսական բանակի կողմից գրավված վարածք է փոխադրվել մոտ 200 հույն ընդունակի<sup>475</sup>:

Հույները ևս իրենց հերթին հնարավորության սահմաններում օգնում էին հայերին՝ թուրքական յաթաղանից փրկվելու համար: Բազմաթիվ հայեր Մեծ եղենի վարիներին ապաստան զբան հույների վներում, հայ երեխաներ է՝ հունական Ռուդափառ եկեղեցու հասպագություններում<sup>476</sup>: Այս առումով հարկապես աչքի ընկալ Տրապիզոնի հույն միզիրապիկը, ով 1915 թ. փրկեց 200 հայ վրայակի և նրանց վեղավորեց որբանոցներում<sup>477</sup>: Նրա շնորհիվ նաև 150 հայ աղջիկ վեղավորվեց հունական ընդունական երեխներում: Սակայն թուրքական կառավարությունը, վեղեկանալով այդ մասին, զինվորականների միջոցով նրանց դուրս բերեց իրենց թաքսվոցներից, բոլորը բռնաբարվեցին կամ խողխողվեցին, ոմանք նույնիսկ բացեիքաց՝

474 Ραμαζάն Σ., Ιστορία τών Άρμενο - Έλληνικών στρατιωτικών σχεσεων και συνεργασίας, Αθήνα, 2010, σελ. 143.

475 Նոյն գեղում, էջ 145:

476 Hassiotis I., "The Armenian Genocide and the Greeks: Response and Records (1915-1923)", The Armenian Genocide; History, Politics, Ethics (ed. R. Hovhannisyan), New York: St. Martin's Press, 1992, p. 130.

477 Պառափ Հ., Սարսափի երկրին մէջ: Նահարակ Հայաստան /Ձարձմ: Միքայէլ Շամբանճեան/ Վ. Պոլիս: Տպագր. Յ. Ասաբեկան և որդիք, 1919, էջ 30 -31:

փողոցի մեջ՝ հենց միգրոպոլիսի դռան առջև<sup>478</sup>:

Միգրոպոլիսը կապարեց հայանապաստ այլ քայլեր ևս: Եթե ջարդերից հետո Տրավիզոնի հայերի գույքը հանվեց հրապարակային աճուրդի, ինչպես ոյս եղանակում, իշխանականներին, ապա մյուս թուրքերին վաճառելուց հետո թույլ գրվեց, որ եռյաները ևս մասնակցեն գնումներին, սակայն միգրոպոլիսն արգելեց հոյներին զնել հայերի իրերը<sup>479</sup>:

Առաջին աշխարհամարտի վարիետին հայ և հոյն ժողովուրդների բարեկամությունը մնել անգամ ևս դրսնորվեց՝ կապված Հունականում հայ գաղթականների զինվորագրման խնդրի հետ: Տեղի հայկական համայնքի ներկայացուցիչները դիմում են Է. Վենիգելոսին՝ խնդրելով նրան, որ հայ գաղթականները հոյն գաղթականների նման զինվորագրվեն հունական բանակ: Վենիգելոսը, լսելով հայ պարզվիրակների խնդրանքը, ասում է. «Նայ ազգը շատ լաւ կը ճանչնամ եւ միշտ հետեւած եմ անոր կրած անդանելի չարչարանքներուն, որ կը կարարուի թրական բարբարոս կառավարութեան ձեռքով, սիստմադիկ կերպով: Անհա, անցեալ փարուայ փեղահանութիւնը եւ ջարդերը, որ գերազանցեց այս ամենը: Քաջ զիրեմ այն հոգեկան վիշտը զոր ամեն հայ կը կը իր մէջ: Այսօր, մեր սփացած լիակագրար գեղեցկութեանց համաձայն, մէկ միջիոն հայեր գեղահանուած եւ ջարդուած են: Ուսպի, իմ «Արժամեայ Կառավարութեան» մէջ զինուող հայերը, ամեն զնով, պիտի պաշտպանուին, վսրահ եղէք եւ հայ հասարակութեան բարեւներս հաղորդեցէք»<sup>480</sup>: Վենիգելոսի միջնորդությամբ, իսկապես, Պարերազմական նախարարությունը հափուկ հրաման է իշեցնում, որի համաձայն գաղթական հայերն ազարվում են զինվորական ծառայությունից:

Այնուամենայնիվ, պերք է նշել, որ համագործակցության փորձերը մինչև Առաջին համաշխարհային պատերազմի ավարտը կրում էին «մասնավոր բնույթ» և հանդես գալիս առանձին դրվագներով: Միայն Օսմանյան կայսրության պարփությունից հետո իրական հնարավորություններ սրեղծվեցին հարաբերություններ հասդարնելու և զարգացնելու ուղղությամբ: Այս շրջանում հայ-հոյնական համագործակցության առաջին քայլերը<sup>481</sup> ձեռնարկվեցին 1918 թ. սեպտեմբերին Վթենիքի փոքրաթիվ հայ-

478 Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, Փաստաթղթերի և կյութերի ժողովածու Մ. Գ. Ներսիսյանի խմբագրությամբ, Երևան: Հայաստան, 1991, էջ 543:

479 Պատոպի Ն. Խշվ. աշխ., էջ 32:

480 Մակարեան Ա., Ցուշպիքը Թրակիոյ և Մակեդոնիոյ հայ գաղութներու, Սփանիկ: Տապ. «Նորիզոն» օրաթերթի, 1929, էջ 105:

481 Ա. Ուլունյանը հայ-հոյնական համագործակցությունը բաժանում է երեք

կական գաղութի (շուրջ 300 հոգի) դեկավարության կողմից: Նրանք շփման մեջ մրան հոյս «իրեղեն փրկարգների» դաշինքի հետ՝ հոյն-հայկական լիգա սփեղծելու համար: Երկու պետությունների կառավարություններն սկսեցին ուղիներ փնտրել ընդհանուր գործողությունների համար: Հունական խորհրդարանն իր հիացմունքն արքահայրին «հայ ազգի վերածնության» պայքարի համար և համոզմունք հայկնեց, որ Հունասփառն Հաշփության վեհաժողովում կպահանջի հայ ժողովրդի արդարացի բաղանքների վերջնական ճանաչումն ու սրբագրությունը<sup>482</sup>: Եվ խկացես, 1919 թ. փետրվարի 3-ին և 4-ին Փարիզի վեհաժողովում Հունական խնդիրը ներկայացնելիս վարչապետ Է. Վենիգելոսը բարձրացրեց նաև Հայկական հարցը: Ըստ Վենիգելոսի՝ «Հայկական հարցը հնարավոր կլինի լուծել միայն վիստոյան սկզբունքների «լայն և մեծահոգի մեկնարանությամբ» և, այդպիսով, դադարեցնել այն ժողովրդի փառապանքները, որը պարերազմի ընթացքում ջարդերի պարբառով կորցրեց ավելի քան մեկ միլիոն մարդոց»<sup>483</sup>:

Հունական խորհրդարանի՝ Հայասփառնին աջակցելու պարասպականությունն արքահայրին նաև հունական արքա Ալեքսանդրի՝ Պոլս Նուրարին ուղղված հաղորդագրության և Հայասփառնի անկախությունը ճանաչելու մեջ<sup>484</sup>: Փաստուն, Հունասփառն դարձավ նաև առաջին պետություններից մեկը, որը ճանաչեց Հայասփառն Հանրապետությունը:

1918 թ. աշնանը սերդ համագործակցություն սկսվեց Կ. Պոլսի երկու՝ Հայկական և Հունական պարփառքարարանների միջև: Հարկացի կարևոր էր, որ երկու եկեղեցիների ներկայացուցիչների՝ Գ. Չոնեսոսի և Դավթյանի համարեղ հայդարարությամբ որոշում ընդունվեց սփեղծել միասնական կոմիտե, որը պետք է գրադվեր տեղահանված հայերի և հոյների վերադարձի հարցերով: Բացի այդ որոշվեց, որ հայերը պետք է օժանդակեն հոյներին Թրակիայի, Կ. Պոլսի, Նիկոմեդիայի սանչակի, Բրուսայի և Այդրոնի վիլայեթների պահանջափրության հարցերում, իսկ իր ենթին հունական կողմը երաշխավորում էր իր աջակցությունն Արևմտյան

փուլի՝ 1. 1918 թ. սեպտեմբեր-դեկտեմբեր, 2. 1919 թ. հունվար-1919 թ. աշուն, 3. 1919 թ. աշուն-1920 թ.: Տե՛ս Սլունյան Ար., Կ истории Армяно-Греческих отношений в 1918-1919 гг., Историко-филологический журнал, 1987, N4, Ереван: Изд. Акад. Наук. Арм. ССР, с. 230-233.

482 Հովհաննիսյան Ռ. Գ., Հայասփառն Հանրապետություն, Հափոր Ի. Առաջին փարին, 1918-1919 (ՀՀ ԳԱԱ Պատմ. ինստ., Խմբ.՝ Ա. Խառապյան), Եր.: Տիգրան Մեծ, 2005, էջ 299:

483 Նոյն գեղում, էջ 299:

484 Սլունյան Ար., Կ истории Армяно-Греческих . . . , с. 230.

Հայաստանի վեց վիլայեթների վերադարձման հարցում (Սեբաստիա, Խարբերդ, Էրզրում, Դիարբեքիր, Բիթլիս, Վան և ելք դեպի ծով Աղանայի հարգածով)՝<sup>485</sup>:

1919 թ. ընթացքում շարունակվեց հայ-հունական հարաբերությունների բնականոն զարգացումը, սակայն կային որոշ «անհարթություններ»՝ կապված Պոնփոսի խնդրի հետ: Հունաստանի վարչապետը Է. Վենիգելոսը համաձայնել էր, որ Տրապազոնի վիլայեթն ընդգրկվի Հայաստանի մեջ: Եվ իրոք, 1919 թ. փետրվարի 3-ին և 4-ին Փարիզի հաշվության վեհաժողովում հունական պահանջը ներկայացնելիս նա ընդգծեց, որ Տրապազոնի նահանգը պետք է ընդգրկվի Հայաստանի կազմի մեջ, չնայած որ այնպես հոյները շար ավելի են հայերից, սակայն Պոնփոսի հույն ազգաբնակչության համար, անկասկած, կապահովվեր իրավահավասարության և ինքնավար զարգացման իրավունքը»<sup>486</sup>:

1919 թ. փետրվարի 12-ին հայկական երկու պարվիրակությունների կազմած միացյալ հուշագրում նշվում էր. «Տրապազոնի վիլայեթում, որ եղել է Նախկին Պոնփոսյան թագավորության մայրաքաղաքը, հոյների թիվս ավելի է հայերից, բայց Տրապազոնի նավահանգիստն ամբողջ Բարձր Հայքի միակ կարևոր ելքն է դեպի Սև ծով: Հունաստանն աչք չունի այդ վիլայեթի վրա, որ շար հեռու է այս զիսավոր կենտրոններից, որոնց նա պահանջում է ժողովուրդների իրավունքի հիման վրա, և կարարյալ համաձայնությամբ հելլեն կառավարության հետ, որ այդ հարցում երևան հանեց կարարյալ հավասարակշռության մի լայն հողի, որը չենք կարող զգնահատել, պահանջում ենք հայկական պետությանը կցել Տրապազոնի նահանգի մի մասը: Նրա հույն ազգաբնակչությունը կարող է վստահ լինել, որ հայկական վարչությունը նրան կապահովի իր կրոնի և լեզվի հանդեպ հարգանքը՝ եղբայրության և համահավասար արդարության ուժիմի փակ:»

Մյուս կողմից պետք է հայրարենք, որ Հունաստանին դրվելիք շրջանների հայերն էլ իրենց կողմից վստահության և ուղղամբության նոյն ոգով են ընդունելու հելլեն կառավարության դակ իրենց սրանալիք դրությունը»<sup>487</sup>:

Սակայն շուտով պարզ է դառնում, որ Պոնփոսի խնդրի կարգավորման նման գարբերակը բուն Հունաստանում որոշ ընդդիմության է հանդի-

485 Hassiotis I. K., "Shared Illusion: Greek-Armenian Co-operation ...., 1985, p.

144. Տե՛ս նաև՝ Սլուհյան Ար., Կ истории Армяно-Греческих . . . , с. 230.

486 Հովհաննեսիայան Ռ. Գ., նշվ. աշխ., էջ 304:

487 Հայկական հարցը Հաշության կոնֆերանսի առաջ, Հայոց ցեղասպանության պարմության և պարմագրության հարցեր, թիվ 5, 2002, էջ 159:

պում այն հույս քաղաքական գործիչների կողմից, ովքեր կողմնակից էին անկախ հուսական «Պոնդոսի պետության» սփեղմանը: Սակայն Վենիգելոսի դիրքորոշումն ամեննին է հասարակ հայասիրություն չեր: Բնականաբար, նրա համար առաջնայինը հույս ժողովրդի շահերն էին: Սակայն Վենիգելոսի լայնախոհությունը և քաղաքական հեռավիճակությունը հնարավորություն էին փայլս նրան հասկանալու, որ հայ-հունական փարաձքային ցանկացած հակասությունը կուժեղացներ երկու պետությունների վրա դաշնակիցների ճնշումը, որից կշահեր մուրքիան, իսկ կդուժենին և՝ հույները, և՝ հայերը:

Այնուամենայնիվ, Պոնդոսում դեղի հույները նպարակ ունեին սփեղծել անկախ պետություն: Նրանք ևս կազմում են պատվիրակություն, որը Փարիզի հաշվության վեհաժողովին հուշագիր է ուղղում<sup>488</sup>:

Պոնդոսի հույները, վսկահ լինելով Հուսասրանի օժանդակության և մեծ դերությունների՝ իրենց նկարմամբ բռնելիք նպաստավոր դիրքորոշման վրա, դեմ էին Արևմտյան Հայաստանի հետ միասին Ձուրքիայից անջապվելուն: Սա պայմանավորված էր այն երկուողով, որ այդ պարագայում նրանք «կլանվեին» հայերի կողմից<sup>489</sup>: Նման մրավախությունն սկզբուն ուներ նաև գնդապետ Դ. Կաթենովիսը, ում է. Վենիգելոսը հանձնարարել էր զբաղվել Պոնդոսի հարցով<sup>490</sup>: Կաթենովիսը ևս ընդգծում էր, որ Պոնդոսի հայրենասերները իմանականում Պոնդոսից հեռու գրնվելով և առկա իրադրությանն անփեղյակ, պաշտպանելու ելան իրենց հայրենիքի իրավունքները<sup>491</sup>: Եվ իրոք, ազարագրական շարժումը զիխավորում էին հայրենասեր, սակայն մեծ քաղաքականությունից և դիվանագիտությունից

488 [National Delegation of the Euxine Pontus], Memorandum submitted to the Peace Conference, Manchester: Norbury, Natzio & Co. Ltd., 1919.

489 Հուսական արխիվային փաստաթղթեր հայ-հունական հարաբերությունների մասին Առաջին Համբաւության շրջանում (1918-1920), թագմանություն հունարենից Շ. Բարթկլյանի, Երևան: Շնորհնակային հրապ., 1998, էջ 114-121:

490 Գնդապետ Կաթենովիսը Պոնդոսի հարցի զարգացումը բաժանում է երեք փուլի: Առաջին շրջանում Պոնդոսի ազարագրումը կապվում էր Ձուրքիայից Հայաստանի հետ միասին անջապվելուն: Երկրորդ փուլում Հուսասրանի փարաձքում ապրող պիոնիրացի հույների գինվորագրումն էր և դիմումը մեծ դերություններին Պոնդոսի մանդապը վերցնելու համար, քանի որ հուսական կառավարությունը չեր կարող Պոնդոսը Հուսասրանին միացնելու հարց բարձրացնել: Երրորդ փուլն արդեն ընդգրկում էր Հայաստանի հետ համագործակցությունը: Տե՛ս Հուսական արխիվային փաստաթղթեր հայ-հունական.... էջ 32-34:

491 Նոյն փեղում, էջ 117:

հետո մարդիկ, ովքնը ծգրելով ավելի հայրենասեր երևալ, հաճախ լավ չէին հասկանում իրականությունը:

1919 թ. աշնանը Հայաստանի հետք բանակցություններ սկսեց Կովկասում Հունասրանի դիվանագիրական առաքելությունը գլխավորող ի. Սրբավրիդակիսը: Նրա առջև դրված էր խնդիր՝ իմանալ Հայաստանի կառավարության դիրքորոշումը երկու հարցում. (ա) մի քանի հունական գյուղերի ազգաբնակչության՝ Հունասրան գաղթելու և (բ) հունական զորամասերի կազմակերպման վերաբերյալ<sup>492</sup>: Նացանկանում էր թույլ չփակ Հայաստանի հույների գաղթը Հունասրան և հասնել նրան, որ հույներին հայկական բանակ չզորակուցեին. հույներից կազմվեին հունական հարուկ զորամասեր, որին, ըստ Սրբավրիդակիսի, դեմ էր գեներալ Փիրույնանը<sup>493</sup>: Սրբավրիդակիսը նպաստակ ուներ սպեղծվելիք հունական զորամասերն օգտագործել ընդհանուր թշնամու՝ քենալականների դեմ: Հայաստանը, ըստ Սրբավրիդակիսի, անդրկովկասյան մյուս հանրապետությունների համեմատ ուներ բոլոր առավելություններն այդ հարցում (ա) միևնույն ճակարտում ընդհանուր թշնամու առկայություն, (բ) աշխարհագրական դիրք, որին միանում է Փոքր Ասիան Կովկասի հետք, (զ) հոծ հույն բնակչություն, որը կարող է ծառայել «որպես արտադ» և այլն), և նրան հարկացվում էր կենդրոնական դեր<sup>494</sup>:

1920 թ. հունվարին Երևան է ժամանում նաև միգրոպոլիտ Խրիստո-թոսը (Ֆիլիպիինս (1882-1949)) Տրապիզոնի վերջին միգրոպոլիքը (1913-1923): Հայաստանի կառավարության հետք բանակցությունների ժամանակ Խրիստոնեություն հայունեց, որ Փարիզի վեհաժողովով իրենք բարձրացրել են Պոնքոսի անկախ պետություն սպեղծելու հարցը, որն ընդգրկելու է Մինոպ-Ռիզե գիծը՝ Պոնքոսի լեռնաշղթայի ու Սև ծովի միջև ընկած փարածքը, և ունենալու է 1.2 միլիոն բնակչություն, որից մահմեդական՝ 0.8 մին., հույն՝ 0.3 մին., հայ՝ 70.000 հոգի: Բանակցությունների ժամանակ քննարկվում էր Պոնքոսի կարգավիճակի հարցը: Պոնքոսիները գիրակցում էին, որ առանց հայերի հետք միասնաբար գործելու այդ հարցում հաջողության հասնելու հնարավորություն չունեն: Միավորման հասնելու համար գործադրելի էին համարվում թե՛ դիվանագիրական միջոցները, թե՛ գեները: Դա նշանակում էր, որ Փարիզի վեհաժողովում հայ և հույն պատրիարքակությունները գործելու էին համարեղ, իսկ եթե հարցը դրական

492 ՀԱԱ, ֆ. 200, գ. 1, գ. 357(II), թ. 183:

493 Նույն տեղում:

494 Հունական արխիվային փաստաթղթեր հայ-հունական..., էջ 17:

լուծում չսկանար, դիմելու էին համափեղ ռազմական գործողությունների<sup>495</sup>: Հայաստանի կառավարությունը գրավ, որ անհրաժեշտ է «խուսափել սահմանային հարցից», Պոնքոսը Հայաստանի Հանրապետության մեջ մրցնել դաշնակցային կարգավիճակով, այդ մասին գրավոր պարասիստ գույքը միբրոպուիդին ու նաև պարվիրակություն ուղարկել՝ մասնակցելու դրապիգոնցիների՝ Բարումում կայանալիք համագումարին<sup>496</sup>:

Ի վերջո, բանակցությունների արդյունքում Հայաստանի կառավարության նախագահի (Ալ. Խափիսյան) և Խրիստոնոսի սրորագրությամբ նամակներ ուղարկվեցին Շունաստանի կառավարության նախագահ Է. Վենիգելոսին ու Խաղաղության վեհաժողովում Հայաստանի ու Պոնքոսի պարվիրակություններին: Դրանցում մասնավորապես նշվում էր.

«1) (Երկու երկրները - Գ. Վ.) խնդրում են Խաղաղության կոնֆերանսի մանդապառու գերությանը հնարավորին չափ շուրջ դաշնակցային գորքեր ուղարկել, որոնք ի վիճակի կիխնեն կասեցնելու բոլշևիկների անխուսափելի առաջիշտացումը:

2) Շելենական կառավարությունը նույն կերպ վարվի՝ օգնելու համար Պոնքոսի հոյներին, ովքեր հայերի հետ համաձայնության են եկել, որ ափ ելած գորքերը կառաջանան դեպի Երգնկա և Էրգրում, ընդիմակայելու թուրքական կանոնավոր գորքին, իսկ հայկական բանակը կաշխատի կանգնեցնել բոլշևիկների հնարավոր առաջխաղացումը Կովկասում:

3) Խնդրում են Շելենական կառավարությանը, որ Շունաստանից անհապաղ մարդիկ և ռազմամթերք առաքվեն՝ համալրելու հայկական բանակը»<sup>497</sup>:

Ի կարարումն այդ խնդրանքի՝ շուրջով «Էլեֆթերիա» առևտրական շղթենավով Շունաստանից բերվում են «Գրա» մակնիշի 10.000 հրացան և 4 միլիոն փամփուշտ: Բացի այդ հունական բանակի զինավոր հրամանադրար Լեռնիդաս Պարասկեսոպուսի կողմից 1920 թ. սեպտեմբերի 16-ի հրամանագրով «Պատերազմական խաչ» 2-րդ ասդիմանի շքանշան է շնորհվում ազգային հերոս Անդրանիկ Օզանյանին<sup>498</sup>:

Փարիզում Վենիգելոսը մշտական գրեթեկություններ էր հաղորդում Պողոս Նուրարին և Ավ. Շիարոնյանին դաշնակցների՝ Գերազույն խորհրդում գրեղի ունեցող քննարկումների մասին և խորհրդներ գույքը

495 ՌԱԱ, ֆ. 200, գ. 1, գ. 182, թ. 1:

496 ՌԱԱ, ֆ. 200, գ. 1, գ. 259, թ. 1:

497 ՌԱԱ, ֆ. 200, գ. 1, գ. 182, թ. 16:

498 Պամազման Տ., Աշվ. աշխ., էջ 170-173:

հայկական հարցերի պաշտպանության վերաբերյալ: Միաժամանակ հունական կառավարությունը երախսրազիփության մեծ զգացում ուներ դաշնակցական պարփիրակ Միքայել Վարանդյանի՝ Սոցիալիստական 2-րդ Ինքնինացիոնալի ժամանակ հետեւրած ելույթի համար, որն արդարացնում էր Զմյուռնիան հունական գիլիված ուժերի կողմից գրադեցնելը և Փոքր Ասիայում հույների նպարակները<sup>499</sup>:

1920 թ. օգոստոսի 10-ին Սլքի պայմանագրի սկզբագրումը երկու ժողովուրդների իղձերի իրականացումն էր: Հայերին և հույներին բաժին հասած երկարագու հալածանքներից, զրկանքներից ու ցեղասպանությունից հետո կարծես արդարացի լուծում էր դրվում նրանց ազգային ծգություններին: Այդ ժամանակ Հունասրան է այցելում Ալեքսանդր Խափիսյանը և հանդիպումներ ունենում վարչապետ Է. Վենիգելոսի և արքաքին գործերի նախարար Նիկոլաս Պոլիդիսի, ինչպես նաև Աթենքի ու Զմյուռնիայի հայ համայնքների հետ: Հունասրանում սկսում է գործել Հայասրանի դիվանագիրական առաքելությունը, որի գործառույթներն սկզբում իրականացնում էին Հունասրանի խորհրդարանի պարզամավոր Գնորդ Փափազյանը և դեսպանագործ գործակաբար Հարություն Գյուրջյանը: Շուրջով Հունասրանում Հայասրանի դեսպան է նշանակվում Տիգրան Չայանը: Իր հերթին Հունասրանի կառավարությունը դիվանագիրական առաքելություն է հիմնում Երևանում՝ առաջին դեսպան նշանակելով Իոաննիս Պապասյան<sup>500</sup>:

Սակայն Հայասրանի առաջին հանրապետության անկումից և խորհրդայնացումից հետո Հայասրանն արդեն չէր կարող առանձին արքաքին քաղաքականություն իրականացնել, քանզի Խորհրդային Ռուսասրանն ուներ ընդգծված թուրքամենք կողմնորոշում: Զնայած պետական մակարդակի համագործակցությունը դադարեց, այնուամենայնիվ 1919 թ. սկսած մինչև 1922 թ. շարունակվող հույն-թուրքական պարփերազմի վարիներին մեծ թվով հայեր մարդնչում էին հունական բանակի կազմում: Այս շրջանում ակդիմ գործունեություն է ծավալում գորավար Թորգոմը (Վրեն-Վրշակ-Խարիբոն Նազաշյան): Նա Հունասրանի արքա Կոստանդինից 1920 թ. վեջին արքունություն էր սպացել հայկական մի գորամասի՝ «Հայկական լեզենի» («Արմենիկ Լեցեան») կազմակերպան համար: Շուրջով Հայկական լեզենի շարքերում կրվողների թիվը

499 Օվաննիսյան Բ. Ղ., Международные отношения Республики Армения, 1918 – 1920 гг. (Пер. с англ. Г. Г. Махмурян); Институт истории НАН Армении. – Еր.: Тигран Мец, 2007, с. 630.

500 Պամաճն Տ., նշվ. աշխ., էջ 174-177:

հասնում է 1.700 հոգու<sup>501</sup>: 1922 թ. դրությամբ արդեն հայ կամավորական զորքերի թիվը հասնում էր 2.500-ի, որից 1.500-ը զործում էր Մազնեսիա - Աֆիոն-Կարահիսարի և Էսքիշենիիրի տեղամասերում, 1.000-ը՝ Քրուսայի շրջանում<sup>502</sup>: Այս դվյալները չեն ներառում հունական բանակի կազմում ծառայող առանձին հայ սպաներին ու գինվորներին: Զորավար Թորգոնը մեծ դերակարգարություն ունեցավ ռազմական զործողությունների գործում հայրնված մեծաթիվ հոյս և հայ ազգաբնակչության պաշտպանության զործում: Արդեն հունական բանակի նահանջի ժամանակ, եթե հունական հրամանափարությունը հրաման է տալիս լուծարել լեզեռնը, Թորգոնն իր պարասիստում՝ ուղղված գեներալ-Լեյտենանտ Գեորգիոս Խաճիանեսիսին, անգամ հրաժարվում է կադրարել հրամանը և խնդրում թույլ դրա շարունակելու իրենց գործողությունները և «զոհվելու հանուն Հունասփառի և Հայասփառի»<sup>503</sup>: Զնյութնիայի աղեքրից հետո զորավար Թորգոնը Հայկական լեզեռնի հետ անցնում է Ջին կղզի, ապա՝ Աթենք:

Հույն-թուրքական պատերազմի դարիներին աջքի ընկան բազմաթիվ այլ հայ ռազմական զործիչներ (Նաշի Օնիկ Ազարյան, Գրիգոր Վարյան և այլք), որոնցից առանձնանում էր Արամ Կայծակը (Արամ Թերզյան) իր ջոկապով, որը հայրնի էր որպես «Տ-րդ անկախ հայ կամավորական խումբ»՝ կազմված Հաճընի և Կիլիկիայի այլ վայրերից սերող հայ մարդիկներից: Ջոկապը մասնակցել է Մազնեսիայի ու Աֆիոն-Կարահիսարի ճակարներում մղված մարդկանցինց<sup>504</sup>:

Թուրքական ուժերի՝ Զնյութնիա մինելուց հետո էլ՝ 1922 թ. սեպտեմբերի 9-12-ը, գեներացի հայերի մի խումբ Արևեն Չավուշի, Բյուզանդ ճամբազյանի և այլոց դեկավարությամբ դիմում է հերոսական ինքնապաշտպանության, փրկում բազմաթիվ հայերի ու հոյսների կյանքեր, վերջում էլ կարողանում հասնել հունական և օդարերեկյա նավերին ու դեղափոխվել Հունասփառն<sup>505</sup>:

Հույն-թուրքական պատերազմի ավարտից և հայկացես Լոզանի պայմանագրից հետո իրավիճակը փոխվեց: Ամբողջ Փոքր Ասիան և Արևմտյան Հայասփառն հիմնականում զրկվեցին հայ և հոյս բնակչությունից, որոնցից պահպանվեցին միայն առանձին քեկորներ: Հայ-հունական համագործակցությունն այս փուլում ավարտվեց:

501 Պամայան Տ., նշվ. աշխ., էջ 200-201:

502 Նոյն գենում, էջ 208-209:

503 Նոյն գենում, էջ 214-215:

504 Նոյն գենում, էջ 206-207:

505 Պամայան Տ., էջ 222-223:

Ամփոփելով պեսք է նշել, որ հայ-հունական համագործակցությունն իր առջև դրված խնդիրներով կարելի է բաժանել հետևյալ փուլերի.

ա) 17-րդ դարից սկսած մինչև 19-րդ դարի վերջը: Այս փուլում զի-փակցվեց և զարգացվեց երկու ժողովորդների փոխգործակցության անհրաժեշտությունը: Այն հիմնականում դրսնորվում էր հունական ազգային-ազարագրական շարժումներին հայերի ակրիվ մասնակցությամբ: Նպարակը երկու ժողովորդների ազարագրական ուժերի միավորումն էր և օսմանյան լծի թորափումը:

բ) 19-րդ դարի վերջից մինչև Առաջին համաշխարհային պատերազմի սկիզբը (1914 թ.): Կապեր են սրբեղծվում հայկական և հունական հեղափոխական կազմակերպությունների միջև, մշակվում համագեղ գործողությունների նախագծերը: Իսկ Բալկանյան պատերազմների ժամանակ հայերը մասնակցում են պատերազմական գործողություններին և հանդես գալիս հունանպաստ դիրքորոշմամբ:

գ) Առաջին համաշխարհային պատերազմի տարիներ (1914 - 1918 թթ.): Բազմաթիվ վայրերում հայերն ու հույները հանդես են գալիս միասնաբար, դիմագրավում թուրք ջարդարաններին: Օգնում և օժանդակում են միմյանց, փրկում մեկը մյուսի կանքը: Դամագործակցությունն այս փուլում կարելի է բնորոշել որպես ինքնապաշտպանական միասնական ճակարտի կազմակերպման փորձ:

դ) Մուդրոսի զինադադարից մինչև Հայաստանի Հանրապետության անկումը (1918 - 1920 թթ.): Այս փուլն առանձնանում է մյուսներից նրանով, որ համագործակցությունը հիմնականում թեղի էր ունենում ամենաբարձր՝ պերական մակարդակով: Ակրիվ դիվանագիրական հարաբերություններ են հասդարձում Հունաստանի և Հայաստանի միջև: Խաղաղության վեհաժողովին ներկայացվելիք պահանջների հետք կապված՝ լուրջ բանակցություններ են դեղի ունենում հայկական և հունական կողմերի միջև: Փարիզում երկու պատվիրակությունները հանդես էին գալիս համերաշխ՝ համագործակցելով միմյանց հետ:

ե) Հույն-թուրքական պատերազմի տարիներ (հարկապես՝ 1920-1922 թթ.): Հայկական կամավորական զորախմբերն ակրիվ մասնակցություն են ունենում պատերազմական գործողություններին: Հայկական ուժերի կողմից բազմաթիվ հույներ և հայեր փրկում են քեմալականների բանություններից:

## ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՀՈՒՆԱԿԱՆ ՀԱՐՁԸ ԼՈԶԱՎՆԻ ՎԵՇԱԺՈՂՈՎՈՒՄ:  
ՀԱՅԵՐԻ ԵՎ ՀՈՒՅՆԵՐԻ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ  
ՏԵՂԱՆԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ  
ԹՈՒՐՔԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ԸՆԴՀԱՆՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ  
ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**3.1. Լոզանի վեհաժողովում սպորտագրված «Թուրքիայի և Հունաստանի միջև բնակչության փոխանակման վերաբերյալ»  
պայմանագիրը և դրա հետևանքները**

Հույն-թուրքական պատերազմի ավարտից և Մուղանիայի գինադադրից կարճ ժամանակ անց՝ 1922 թ. նոյեմբերին, Լոզանում սկսվեցին հաշփության բանակցությունները։ Որոշվեց, որ քննարկման ենթակա հարցերը պետք է ընդգրկվեն երեք հանձնաժողովների օրակարգում։

1. Սահմանային և ռազմական, ինչպես նաև նեղուցների կարգավիճակի հարցերով հանձնաժողով,
2. Թուրքիայում օպարերկրացիների և փոքրամասնությունների կարգավիճակի հարցերով հանձնաժողով,
3. Ֆինանսական, գննդեսական, նավահանգիստների ու երկաթգրծերի և առողջապահության հարցերով հանձնաժողով։

Հունական կողմի համար ամենակարևորը հույն-թուրքական սահմանի, Թուրքիայում մնացած հույն բնակչության և Կոստանդնուպոլիսի Տիեզերական պարիհարքարանի հարցերն էին։ Սևրի պայմանագրով Հունաստանին դրված փարածքները զավել էին քենալականները 1919-1922 թթ. հույն-թուրքական պատերազմի ընթացքում, իսկ այդ փարածքներում մնացած հույների, ինչպես նաև հայերի համար սպեղծվել էր աղեղությալի վիճակ։

Ըննարկումների առաջին փուլում՝ սկսած 1922 թ. նոյեմբերի 22-ից, արձարծություն էր Թուրքիայի ու նրա սահմանների հարցը։ Թուրքիան ներկայացնող Խամեր փաշան (Խոնջու) պահանջում էր Թուրքիայի սահմանները դարձնել Սև ծովից մինչև Մարիջայի գեղարքուրանը՝ վկայակոչելով 1913 թ. Կոստանդնուպոլիսի պայմանագիրը<sup>506</sup>։ Անզամ Արևմտյան

506 Պայմանագրի համաձայն Էնոս-Միդիագիծը պահպանվեց, բայց «կորացվեց» դեպի հյուսիս՝ Սև ծովի ուղղությամբ և դեպի արևմուտք՝ Մարիջա գետի վրայով

Թրակիայի համար պահանջում էր հանրաքվե<sup>507</sup>: Իսմեթ փաշայի ներկայացրած պահանջների դեմ վճռականորեն հանդես եկավ հունական պարվիրակությունը: Է. Վենիգելոսը, հանգամանորեն շարադրելով իր երկրի դժևսակենդրը, մասնավորապես նշեց, որ Հունասփանը չէ, որ սկսել է պարբերազմը. ազգենսիան եկել է հակառակ կողմից, որ Հունասփանը պահանջում է Արևելյան Թրակիան, Զմյուռնիան իր շրջակայքով, որովհետո համոզված է, որ իր պահանջները համապարասխանում են այն սկզբունքներին, որոնց համար պայքարել են դաշնակիցները: Եվ իրոք, այս փարածքներում թուրքերն ամեն դեպքում չեն կազմել մեծամասնություն մինչև Բալկանյան պարբերազմների (1912-1913) ավարգը: Իր եկույթի ընթացքում նա, պաշտպանելով հայրենակակիցների շահերը, չմոռացավ նաև հայ ժողովրդի արդարացի պահանջները: Այսպես, Փոքր Ասիայի նկարմամբ հույների պահանջ «անհեթերությունը» ցույց փալու համար թուրքական պարվիրակության կողմից հաճախ էր մեջքերվում Փոքր Ասիայի միասնականության գաղափարը: Որպես հակափաստարկ՝ Վենիգելոսը նշում էր, որ «Փոքր Ասիան շար ավելի մեծ է, քան Բալկանյան թերակղզին՝ Դանուրից հարավ: Ինչո՞ւ է հնարավոր մի քանի պետքություն հիմնել Բալկանյան թերակղզում, և ինչո՞ւ չի կարելի ձևավորել երեք պետքություն Փոքր Ասիայում: հայկականը՝ արևելքում, հունականը՝ արևմուղքում, և թուրքականը՝ մեսացած մասում»<sup>508</sup>: Լոգանում պայմանագրի համաձայն Հունասփանը կորցրեց Արևելյան Թրակիան՝ Աղրիանապոլսով, սակայն Հունասփանին մնաց Մարիցա գետից արևմուղքը ընկած հարփածը՝ Արևմոյան Թրակիան<sup>509</sup>:

Տարածքային հարցերից կարևոր էր նաև Էգեյան ծովի արևելյան շրջանի կղզիների կարգավիճակի վերջնական հսկակեցումը: Եվս մեկ անգամ հասփառվեց այդ կղզիների անցումը Հունասփանին՝ բացառությամբ Իմբրոս և Տեներոս կղզիների, որոնք թողնվեցին թուրքական գերիշխանության փակ: Նշված երկու կղզիները չեն ներառվելու նաև Թուրքիայի և Հունասփանի միջն բնակչության փոխանակման

այնպես, որ Թուրքիան ծեռք բերեց ոչ միայն Աղրիանապոլիսը, այլ նաև Քըրք Քիլիսեն և Դեմուրիկան: Բուլղարացիները ոչ միայն հանձնեցին Դեղեղաղած քանող երկաթուղին, այլ նաև իրենց միակ նավահանգիստը Էգեյան ծովում, որն անցավ Հունասփանին:

507 Lausanne Conference on Near East Affairs 1922 – 1923. Records of Proceedings and Draft Terms of Peace, London, 1923, p. 21.

508 Հույն դեղում, էջ 24:

509 Հույն դեղում, էջ 687:

պայմանագրի մեջ<sup>510</sup>: Նաջորդ հոդվածն անդրադառնում էր՝ ‘Դոդեկանեսյան կղզիներին, որոնք մնացին իրալական գերիշխանություն վակը<sup>511</sup>:

Տունական պարփակությանն առավել դժվարին ու պատրասիանագուու պայքար էր սպասվում Թուրքիայի վարածքում մնացած հույն բնակչության հարցի քննարկման ընթացքում: Թուրքական պարփակության դեկավար Իսմեր Իննույուն բանակցությունների ընթացքում հասրափակամորեն պնդում էր Թուրքիայի վարածքից մնացած հույների դուրսբերման անհրաժեշտության վրա: Սա թուրքական պարփակության կարևորագույն խնդիրն էր: Որպես հարցի լավագույն գիրակ՝ նորվեգացի Նշանավոր ընտախույզ Ֆրիդյոֆ Նանսենը, ով Ազգերի լիգայի ռազմագերիների և փախստականների հարցերով գլխավոր հանձնակարարն էր և աչքի էր ընկել իր մարդասիրական Վերաբերմունքով ինչպես հայերի, այնպես էլ հույների նկարմամբ, 1922 թ. դեկտեմբերի 1-ին՝ 8-րդ նիստին, հրավիրեց գեկույցով հանդես գալու համար:

Մինչ այդ Նանսենը եղել էր Թուրքիայում և լավ ուսումնասիրել էր հիմնահարցը: Իր գեկույցում ներկայացնելով իրավիճակը և ընդգծելով, որ ցանկացած միջոցառում պետք է իրականացվի՝ հաշվի առնելով բոլոր նրբությունները, ներկաների ուշադրությունը հրավիրեց հետևյալ հարցերի վրա.

ա) Արդյոք պայմանագիրը պետք է հիմնվի հարկադիր, թե՛ կամավոր «Էմիգրացիայի» սկզբունքի վրա,

բ) Ո՞րն է դրա կիրառման դարաձքը,

գ) Ինչպիսի՞ն պետք է լինի փախստականների հարցերի կարգավորման հանձնաժողովը կամ կյանքում դրա կիրառման մեխանիզմը<sup>512</sup>:

Պայմանագիր սպորագրելու անհրաժեշտությունը պնդում էր թուրքական կողմը: Դրան գումարվեց նաև թուրքերի պահանջ՝ հեռացնել Տիեզերական պարփակարքությունը Կոստանդնուպոլիսից: Այս հարցը թուրքական պարփակության կողմից բարձրացվեց 1922 թ. դեկտեմբերի 13-ի նիստում: Այն սերպորեն կապված էր Կ. Պոլսի հույն բնակչության խնդիրի հետ: Դրան վերաբերող հիմնական քննարկումներն ընթացան 1923 թ. հունվարի 10-ին: Բրիդանական կողմը, այս հարցում մեծ վճռականություն դրսութելով, հանդես եկավ հայդարարությամբ, որ յի համաձայնի Պարփակարքությունը Կ. Պոլսից բեղադրիչներու ցանկացած

510 Նոյն գեղում, էջ 692:

511 Դոդեկանեսյան կղզիները Իրավիայի կողմից Տունասպանին վերադարձվեցին 1947 թ. Փարփակ պայմանագրով:

512 Lausanne Conference on Near East Affairs..., p. 113-117.

առաջարկի հետ<sup>513</sup>: Ձուրքերը սրբազնած էին զիշել: Չնայած դրան՝ կրկին դրսնորեցին համառություն և մեկ անգամ ևս ծանկանորեն պահանջեցին Պատրիարքարանի գրեղափոխումը Կ. Պոլսից: Որպես իրենց պահանջի հիմնավորում՝ թուրքերը նշում էին, որ Պատրիարքարանը Ձուրքիայում միշտ դրսնորել է քաղաքական ակրիվություն և շարունակելու է նույն կերպ: Նրանք փորձեցին նաև ուշադրություն հրավիրել այն «թշնամական» վերաբերմունքի վրա, որ որդեգրվել էր Պատրիարքարանի կողմից վերջին պատերազմի ընթացքում և համոզնունք հայդեմեցին, որ նրա մնալը Կ. Պոլսում առիթ կրա հենքազա կոնֆլիկտների, ուստի առաջարկում էին Պատրիարքի նախավայրը գրեղափոխել Աթոս լեռ և այդպեսից դարածել իր հոգևոր իշխանությունն ուղղափառ աշխարհի վրա<sup>514</sup>:

Հունական պատվիրակությունը պնդեց, որպեսզի Պատրիարքությունը մնա Կ. Պոլսում, ու եթե նոյնիսկ նրան սրբազն թողնել քաղաքը, ընդմիշտ կպահի Կ. Պոլսի պատրիարք և արքեպիսկոպոս գիրղոսը: Ի վերջո հունական կողմը հասավ նրան, որ Պատրիարքը մնաց Կ. Պոլսում: Այս հարցում վճռորոշ նշանակություն ունեցավ մեծ դերությունների դիրքորոշումը: Բան այն է, որ պատրիարքը Ձուրքիայում հույն ժողովրդի փաստացի առաջնորդն էր: Գաղփնիք չէ, որ թուրքերը ձգվում էին ազարպել Կ. Պոլսի հույն բնակչությունից, ինչի հետ մեծ դերությունները չէին կարող համաձայնել: Զրկել Կոստանդնուպոլիսը գործունյա ու հարուստ հույն բնակչությունից՝ կնշանակեր այդ կարևոր հանգույցակերի գնդեսական կյանքը կապարելապես կաթվածահար անել. բանկերը մեծ մասամբ հույնների ծեռքում էին, կամ այնքեղ հույն անձնակազմ էր աշխարում: Դա չէր համապարասիսանում եվրոպական պետքությունների շահերին<sup>515</sup>: Ուստի Պատրիարքի մնալը մեծապես ծեռնփու էր նաև նրանց:

Հույն-թուրքական պայմանագրի կնքման և դրան հարկադիր բնույթ գրալու վրա հասպափակամորեն պնդում էր Խսմեթ փաշան՝ սպառնալով հակառակ դեպքում շարունակել բանակցությունները<sup>516</sup>: Առաջին հայացքից կարող է թվալ, որ այս պայմանագիրը հունական դիվանագիրության խոշոր ձախողումներից էր: Սակայն համադրելով

<sup>513</sup> Lausanne Conference on Near East Affairs..., p. 335.

<sup>514</sup> Նոյն գլուխում, էջ 336:

<sup>515</sup> Նաևսն Ֆ., Խարված ժողովուրդ, Ազգերի ընկերակցության գլխավոր համձնակարգի հետազորական ճանապարհորդությունը Վրաստան և Հայաստան, Երևան, 2009, էջ 30:

<sup>516</sup> Ladas S., The Exchange of Minorities, Bulgaria, Greece and Turkey, New York: The Macmillan Company, 1932, p. 340-342.

փասփերը և դիմարկելով այն իրավիճակը, որ փիրում էր դրա սփորագրմանը նախընթաց մի քանի ամիսների ընթացքում, պարզ է դառնում, որ պայմանագրի սփորագրումը հույների կողմից թերևս հնարավոր փարբերակներից (դրանք շատ չեն) «ամենահարմարն» էր: Նախ 1919-1922 թթ. հույն - թուրքական պատերազմում հույների պարփռված էականորեն բարդացրել էր Հունասփանի միջազգային դրությունը: Այսուհետև պատերազմի ողջ ընթացքում քեմալականները ծրագրված շարունակում էին թուրքահպատակ հույների՝ երիտրուրքերի կողմից սկսված կոփորածների քաղաքականությունը: Բացի այդ դաշնակիցների երկդիմի քաղաքականությունը ևս զգալիորեն ուժեղացրել էր Թուրքիայի դիրքերը<sup>517</sup>: Թուրքիայում մնացած հույն բնակչության համար սփեղծվել էր աղեղալի իրավիճակ: Թուրքերի՝ Զմյուռնիա միննելուց հետո՝ 1922 թ. սեպտեմբերի 16-ին, Մուսավաֆա Քեմալի հրամանով 18-45 փարեկան հույն և հայ փղամարդիկ հայփարարվեցին ռազմագերիներ՝ նրանց թոյլ չփալով հեռանալ Փօքր Ասիայից: Խակ մնացած ազգաբնակչությունը նույն հրամանի համաձայն պետք է լրեր Թուրքիան մինչև հոկտեմբերի 1-ը: Իրավիճակի մասին պատկերացում կազմելու համար բնութագրական է ամերիկյան շահերը Զմյուռնիայի շրջանում պաշտպանող ԱՄՆ-ի բանակի կապիտան Ռ. Դաուելի գենուցագիրը՝ ուղղված ծովակալ Մ. Բրիստոլին (ԱՄՆ-ի գերազույն հանձնակարգարը Թուրքիայում 1919-1927 թթ.), որին նշվում է: «Թուրքերը հսկակ հայփարարել են, որ եթե այս մարդիկ ուղարկվեն երկրի խորքերը, ապա կսպանվեն: Եթե դուք ուզում եք ինչ-որ քան անել փախստականների համար, ուղարկեք նավեր և նրանց այսպեղից փարեք»<sup>518</sup>:

Իրականում մինչև պայմանագրի սփորագրումը 1922 թ. դեկտեմբերի դրությամբ երկրից «արդարագոյել էր» մնացած հույն բնակչության մեծամասնությունը: Այսպես կոչված փոխանակման պայմանագրի սփորագրումից առաջ արդեն, ըստ Ձեյմս Բարթոնի, 1922 թ. ընթացքում ավելի քան 1.000.000-ը դուրս էր Եկեղեց երկրից: Դրան գումարելով նաև 1923 թվականը՝ նա նշում է, որ 1.400.000 մարդ փեղափոխվեց Հունասփան<sup>519</sup>: Մեկ այլ փվյալի համաձայն՝ 1.250.000 հույն և 100.000

517 Բնութագրական օրինակներ են 1921 թ. հոկտեմբերի 20-ին ֆրանս-թուրքական համաձայնագիրը Անգլորայում (Անկարայում) կամ 1922 թ. անոանը Թրակիայում հունական գորքերի՝ դեպի Կ. Պոլիս առաջխաղացման կասեցումը դաշնակիցների կողմից:

518 Murat J., նշվ. աշխ., էջ 155:

519 Barton J., նշվ. աշխ., էջ 161 և 165:

հայ «լցվեցին» Հունաստան, որից միայն 1/5-ը կարողացավ փեղապորվել: Նրանք մեկ երրորդով ավելացրին Հունաստանի նախապատերազմյան բնակչությունը<sup>520</sup>: Փաստորեն մինչև պայմանագրի ստորագրումն արդեն 1.000.000-1.200.000<sup>521</sup> մարդ «լքել» էր Թուրքիան:

Հաշվի առնելով այս ամենը՝ ակնհայք է դառնում, որ Է. Վենիգելոսը կանգնած էր կափարված փաստի առաջ. նրա խնդիրն էր արդեն պաշրպանել Թուրքիայում մնացած ոչ մնձաթիվ հայրենակիցներին: Վենիգելոսին ընդդիմադիր քաղաքական ուժերը սուր քննադադրության ենթարկեցին նրան այդ պայմանագրիրը ստորագրելու համար: Սակայն հետո գագաղում Պիրեյի քաղաքապետարանի թափրունում կայացած իր նախընդունական ելույթում նա շատ դիպուկ է նկարագրել դրա եռթյունը և այն պայմանները, որոնք սփիալել են ստորագրել. «(...) Այժմ անհրաժեշտ է երկու խոսքով բացապրել, թե ինչ էր այդ Փոխանակման Պայմանագիրը: Այն կոչվում է Պայմանագիր՝ «Թուրքիայի և Հունաստանի բնակչության փոխանակման վերաբերյալ»: Պայմանագրի այս անվանումը կենդ է: Խոսքը բոլորովին բնակչության փոխանակման մասին չէ: Թուրքիան այն պահին, երբ ստորագրվեց Պայմանագիրը, արդեն իր փարածքից վկանդել էր մոլորական մեկ միջին փախստականների: Փոքր Ասիայի լեռներում դեռևս թափառում էին հարյուր ութսուն հազար ևս, որոնք չկարողացան իջնել դեպի ծովափները, քանի որ թուրքական պարտեզը չէր թողնում, և որոնք, եթե այս Պայմանագիրը չստորագրվեր, կմնային սարերում և սովամահ կլինեին, քանի որ Թուրքիան, ցանկանալով ոչնչացնել քրիստոնեական դպրությունը և առաջնորդությունը այս հայրենակիցների ճակարտագիրը և հաջողեցրինք փրկել նրանց, քանի որ երբ Թուրքիան դժուակ, որ բոլորը պիտի մուլք գործեն Հունաստան, թողեց, որ գան:

Մեկ այլ բան է արեցի. փրկեցի Կ. Պոլսի հունական բնակչությունը, որն ուզում էի փրկել, հիմնականում ոչ թե այլ քաղաքական միքքից ելնելով, այլ որպիսի ցանկանում էի՝ սպրկացած հունական բնակչության դժբախտությունը հնարավորինս նվազ չափեր սպանա, քանի որ եթե անմիջապես ավելանային մնացած փախստականներին նաև Կ. Պոլսի հոյսները, ավելի շատ կվտանզվեինք՝ չկարողանալով դիմագրավել այն խնդիրները, որոնք պիտի առաջացնեին այսքան փախստական ժողովրդի կուրպակումը:

Եթե այն ժամանակ լսեի փախստական ժողովրդի դեմագոգներին

520 Housepian M., նշվ. աշխ., էջ 219:

521 Walker Chr. J., նշվ. աշխ., էջ 350:

և ասեի. շար լավ, սահմանափակվեմ Հունաստանի և Թուրքիայի միջև խաղաղության պայմանագրով, քանի որ համարում են, որ ես դափնածանում եմ նրանց շահերին և վաճառում նրանց, որեմն թողնեմ նրանց: Մըր կլիներ հետևանքը: Նովիսանքը կլիներ այն, որ Փոքր Ասիայի սարերում մոլորապես 200.000 հայրենակիցներ կրնաջնջվեին, և բնակչությունը, որը Հունաստան կզար, շար ավելին կլիներ: Ու՞ր պիտի գնային մարդիկ այդ պահին, եթե չկարողանայի հեռացնել Հունաստանից մուսուլմաններին: Քանի որ Պայմանագիրը ըստ էության պիտի հետքյալ անվանումը կրեր՝ «Թուրքիայից հունական փարրի Վփարման պայմանագիր», որով Թուրքիան ստանձնում է պարտականությունը հունական փարածքից վերցնել [թուրք] հայրենակիցներին, Հունաստանի հպատակներին»:

Սա է, ըստ էության, Փոխանակման պայմանագրի իմաստը: Չին կարող առաջ փանել Պայմանագրի իսկական անվանումը, որովհետև Թուրքիան չէր ընդունի և որոշեցինք անվանել այն Փոխանակման պայմանագիր (...):<sup>522</sup>

Ի վերջո 1923թ. հունվարի 30-ին այդ պայմանագիրը ստորագրվեց: Պայմանագրի հենց 1-ին հոդվածում ամրագրվում էր, որ «պետք է գենի ունենա հարկադիր փոխանակում Թուրքիայի փարածքում ապրող Թուրքիայի քաղաքացի հույն ուղղափառների և Հունաստանի փարածքում ապրող Հունաստանի քաղաքացի մահմեդականների միջև: Առանց թուրքական կամ հունական կառավարությունների թույլգվության այդ մարդիկ չպետք է վերադառնան՝ Թուրքիայում կամ Հունաստանում բնակվելու համար»: Ինչպես երևում է, փոխանակման հարկադիր բնույթը սահմանվում է հենց առաջին հոդվածում: Երկրորդ հոդվածի համաձայն՝ «Ներքյալ անձերը չպետք է ներառվեն Հոդված 1-ում նշված փոխանակման մեջ. ա) Կոստանդնուպոլիսի բնակիչ հույները, բ) Արևմտյան Թրակիայի բնակիչ մահմեդականները»:

Բոլոր այն հույները, ովքեր արդեն հաստափվել էին 1918 թ. հոկտեմբերի 30-ից առաջ Կոստանդնուպոլիս քաղաքի արեֆեկտորայի փարածքում՝ 1912թ. հաստափված օրենքով, պետք է համարվեն Կոստանդնուպոլիսի բնակիչներ: Բոլոր մահմեդականները, ովքեր հաստափվել են 1913 թ. Բոլիսարեստի պայմանագրով հաստափված սահմանից արևելք, համարվում էին Արևմտյան Թրակիայի բնակիչներ»: 3-րդ հոդվածի համաձայն՝ «Բոլոր հույները և մահմեդականները, ովքեր սկսած 1912 թ. հոկտեմբերի 18-ից թողել են փարածքները, որոնց հունական և թուրքական բնակչությունը համապատասխանաբար փոխանակվել է.

պեսք է համարվեն հոդված 1-ի մեջ ներառվածներ: Այս պայմանագրի «էմիգրանտներ» եզրը ներառում է բոլոր ֆիզիկական և իրավաբանական անձանց, որոնց պարփառվել է արտագաղթել կամ արտագաղթել են՝ սկսած 1912 թ. հոկտեմբերի 18-ից»<sup>523</sup>: Հաջորդ հոդվածներում անդրադարձ է կարգարվում փոխանակման ենթակա բնակչության շարժական և անշարժ գույքին, նրանց գեղափոխման պայմաններին և այլն: Մասնավորապես, 8-րդ հոդվածի համաձայն՝ նրանք կարող են իրենց հետ ազատ գեղափոխել շարժական գույքը՝ առանց դրա համար որևէ արդարանման կամ ներմուծման գույքը վճարելու: 11-րդ հոդվածի համաձայն՝ սպեղծվելու էր փախստականների վերաբնակեցման հարցերով միջազգային հանձնաժողով՝ բաղկացած չորս անդամներից<sup>524</sup>: Հանձնաժողովի չորս անդամներից մեկը ամերիկացի էր, մեկը՝ բրիտանացի, երկուսը՝ հույն: Ամերիկյան նախկին դեսպան Շ. Մորգենթաու դարձավ այս հանձնաժողովի նախագահը<sup>525</sup>: 1923թ. սեպտեմբերի 29-ին Հունասրանը և Ազգերի լիգան սպորագրեցին արձանագրություն Փախստականների հարցերի կարգավորման (վերաբնակեցման) հանձնաժողով (Refugee Settlement Commission՝ RSC) սպեղծելու մասին:

Լոգանի կոնֆերանսն ավարտվեց 1923թ. հուլիսի 24-ին, իսկ բնակչության փոխանակման հույն-թուրքական պայմանագիրը Հունասրանում վավերացվեց 1923թ. օգոստոսի 25-ին:

Ինչպես նշվեց, մինչև բռն պայմանագրի սպորագրումը Թուրքիայից Հունասրան էր զայդել 1.000.000-1.250.000 մարդ: Պայմանագիրը սրությունը հետո արդեն Թուրքիայից Հունասրան գաղթածների իրական թիվը, ըստ հիշյալ հանձնաժողովի պաշտոնական դվյալների, կազմում էր 189.916 մարդ, իսկ Հունասրանից Թուրքիա գաղթողների թիվը՝ 355.635 մարդ: Մեկ այլ դվյալի համաձայն՝ փախստականների թիվը համապատասխանաբար 192.356 և 354.647 էր<sup>526</sup>:

Հունական կառավարության դվյալների համաձայն՝ 1923թ. մարտի 1-ի դրությամբ Հունասրանում փախստականների թիվը կազմում էր 1.150.000 մարդ: Այն ներառում էր 1920-1921թթ. «Ժամանակ» գաղթականներին, ովքեր մինչև այդ պահն օժանդակություն էին սրբանում հունական

523 Lausanne Conference on Near East Affairs..., p. 817-818.

524 Նոյն գեղում, էջ 819-823:

525 Morgenthau H., I was sent to Athens, New York: Doubleday, Doran & Co., 1929, p. 8.

526 Crossing the Aegean, an Appraisal of the 1923 Compulsory Population Exchange between Greece and Turkey, (Edited by Renée Hirschon), New York–Oxford: Berghahn Books, 2006, p. 14.

կառավարությունից: Այդ թվի մեջ էին միքնում նաև Ռուսաստանից եկած հույսները: Այն չի ներառում գործարար, գրարեր մասնագիտություն ունեցող բազմահազար մարդկանց Կոստանդնուպոլիսից, Զմյուռնիայից և այլ վայրերից, ովքեր ունեին միջոցներ և ոչ միայն բավարարում էին իրենց կարիքները, այլ նաև սկսն էին գործարարությամբ գրադարձ Վրենքում, Պիրոսում և Ռուսաստանի այլ վայրերում: Ռուսաստան գաղթած բնակչությունը եկել էր Թուրքիայի հետևյալ շրջաններից. Փոքր Ասիայից՝ 730.000, Արևելյան Թրակիայից՝ 180.000, Կոստանդնուպոլիսից՝ 50.000, Սև ծովի շրջանից՝ 100.000, Նիկոմեդիայից (Իզմիթ)՝ 30.000 (1921 թ.), Կիլիկիայից՝ 10.000 (1921 թ.), ինչպես նաև Ռուսաստանից՝ 50.000 (1923 թ.): Իսկ ըստ ազգությունների հաշվում էին. հույն՝ 1.040.000, հայ՝ 100.000, ասորի՝ 1.000, չերքեզ՝ 9.000, ընդամենը՝ 1.150.000<sup>527</sup>:

Բացի այդ 1923 թ. մայիսի 26-ի փայլաներով 64.000 մարդ սպասում էր Ռուսաստան փոխադրվելուն, ևս 150.000 հույսներ և հայեր՝<sup>528</sup> սպասում էին իրենց հերթին, եթե որ 64.000-ը փեղափոխվեմ<sup>529</sup>:

Ընդհանուր առմամբ Ռուսաստան փեղափոխվեց և այսպես հաս-

527 Bierstadt E. H., նշվ. աշխ., էջ 248-249:

528 Ռուսաստան գաղթած հայության թիվը հասնում էր գրեթե 100.000-ի, սակայն տարբեր աղյուրներում հիշարքավում են տարբեր թվեր: Այսպես, արիստվային մի փաստաթյուրի համաձայն հայ գաղթականների թիվը Ռուսաստանում 50.000 է եղել (ԱԱԱ ֆ. 409, գ. 1, գ. 5219, թ. 10): Նշված թիվը, սակայն, սկզբնական է և հետագայում համարվել է: Սակայն արդեն, 1924 թ. ապրիլի 9-ին Թրակիայի և Մակեդոնիայի հայերի հոգևոր առաջնորդի՝ Էջմիածնի գերագոյն հոգևոր խորհրդին գրած նամակում Սալոնիկի և Վրենքի թեմների հավատացյալների ընդհանուր թիվը նշվում է 60-65 հազար (ԱԱԱ, ֆ. 409, գ. 1, գ. 5211, թ. 5-6): Այսպես չի հաշվվում կարողի և բողոքական հայերի թիվը, որոնք մի քանի հազար էին կազմում: Գրեթե նոյնքան (70.000) է հիշարքավում նաև արտասահմանի մի շարք երկրներում հայերի թվաքանակի մասին 1925 թ. հունվարի 24-ի Էջմիածնի Գերագոյն խորհրդի կազմած փեղենկազրում (ԱԱԱ ֆ. 409, գ. 1, գ. 36, թ. 1): 1923 թ. փայլաներով Ռուսաստանում սպասարանած հայ գաղթականների թիվը մոտ 65.000 է նշվում նաև թեոդիկի «Ամենուն գարեցոյցի» 1924 թ. հարգորում՝ չնայած հետինական ընդունում է մարդկանց չարձանագրվելու, գեղաշարժերի և գաղթականների նոր խմբերի ժամանակն պարճառով բոլոյ դրված սխալների հնարավորությունը (Թեոդիկ, Ամենուն գարեցոյցը, Փարիզ, 1924, էջ 228-229): Նա չի հաշվել հայ որբերի թիվը, որոնք գարբեր գնահատականներով 7-20.000 էին: Նորագոյն ուսումնասիրողներից Պ. Կոկինոսը համոզմունք է հայրենում, որ 1920-ական թթ. սկզբին Ռուսաստանում հասարակած հայերի վերջնական թիվը գաղթականում էր 100.000-120.000-ի միջև (Կոկինոս Պ., նշվ. աշխ., էջ 26):

529 Նոյն փեղում, էջ 250:

փափվեց շուրջ 1.500.000 գաղթական<sup>530</sup>: Նրանց հարցն օրակարգաբն խնդիր էր դարձել Հունասպանի կառավարության համար: Աներաժշտ էր լուծել գաղթականների բնակարանային, ապա նաև աշխատանքների հավորման, իոնական հասարակությանը ինչուզրվելու հարցեղը: Հունական կառավարությունն արդեն 1922 թ. նոյեմբերի 3-ին որոշեց եք հաղորդականների օգնության հիմնադրամ, որը Առողջապահության և աղյուսական ապահովության նախարարության հետ միասին խնդիր ունենալու կառուցել բնակարաններ փախստականների համար, թեև նրանցից մասնակի իրենց միջոցներով ինքնուրույն կառուցել էին դժուր: Մեծ քանակությամբ բնակարաններ կառուցվեցին հարկապես Վթենքում: Սակայն գաղթականների գրեղավորման հարցն առանց արդարքին օգնության հնարավոր չէր լուծել: Այս առումով զգալի աշխատանք կապարեց Փախստականների հարցերի կարգավորման հանձնաժողովը, որը գործեց մինչև 1930 թ.: 1929 թ. վերջին 12.500.000 ֆունք սպեռլինց դրամական միջոց և 8.400.000 սպրեմափա (stremmata) (մոտ 2.100.000 ակր) հոռ դրվեց հանձնաժողովի գրամադրության դակ, որի (հողի) մեծամասնությունը թուրքիա գեղափոխված մահմեդականների սեփականությունն էր<sup>531</sup>:

Հանձնաժողովն իր ուշադրությունը հրավիրեց հարկապես զյուղական շրջաններում գաղթականների բնակեցման վրա: Արդեն 1928 թ. վերջերին Հանձնաժողովը հիմնադրել էր 2.000 զյուղական բնակավայր, որտես 3-4-ր կցված էր գյուղություն ունեցող զյուղերին: Մասնավորապես, 150.000 ընդամենք գրեղավորեց այդ բնակավայրերում՝ մեծամասնությունը Մակեդոնիայում (87.084 ընդամենք) ու Թրակիայում (41.828 ընդամենք)<sup>532</sup>: 1930 թ. Հանձնաժողովը կառուցեց 52.000 գրունտ՝ ի լրում 1922-1924 թթ. պետքության կողմից կառուցված 13.500 և մահմեդականների՝ 64.000 լրայլ դժուրի: Բացի այդ կառուցվեցին նաև 24.000 քաղաքային դժուր Հունասպանի 59 շրջաններում<sup>533</sup>:

Հոյւն գաղթականների համար հսկայական աշխատանք կարարեցին նաև ամերիկյան, բրիտանական, շվեյցարական, դանիական և այլ երկրների կազմակերպությունները<sup>534</sup>:

Լոգանի կոնֆերանսը և նրա շրջանակներում սպորագրված Փոխանակման պայմանագիրը վերանայեց Սևրի պայմանագրով հասպար-

530 Marriott J., Աշխ. աշխ., էջ 409:

531 Crossing the Aegean..., p. 168-169.

532 Նոյն գրեղում, էջ 170:

533 Նոյն գրեղում, էջ 170:

534 Bierstadt E. H., Աշխ. աշխ., էջ 252-262:

ված դրույթները: Լոգանում ակնհայր դարձավ, որ Հունասփանը ոչ միայն զրկվում է Փոքր Ասիայի նկարմամբ դարձային իրավունքներից, այլ նաև օրինականացվում են թուրքահպատակ հույնների արքաքսումներն ու նոր ճանապարհ է բացվում դրա շարունակության համար<sup>535</sup>: Նեփսանքը Թուրքիայի «մաքրումն» էր ուղղափառ քրիստոնյա տարրից: Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ եթե 1453 թ. Կոստանդնուպոլիսի անկմամբ վերջ դրվեց Փոքր Ասիայում հույն ժողովրդի քաղաքական, ապա Լոգանի վեհաժողովից հետո՝ նաև նրա ֆիզիկական ներկայությանը:

---

535 Խոսքը վերաբերում է Լոգանի պայմանագրից հետո ամբողջ 20-րդ դարի ընթացքում համրապետական Թուրքիայի վարած հակառական քաղաքականությանը Կոստանդնուպոլիսի և Տեսլեյոս ու Իմբրոս կղզիների հույնների նկարմամբ:

### 3.2. Նայերի և հույների գանգվածային դեղահանությունների և կողորուածների թուրքական քաղաքականությունները ու դարբերությունները ու դարբերությունները

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին հայերն ու հույներն ասորիների հետ միասին կազմում էին Օսմանյան կայսրության քրիստոնյա բնակչության հիմնական մասը: Այս ժողովուրդները դարեր շարունակ ապրել են օսմանյան լծի փակ և մինչև դիվարկվող ժամանակահարվածը գգնվել են նոյն իրավական կարգավիճակում և նոյն վնասական ու սոցիալական պայմաններում: Երկու ժողովուրդների զանգվածային դեղահանություններն ու կողորածները, ինչպես իրենց նախապարմությամբ, այնպես էլ ընթացքով և հերթանքներով, ունենալով զգալի փարբերություններ, միևնույն ժամանակ քավական աղերսներ ունեն<sup>536</sup>: Դաճախ նմանությունն այնքան մեծ է եղել, որ դրանք նույնացվել են և համարվել մեկ ոճիր կամ դրա փարբեր փուլեր: Այս առումով Օսմանյան կայսրությունում ԱՄՆ-ի դեսպան Շ. Մորգենթաուն նշում է, որ հայերը Թուրքիայի միակ հպատակ ժողովուրդը չէին, որ ենթարկվեցին չարչարանքների Թուրքիան միայն թուրքերի երկիր դարձնելու քաղաքականության հերթանքով, և հետո ավելացնում է, որ հայերի մասին իր պարմությունը մի քանի փոփոխություններով կարող է պարմել նաև հույների և ասորիների մասին<sup>537</sup>: Ուստի հույների դեղահանությունների և կողորածների ուսումնասիրումը, առանց հայկականի հետ գուգահեռներ փանելու, մեր կարծիքով, թերի կլինի: Կան մի շարք համալիր ընդհանրություններ և փարբերություններ, որոնք ակնհայր են դառնում միմիայն համեմատական վերլուծությունից հետո:

#### *Կողորուածների նախապարմության համեմատություն:*

1299 թ. Օսմանյան կայսրության սկզբնավորումից հետո նվաճումների արդյունքում (մասնավորապես 1453 թ. մայիսի 29-ին՝ Կոստանդնուպոլիսի,

536 Պատրահական չէ, որ Օսմանյան կայսրությունում մասնավորապես Արևելյան Թրակիայում, Պոնտոսում և Զմյուռնիայում, 1914-1923 թթ. իրականացված քաղաքականությունը բազմաթիվ հույն հեղինակների կողմից համարվում է ցեղասպանություն: Տե՛ս օրինակ՝ Փատιածոն Կ., Հ Գενοկտոնία των Ελλήνων του Πόντου, Θεσσαλονίκη, Ιδρυμα της Βουλής των Ελλήνων Για τον Κοινοβούλευτισμό και τη Δημοκρατία, Αθήνα, 2004: Μαλκίδης Θ., Հ Գενοκτονία των Ελλήνων. Θράκη, Μικρά Ασία, Πόντος, Λευκωσία: Εκδόσεις Αιγαίον, 2010.

537 Morgenthau H., Ambassador Morgenthau's Story. Garden City-N.Y: Doubleday, Page & Co., 1918, p. 323.

1460 թ.՝ Մորեայի (Պելոպոնես), 1461 թ.՝ Տրապիզոնի կայսրության և այլն) հոնական հողերը հայփնվեցին թուրքական փիրապետության վակ։ Իսկ Արևելքում Մեֆսյան Իրանի հետ երկարաբաժն պատերազմներից հետո 1555 թ. Ամասիայի և 1639 թ. Կասրե-Շիրինի պայմանագրերով վերջնականացվել ամրագրվեց Արևմդյան Հայաստանի անցումն Օսմանյան կայսրությանը։ Մեհմեն 2-րդից հետո օսմանյան սուլթաններն իրենք իրենց սկսեցին անվանել բյուզանդական կայսրերի հետինորդներ։ Դա նրանց համար հիմնավորում էր ծառայելու՝ իշխելու ողջ քրիստոնեական աշխարհի վրա։ Նրանց փիփրոսներին ավելացավ «կայսրի Ուսում»<sup>538</sup>, այսինքն՝ «հոումեական կայսր» փիփրոսը։ Երկու քրիստոնյա ժողովուրդների՝ օսմանյան լծի փակի հայփնվելը, սակայն, ուներ մեկ կարևոր փարբերակից կողմ։ Եթե հայերի դեպքում օփար մի փիրապետությունը փոխարինվեց մյուսով, ապա հույները, կորցնելով պետականությունը, անմիջապես հայփնվեցին թուրք-օսմանների փիրապետության վակ։ Այս հանգամանքը, թերևս, կարևոր նշանակություն ունեցավ հույների՝ ազգային-ազարագրական պայքարն ավելի վաղ սկսելու գործում, քանի որ հույների մեջ պետականության ավանդույթներն ավելի «թարմ» էին։ Արդյունքը 19-րդ դարի սկզբին հունական պետականության վերականգնումն էր Բալկանյան թերակղզու հարավում (այսինք, իհարկե, մեծ նշանակություն ունեցավ նաև միջազգային իրադրությունը և մեծ գերությունների ուղղակի աջակցությունը)։ Արդեն 19-րդ դարում և 20-րդ դարի սկզբին օսմանահպատակ հույներն իրենց ազքի առաջ ունեին հունական անկախ պետությունը։ Նրանց պայքարի նպատակակետը Շելլենական թագավորությանը միավորվելն էր։ Այս առումով հույների պայքարն աղերսներ ուներ 19-րդ դարի ընթացքում հայ ժողովրդի ազգային-ազարագրական պայքարի ու դրա զիանավոր նպատակի՝ Արևմդյան Հայաստանի ազարագրության, Արևելյան Հայաստանի հետ միավորման, միասնական Հայաստանի սիեղծման հետ։ Անշուշտ, ինչպես հայկական, այնպես էլ հունական ազգային-ազարագրական պայքարն առաջին հերթին արձագանքն էր այն իրավագործկ, ճնշված կարգավիճակի, որում հայփնվել էին երկու ժողովուրդներն Օսմանյան կայսրությունում։ 19-րդ դարում Արևելյան հարցի՝ միջազգային դիվանագիրության ամենակննորդի հարցերից մեկի ի հայր գալը պայմանագրության դրանում հայերի և հույների ներկայությունը սկսվել էր ընկալվել որպես

538 Հայրաթյան Մ. Ա. Օրեշկովա Ս. Ֆ., Պետրոսյան Յո. Ա., Թուրքիայի պատմության ուրվագծեր, Երևան: Երևանի համալսարանի տպ., 1986, էջ 49:

Վկանգ կայսրության գոյության համար, քանի որ դարերի ընթացքում կայսրության վերնախավը չկարողացավ լուծել օսմանահպատակների իրավահավասարության ինտիրը: Զևափորվել էր «Երկարավուն կոնֆլիկտ» Օսմանյան կայսրության և նրա հպատակ քրիստոնյաների միջև, ինչն է, ըստ Վ. Դադրյանի, իենց հանգեցրեց ցեղասպանության<sup>539</sup>:

«Ունական անկախ պետքության սփեղութումը վերջնական լուծում չփոխ թուրքահպատակ հույների խնդրին, քանի որ նրանց մեծ մասը շարունակում էր ապրել Օսմանյան կայսրության վարածքում: Փաստորեն, որոշ հունական վարածքների ազատագրումը և հունական անկախ պետքության սփեղութումը բերեցին կոնֆլիկտի մասնակի լուծմանը, սակայն որակապես այն շարունակում էր մնալ նույնը:

Երկու ժողովուրդների պարմության ուսումնասիրումը ցույց է տրախս, որ նրանք Օսմանյան կայսրությունում ապրել են «սփորակարգ ռասայի» կարգավիճակում և գիբնվել իրավազորկ վիճակում հասարակական-քաղաքական կյանքի բոլոր բնագավառներում<sup>540</sup>: Իրավագրկության դրսնորումները կարևոր դեռ են գրավում նրանց հանդեպ իրականացված կոտրրածների պատմական նախադրյալներում: «Այնքանի և հույների իրավագորկ կարգավիճակի ծևազորման գործում չափազանց կարևոր դեր ուներ կրոնի գործունը: Նենց դրա դիրքարկումն է մեծ չափով բացահայտում Օսմանյան կայսրության եղությունը: Խալամի դերի վերաբերյալ Վ. Դադրյանը նշում է. «Ազգային հողի վրա եղած հակամարքության լիովին ըմբռնման և վերլուծության համար պետք է դիրքարկել իշխանը՝ որպես որոշիչ գործոն՝ այդ կոնֆլիկտների առաջացման և ծավալման համար»<sup>541</sup>: Նանքահայք իրողություն է, որ խալամը բավական խիստ է այլադապանների նկատմամբ, ովքեր որակվում են «անհավաքներ»: Մասնավորապես Ղուրանում բոլոր մահմենդականներին կոչ է արվում մետք «սրբազն պատերազմ» և «անհավաքների» նկատմամբ լինել անողոք<sup>542</sup>: Սակայն արդեն երիտրուրքերի իշխանության դարիներին

539 Dadrian V. N., “The Determinants of the Armenian Genocide”. Working Paper GS 02. Yale Center for International and Area Studies. H. F. Guggenheim Foundation, 1998, p. 1.

540 Նիկոլայ Ռովիանիսյանը. Վկայակոչելով բազմաթիվ արար հեղինակների, մեկ անգամ ևս ապացուում է, որ Օսմանյան կայսրությունում հայերը և հույները ընկապվում էին որպես «ցածր» իսկ թուրքեր՝ «բարձր» ազգ: Stein Hovhannisyan N., The Armenian Genocide, Armenianocide – The Most Genocidal Genocide, In Ten Languages of the World, Yerevan: «Zangak-97», 2009, p. 390-393.

541 Dadrian V., The History of the Armenian Genocide..., p. 5-9.

542 Dadrian V. N., Warrant for Genocide: Key Elements of Turko-Armenian Conflict,

շեշտն առավելապես դրվում էր ազգային-էթնիկ հարկանիշի «գործոնի» վրա: Ն. Մորգենթաուի վկայությամբ՝ մասնավորապես Թալեաթը, իր կուսակցության առաջնորդների մեծ մասի օրինակին հետքնելով, ծաղրում էր բոլոր կրոնները<sup>543</sup>: Նրանք կրոնն՝ դժվարում խլամը, օգլագործում էին մահմեդական բնակչության մեջ քրիստոնյաների նկարմամբ ապեկություն բորբոքելու համար:

Քրիստոնյաների իրավագրկության բազմաթիվ ապացույցներ կարելի է գրնել Օսմանյան պետքության հասարակական-քաղաքական, ռազմավարչական և սոցիալ-դանդասական բնագավառներում նրանց վիճակը և ունեցած դերը դիբարկելիս:

Պետքական-քաղաքական համակարգում քրիստոնյաների՝ դժվարում հայերի և հույների ներկայության, ինչպես նաև երկու ժողովուրդների քաղաքացիական ակրիվության դիմումը բոլոյ է վալիս հսկակ արձանագրել, որ չնայած Թանգիմարի շրջանից քրիստոնյաները սկսեցին զբաղեցնել պետքական պաշտոններ, սակայն պետքական կառավարման համակարգում քրիստոնյաների ներկայությունը չնշն էր՝ 4.6%<sup>544</sup>: Կառավարական լծակները հայերի ու հույների համար որպես կանոն անհասանելի էին: Հանգամանք, որ հետքազայում իր դերը պետք է խաղար նրանց ջարդերի գործում: Ինական, առանձին մարդիկ որոշ հաջողության և ազդեցության հասնում էին, բայց նման դեպքերն ավելի շուրջ բացառություն էին, քան թե օրինաչափություն:

Ներեսության բնագավառում քրիստոնյաների վիճակը մի փոքր այլ էր: Օսմանյան հետքամնաց վիճակության հիմնական շարժիչ ուժը հենց քրիստոնյա ազգաբնակչությունն էր: Թուրքական հասարակության վերին և միջին խավերն արհամարհելի բան էին համարում առևտություն կամ արհեստներով զբաղվելը<sup>545</sup>: Դրա լավագոյն ապացույցն առևտության արդյունաբերական ոլորտի վիճակագրական հետքեալ դժվարներն են՝ ներկայացված 1912 թվականի դրությամբ: Հակայածավալ կայսրության արհեստների, արդյունաբերության ոլորտներում հույների դժվակարար կշիռ կազմում էր 48.5%, հայերին՝ 29.7%, թուրքերին՝ 12%, մնացած 9.8%-ը, բաժին էր ընկնում այլ ազգություններին<sup>546</sup>: Վիճակը նույնն էր նաև

New Brunswick: Transaction Publish., 1993, p.6.

543 Morgenthau, H., Ambassador Morgenthau's..., p. 123.

544 Shaw Stanford J., Shaw Ezel Kural, Աշվ. աշխ., էջ 242:

545 Սիմնյան Հր., Թուրք ազգային բոլժուազիայի գաղափարաբանությունն ու քաղաքականությունը, Եր.: Հայաստան, 1986, էջ 17:

546 Ինլիկյան Օ. Ռ., Աշվ. աշխ., էջ 213:

առևտրի բնագավառում՝ հույներ՝ 43.1%, հայեր՝ 22%, թուրքեր՝ 14.9%, այլ ազգություններ՝ 19.1%<sup>547</sup>:

Հայերն ու հույներն ակդիր էին նաև Վաշխառության բնագավառում: Հաճախ նշվում է, որ դա միայն հրեաների ու քրիստոնյաների մննաշնորհն էր Օսմանյան կայսրությունում: Դա պայմանավորված էր այն հանգամանքով, որ իսլամի Վարդապետությունն արգելում է Վաշխառությամբ զբաղվելը: Սակայն արդեն Վաղոց ապացուցված է, որ Վաշխառությամբ իրենք՝ մահմենդականները, ոչ պակաս հաջողությամբ զբաղվում էին՝ Շարիաթի օրենքների մեջ զանազան իրավական հնարավորություններ սպառելով<sup>548</sup>: Ըստ Էռլիջան Մինթեփերի տեսքության մեջ Վիրապեպող դիրքերը հիմնականում պարկանում էին քրիստոնյաներին, չնայած որ ամեն մի Մինթեփերի հաջողությամբ ավարտին հասցնելու համար պեսքը է անցնեին զանազան վրանգների միջով, քանզի նրանք ապահովության ոչ մի երաշխիք չունեին: Չնայած մահմենդականները նախընդունում էին զինվորական և պեսքական ծառայությունը, այնուամենայնիվ քրիստոնյաների Մինթեփերի հաջողությամբ»<sup>549</sup>: Քրիստոնյաների այս հաջողությունները Մինթեփերի բնագավառում լրացնում էին առաջացնում նրանց համար, քանի որ մահմենդականները ձգվում էին կործանել և ասպարեզից դուրս մղել նրանց: «Ներազայում՝ ջարդերի և Վելիահանությունների ժամանակ, այս հանգամանքը օգտագործվեց մահմենդականների՝ քրիստոնյաների նկարմամբ ունեցած ավելությունը բորբոքելու և Վերջիններիս թալանելու գործում:

Օսմանյան կայսրությունում քրիստոնյաները բանակ չէին գորակոչվում: Ազելին, դրա համար հարկ էին վճարում: Քրիստոնյաները, բնականաբար, զինվորական բարձր պաշտոններ չէին կարող զբաղեցնել: Նրանք զրկված էին նաև ծի հեծնելու ու զենք կրելու իրավունքից: 1908 թ. գալով իշխանության՝ Երիտրուքերն Օսմանյան կայսրության բոլոր ժողովուրդների հավասարությունը հռչակեցին Սահմանադրությամբ: Սակայն զորակոչված հայերը և հույները թուրքական բանակում զբնվում էին ծանր վիճակում: Իսկ Առաջին համաշխարհային պատերազմի դարիներին արդեն քրիստոնյաների զորակոչումը դարձավ նրանց ոչնչաց-

547 Նոյն Վելում, էջ 212:

548 Ինձիկյան Ռ. Գ., Օսմանյան կայսրության անկումը: Սոցիալ-Վնդեսական ակնարկ, Եր.: Հայապահ, 1984, էջ 129:

549 Քիլիմջան Գ., Թուրք-հուսական հարաբերությունները 1908-1914 թվականներին..., էջ 158:

ման փարբերակներից մեկը<sup>550</sup>: Ընդհանուր առմամբ ռազմական գործից հոյներին և հայերին երկար ժամանակ հեռու պահելը ևս նրանց իրավազրկության ակնհայք դրսնորում և ապացույց էր, ինչն է կովորածների ժամանակ ավելի հեշտացրեց թուրքերի «գործը»:

Հսկ հոյն պատմաբան Ի. Խասիոփիսի՝ 20-րդ դարի սկզբին թուրքական ազգայնամոլության աղեփալի հեգեսանքները հոյների և հայերի համար ձևավորեցին ընդհանուր մի բան. երկու ազգային փարբերի գրեթե նույնանման ճակարագիրը Փոքր Ասիայում նրանց դրեց նոյն դրության մեջ: Ի. Խասիոփիսին ավելացնում է, որ նմանություններն ակնհայք էին ինչպես հայերի ու հոյների խաղաղ ու արյունավետ գործունեության, այնպես էլ նրանց ազգային ճգփումների մեջ: Եվ հայերը, և՛ հոյները գտնվում էին այն զուգահեռ գործնթացի մեջ, որն ուղղված էր նրանց վերջնական ոչնչացմանը<sup>551</sup>:

Այսպիսով, Օսմանյան կայսրության փիրապելության դրակ մնացած հոյների իրավական, քաղաքական և սոցիալ-գրնչեսական դրությունը շատ ընդհանրություններ ուներ արևմտահայերի կարգավիճակի հետ: Դիմարկելով օսմանյան պերության և հասարակության մեջ հոյների ներգրավվածությունն ու նրանց դերակարարությունը՝ հանգում ենք այն եզրակացության, որ մինչև Առաջին համաշխարհային պատերազմի սկիզբը նրանք ևս հայփնուկել էին խոցելի վիճակում, որը թուրքական իշխանություններին հնարավորություն էր փալիս հաշվեհարդար դեսնելու նրանց հետ:

### *Տեղահանությունների և կովորածների ընթացքի համեմատություն:*

Հոյների զանգվածային գեղահանությունների և կովորածների քաղաքականությունն առավել լավ հասկանալու համար նախ անհրաժեշտ է դիմարկել, թե դա ինչպիսի զաղափարական նախապարասարություն է անցել և ինչ վեն էր գրավում երիտրոքերի ծրագրերի մեջ: Արյոց գոյություն է ունեցել հոյների գեղահանության և ոչնչացման ծրագիր, կա՞ր արյոց կոնկրետ նպարակադրվածություն և դիմավորություն արդյոք այդ քաղաքականությունը կրո՞ւմ էր պերական բնույթ: Այս

550 Այդ մասին մանրամասն դեմ Les Persécutions antihelléniques en Turquie.... p. 18-19.

551 Hassiotis I., "The Armenian Genocide and the Greeks: Response and Records (1915-1923)", *The Armenian Genocide; History, Politics, Ethics* (ed. R. Hovhannissyan), New York: St. Martin's Press, 1992, p. 129.

հարցադրումները չափազանց կարևոր են Օսմանյան կայսրությունում հակահունական քաղաքականության բնորոշման առումով:

Դույների և հայերի գործադրություններկ ու կորորածները համեմագելիս աչքի է զարնում այն փասդը, որ մասնագիտական գրականության մեջ հայերի դեպքում ապացուցված է կանխամբածվածության հանգամանքի առկայությունը, այսինքն՝ նպագրակը եղել է կոնկրետ խմբի ոչնչացումը, այլ կերպ ասած՝ ապացուցվել է հարակ մշակված ցեղասպանության ծրագրի գոյության փասդը<sup>552</sup>: Նարց է առաջանում. ինչպես այդ դեպքում բացագրել հույների զանգվածային գործադրության կորորածների փասդը: Ջրիսդոնյա մյուս ժողովուրդների՝ փվյալ դեպքում հույների և ասորիների կորորածների ուսումնասիրությամբ զբաղվող մի շարք մասնագետներ հակված են ընդունելու նրանց ոչնչացնելու դիրքավորության փասդի առկայությունը: Այսպես, Ֆլորիդայի Միջազգային համալսարանի Իրավունքի դպրոցի պրոֆեսոր Հաննիբալ Տրեյվիսը նշում է. «Կայսրության քրիստոնյաների բնաջնջման՝ կառավարության դիրքավորության բացակայությունը գրեթե անհնար է դարձնում բացագրել Օսմանյան կայսրությունում Առաջին աշխարհամարդի ժամանակ ապրող հայ, ասորի և հույն քրիստոնյաների կորորածները, բռնաբարությունները, բռնի գործադրությունները, սեփականությունից գրեթե, որոնք դեռև են ունեցել այդահիմ մեծ ծավալներով»<sup>553</sup>: Չնայած հագուկ ձևակերպված փասփաթղթի բացակայությանը կամ անհայտ լինելուն՝ այնուամենայնիվ սխալ է նաև բացառել դիրքավորության փասդի գոյությունը, քանի որ իրոք դժվար է այլ կերպ բացագրել հարյուր հազարավոր հույների ոչնչացումը: Եվ դա այն դեպքում, երբ կար կորորածների իրականացման կազմակերպման բավական բարձր մակարդակ:

Հայփնի է, որ Հայոց ցեղասպանության նախապարասիրման գործում կարևոր նշանակություն են ունեցել «Միություն և առաջադիմություն» կուսակցության երրորդ (1910 թ.) և չորրորդ (1911 թ.) համագումարները: Այս համագումարները նշանավորվեցին կուսակցության ներսում հակահայկական որոշումների ընդունմամբ: Համագումարների՝ անուղղակի մեզ

552 Տե՛ս Սահմանադրության Ո., Օսմանյան կայսրություն. Ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը..., էջ 167-189:

553 Hannibal Travis, “Native Christians Massacred”: The Ottoman Genocide of the Assyrians during World War I, Genocide Studies and Prevention, Volume 1 No. 3, December 2006, p. 342.

հասած որոշումները, սակայն, առնչվում են նաև հույներին<sup>554</sup>: Սրբազնում է, որ առաջին փոլում, այսինքն կուսակցության ներսում որոշումների ընդունման ժամանակ երկու ժողովուրդների ճակարտագրի վերաբերյալ մոդեռնիսմը (քուրթացում) կրել է ընդհանուր բնույթ:

Այդ դեպքում որոշակի շփոթմունք է սրբեղծվում 1913-1914 թթ. փեղահանությունների առումով և հարց է առաջանում. արդյոք դրանք և մեկ փարի անց հայ բնակչության դեմ սկսված ցեղասպանությունն առանձին ծրագրերի արդյո՞նք են, թէ՞ ոչ: Այս խնդիրը կարուի է պարզաբանման, մանավանդ որ այս հարցում կան փարբեր փեսակենքներ: Ամերիկահայ հետքազորող Ռ. Աղայանը երկու ողբերգությունների համեմափությանը նվիրված իր հոդվածում հանգում է այն եզրակացության, որ դրանք առանձին երևույթներ են, քանի որ հույներին փեղահանել են, իսկ հայերին՝ կովորել<sup>555</sup>: Այո՛, 1913-1914 թթ. դեպքերն ավելի շուրջ զանգվածային բռնի փեղահանություններ են. կովորածներ եղել են առանձին փեղերում և համեմափարար փոքր չափերով՝ ի փարբերություն Հայոց ցեղասպանության: Ռ. Աղայանը, սակայն, հիմնական շեշտը դրել է ողբերգական իրադարձությունների ընթացքի համեմափական վերլուծության վրա: Այն փասդը, որ 1913-1914 թթ. հույներին հիմնականում արդարեն, իսկ հայերին 1915 թ. կովորել են, սրբիակում է նրան հանգել այն եզրակացության, որ դրանք առանձին երևույթներ են: Չհամածայնվելով նման փեսակենքի հետք՝ պետք է փասդել, որ նման եզրակացության սրբիակ է հանգել այն հանգամանքը, որ նա հիմնահարցը չի դիմարկում ավելի լայն՝ 1913 (1914) - 1923 թթ. ձևաչափով:

Ինչպես արդեն նշվել է՝ հույների փեղահանությունների գլխավոր նպագրակը թուրքացման քաղաքականությունն էր, նշված շրջանները քրիստոնյա բնակչությունից ազադելու ձգումը, փարածքների պահպանումը և ազգային հարցի լուծման սեփական փարբերակի իրագործումը: Ենու այդ նպագրակների ու պարմառների դիմարկումն է, որ մեզ հնարավորություն է փախս գիտելու այս երկու երևույթների կապը: Նույն նպագրակը երիտրուրքերը հետքապնդել են նաև հայերի դեպքում: Այսինքն՝ հակահունական քաղաքականությունը հակահայկականի հետ

554 Авакян А., Геноцид 1915 г., Механизмы принятия и исполнения решений, с. 15-18.

555 Adalian R. P., "Comparative Policy and Differential Practice in the Treatment of Minorities in Wartime: the United States Archival Evidence on the Armenians and Greeks in the Ottoman Empire", *Journal of Genocide Research* (2001), 3(1), pp. 31-48.

Միավորվում է միևնույն՝ թուրքացման քաղաքականությամբ։ Իսկ միջոցների փարբերությունն ունի արդեն այլ պատճառ՝ Հունասփանի դերը։ Այն, հունական պետության գոյությունը, ինչպես նաև Մյանմանի մահմետական (թուրքական) բնակչության առկայությունը որոշակիորեն կաշկանդում էին երիտրութերի՝ լայնածավալ կողործներով հունական հարցը լուծելու ծրագրի իրագործումը։ Սակայն այս հանգամանքն էականորեն ազդեց միայն գործադրված միջոցների, այլ ոչ թե որոշումների վրա։ Շնորհանքը բազմահազար հույների բռնի գեղահանությունն էր։

Այս առումով ուշագրավ է հույն պատմաբան Ի. Խասիոպիսի դի-փարկումը. «Տարօրինակ է, որ և հույն, և հայ պատմաբանները 1913-1914 թթ. հույների հալածանքները և 1915 թ. Նայոց ցեղասպանությունը համարել են առանձին երևոյթներ»<sup>556</sup>։ Նամածայնվելով հույն հեղինակի հետ՝ անհրաժեշտ է ավելացնել, որ դրանք չպեսք է դիմարկել առանձին և անջափ երևոյթներ՝ հեփեսյալ պափմառներով։

ա) Բոլոր փարբերությունները հիմնականում կապված են ընթացքի և գործադրված միջոցների հետ, այսինքն՝ այս հավածում, չնայած կո-փորածների առանձին դեպքերին, հակառական քաղաքականության գլխավոր ձևը եղել է բռնի գեղահանությունը։ Այն ուղեկցվել է սպառ-նալիքներով, բռնի մահմեդականացմամբ, չենթարկվողներին հաճախ սպանել են և այլն։ Այսուաննայնիվ գլխավոր նպարակն իրագործվել է։ Արևելյան Ձքակիան և Փոքր Ասիայի արևմտյան ափերը հիմնականում «մաքրվեցին» հույն բնակչությունից։ Չնայած միջոցների որոշակի փար-բերությանը՝ նույն ավելի մեծ ծավալներով կարարվեց նաև հայերի դեպ-քում։ Այսինքն՝ հույների դեպքում ևս իրագործվել է թուրքացման հեփեղական քաղաքականություն։

բ) Երկրորդ պատմառը, որ բացահայտում է երկու երևոյթների կապը, դրանց շարունակականությունն է։ Այն դրսևորվում է հարկապես որոշ հանցագործների ակդիվ ներգրավվածությամբ ինչպես հույների գեղա-հանության, այնպես էլ Նայոց ցեղասպանության իրականացման ըն-թացքում։ Այսպես, օրինակ, դոկտոր Ռեշիդ, ծառայելով Կարեսիում որպես կայսմակամ, այնպես կազմակերպել է հույների բռնագաղթ, որի հրամանը դրվել էր Թալեաթի կողմից<sup>557</sup>։ Այդ նույն անձը հեփազայում Դիարբեքիրի

556 Hassiotis I., “The Armenian Genocide and the Greeks: Response and Records (1915-1923)”, p. 135.

557 David Gaunt, Massacres, Resistance, Protectors: Muslim-Christian Relations in Eastern Anatolia during World War I, Piscataway, NJ: Gorgias Press, 2006, p. 66 and 156.

վիլայեթում (նահանգապետ) հանդես է գալիս որպես հայերի և աստրիների կոփրորածի կազմակերպիչ<sup>558</sup>: Կան այդպիսի այլ օրինակներ ևս<sup>559</sup>:

գ) Էական նշանակություն ունի մի կարևոր գործոն ևս, որն անփեսվել է շար հետազողուների կողմից: 1913-1914 թթ. հույների գեղահանությունը 1913 (1914) - 1923 թթ. գարվող հակահունական քաղաքականության մի մասն էր: Այդ իրադարձությունների՝ որպես առանձին երևույթների դիրքարկումը, գլխավորապես կապված է եղել այդ շրջանում հույն-թուրքական հարաբերությունների և Բալկանյան պատերազմների հետ եղած անմիջական կապով: Սակայն եթե խոսքը վերաբերում է Օսմանյան կայսրությունում 20-րդ դարի առաջին քառորդում հույների նկարմամբ իրականացված քաղաքականությանը, ապա դա առավել ճիշգր կլինի դիրքարկել որպես մեկ ամբողջություն հետքագա գարիների՝ մինչև 1923 թ. դեպքերի հետ: Ակնհայտ է, որ Առաջին աշխարհամարտի և հույն-թուրքական 1919-1922 թթ. պատերազմի գարիներին հակահունական քաղաքականությունը միայն բռնի գեղահանություններով կամ մասնակի ջարդերով չէր սահմանափակվում: Եթե 1913-1914 թթ. հույների դեմ բռնությունները դրսնորվում էին լայնածավալ գեղահանության գրեսով, ապա հետքագա գարիներին դրանց գումարվեցին նաև դաժան կոփրորածներ: Սակայն հիմք ընդունելով այս թեզը՝ չենք կարող պնդել, որ 1916-1922 թթ. Պոնդոսի կամ 1922 թ. Զմյուսնիայի դեպքերն առանձին երևույթներ են: Նակահունական քաղաքականությունն անզամ Օսմանյան կայսրությունում 1913-1914 թթ. կամ 1916-1922 թթ. ունեցել է որոշակի գրաբերություններ, այսինքն, ունեցել է փուլային զարգացում: Եթե այդ քաղաքականությունը համեմատում ենք Հայոց ցեղասպանության հետ, ապա այն պետք է դիրքարկել ամբողջության մեջ:

գ) 1913-1914 թթ. հույների բռնագաղթը որոշակիորեն նախադեալ է դարձել Հայոց ցեղասպանության համար: Այլ կերպ ասած՝ իրազործված հանցագործության համար պարտի բազակայությունն է, որ կապող օրակ է երկու ողբերգությունների միջև: Այն հանգամանքի գիրքակցումը, որ եթե հունական պետքության աչքի առաջ կարելի էր բռնի գեղահանել

##### 558 Խոյն գեղորում:

559 Արդեն հիշարքակած Պերք փաշան Էզեյան ծովի ավազանում հոյների գեղահանության կազմակերպիչներից մնկն էր, հետքագայում արդեն նրան գրեսնում ենք Սեբաստիայի հայերի նկարմամբ հաշվետարդար գրեսներիս: Stéphane A. Dadian V. N., "Ottoman Archives and Denial of the Armenian Genocide," *The Armenian Genocide: History, Politics, Ethics*, (ed. Richard G. Hovannisian), New York: St. Martin's Press, 1992, p. 309.

հույներին և մնալ անպափիժ, երիկթուրքերին բերեց այն գիրակցության, որ հնարավոր էր նոյսն անել հայերի հետ ավելի դաժան միջոցներով։ Նենց այս իրողությունը հաշվի առնելով (Առաջին համաշխարհային պատերազմի սկզբին նախորդող և հաջորդող երեք-չորս ամիսներին հույների բռնագաղթի նկարմամբ միջազգային հանրության անդարբեր վերաբերմունքը՝)՝ դեպքերի ժամանակակից դեսպան Ռ. Մորգեննթաուն նշում է, որ «հենց դրա պատճառով է, որ թուրքերը որոշեցին նոյն մեթոդը լայն չափով կիրառել ոչ միայն հույների, այլ նաև հայերի, սիրիացիների, նեսպորականների և իրենց հապարակ ուրիշ ժողովուրդների նկարմամբ»<sup>560</sup>։ Մնում է միայն հավելել, որ այդ նոյն քաղաքականությունն ավելի դաժան դրսնորումներով կիրառվեց նաև հույների նկարմամբ ինչպես Առաջին համաշխարհային, այնպես էլ 1919-1922 թթ. հույն-թուրքական պատերազմի դարիներին։

Նշված պատճառների դիմարկումը մեզ հնարավորություն է փալիս հանգելու այն եզրակացությանը, որ ընդամենը մեկ փարվա փարբերությամբ իրականացված երկու «գործողությունները» չեն կարող աղերսներ չունենալ միմյանց հետ, մանավանդ եթե դրանք իրագործվում են միևնույն պետության, միևնույն վարչակարգի և միևնույն գործող անձանց կողմից։

### **«Հույները պետք է հաջորդեին հայերին»:**

Մեծ կարևորություն է ներկայացնում նաև Առաջին համաշխարհային պատերազմի դարիներին հույների գլուղահանությունների և կորորածների «ծրագրային» կողմը։ Խոնդրո առարկա հիմնահարցի ժամանակակից որոշ աղբյուրներ հուչում են, որ հայերի գլուղահանությունից հետո հաջորդը լինելու էր հույների հերթը։ Մասնավորապես շատ Յ. Լեփսիուսի՝ «Միություն և առաջադիմություն» կոստակցության կենդրոնական կոմիտեի անդամները հաճախ են հրապարակայնորեն հայդարաբեկ, որ «օրորարականները պետք է աներեւոյթ ըլլան Թուրքիային, նախ Հայերը, յեփոյ Ցոյները, յեփոյ Տրեաները և ամենէն վերջը Երոպացիները»<sup>561</sup>։ Ուշագրավ է, որ այսպիսի գլուղեկությունները հետագայում հասկալվեցին, մասնավորապես դա շատ լավ է երևում Պոնդոսի օրինակով, որ հույների գլուղահանություններն ու կորորածները հաջորդեցին հայերի ոչնչացմանը։ Դրա օգտին է խոսում նաև Արամ Անդոնյանի հրապարակած՝ երիտ-

560 Morgenstau H., նշվ. աշխ., էջ 323-324։

561 Եօհաննես Լեփսիոս, Գաղտնի Տեղեկագիր. Հայաստանի Զարդերը, (թարգմ. Ս. Շամբանճեան), Կ. Պոլիս: Տպ. 8. Ասաբուրեան և որդիք, 1919, էջ 242-243։

թուրքական կուսակցության կենդրոնական կոմիտեից Աղանայի վիլայեթում կուսակցության պարախանափոր ներկայացուցիչ Զեմալին ուղղված երկրորդ նամակը՝ թվագրված 1915 թ. մարտի 25-ով: Ըստ Անդոնյանի՝ դա կրկնությունն է առաջին՝ փետրվարի 18-ով թվագրված նամակի, սակայն այն տարբերությամբ, որ ցույց է տրամադրության հետ երիշտութերը զբաղվելու էին հպատակ մյուս ժողովուրդների՝ հույների, սիրիացիների, արաբների բնաշնչամբ<sup>562</sup>:

Այնուամենայնիվ հայերի և հույների փեղահանությունների ու կոփորածների նախապարբասպրման և իրականցման ծրագրային կողմը որոշակի տարբերություններ ուներ: Ակնհայտ է, որ հույների բռնագաղթն ու կոփորածներն ունեին փուլային զարգացում՝ կապված ժամանակագրության և աշխարհագրության հետ: Ուստի դժվար է պնդել մեկ կոնկրետ ծրագրի առկայության մասին: Մեր ձեռքի տրակական առաջարկ առկա է առաջարկ առաջնորդություն գույքահեռություն Հայոց ցեղասպանության հետ՝ միաժամանակ հակահունական արշավն առաջմն դժվար է բխեցնել մեկ կոնկրետ փաստագրություն: Սակայն մի բան ակնհայտ է, որ 1914-1923 թթ. հույների դեղահանություններն ու կոփորածները (Արևելյան Թ-րակիա, Փոքր Ասիա, նաև Պոնտոս), կազմելով մեկ միասնական քաղաքականություն, կրել են պեղական բնույթ և իրագործելու էն կայսրության հույն բնակչությունը ոչնչացնելու դիրքավորությամբ:

### *Իրագործման մեխանիզմների համեմատություն:*

Ինչպես նշվել է՝ ամենազիալավոր ու էական տարբերությունը Հունասրանի՝ որպես հույն ժողովորի պետության առկայությունն էր, ինչը բացակայում էր հայերի պարագայում, և դա որոշակիորեն ազդեց օսմանահպատակ հույների հանդեպ թուրքական պետության վերաբերմունքի վրա: Այս հանգամանքով է պայմանավորված հույների և հայերի դեմ կիրառված քաղաքականության մեջ առկա տարբերությունների մեծ մասը<sup>563</sup>:

Հայերի և հույների նկարմամբ տարված ցեղասպան քաղաքականությունը կիրառված մեխանիզմներով ու գործադրված միջոցների առումով զրեթե նույնական է: Հայերի նման հույների նկարմամբ ևս

562 Անդոնյան Ա. Մեծ ոճիրը: Հայկական վերջին կոփորածները և Թագեար փաշա, Եր.. Արևիկ, 1990, էջ 134-137:

563 Հունական պետության գաղող դերի մասին փե՞ս Morgenthau H., Ambassador Morgenthau's..., p. 325-326.

## Կիրառվեցին.

- 1) Տնտեսական պարժամիջոցներ,
- 2) Զորակու - աշխատանքային գումարփակների սպեղծում-երի կասարարության ոչնչացում,
- 3) Բռնի մահմեդականացում,
- 4) Զանգվածային գեղահանություններ և կողորածներ,
- 5) Մշակութային, կրթական և կրոնական հասրապությունների ոչնչացում<sup>564</sup>.

Անշուշփ մեխանիզմային առումով կա զգալի նմանություն, անգամ ընդհանրություն հայերի և հույների պարագայում: Այսինքն հարկ չկա կանգ առնելու առանձին օրինակների վրա, քանզի այդ մասին արդեն խոսվել է նախորդ գլուխներում: Դրա հետք միաժամանակ կա փարբերություն զոհերի՝ մարդկային կորուսփների թվաքանակի հետք կապված: Հայ ժողովրդի մարդկային կորուսփները զերազանցում են հույների կորուսփները, սակայն դրանից հույն ժողովրդի ողբերգությունն ամեննին էլ չի փոքրանում: Անշուշփ, կարևոր է այն հանգամանքը, որ այս փարբերությունը կրում է քանակական, ոչ թե որակական բնույթը:

Մյուս կարևոր առանձնահափկությունը մահմեդական փարբի օգիտագրծման փասքն է: Նախորդ գլուխներում ներկայացրել ենք Թրակիայում, ինչպես նաև Փոքր Ասիայում հույների կողորածների ժամանակ մահմեդականների մոլեռանդությունն օգիտագրծելու փասքերը: Այսուամենայնիվ հայերի և հույների փորձառությունն ունի մի հիմնարար փարբերություն: հայերի կողորածների ժամանակ մեծապես օգիտագրծելի է քրդական փարբը, ինչը բացակայում է հույների պարագայում: Այս փասքի վրա ուշադրություն է դարձել պարմաքան Ա. Ավագյանը, ում դիբարկմամբ հույներով խիստ բնակեցված շրջաններում, չնայած մահմեդական գաղթականների առկայությանը, այնուամենայնիվ չկար այնպիսի գործոն, ինչպիսին քրդերն էին<sup>565</sup>: «Քրդական գործոնի» բացակայությունը կարելի է համարել հակահուսական և հակահայկական քաղաքականության փարբերակիչ կողմերից մեկը:

Կարևոր փարբերություններից մեկը հույների դեպքում «Ապրիլի 24-ի», այսինքն՝ միավորականության նկարմամբ մեկ միասնական

564 Ցեղասպանության հետևանքով միայն Պոնքրոսում թաղանքեց և յուրացվեց 2 միլիարդ ֆրանկի հարսփություն, ոչնչացվեց 874 հունական նկեղեցի ու վանք և 758 դպրոց: Stein Baltazzi G., Les Atrocités Turques en Asie Mineure et dans le Pont, 1922, p. 9.

565 Ավակյան Ա., Չերքեսский фактор в Османской империи и Турции, с. 243.

հաշվեհարդարի, ազգին «զիխափելու» օրվա բացակայությունն էր: Սակայն դա ամեննեին էլ չի նշանակում, որ հույն մբավորականությունը գերծ մնաց ծերբակալություններից և սպանություններից: Ավելին, 1915 թ. ապրիլից մեկ ամիս առաջ՝ մարտի ութին, մոտք երկու հարյուր հույն Կոստանդնուպոլիսից ծերբակալվեց և արբաքսվեց Փոքր Ասիայի խորքերը: Նրանց մեջ կային զգայի թվով հույն մբավորականներ և երեւիններ<sup>566</sup>: Էլ ավելի մեծածավալ էին 1921 թ. աշնանը Պոնդրոսում հունական մբավորական և քաղաքական վերնախավի ներկայացուցիչների մահապարփիծները<sup>567</sup>: Ամեննեին է չքաղողափելով երկու ազգերի համար մբավորականների «կորսայան Վշիքի մեծությունը»՝ նշենք, որ զիխավոր դարբերությունն այն է, որ հունական ողբերգության համարեսվում դա չունեցավ այն ահարկու ազդեցությունը, ինչը որ կարարվեց արևմբահայության դեպքում<sup>568</sup>:

Հայոց ցեղասպանության և հույնների զանգվածային կովրորածների հաջորդ կարևոր դարբերությունն արբաքսվածների ու կովրորվածների թվի հարաբերակցության մեջ է. հայերի դեպքում առավել մեծ թիվ են կազմում կովրորվածները: Բացի այդ հույնների դեպքում չկային համակենդրունացման այնպիսի խոշորագույն կենդրուններ, ինչպիսիք են հայերի համար Դեր-Զորը և Ռաս-ուլ-Այնը: Հոյս ցեղասպանագետ Թ. Մալկիդիսը, վկայակոչելով Վիեննայի համալսարանի պրոֆեսոր Պ. Էնեապեկիդիին, համենապում է հույնների դեմ իրազործված ցեղասպանությունը հրեական Հոլոքոստի հետ և նշելով երկու ցեղասպանությունների նմանությունները՝ միաժամանակ ընդգծում է, որ չնայած հոյսներին դեղահանում էին, սակայն նրանք հիմնականում մահանում էին ճանապարհին սովոր:

